



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1909

1910

1911

1912

1873

205

84

7-60

2011

84
7-60

Ա. Մ. ՏԻԻՄԱ

ՊՐԱԺԷՍԵ ԴԵՐԿՈՄՍ

ԹԱՐԳՄԱՆԵՑ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ



ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԷՉ
ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ



ԶՄԻՒՆԻՄ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ
— 1873 —

20 03

430

ՊՐԱԺԼՈՆ ԳԵՐԿՈՄՍ

Ա.

ԲԱԶՄԱԹԻՒ ՍՈՒՐԻ ՀԱՐՈՒԱԾՆԵՐ Ի ԶՈՒՐ

Ռատւ՛ Նիշին սենեակն երթալուն՝ տեսաւ որ նա Վարդի և Մանիքանի հետ կ'ստակցի :

Վարդ՝ պատնէշի զիպուածէն 'ի վեր՝ իբրև օտարական կ'վարուէր Ռատւի հետ : Այնպէս իմն կ'երևէին թէ զերար չեն ճանչեր :

Ռատւ ներս մտաւ , Նիշ զանի գիմաւորեց : Ռատւ՛ իր բարեկամին ձեռքը սեղմելով հանդերձ՝ երկու երիտասարդաց վրայ արալ նայուած մը նետեց : Անոնց գէմքին վրայ կարդալ կ'յուսար իրենց մտքին մէջ անցածը : Վարդ պալ էր և անթափանցելի : Մանիքան բոլոր ուշք զարդարանքի մը վրայ դարձուցած կ'նայէր :

Նիշ՝ Ռատւը մտակայ սենեակ մը տարաւ և զանի նստեցուց :

— Գու հանդարտ կերպարան ունիս — ըսաւ անոր :

— Բաւական տարօրինակ է այդ — պատասխանեց Ռատւ — վան զի այնչափ զուարթ չեմ :

— Գու ալ ինձի պէս ես , այնպէս չէ՛ , Ռատւ : Սէրը ձախող կ'երթայ :

— Այդ աղէկ լուր է , քեզի համար , կուսն , ամենէն գէշ լուրը՝ այն որ ամենէն աւելի կրնար զիս տրամեցնել , լաւ լուր մը պիտի լինէր :

— Ո՛հ , ուրեմն , մի տրամիր , վան զի՛ ոչ միայն շատ գժբաղդ եմ , այլ և երջանիկ մարդիկ կ'տեսնեմ՝ իմ՝ չորս կողմն :

— Բացատրէ՛ միտքդ , բարեկամ — ըսաւ Ռատւ :



2188
39

9

— Հիմակ պիտի հասկընաս : Ընդունայն դիմագրեցի այն զգացման որու ծնունդը տեսար յիս . թէ քու խորհուրդներդ և թէ բոլոր ոյժս օղնութեան կոչեցի . քաջ քննեցի այն դժբաղդութիւնն որու մէջ կ'մանէի , անոր խորութիւնը դիտեցի , գիտեմ որ անդունդ մ'է , բայց ինչ փոյթ , իմ ճամբաս պիտի շարունակեմ :

— Նամիտ , եթէ քայլ մ'ես առնուս , այսօր կործանումդ պիտի սրտաճառես , վաղը մահդ :

— Ինչ որ կ'ուզէ թող պատահի :

— Կի՛շ :

— Ամէն բան մտածեր եմ , մտիկ ըրէ :

— Ո՛հ , դո՛ւ կարծես թէ պիտի յաջողիս , դո՛ւ կարծես թէ իշխանուհին , արքայազնին կինը քեզ պիտի սիրէ :

— Ռատւ , չեմ կարծեր , այլ կ'յուսամ , վասն զի յոյսը մարդուս յատուկ է , և մինչև 'ի գերեզման կ'ապրի :

— Բայց դիցուք թէ այդ ակնկալած երջանկութիւնդ ձեռք ձգես — վրայ բերաւ Ռատւ — բայց ասով աւելի ստոյգ կ'լինի կորուսող քան եթէ չստանայիր այն երջանկութիւնդ :

— Կ'աղերսեմ , խօսքս մի կարեր , Ռատւ , դու չպիտի համոզես զիս , վասն զի քեզ կանխաւ կ'ըսեմ , չեմ ուզեր համոզուիլ : Այնչափ առաջ քալեր եմ , որ ես գառնալ չեմ ուզեր , այնչափ տառապեր եմ , որ մահն ինձ բարկք մը պիտի երեի : Ռատւ , միայն խելացիորի պէս սիրահար չեմ , այլ կատաղութեան չափ նախանձոտ եմ :

Ռատւ իր երկու ձեռքն իրարու զարկաւ այնպիսի զգացումով որ բարկութեան կ'նմանէր :

— Շատ լաւ . . . ըսաւ նա :

— Լաւ կամ վատ , ինչ փոյթ : Երեք օրէ վեր իշխանուհին հանդէսներով պաշարուած արբշիւ է : Առաջին օրը չհամարձակեցայ բնաւ անոր նայելու , կ'ատէի զանի որ ինձի չափ դժբաղդ չէր : Հետեւեալ օրը զանի չէի կարող աչքէս հեռացնել , և նա ևս իր կողմէ , այո՛ , այնպէս կարծեցի տեսնել , Ռատւ , իր կողմէ , ինձի նայեցաւ , եթէ ոչ դոյզն ինչ գ'թասիրութեամբ , դէթ քիչ

մ'անուշութեամբ : Բայց իր նայուածքին և իմինիս մէջ ստուեր մ'եկաւ մտաւ . ուրիշի մը ժպիտն իր ժպտը կ'զրկուէ : Իր ձիուն մօտ անդադար ուրիշ ձի մը կ'արշաւէ որ իմն չէ , իր ականջին անդադար ձայն մը կ'հնչէ զգուելի , որ իմ ձայնս չէ : Ռատւ՝ երեք օրէ վեր՝ զլուխս կրակի մէջ է . իմ երակներուս մէջ վաղողը բոց մ'է : Այդ ստուերը պէտք է որ վանեմ , այն ժպտալ , պէտք է որ մարեմ , այն ձայնը՝ պէտք է որ խեղդեմ :

— Միթէ արքային եղբայրը սպաննել կ'ուզես — զոչեց Ռատւ :

— Ի՛հ , ո՛չ , ես արքայեղբոր վրայ չեմ նախանձիր , ես երկանը վրայ չեմ նախանձիր , ես սիրահարին վրայ կ'նախանձիմ :

— Միթէ Պ . Պր.քինկհէմէն կ'նախանձիս :

— Մահու չափ :

— Ասա՛ :

— Ո՛հ , այս անգամ զիւրին պիտի լինի կարգադրել , արդէն պատրաստութիւններն ըրի , անոր տոմսակ մը դրեցի :

— Գո՛ւ ես ուրեմն գրողն անոր :

— Գու ուսկի՞ց զլտես :

— Գիտեմ , վասն զի ինձի իմացուց : Ա՛հա , կարգա՛ :

Եւ Կի՛շ կոմսին տուաւ այն նամակը զոր գրեթէ իրենին հետ միասին ընդուներ էր :

Կի՛շ անչափ հետաքրքրութեամբ կարդաց զայն :

— Քաջ և մանաւանդ մեծանձն մարդու գիր է այս — ըսաւ նա : — Գու զնա իմ կողմէս գաիր զանի :

— Բայց գրեթէ անկարելի է :

— Ի՞նչպէս :

— Գուքան իզնէ խորհուրդ կ'հարցնէ , դու ալ միանդամայն :

— Ո՛հ , դու զիս պիտի նախադասես յուսամ : Մտիկ ըրէ , ահա աղաչանքս է քեզ երթալ զքսին ըսել . . . : Շատ պարզ գործ է . . . : Այս օրերս , այսօր , վաղը , միւս օր , յարմար տեսած օրը , կ'ուզեմ 'ի Վէնսէն անոր հանդիպիլ :

— Գուքան օտարական է , պաշտօն մ'ունի որով անբունարարելի կ'գառնայ . . . Վէնսէն Պատկիլի բոլորովին մօտ է :

— Հետեւանքն ինձ կ'վերաբերին :

— Բայց այս մենամարտին պատճառը, ի՞նչ պատճառ կ'ուզես որ տամ:

— Հանդարտ եղիր, պատճառը չպիտի հարցնե՛ք թիւ . . . դուքսն իզնէ՛ ձանձրացած պիտի լինի, ինչպէս ես իրմէ: Այսպէս, կ'աղերսեմ, գնա՛ դուքսը գտիր, և եթէ պէտք է որ աղաչեմ զինքն իմ՝ առաջարկութիւնս ընդունելու, պիտի աղաչեմ:

— Անօգուտ է . . . : Գուքսը կանխաւ իմաց տուաւ ինձ որ կ'ուզէր ինձ խօսիլ: Գուքսը թաղաւորին մօտ կ'դանուի խաղի համար . . . : Երթանք անդ՝ ի միասին: Գրտի սրահը պիտի կօչեմ զինքն առանձին. դու մեկուսի կ'կենաս: Երկու բառ հերկը են:

— Լսու է: Աւարդն ու Մանիքանը միասին պիտի առնում:

Չորսերնին ալ վար իջան: Արշին կառքը դուռը կ'ստպսէր և զանոնք ՚ի Բալէ-Բուսյալ առաջնորդեց: Ճամբան զնալու ատեն ստուերադիր մը կ'պատրաստէր: Երկու դադանեաց ինք միայն աւանդապահ զանուելով, յուսակաւոր չէր երկու հակառակորդ կողման մէջ հաշտութիւն մը բերելու:

Երբ լոյսերով շողուն վերնասրահն հասան, ուր արբունեաց ամենէն զեղանի և անուանի կանայք աստղներու պէս՝ իրենց բոցավառ մթնոլորտին մէջ կ'շարժէին, Ռատլ ակամայ Արշ կոմսը մտցաւ պահ մը՝ Լուիզի նայելու, որ՝ իր ընկերու հիներուն մէջ թողեալ տասրակի մը պէս՝ աչօք կ'կլանէր արքայական շրջանակը՝ որ անգամանդով և սկիւով կ'շողար լուսափայլ:

Մարդիկ ոտքի վրայ էին, թաղաւորը միայն նստած էր: Ռատլ Պրքինկհէմը անտու: Արքային եղբորմէն տաս քայլ հեռի, գաղղիացի և անկլիացի խմբակի մը մէջ կեցած էր, որ անոր վէտութեան և զգեստներուն փառաւորութեան վրայ կ'ըքանչանային:

Հին պալատականներէն ոմանք կ'լիշէին որ գլխին հայրը տեսած են, և այս յիշատակն որդւոյն նպաստաւոր էր:

Պրքինկհէմ Գուքէի հետ կ'խօսակցէր: Գուքէ բարձր ձայնով Պէլ-Իսլի վրայ կ'ձուռէր:

— Այս միջոցիս չեմ կարող անոր մօտենալ — ըսաւ Ռատլ:

— Սպասէ, և սպասէ առիթ մ'ընտրէ, բայց շուտով ամէն ինչ աւարտէ, կ'այրիմ:

— Դէն, աւասիկ մեր ազատարարը — ըսաւ Ռատլ ա'Արդանեանը տեսնելով, որ հրացանակրի նոր զգեստովը սրահը մտեր էր իբրև յաղթական: Եւ դէպ ՚ի ա'Արդանեան զիմեց:

— Լա Ֆէր կոմսը ձեզ կ'փնտուէր, ասպետ — ըսաւ Ռատլ:

— Այո՛ — պատասխանեց ա'Արդանեան — հիմակ քովէն կը դառնամ:

— Այնպէս հասկցայ որ զիշերուան մէկ մասը միասին պիտի անցընէիք:

— Արդէն զերար վերստին տեսնելու համար ժամադիր եղանք:

— Պ. ասպետ — ըսաւ Ռատլ — դուք միայն կարող էք ծառայութիւն մ'ընել:

— Ի՞նչ ծառայութիւն, սիրելիդ իմ զերկումս:

— Պէտք է երթալ Պ. Պրքինկհէմն անհանդիստ ընել, որու քանի մը բան ունիմ ըսելիք, և որովհետև Պ. Պրքինկհէմ Պ. Ֆուքէի հետ կ'խօսակցի, քաջ կ'իմանաք որ ինձի չլինար երթալ անոնց խօսակցութիւնն ընդհատել:

— Հա՛, հա՛, Պ. Ֆուքէն աստ է — հարցուց ա'Արդանեան:

— Եւ միթէ կարծես թէ քեզնէ աւելի իրաւունք մ'ունիմ:

— Գուք աւելի բարձրադիր մարդ էք:

— Ա՛հ, իրաւ է, հրացանակրաց հրամանատար եմ, այնչափ ատենէ վեր այս աստիճանը կ'ստատանային ինձ և այնչափ քիչ ատենէ վեր ստացած եմ, որ իմ բարձր պաշտօնս միշտ կ'մտնում:

— Այդ սպասը պիտի մատուցանէք ինձ, այնպէս չէ:

— Սատանայ, Պ. Ֆուքէ՛:

— Միթէ անոր հետ հաշտ չէք:

— Ո՛չ, աւելի հաւանական է որ նա ինձի դէմ բան մ'ունեայ, վերջապէս, քանի որ օրին մէկը պէտք է . . . :

— Տեսէք, կարծեմ թէ ձեզնի կ'նայի, կամ արդեօք . . . :

— Ո՛չ, չես սխալիր, ո՛չ, իրօք այդ պատիւն ինձի կ'ընէ:

— Ուրեմն, պատեհ է ժամս:

— Կ'կարծես:

— Գայէք, կ'աղաչեմ:

— Ահա կ'երթամ :

Աիշ կոմսը Ռատուլն աչքէ չէր հեռացներ . Ռատուլ նշանացի իմացուց որ ամէն ինչ կարգին է : Տ'Արդանեան շխտակ դէպ 'ի խմբակը դնաց , և մարդավար կերպով Պ . Ֆուքէն բարեւեց նոյնպէս միւս անձինքը :

— Պէլ-Իսլի վրայ կ'իսուակցինք — ըսաւ Ֆուքէ՛ այն կենցաղագիտութեամբ և նայուածքի գիտութեամբ որ կենաց կէսը կը պահանջեն որպէս զի մարդ լաւ սորվի , և որոյ կան մարդիկ որ չեն հանիր , թէ և ամէն ճիւղ կ'իթափեն սովորելու համար :

— Պէլ-Իսլ , հա՛ , հա՛ — ըրաւ ա'Արդանեան — կարծեմ թէ ձերն է այն տեղը , Պ . Ֆուքէ :

— Պ . Ֆուքէ քիչ մ'առաջ կ'ըսէր ինձ որ թաղաւորին տուեր է զայն — ըսաւ Պրքինկէ՛մ :

— Միթէ՛ Պէլ-Իսլը տեսեր էք , ասսկեա — հարցուց Ֆուքէ հրացանակրին :

— Անդամ մը միայն այն տեղ դացած եմ , պարոն — պատասխանեց ա'Արդանեան իրրև մտացի և մեծանձն մարդ :⁴

— Միթէ՛ շատ կեցա՞ք անդ :

— Հազիւ թէ օր մը միայն , տէր իմ :

— Եւ ի՞նչ տեսաք :

— Ի՛նչ որ մէկ օրուան մէջ կարելի է տեսնել :

— Օր մ'անդամ շատ է , եբք մարդ ձեր ակնարկն ունի , պարոն :

Տ'Արդանեան խոնարհութիւն ըրաւ :

'Նոյն պահուն՝ Ռատուլ Պրքինկէ՛մի նշան կ'ընէր :

— Պ . Ֆուքէ — ըսաւ Պրքինկէ՛մ — ձեզի կ'իթողամ հրաժանատարը՝ որ իզնէ լաւ կ'հասկընայ մարտիցի , բերլի մը շեղ սրմի և հակօրմի վերաբերեալ գործերէն , և երթամ պիտի բարեկամի մօտ որ ինձի նշան կ'ընէ : Ա'խմանաք . . . :

Արդարեւ՝ Պրքինկէ՛մ խմբակէն քաշուեցաւ և Ռատուլի կողմը գիմեց , բայց կանկ առնելով պահ մ'այն սեղանին առջև , ուր մայր թագուհին , նորասի թագուհին և թաղաւորը թուղթ կ'խաղային :

— Օ՛ն , գործէ՛ , Ռատուլ — ըսաւ Աիշ — ահա , պինդ և շուտ :

Արդարեւ՝ Պրքինկէ՛մ , մայր թագուհույն բարե տալէն ետև իր ճամբան կ'շարունակէր դէպ 'ի Ռատուլ : Ռատուլ զանի գիմաւորեց : Աիշ իր տեղը մնաց : Անոնց հետեւեցաւ միայն աչօք :

Այնպէս կարգադրութիւն եղած էր որ երկու երիտասարդներն իրարու հանդիպին խաղացող խմբակին և սրահին մէջ գտնուած պարսպ միջոցին մէջ , մինչդեռ խօսելու համար կանկ առնելով կ'ստըտէին սրահը քանի մը ծանրազուլտ ազատողիներ :

Բայց այն միջոցին որ երկու դժերն իրարու միանալու վրայ էին , երրորդէ մ'ընդհատեցան : Արքային եղբայրն էր որ դէպ 'ի Պրքինկէ՛մ կ'յառաջանար :

Արքայազունն իր վարդազոյն և հոտաէտ շրթանց վրայ ամենասիրուն ժպիտ մ'ունէր :

— Է՛հ , Աստուած իմ — ըսաւ նա՛ սիրաւեա քաղաքավարութեամբ մը — ի՛նչ եկան իմաց տալու ինձ , սիրելիք իմ դուքս :

Պրքինկէ՛մ զլուխը դարձուց . չտեսեր էր արքայազնին գալը : Թեթև գեղնութիւն մ'իւր այտերը բռնեց :

— Տէր իմ — հարցուց նա — ի՛նչ ըսին Ձեր Բարձրութեան որ ձեզի այդչափ մեծ զարմանք պատճառելու տեղի տուած լինի :

— Այնպիսի բան մ'որ զիս յուսահատ կ'ընէ , պարոն — ըսաւ իշխանը — բան մ'որ բոլոր արքունեաց սուղ պիտի պատճառէ :

— Ա՛հ , Ձեր Բարձրութիւնը չափազանց բարի է — ըսաւ Պրքինկէ՛մ — վասն զի կ'նայիմ որ իմ չուխ վրայ է ձեր խօսքը :

— Ճիշտ այդպէս :

— Ահա՛ղ , տէր իմ , հազիւ հինգ վեց օր է որ Բարիւղ կը գտնուիմ , և իմ չուս միայն ինձի համար սուղ առիթ կրնայ լինիլ :

Աիշ իր կեցած տեղէն այս խօսքը լսեց և ըստ կարգի դուր ելաւ :

— Իր չո՛ւն — մրմնաց նա : — Ի՛նչ կ'ըսէ ուրեմն :

Ֆիլիպ շարունակեց իր շնորհալի դէմքով .

— Պարոն , Մեծին-Բրիտանիոյ թաղաւորն եթէ ձեզ կ'կոչէ , կ'ըմբռնեմ այդ բանը , վասն զի 'Նորին Աեհափառութիւնը Շարլ Բ , որ իր ազատորդիներն ընտրել զիտէ , չլինար ձեզնէ բաժնուիլ . բայց կարելի չէ որ մենք առանց ցաւի ձեզնէ հեռանանք՝ ուստի ընդունեցէք մեր վշտակրութեան յայտարարութիւնը :

— Պարոն — ըստ գոքսը — հատապէք որ եթէ Գրանսայի արքունիքէն կ'հեռանամ . . . :

— Պատճառն այն է որ ձեզ կ'կոչեն , կ'հասկընամ այդ , բայց վերջապէս՝ եթէ կ'կարծէք թէ իմ փափաքս թաղաորին մօտ կ'չլու մ'ունի , պատրաստ եմ Նորին Ահհափառութիւնն աղաչել որ քիչ մ'ատեն ևս ձեզ մեզի հետ թողու :

— Այդչափ բարեյօժարութիւն զիս չափազանց շնորհատարտ կ'ընէ , տէր իմ — պատասխանեց Պրքինկհէմ — բայց ստիպողական հրամաններ ստացած եմ : Իմ բնակութիւնս ՚ի Գրանսա քիչ ատենի համար էր , քիչ մ'երկնցուցի , իմ շնորհալի վեհապետիս անհաճոյ երեւելու աչքս առնելով : Այսօր միայն կ'յիշեմ որ չորս օրէ վեր պարտաւոր էի մեկնիլ :

— Ո՛հ — ըրտ արքայազուներ :

— Այո՛ , բայց — յարեց Պրքինկհէմ ձայնը բարձրացնելով , այնպէս որ իշխանուհիներն ալ լսեն ըսածը — բայց ես կ'նմանիմ Արևելքի այն մարդուն , որ շատ օրեր խեղդ գարձաւ աղւոր երազ մը տեսնելուն , և որ՝ օրին մէկը՝ բժշկուած արթնցաւ , այսինքն բանաւոր : Գրանսայի արքունիքն այնպիսի արբշտութիւններ ունի որ այս երազին կրնան նմանիլ , տէր իմ , բայց վերջապէս մարդ կ'արթննայ և մեկնի : Ուստի չեմ կարող աւելի երկար ատեն մնալ աստ , ինչպէս որ Ձեր Բարձրութիւնը կ'հաճի խնդրելու :

— Էւ երբ կ'մեկնիք — հարցուց Ֆիլիպ մեծ հողասիրութեան գէմքով մը :

— Ատղը պիտի մեկնիմ , տէր իմ . . . : Երեք օրէ վեր բոլոր կառքս ու սպասաւորներս պատրաստ են :

Օրլէանի գոքսը գլխի շարժում մ'ըրաւ որ կ'նշանակէր .

— Քանի որ այդպէս որոշած էք , դոքս , խօսելիք մը չունիմ :

Պրքինկհէմ անոր այս շարժման պատասխանեց ժպտի մը ներքև պահելով իր սրտին ճնշումը :

Օրլէանի գոքսն եկած կողմը դառնալով հեռացաւ :

Բայց նոյն պահուն՝ զիմացի կողմէն՝ Վիշ կ'յառաջանար : Ռատու վախցաւ որ անհամբեր երիտասարդը՝ ինքն անձամբ զալով չառաջարկէ , ուստի անոր ստաջն ընկաւ :

— Ո՛հ , ո՛հ , Ռատու , այժմ՝ ամէն ինչ անօգուտ է — ըստ Վիշ իր երկու ձեռքը գլխին կարկառելով և սիւնի մ'ետեւը քաշելով :

— Ո՛հ , դոքս , դոքս — ըստ Վիշ — ներեցէք ինձ ձեզի գրածս , խնդրե՛ք : Գարձուցէք ինձ գիրս :

— Իբաւ է — պատասխանեց նորատի գոքսը մեղամաղձիկ ժպտով մը — չէք կարող այսուհետև զիս մեղադրել :

— Ո՛հ , դոքս , ներեցէք ինձ . . . իմ բարեկամութիւնս , իմ յաւիտենական բարեկամութիւնս :

— Արդարև , ինչո՞ւ համար զիս մեղադրէք , կոմս , քանի որ անորմէ կ'հեռանամ , քանի որ այսուհետև չպիտի զանի տեսնեմ :

Ռատու այս խօսքը լսեց , և հասկընալով որ իր ներկայութիւնն այնուհետև անօգուտ էր երկու երիտասարդաց մէջ , որ իրարու բարեկամական խօսքեր միայն ունէին , քանի մը քայլ հեռու գնաց : Այս շարժումով Աարդի հանդիպեցաւ :

Աարդ՝ Պրքինկհէմի չորին վրայ կ'խօսէր : Իր խօսակիցը Լօրէնի ասպետն էր :

— Խոհական նահանջ — կ'ըսէր Աարդ :

— Ինչո՞ւ համար այդպէս կ'ըսես :

— Ասան զի մեր սիրական դքսին սրի հարուած մը կ'խնայէ : Էւ ամենքը սկսան ծիծաղիլ :

Ռատու սրամտելով դարձաւ ունքը սրստած , արխնը գլուխը զարկած , բերանն արհամարհոտ :

Լօրէն ասպետն իր ոտից վրայ շրջաջեց , Աարդ անվրդով մնաց և սպասեց :

— Պարոն — ըստ Ռատու՝ Աարդին — միթէ բացակաները նախատեսու սովորութենէդ չպիտի հրաժարիս . երեկ Պ . տ'Արգաննանը կ'զարնէիր , այսօր ալ կարող Պ . Պրքինկհէմին է :

— Պարոն , պարոն — ըստ Աարդ — քաջ զիտես որ երբեմն ներկայ դանուողներն ալ կ'նախատեսմ :

Աարդ Ռատուի կ'գպէր , իրենց ուտերն իրարու կ'կաթնէին , իրենց գէմքն իրարու կողմը կ'ծռէին որպէս թէ փոխադարձ վառէին իրենց շնչառութեան և բարկութեան կրակով :

Գիրքին էր զիտել որ մին ասեւ թեան կատարն էր, միսը համբերութեան ծայրը :

Յանկարծ շնորհալի և մարգավար ձայն մը լսեցին որ իրենց ետեէն կ'ըսէր .

— Կարծեմ թէ անուս տուին :

Վարդ և Ռատլ դարձան, տ'Արդանեանն էր որ՝ աչքը յայտուն և համարձակ եկաւ իր ձեռքը Վարդի ուսին վրայ դրաւ :

Ռատլ քայլ մը քաշուեցաւ հրացանակրին տեղ բանալու, Վարդ բոլոր մարմնով դող ելաւ, գոյնը նետեց, բայց տեղէն չշարժեցաւ ամենին :

Տ'Արդանեան մըշտ իր ժպիտով, Ռատլին ձգած տեղը բռնեց :

— Շնորհակալ եմ, սիրելիք իմ Ռատլ — ըսաւ նա : — Պ, Վարդ, ձեզի հետ խօսելիք ունիմ : Ռատլ, մի հեռանար, ամէն մարդ կրնայ մտիկ ընել Պ, Վարդի ըսելիքս :

Այս ժպիտն անցաւ, և իր ակնարկը սլաղ ու սրողվառի պէս սուր դարձաւ :

— Ձեր հրամանին պատրաստ եմ — ըսաւ Վարդ :

— Պարոն — վրայ բերաւ տ'Արդանեան — 'ի վաղուց ձեզի հետ խօսելու առիթ կ'փնտռէի, այսօր միայն դտայ այդ առիթը : Սակայն այս տեղը յարմար չէ, իրտի : Բայց եթէ մինչև սենեակս դալու ծանրութիւնն ասնէք, դէշ չլինիր, և իմ սենեակս ալ ճիշտ սրահին յանդող սանդղին մօտ է :

— Ձեզի հետ դալու պատրաստ եմ, պարոն — ըսաւ Վարդ :

— Միթէ այս տեղ մինամկ էք, պարոն — հարցուց տ'Արդանեան :

— Ո՛չ, իմ հետս են Պ, Մանիքան և Աիշ, իմ երկու բարեկամներս :

— Լաւ — յարեց տ'Արդանեան — բայց երկու անձինք քիչ են, ուրիշ մէկ քանի հոգի ալ կարող էք գտնել, այնպէս չէ :

— Անտարակոյս — ըսաւ երիտասարդը, որ չլիաէր թէ Պ, տ'Արդանեանի նպատակն ինչ էր — որչափ մարդ որ կամիք կըրնամ գտնել :

— Բարեկամներ :

— Այո՛, պարոն :

— Լաւ բարեկամներ :

— Անտարակոյս :

— Լաւ ուրեմն, պաշարնիդ ըրէք, կ'աղաչեմ : Եւ դու, Ռատլ, եկուր, եկուր . . . : Պ, Աիշն ալ միասեղ բեր, Պ, Պըքինկհէմն ալ բեր, խնդրեմ :

— Ո՛հ, Տէր Աստուած, այդ ինչ աղմուկ է — պատասխանեց Վարդ ժպտելու փորձ փորձելով :

Հրամանատարը ձեռք անոր թեթև նշան մ'ըրաւ լուծիւն պատուիրելու համար : Եւ իր սենեկին կողմը զիմեց :

Բ

ՋՐԻ ՄԷՋ ՇԱՏ ՄԸ ՍՐԻ ՀԱՐՈՒԱԾՆԵՐՈՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Տ'Արդանեանի սենեակը բնաւ թափուր չէր. Լա Պէր կոմսը կ'սպասէր՝ պատահանի մ'որմածակին մէջ նստած :

— Լաւ ուրեմն — հարցուց նա տ'Արդանեանի երբ անոր ներս մտնելը տեսաւ :

— Լաւ ուրեմն — ըսաւ տ'Արդանեան — Պ, Վարդ կարճ այցելու թիւն մ'ընելով զիս պատուելու կ'հաճի, իր և մեր քանի մը բարեկամաց ընկերակցութեամբ :

Արդարեւ՝ հրացանակրին ետեէն երեցան Վարդ, Մանիքան և Աիշ և Պըքինկհէմ անոնց կ'հետեւին, բաւական զարմացած և չզիտնալով թէ ինչ կ'ուզէին իրենցմէ :

Ռատլ երկու երեք աղատորդիներու հետ կ'դար : Իր ակնարկը երբ ներս մտաւ՝ սենեկին ամէն կողմերը շրջեց : Կոմսը տեսաւ և զնաց անոր մօտ նստաւ :

Տ'Արդանեան կրցած չափ մարդավարութեամբ կ'ընդունէր իր այցելուները : Իր հանդարտ և քաղաքավար կերպարանը պահէր էր :

Այն տեղ բոլոր ներկայ գտնուողներն՝ արքունիքը պաշտօն վարող բարձր և ազնուական մարդիկ էին :

Ապա՝ ամէն մէկէն ներսում խնդրելէն ետև որ զանոնք անհանդիստ կ'ընէր, զէպ 'ի Աարդ գարձաւ, որ ինքն իր վրայ ունեցած իշխանութեան ներհակ, չէր կարող կերպարանին վրայ երեցած մտայոյզ զարմանքը փարատել :

— Պարոն — ըսաւ նա — Տիմակ որ թագաւորին պալատէն դուրս կ'գտնուէր, Տիմակ որ կրնանք բարձր խօսիլ առանց պատշաճութեանց զէմ գործելու, Տիմակ պիտի յայտնեմ ձեզ թէ ինչո՞ւ համար աղաչեցի ձեզ իմ սենեակս գալու, միանգամայն այս պարոններն ալ հրաւիրելով : Խմ բարեկամէս Աա Ֆէր կոմսէն իմացայ թէ իմ վրայ նախատալից ձայներ կ'տարածէք ասդիս անդին. ըսեր էք թէ զիս իբրև ձեր անհաշտ թշնամին կը բռնէք, վասն զի ձեր հօրը թշնամին եղած եմ :

— Ճշմարիտ է, պարոն, այդ բանն ըսի — վրայ բերաւ Աարդ, որու գունատ դէմքը թեթև կարմրութեամբ մը փայլեցաւ :

— Այսպէս ուրեմն կ'ամբաստանէք զիս իբրև թէ յանցանք մը, սխալմունք մը կամ վատութիւն մը գործեր եմ : Ասողաչիմ որ ձեր ամբաստանութիւնը ճշդէք :

— Ա կաներո՞ւ առջև, պարոն :

— Այո՛, անտարակոյս, վկաներու առջև, և կ'տեսնէք որ պատուոյ խնդիրներու մասին ձեռնհաս մարդիկ ընտրեր եմ :

— Պարոն, իմ փափկութեանս արժէքը չէք ճանչիր : Իրաւ է որ ձեզ ամբաստանեցի, բայց ամբաստանութեան վրայ գաղանի անցայ. բնաւ մանր պարապայի մէջ չմտայ. բաւական սեպեցի իմ ատելութիւնս միայն բացատրել այնպիսի մարդոց առջև որոց համար զրեթէ պարտաւորութիւն մ'էր նոյն ամբաստանութիւնս ձեզի հաղորդել : Այս իմ գաղտնապահութիւնս առ ոչ ինչ համարեցէք, թէև լուծութիւնս ձեզի նպաստաւոր էր : Պ. տ'Արդանեան, ձեր սովորական խոհականութիւնը չէմ տեսներ այդ ընթացքին մէջ :

Տ'Արդանեան պիտի մէկ ծայրը խածաւ :

— Պարոն — ըսաւ — արդէն պատիւ ունեցայ աղաչել ձեզ

ինձի դէմ ունեցած տրտունջներդ սահմանել : Ա՛հ, խօսեցէք, պարոն — յարեց տ'Արդանեան խոնարհելով — ամենքնիս ալ ձեզ մտիկ կ'ընենք :

— Աա ուրեմն, պարոն, խնդիրը չէ թէ ինձի դէմ այլ հօրս դէմ եղած զրկանաց վրայ է :

— Արդէն այդ ըսիք :

— Այո՛, բայց կան բաներ որոց վրայ մարդ վարանմամբ կը խօսի :

— Եթէ այդ վարանումն իրօք ունիք, կ'խնդրեմ վանեցէք զայն, պարոն :

— Հասցա թէ որ ամօթալի գործ մ'երևան գայ, խօսիմ :

— Խօսեցէք, ինչ որ է, հոգ չէ :

Այս տեսարանիս ներկայ գտնուողները սկսան իրարու երես նայիլ կերպ մը մտատանջութեամբ : Սակայն հանդարտեցան դիտելով որ տ'Արդանեանի երեսը բնաւ այլայլութիւն մը չէր յայտնէր :

— Աա ուրեմն, մտիկ ըրէք : Հայրս կին մը կ'սիրէր, ազնուական կին մը, այս կինն իմ հայրս կ'սիրէր :

Տ'Արդանեան Աթոսին հետ ակնարկ մը փոխանակեց :

Աարդ շարունակեց :

— Պ. տ'Արդանեան քանի մը նամակներ հնարքով մը ձեռք ձգեց որոնք ժամագրութիւն մը կ'նշանակէին. ծայտելով սպասեալ անձին տեղն անցաւ և մթութեան մէջ իր կամքը կատարեց :

— Իրաւ է — ըսաւ տ'Արդանեան :

Հանդիսականաց մէջ թեթև մրմունջ մը լսուեցաւ :

— Այո՛, այդ վատ գործը կատարեցի : Պարտաւոր էիք յաւելուլ, պարոն, քանի որ այդչափ անկողմնակալ էք, այն ատենն որ ձեր ինձ յանդիմանած դէպքն անցաւ, տակաւին քսան և մէկ տարեկան չէի :

— Բայց դարձեալ գործը նուազ ամօթալի չէ — ըսաւ Աարդ — և բանականութեան տարիքը բաւական է ազատորդի մը անսվայելուչ գործ մը չկատարելու համար :

Նոր մրմունջ մ'ես լսելի եղաւ, բայց զարմանաց և զրեթէ կասկածանաց մրմունջ մը :

— Ամօթալի խաբէութիւն մ'էր, արդարև — ըսաւ տ'Արդանեան — և չսպասեցի որ Պ. Աարդ այդ բանին համար զիս յանդիմանէ որպէս զի ես ալ ինքզինքս յանդիմանեմ, և դառնապէս խակ: Տարիքը զիս սուելի բանաւոր, մանաւանդ աւելի զգաստ ըրաւ, և այդ յանցանքն երկար ցաւերով քաւեցի: Բայց ձեր դատաստանին կ'զիմեմ, պարոններ. այս զէպքը 1626ին կ'սրատահէր, և այս ալ այնպիսի ատեն մ'էր — բարեբաղդ էք որ դուք այս բանս աւանդութեամբ միայն գիտէք — այնպիսի ատեն մ'էր երբ սէրը խղճահար չէր, երբ խիղճերէն սյուրուան պէս թոյն և զմուռս չէին կաթեր: Կորատի զինուորներ էինք միշտ 'ի պայքար, միշտ սուրը պատենէն զուրս բռնած, կամ զէթ կիսովին քաշած. միշտ երկու սրի մէջ, պատերազմը մեզ կ'խտայցնէր, և կարտինալն ալ համբերել չգիտէր: Ի վերջէ, զըջացի, և դարձեալ, այսօր կ'զգլամ, Պ. Աարդ:

— Այո՛, պարոն, կ'իմանամ այդ բանը, վասն զի գործն ապաշաւ կ'սրահանջէր. բայց դարձեալ կնկան մը կորստեան պատճառն եղաք: Այն կինն որու վրայ կ'խօսիք, իր կրած ամօթէն քօշարկեալ, իր նախատինքնն նկուն՝ այն կինն որու խօսքը կ'ընէք, խոյս տուաւ, Ֆրանսայէն հեռացաւ և անոր ինչ լինելն ոչ որ իմացաւ:

— Ո՛հ — ըսաւ Լա Ֆէր կոմսը թեւ զէպ 'ի Աարդ տարածելով չարագուշակ ժպիտով մը — պարոն, անհոգ եղիք, զանի տեսնող կայ, և այս տեղ իսկ կ'գտնուին քանի մ'անձինք՝ որ անոր խօսքը լսած լինելով, կարող են զանի ճանչել երբ որ այժմ անոր նկարագիրն ընեմ:

Քսան հինգ տարեկան, նիհար, դունատ և դեղձան կին մ'էր, և Անկլիա կարդուած էր:

— Կարդուած էր — ըսաւ Աարդ:

— Ա՛հ, չգիտէք ուրեմն որ կարդուած էր: Կնայիք ձեզնէ լսու ևս տեղեակ ենք բանին, Պ. Աարդ: Գիտէք արդեօք որ սփարաբար զանի Միլէտի կ'կոչէին առանց այս անուան ուրիշ անուն մը յաւելլու:

— Այո՛, պարոն, գիտեմ այդ բանը:

9188
39

— Լա՛ն, այդ կինը, որ Անկլիայէն կ'գար, Անկլիա դարձաւ, երեք անգամ տ'Արդանեանի կենաց զէմ դաւաճանելէն ետև: Իբրաւունք ունէր, այնպէս չէ. ես ալ այդպէս ըսեմ, վասն զի Պ. տ'Արդանեան զանի նախատեր էր: Բայց ինչ որ իբրաւունք չէ, այս է որ յԱնկլիա՝ իր հրապոյրներով այդ կինը՝ լորտ Աինգրի ծառայութեան գտնուող Ֆէլտօն անուն մարդն որսայ: Կը դունատիք, Պ. Պրքինկհէմ, աչերդ բարկութեամբ և միանգամայն վշտօք կ'վառին: Ուրեմն դուք աւարտեցէք այս պատմութիւնը, միւրոտ, և Պ. Աարդի ըսէք թէ ինչ կին էր այն կինն որ ձեր հօրը սպաննողին ձեռքը սուր տուաւ:

Ամէն բերնէ աղաղակ մը բրդաւ: Կորատի դուքսը քրտնաթոր ճակատին թաշկինակի մը տարաւ:

Բոլոր հանդիսականաց մէջ մեծ լուռութիւն տիրեր էր:

— Կնայիք, Պ. Աարդ — ըսաւ տ'Արդանեան, որ այս նկարագրէն այնքան աւելի զգածուեցաւ որչափ որ իր յատուկ յիշատակներն Աթոսի խօսքէն կ'զրդուէին — կ'նայիք որ իմ յանցանքս հողոյ մը կորստեան պատճառ չէ, և թէ այն հողին արդէն զլիսովին կորսուած էր: Ուրեմն այս կատարեալ խոստովանութիւն մ'է: Արդ՝ այժմ որ այս ստուգուեցաւ, կ'մնայ ինձ, Պ. Աարդ, խոնարհաբար ներում խնդրել ձեզնէ այս ամօթալի գործին համար, ինչպէս որ իրօք ձեր հօրմէն ևս պիտի խնդրէի, եթէ տակաւին ապրէր, և եթէ Շարլ Աին մահաւանէ ետք՝ 'ի Ֆրանսա վերադարձիս զանի գտնէի:

— Բայց շատ է այդ, Պ. տ'Արդանեան — գոչեցին աշխուժիչաւ մը ձայներ:

— Ո՛չ, պարոններ — ըսաւ հրամանատարը: — Այժմ, Պ. Աարդ, յուսամ որ մեր երկուքին մէջ կնձխը բարձաւ և իմ վըրայ չարախօսելու չպիտի յանդոնիք այսուհետև: Բուսած լմնցած գործ մ'է այս, այնպէս չէ:

Աարդ խոնարհութիւն ըրաւ կմկմալով:

— Կ'յուսամ նաև — շարունակեց տ'Արդանեան երիտասարդին մօտենալով — որ այսուհետև ուրիշի վրայ ևս չար չպիտի խօսիք, ինչպէս այդ ցաւալի սուլորութիւնն ունիք, վասն զի ձեզի նման



խճահար և մաքրակրօն անձ մը, դուք որ երիտասարդական վրի-
պակ մը երսուն հինգ տարուան զինուորի մ'երեսին կ'տաք, դուք,
կ'ըսեմ, այդ խոջի մաքրութեան օրինակը կ'ընծայէք, լուեւայն
խօսք կ'տաք անշուշտ խոջի և պատուոյ դէմ չըրծելու: Արդ՝
Պ. Վարդ, մտիկ ըրէք թէ ինչ պիտի ըսեմ դեռ ևս ձեզի.
զգուշացիք որ մինչև ականջս չհասնի պատմութիւն մ'որուն մէջ
ձեր անունը պիտի գտնուի:

— Պարոն — ըսաւ Վարդ — անօգուտ է ոչ ինչ բանի հա-
մար սպառնալը:

— Ո՛հ, տակաւին չլինցուցի խօսքս, Պ. Վարդ — վրայ բե-
րաւ ա'Արդանեան — և դատապարտուած էք դեռ ևս ինձ մտիկ
ընելու:

Հանդիսականաց շրջանակը հետաքրքրութեամբ աւելի մօտեցաւ:

— Քիչ մ'առաջ կ'նկան մը և հօրդ պատուոյն վրայ բարձրա-
նայն կ'խօսէիք. մեզի հաճելի եղաք այդպէս խօսելով. վասն զի
քաղցր է մտածել որ այդ փափկութեան և ուղղարտութեան զգա-
ցումն որ ըստ երևոյթին մեր հօգուոյն մէջ անոյ էր, մեր զա-
ւակաց հօգուոյն մէջ կենդանի է, և վերջապէս զեղեցիկ բան է
տեսնել երիտասարդ մ'որ իր ունեցած տարիքին մէջ սովորաբար
կանանց պատուոյն դող կ'ընին, զեղեցիկ է տեսնել այս երիտա-
սարդը նոյն պատուոյն ակնածու և պաշտպան:

Վարդ շրթերն ու բուռները կ'պնդէր, և յայտնադէտ կ'երևէր
թէ շատ անհանդիստ էր իմանալու թէ Պ. ա'Արդանեան, որու
բնաբանն այնչափ զէշ կ'սկսէր, ս'եր պիտի բերէր կապէր խօսքը:

— Ուրեմն ինչպէս կ'պատահի — շարունակեց ա'Արդանեան
— որ համարձակեր էք Պրաժլօն գերկամինն ըսել թէ իր մայրը
բնաւ չճանչեր:

Ռատուի աչերը շողացին:

— Ո՛հ — զօչեց նա ընդ յառաջ սրանալով — պարոն աս-
պետ, պարոն ասպետ, այդ խնդիրն իմ անձնականիս վերաբե-
րեալ խնդիր մ'է:

Վարդ չարամտութեամբ ժպտաց:

Տ'Արդանեան թեովը Ռատուը հրեց:

— Մի ընդհատեր խօսքս, երիտասարդ դու — ըսաւ նա:
Եւ Վարդն իր ակնարկին ներքեւ ընկճելով:

— Այս անգլ այնպիսի խնդրոյ մը վրայ կ'ճառեմ որ սրով
չլուծուիր — շարունակեց նա: — Ասոր վրայ պատուաւոր մարդոց
առջև կ'խօսիմ, որոնք քանի քանի անգամ սուրբ պատենէն հա-
նած են: Պիտմամբ ընտրեցի զանոնք: Արդ՝ այս պարունները զի-
տեն որ ամէն զաղանիք որու համար մարդ կ'մենամարտի՝ զաղա-
նիք լինելէ կ'զգարի: Աստի իմ հարցումն Պ. Վարդին կ'կրկի-
նեմ: Ի՞նչ առթիւ նախատեցիք այս երիտասարդն իր հայրն ու
մայրը նախատելով միանգամայն:

— Բայց կ'երեի ինձ — ըսաւ Վարդ — որ մարդուս խօսքն ա-
զատ են, երբ որ պատրաստ կ'գտնուի քաջասիրտ մարդու մը
ձեռքին ներքեւ դանուող ամէն միջոցներով զանի պաշտպանելու:

— Ա՛հ, պարոն, ըսէք ինձ որո՞ք են այն միջոցներն որով
քաջասիրտ մարդ մը կարող լինի չարախօսութիւն մը պաշտպանել:

— Սրով:

— Ոչ միայն տրամաբանութեան դէմ կ'զործէք այդ ըսելով,
այլ և կրօնի և պատուոյ. շատ մարդոց կեանքը վտանգի կ'ենթար-
կէք, առանց ձեռնին 'ի համար առնու' որ շատ վտանգեալ կ'ե-
րեի ինձ: Արդ՝ ամէն նորաձեւութիւն կ'անցնի, պարոն, և մենա-
մարտութեանց նորաձեւութիւնն ալ անցաւ, թող թէ Նորին Աե-
հափառութեան հրովարտակները մենամարտութիւնը կ'արգիլեն:
Ուրեմն, ձեր ասպետական զաղափարներուն հետ համաձայն զըտ-
նուելու համար, պարտաւոր էք երթալ Պ. Ռատուէն ներողու-
թիւն խնդրել, պիտի ըսէք անոր որ թեթեւ խօսք մը ձեր բերնէն
հաննելու համար կ'ցաւիք, թէ իր տօհմային ազնուականութիւնն
ու մաքրութիւնը ոչ միայն սրտին այլ իր կենաց բոլոր զործոց
մէջ գրոշմուած են: Արդ՝ պիտի ընէք, Պ. Վարդ, ինչպէս որ
փոքր ինչ առաջ ես ըրի, ես հինօրեայ հրամանատար մը, ձեր
նորաբոյս պետին առջև:

— Ապա եթէ չընեմ — հարցուց Վարդ:

— Լաւ ուրեմն, այն ատեն պիտի պատահի . . . :

— Ինչ որ արդիւել կ'արծէիք — ըսաւ Վարդ ծիծաղելով —

սա պիտի պատահի որ ձեր հաշտարարութեան միջոցները թաղա-
ւորին արդէլական հրամաններուն դէմ գործելու պիտի եղըին :

— Ո՛չ, պարոն — ըսաւ հրամանատարը հանդարտօրէն — և
կ'սխալիք :

— Ուրեմն ի՞նչ պիտի պատահի :

— Սա պիտի պատահի որ երթամ պիտի թաղաւորը տեսնե-
լու, որու հետ բաւական լաւ յարաբերութեան մէջ եմ, թաղա-
ւորը՝ որու քանի մը ծառայութիւններ ընելու բարեբաղդութիւնն
ունեցայ այն ժամանակն երբ դուք տակաւին ծնած չէիք, թա-
ղաւորը՝ վերջապէս՝ որ իմ խնդրոյս վրայ՝ այժմ իսկ ստորագրեալ
բաց թուղթ մը ղրկեց ինձ Պ. Պէզմօ տը Մօնլըդէօնի ուղղեալ,
որ Պասդէյլի կառավարիչն է, և թաղաւորին պիտի ըսեմ. « Վե-
հափառ, մարդ մը վատօրէն նախատեց Պ. Պրաթլօնը՝ իր մօրն
անձին մէջ : Այս մարդուն անունը ձեր ղրկած ստորագրեալ
թղթին մէջ ղրկեցի, այնպէս որ Պ. Վարդ երեք տարուան հա-
մար Պասդէյլ պիտի մնայ » :

Եւ տ'Արդանեան՝ թաղաւորին կողմէ ստորագրեալ հրամանա-
դիրն հանելով՝ Պ. Վարդին երկնցուց : Յետոյ՝ դիտելով որ ե-
րիտասարդը քաջ համոզուած չէր և այս սղգարարութիւնն իբ-
րև ունայն սպառնալիք կ'ընէր, ուսերը բարձրացուց և սղաու-
թեամբ դէպ ՚ի սեղանը դիմեց, ասոր վրայ կազամար մը և ղրկչ
մը կային, որու երկայնութիւնը Բորթոս տեղագրին ահ պիտի
աղդէր :

Այն ատեն Վարդ տեսաւ որ սղառնալիք իրական բան մ'էր.
և Պասդէյլ այն ժամանակներն արդէն ահուելի էր :

Ռաուլի կողմը քայլ մ'առաւ Վարդ և ղրեթէ անիմանալի ձայ-
նով մը .

— Պարոն — ըսաւ — Պ. տ'Արդանեանի քիչ մ'առաջ ինձ
թելագրած ներողութիւնը ձեզնէ կ'խնդրեմ, քանի որ ստիպուած
եմ խնդրելու :

— Սպասեցէք, պահ մը սպասեցէք, պարոն — ըսաւ հրացա-
նակիրը խիստ մեծ հանդարտութեամբ — իմ խօսքս ծուռ կ'մեկ-
նէք : Ես չըսի՝ « Գրեգորիոս » ե՞մ զայն խնդրելու, այլ ըսի . ի՞նչ

հարգորէ զե՛ս խնդրելու : Այս բառը միւսէն լաւագոյն է, հաւ-
տացէք ինձ . այնչափ աւելի պիտի արժէ որչափ որ ձեր ղղայմանց
ճշմարիտ բացատրութիւնը պիտի լինի :

— Ուրեմն կ'հաւանիմ — ըսաւ Վարդ :

— Բայց ճշմարիտը, պարոններ, խոստովանեցէք որ սրի հա-
րուած մը մարմնոյն թափ տալ լաւ ևս էր քան թէ այսպիսի
բռնութիւն մը :

— Ո՛չ, պարոն — սպտասխանեց Պրքինկէ՛մ — վասն զի սրի
հարուածը՝ եթէ ընդունիք, չնշանակէր, թէ իրաւունք ունիք կամ
անիրաւ էք, այս միայն կ'նշանակէ որ քիչ շատ ճարպիկ էք :

— Պարոն — զոչեց Վարդ :

— Ա՛հ, դէշ բան մը պիտի ըսէք հիմակ — ընդմիջեց տ'Ար-
դանեան Վարդին խօսքը կտրելով — և ձեզի ծառայութիւն մը
կ'ընեմ այդ տեղ կեցնելով :

— Այս է ձեր ամէն ըսելիքը — հարցուց Վարդ :

— Այս է բոլորովին — սպտասխանեց տ'Արդանեան — և այս
պարոններն ու ես ձեզնէ զոհ ենք :

— Հաւտացէք ինձ, պարոն — սպտասխանեց Վարդ — որ ձեր
հաշտութիւնները բնաւ ճարտար չեն :

— Եւ ինչո՞ւ համար այդպէս :

— Վասն զի զրաւ կ'ընեմ որ Պ. Պրաթլօն և ես իրարմէ պի-
տի բաժնուինք առաջուանէ աւելի թշնամի :

— Կ'սխալիք իմ մասիս, պարոն — սպտասխանեց Ռաուլ —
և ձեզի դէմ ամենեկին խեթ մը սղահած չեմ սրտիս մէջ :

Այս վերջին հարուածը ղՎարդ ձղմեց : Իր աչքը՝ իբրև մոլո-
բաղին մարդ՝ չորս կողմը նետեց :

Տ'Արդանեան՝ այս բացատրութեան ներկայ գտնուելու բարե-
հաճող մարդոց շնորհալի կերպով բարև սուաւ, և ամէն մէկը
քաշուեցաւ անոր ձեռքը սեղմելով :

Եւ ոչ մէկուն ձեռքը Վարդին երկնցաւ :

— Ո՛հ — զոչեց երիտասարդն իր սիրտը կըծող կատաղութեան
ներքև ճնշուելով — ո՛հ, ուրեմն չպիտի գտնեմ մէկն որու վրայ
իմ վրէժս լուծելու կարողանամ :

— Ի՞նչպէս չէ, պարոն, վասն զի ես ահա կամ — ըսաւ ձայն մը սպառնալից :

Վարդ զլուխը դարձուց և Պրքինկհէմի դուքսը տեսաւ, որ անտարակոյս այս զիտմամբ մնալով, անոր մօտեցեր էր :

— Դ՞ո՞ւր, պարոն — գոչեց Վարդ :

— Այո՛, ես : Ես Ֆրանսայի թագաւորին հպատակը չեմ, ես, պարոն, ես այս հողին վրայ չպիտի մնամ, քանի որ Անկլիա գնալու պիտի մեկնիմ : Ես ալ յուսահատութիւն և կատուութիւն ժողովեցի, ուստի՛ ես ալ՝ ձեզի պէս՝ մէկուն վրայ վրէժս թափելու պէտք կ'ըզամ : Շատ կ'հաւանիմ Պ. տ'Արդանեանի սկզբունքը, բայց ստիպուած չեմ ձեզի հետ ըստ այնմ վարուելու : Ես անկլիացի եմ, և ես ալ ըստ կարգի կ'ըամ առաջարկելու ձեզ ինչ որ ուրիշներու առաջարկեցիք ՚ի զուր :

— Դ՞ո՞ւր :

— Ազէ՛, սիրելիդ իմ՝ Պ. Վարդ, քանի որ այդչափ զայրացած էք, զիս ձեզի նպատակ բռնեցէք : Երսուն չորս ժամէն քալէ պիտի գտնուիմ : Ինչի հետ եկէք, միասին երթալով ճամբան աւելի կարճ պիտի երևի մեզ քան թէ բաժնուած ուղևորելով : Այն անդ սուրերը կ'քաշենք, ծովեզրը ծածկող աւաղին վրայ, և որ օրը վեց ժամ Ֆրանսայի հողն է, բայց միւս վեց ժամու մէջ Աստուծոյ հողն է :

— Շատ աղէկ — սխառտանեց Վարդ — կ'ընդունիմ :

— Տէ՛ր վկայ — ըսաւ գուքսը — եթէ զիս սպաննէք, սիրելիդ իմ Պ. Վարդ, ինչ նշանաւոր ծառայութիւն մը պիտի հատուցանէք արդարև :

— Իմ ձեռքէս եկածը պիտի ընեմ ձեզի հաճելի լինելու համար — ըսաւ Վարդ :

— Այսպէս սրողած է, ուրեմն, ձեզ իմ հետս պիտի տանիմ :

— Ձեր հրամանին պատրաստ պիտի գտնուիմ, ճշմարիտը, հանգարտելու համար մեծ մահաբեր վտանգի մը կարօտ էի :

— Լաւ ուրեմն, ձեր խնդրածը դտաք : Ծառայ եմ, Պ. Վարդ. վաղն առտու իմ սենեկատանս չուին ճշգրիտ ժամը ձեզի պիտի իմացնէ. իբրև երկու լաւ բարեկամներ իրարու հետ պիտի ճամ-

բորդենք : Ես շտապեալ մարդու պէս շոյտ ընդ փոյթ կ'ուղևորիմ սովորաբար : Երթաք բարեաւ :

Պրքինկհէմ բարեեց և Վարդ թագաւորին սալատը մտաւ : Վարդ՝ Բալէ-Բուայալէն զայրացած գուրս ելաւ և իր բնակած տան ճամբան բռնեց արագօրէն :

Գ

ՊԷԶՄՕ ՄՕՆԼԸԶԷՕՆ

Այսպէս Վարդին տրուած փոքր ինչ ծանր դասէն ետք՝ Աթոս և տ'Արդանեան միասին սանդղէն վար իջան որ Բալէ-Բուայալի բակը կ'տանի սկսուած խօսակցութիւն մը շարունակելով .

— Իսկ ես, Պլուա կ'ուղեմ դառնալ — կ'ըսէր կոմսը : — Արքունեաց բոլոր այս շարեալ վայելչութիւնը, բոլոր այս դաւերն ինչ զգուելի են : Այսօրուան քծուծ բաներու վրայ աչք դոյող մարդ չեմ այսուհետև : Աստուծոյ մեծ դրքին մէջ շատ աղւոր, շատ մեծ բաներ կարդալուս չեմ կարող մտադիր լինիլ այն մանր մունր խօսից զոր այս մարդիկ իրարու ականջը կ'փսփսան զիրար խարբելու համար : Բարեկամ, աւելի մեծ փառասիրութիւններ ունիմ : Պաշտօնեայ լինիլ, դերի լինիլ, հեռի իղնէ այդ բանը : Միթէ աւելի մեծ չեմ, ոչ ինչ եմ : Այլ չեմ որ երբեմն զիս մեծն Աթոս կ'անուանէիր : Արդ՝ դրաւ կ'գնեմ որ այդ մակդիրը չպիտի տայիր ինչ՝ եթէ պաշտօնեայ լինէի : Ա՛չ, ո՛չ, այսպէս անձնատուր չեմ լինիր :

— Աւրեմն, այլ ևս չխօսինք այս խնդրոյն վրայ : Հրաժարէ՛՛ ա՛մէն բանէ, նոյն իսկ եղբայրութենէ :

— Ա՛հ, սիրելի բարեկամ, այդ ըսածդ ինչ շատ ծանր կ'երևի : Տ'Արդանեան Աթոսի ձեռքը սեղմեց աշխուժիւ :

— Ա՛չ, ո՛չ, անվախ հրաժարէ՛ քաշուէ՛ : Ռատլ կրնայ առանց քեզի վարուիլ, ես Բարիդ կ'գտնուիմ :

— Լաւ ուրեմն , Պլուս պիտի դառնամ : Այս իրկուն իրարու
հրաժարական բարե պիտի տանք , վաղն այդուն ձիս պիտի հեծնեմ :

— Ձեա կարող սրանդոկդ դառնալ առանձին . ինչո՞ւ համար
Արիմոն հետդ չըերիր :

— Բարեկամդ իմ , Արիմո կ'քնանայ . կանուխկեկ կ'պառկի :
Իմ խեղճ ծերս շուտով կ'յողնի : Պլուսյէն ինձի հետ եկաւ , և
ստիպեցի զինքն որ բնակարանը մնայ . վասն զի , եթէ առանց
շունչ առնու՝ հարկ լինէր Պլուսյէն մեզ զատող քառուսն մղան
տեղ ուղևորիլ , առանց դանդաստելու պիտի մեռնէր : Բայց ես
Արիմոս պահել կ'ուզեմ :

— Աւրեմն քեզի հրացանակիր մը տամ որ ջահը կրէ : Կհէ ,
ո՞վ կայ վարը . և ա'Արդանեան ոսկեղօծ բազրիքին վրայ ծռեցաւ :
Եօթ ութ հրացանակրի զլուխներ երևան եկան :

— Բարեյօժար մէկը կ'ուզեմ — սրուաց ա'Արդանեան — որ-
պէս զի Լա Ֆէր կոմսին ուղեկցի :

— Շնորհակալ եմ ձեր խանդին համար , սարսններ — ըսաւ
Աթոս — չեմ ուզեր ազատորդիներն այդպէս անհանդիսա ընել :

— Սիրով պիտի ուղեկցէի ես — ըսաւ մէկը — եթէ Պ . ա'Ար-
դանեանի խօսելիք չունենայի :

— Ո՞վ է այն — հարցոյց ա'Արդանեան կիսաստուերին մէջ
խօսողը փնտռելով :

- Ես եմ , սիրելիդ իմ Պ . ա'Արդանեան :
- Աստուած վկայ , այս Պէզմօի ձայնն է :
- Նոյն ինքն ես եմ , սարսն :
- Ի՛հ , Պ . Պէզմօ , այդ տեղը՝ բակին մէջ՝ ինչ կ'ընես :
- Ձեր հրամանին կ'սպասեմ , սիրելիդ իմ Պ . ա'Արդանեան :
- Ա՛հ , ինչ անմիտ եմ — մտածեց ա'Արդանեան — իրաւ է ,
ձերբակալութեան մը համար քեզի ազդ ըրի , բայց ինչո՞ւ եկար ,
փոխանակ ախուսպան մը զրկելու :
- Ես անձամբ եկայ , վասն զի ձեզի խօսելիք ունիմ :
- Եւ ինչո՞ւ համար ինձ իմաց չտուիր :
- Ա՛սպասէի — ըսաւ Պէզմօ վախկոտութեամբ :
- Ձեզ կ'թողում . մնաս բարեաւ , ա'Արդանեան — ըսաւ Ա-
թոս իր բարեկամին :

— Մի երթար , Պ . Պէզմօն , Պասդելլի կառավարիչը քեզ
ներկայացնելէս առաջ :

— Պէզմօ բարեկց , նոյնպէս Աթոս :

— Բայց զիրար պիտի ճանչէք — յարեց ա'Արդանեան :

— Անորշակի կ'յիշեմ այս սարսնը — ըսաւ Աթոս :

— Քաջ զիտես , իմ սիրելի բարեկամ , Պէզմօ , թագաւորին
այն պահակն որու հետ կարտինալին օրովն այնպիսի աղւոր դար-
ծեր ըրինք :

— Ատտարեւապէս — ըսաւ Աթոս անուշութեամբ հրաժարա-
կան բարե տալով :

— Լա Ֆէր կոմսն է , որու պատերազմի անունն Աթոս էր —
ըսաւ ա'Արդանեան Պէզմօի ականջին :

— Այո՛ , այո՛ , քաջարի մարդ մը , անուանի չորեցունց մին
— ըսաւ Պէզմօ :

— Ճիշտ այդպէս : Բայց նայինք , սիրելիդ իմ Պէզմօ , խօ-
սակցինք :

— Եթէ կ'հաճիք :

— Նախ՝ հրամաններուն դալով , լմնցաւ , հրաման չկայ : Թա-
ղաւորն արդէն զիտցած անձդ ձերբակալ ընել տալու խորհրդէն
եա կ'կենայ :

— Ա՛հ , զէ՛շ լուր — ըսաւ Պէզմօ հառաչով մը :

— Ինչպէ՞ս , զէ՛շ լուր — գոչեց ա'Արդանեան ծիծաղելով :

— Անտարակոյս — գոչեց Պասդելլի կառավարիչը — իմ կա-
լանատուներս եկամուտներս են :

— Ի՛յ , իրաւ է : Ես այդ կերպով չէի նկատեր խնդիրը :

— Աւրեմն հրաման չկայ :

Եւ Պէզմօ վերստին հառաչեց :

— Գուք — վրայ բերաւ նա — դուք աղւոր վիճակ մ'ունիք ,
հրամանատար , հրացանակրաց տեղակալդ :

— Բաւական լաւ պաշտօն է , այո՛ : Բայց չեմ տեսներ թէ
ինչպէս իմ պաշտօնիս կարօտ կ'քաշես , դու Պասդելլի կառա-
վարիչը , որ Ֆրանայի առաջին զինակն է :

— Քաջ զիտեմ այդ — ըսաւ Պէզմօ արտմային :

— Անօրէն, իբրև ասպշխարող մը կ'ըսես այդ խօսքը: Իմ հասոյթս քու հասոյթիդ դէմ փոխանակելու պատրաստ եմ եթէ կամիս:

— Հասոյթի վրայ չխօսինք — ըսաւ Պէզմօ — եթէ չէք կամիր իմ հոգիս կտոր կտոր ընել:

— Բայց աջ ու ահեակ կ'նայիք որպէս թէ ձերբակալ լինելու կ'երկնչիք, դուք որ ձերբակալ եղողները կ'պահպանէք:

— Ա'նայիմ որ արդեօք մեզ նայող և լսող կայ, և միթէ աւելի ապահով չէր լինէր եթէ մեկուսի խօսակցէինք, միայն թէ այս շնորհն ինձ ընէիք:

— Լաւ, դաւիթն եկէք, իրարու թե մտնենք. փառաւոր լուսընկայ է, և կողմններուն երկայնքը՝ ծառերու ներքև, այդ ձեր սգալի պատմութիւնն ինձ պիտի պատմէք: Եկէք:

— Օ'ն, սուր 'ի ծով — ըսաւ նա — լեզու թափենք, Պէզմօ, ի՞նչ ունիս ըսելու ինձ: Գրաւ կ'գնեմ որ յիսուն հազար Փրանք կ'շահիս Պասդիլի աղաւնիներէդ:

Փոքրիկ Պէզմօն ստքով զարկաւ:

— Աեցիք, կեցիք — ըսաւ ա'Սրդանեան — հիմակ ես քու հաշիւդ պիտի ընեմ: Այոսամ որ անդ սնունդ, բնակարան ունիս և վեց հազար Փրանք թողակ կ'ընդունիս:

— Թո՛ղ այդպէս լինի:

— Յաջող կամ անյաջող տարի՝ յիսուն կալանաւոր պիտի ունենաս անշուշտ, իրարու վրայ հաշուելով ամէն մէկը հազար Փրանք կ'բերէ քեզի:

— Ա'հաւանիմ:

— Ըսել է թէ տարին յիսուն հազար Փրանքի գումար մը կը զոյանայ, երեք տարիէ վեր այդ պաշտօնը կ'վարես, հետևապէս հարիւր յիսուն հազար Փրանք ունիս:

— Փոքրիկ պարագայ մը կ'մտնաք, սիրելիդ իմ Պ. ա'Սրդանեան: Այսինքն դուք հրամանատարի պաշտօնը թաղատորին ձեռքէն ստացաք, մինչդեռ ես կառավարչի պաշտօնը Պ. Գրանայլէյի և Լուվիէրի միջոցաւ ընդունեցայ:

— Ճշմարիտ է, և Գրանայլէյն ալ առանց փոխարինի իր պաշտօնն ուրիշէն յանձնող մարդ մը չէ:

— Ո՛հ, նոյնպէս Լուվիէր: Հետևապէս եօթանասուն հազար Փրանք բաժին հանեցի Գրանայլէյի համար:

— Աղւոր գումար . . . հապա Լուվիէրին:

— Նոյնչափ գումար մ'ալ անոր:

— Անմիջապէս վճարեցիր:

— Ո՛չ բնաւ, անկարելի բան էր: Թագաւորը չէր կամեր, կամ լաւ ևս Պ. Մազարէն չէր կամեր այնպէս մ'երևիլ որ քարակոյտներէ ելնող այն երկու թշուառականները պաշտօնէ կ'ձգէ. ուստի թոյլ տուաւ որ արտաքոյ կարգի պայմանէր առաջարկէն քաշուելէն առաջ:

— Ի՞նչ պայմաններ:

— Սարսափելի բան . . . երեք տարուան եկամուտն իբրև պարգև սուինք:

— Արո՛ղ, այնպէս որ հարիւր յիսուն հազար Փրանքն անոնց ձեռքն անցաւ:

— Ճիշտ այդպէս:

— Եւ ասկից զատ:

— Յիսուն հազար սիուսի գումար մը երեք վճարքով:

— Կարգէ դուրս գումար մ'է:

— Այս բաւական չէ. պայմաններէն մին կատարել չկարենալուս այն պարոնները վերստին իրենց պաշտօնը կ'ստանան: Այս բանս թագաւորին ստորագրել տուին:

— Ահազին բան, անհատաւալի բան է:

— Սակայն այս այսպէս է:

— Այցաւիմ վրայ, իմ խեղճ Պէզմօ: Բայց, սիրելի բարեկամ, կ'զարմանամ թէ ինչո՞ւ համար Պ. Մազարէն այդ կարծեցեալ շնորհն ըրաւ քեզի: Աւելի արգար էր որ նոյնը մերժէր քեզ:

— Ո՛հ, այո՛, բայց իմ պաշտպանս ստիպեց որ այս շնորհն ընէ ինձ:

— Քու պաշտպանդ, ո՞վ է այն:

— Ճշմարիտ վկայ, բարեկամներէդ մին է, Պ. Հէրպլէյ:

— Արամիս:

— Ճիշտ, Արամիսն է: Շատ բարեսիրտ գտնուեցաւ ինձի համար:

— Բարեսիրտ, այդպիսի տանջանայ քեզ ենթարկելուն համար:

— Ուրեմն մտիկ ըրէք, կարտինալին ծառայութիւնը ձեզ կ'ուզէի: Պ. Հէրպլէյ Լուվիէրի և Գրանպլէյի խօսեցաւ ինձի համար. գէ՛մ կեցան. ես անոնց պաշտօնին աչք ունէի. վասն զի գիտեմ թէ ինչ արդիւնք կրնար բերել. Պ. Հէրպլէյի բացուեցայ, իմ ձախորդ վիճակս յայտնեցի. առաջարկեց ինձ որ ամէն մէկ վճարքի ժամանակ ինք պատասխանատու մնայ ինձի համար:

— Բա՛, Արամիւն, ո՛հ, զիս կ'ապշեցնես: Արամիւս քեզի համար պատասխանատու մնայ:

— Իբրև մեծանձն մարդ: Գրանպլէյ և Լուվիէր պաշտօնէ հրաժարեցան. այս ամէն մէկ պարոնին քսան հինգ հազար ֆրանք տարուէ տարի վճարել տուի վատտակէս, ամէն տարի մայիս ՅԱին. Պ. Հէրպլէյ ինքն անձամբ եկաւ 'ի Պասդիլ և քսան հինգ հազար ֆրանք բերաւ իմ կոկորդիլոսներուս վճարելու համար:

— Ուրեմն հարիւր յիսուն հազար ֆրանք պարտք ունիս Արամիւսին:

— Եւ այդ է իմ յուսահատութիւնս. անոր միայն հարիւր հազար ֆրանք պարտք ունիմ:

— Բոլորովին չեմ հասկընար միտքդ:

— Ի՛հ, անշուշտ, մինակ երկու տարի եկաւ: Բայց այսօր մայիս ՅԱ է, և նա չեկաւ, և վաղը՝ կէսօրին՝ պայմանաժամը կը լրանայ: Եւ վաղը թէ որ չվճարեմ, այն պարոնները՝ դաշնադրին համեմատ՝ կրնան պաշտօնս ձեռքէս առնուլ. այն ատեն պիտի բացը մնամ, և երեք տարի աշխատած ու երկու հարիւր յիսուն հազար ֆրանք վճարած պիտի լինիմ պարտաւ տեղը, սիրելիդ իմ Պ. տ'Արդանեան, բոլորովին պարտաւ տեղ:

— Ահա հետաքրքրական բան մը — մրմուռայ տ'Արդանեան:

— Հիմակ իմացաք անշուշտ թէ ինչպէս ճակտիս վրայ խորշ ունիմ:

— Ա՛հ, այո՛, կ'իմանամ:

— Ուստի ձեզի եկայ, Պ. տ'Արդանեան, վասն զի դուք միայն կարող էք այս նեղութենէս զիս ազատել:

— Ի՞նչ կերպով:

— Դուք Պ. Հէրպլէյը չէք ճանչեր. զիտէք որ խորհրդաւոր մարդ է:

— Ո՛հ, այո՛:

— Կարող էք անոր երիցատան հասցէն տալ ինձ, վասն զի 'ի Նուազիւ-լը-Սէք փնտտեցի զինքն ու չգտայ:

— Թշուառական, Վանի եպիսկոպոս է:

— Վանի, 'ի Պրըլայն:

— Այո՛:

Փոքրիկ մարդն սկսաւ մտղերը փետել:

— Ափսո՛ս — ըսաւ նա — ինչ պէտք է Վան զնալ, վաղը մինչև կէսօր . . . կորսուած մարդ մ'եմ:

— Այդ քու յուսահատութիւնդ սիրտս կ'ցաւցնէ:

— Վան, Վան — կ'դռնէր Պէղմօ:

— Մտիկ ըրէ, եպիսկոպոս մը միշտ նոյն տեղը չնստիր. Պ. Հէրպլէյ թերևս կարծածիդ չափ հեռու չպիտի լինի:

— Ո՛հ, ըսէք ինձ իր հասցէն:

— Չգիտեմ, բարեկամ:

— Ճշմարիտը, ահա բանս բուսաւ: Երթամ պիտի թաղաւորին ստքն ընկնելու:

— Բայց, Պէղմօ, զիս կ'զարմայնես. ինչպէս՞ Պասդիլ յիսուն հազար ֆրանք կրնալով բերել, միթէ փոքր ինչ ինքզինքդ չնեղեցիր որ հարիւր հազար ֆրանք ստանաս:

— Ո՛չ, վասն զի պարկեշտ մարդ եմ, սիրելիդ իմ Պ. տ'Արդանեան, և իմ կալանաւորներս թաղաւորներու պէս կ'կերակրեմ:

— Տէր վկայ, հարստանալու ճամբան գտեր ես: Նայինք, Պէղմօ, միթէ պատուոյդ վրայ խօսք կ'տան:

— Ո՛հ, հրամանատար:

— Լաւ ուրեմն, խօսք տուր ինձ որ բերանդ չպիտի բանաս և մարդու բան մը չպիտի ըսես:

— Երբէք, ո՛չ երբէք:

— Կ'ուզես Արամիւսը գտնել:

— Անտարակոյս:

- Լաւ ուրեմն, զնա՞ Պ. Ֆուքէն գտիր :
- Ի՞նչ յարաբերութիւն . . . :
- Գնա՞ սլարզապէս ըսէ Պ. Ֆուքէին որ Պ. Հէրայլէյի խօսե-
լու կ'փափաքիս :
- Իրա՞ն է, իրա՞ն է — զոչեց Պէզմօ յափշտակուած :
- Է՛՛՛՛՛ — ըսաւ ա'Արդանեան՝ դաժան նայուածքով մը զանի
կեցնելով — Տոյա պատուոյդ վրայ խօսք տխարի տայիր :
- Ռ՛՛՛՛՛, նոյնիսկ է իմ խօսքս — պատասխանեց փոքրիկ
մարդը դուրս վազելու պատրաստուելով :
- Ռ՛՛՛՛՛ կ'երթաս :
- Պ. Ֆուքէի ստանը :
- Ռ՛՛՛՛՛, մի երթար . Պ. Ֆուքէ թաղաւորին հետ թուղթ կը
խաղայ : Պ. Ֆուքէի ստանը վազն առաւ. միայն կարող էս երթալ :
- Պիտի երթամ, շնորհակալ եմ :
- Բարի յաջողութիւն :
- Շնորհակալ եմ :
- Աւասիկ զարմանալի պատմութիւն մը — մըմուսայ ա'Արդա-
նեան, որ Պէզմօյն քովէն հեռանալէն ետե՛՛՛ իր սանդղէն ծանր
ծանր վեր ելաւ : — Թշուառական, Արամիս ի՞նչ շահ կրնայ ու-
նենալ այսպէս Պէզմօն սլարտաւորելու : Հէյն . . . օրին մէկն այս
ալ կ'հասկընանք :



ԹԱԳԱՒՈՐԻՆ ԽԱՂԸ

Ինչպէս որ ըսեր էր ա'Արդանեան՝ Ֆուքէ թաղաւորին խաղին ներկայ էր . կ'երևէր թէ Պրքինկհէմի շուն առջի օրուան բոլոր վիրաւոր սրտերու սպեղանի մ'եղաւ : Արքային եղբայրը՝ իր մօրը հազար տեսակ սիրալիւր նշաններ կ'ընէր՝ ցնծաղին : Աիշ կոմսը չէր կարող Պրքինկհէմի քովէն հեռանալ, և խաղալու ատեն՝ անոր ուղեւորութեան պատահարներուն վրայ կ'խօսէր :

Պրքինկհէմ՝ իր որոշումը հաստատապէս ըրած սրտի տէր մար-
դու մը պէս մտախոհ և սիրալիւր, կոմսին ըսածը մտիկ կ'ընէր և
մերթ ընդ մերթ իշխանուհւոյն վրայ վշտակիր և այլայլուն դորո-
վոյ ակնարկ մը կ'ձգէր :

Իշխանուհին իր անհուն խնդութեան ժամանակ՝ տակաւին իր
ուշադրութիւնն իրեն հետ թուղթ խաղացող թաղաւորին և շա-
հած անբաւ ստակին վրայ հեղնող ամուսնոյն մէջ կ'ըրածէր, և
Աիշին որ այլանդակ ուրախութիւն մը կ'յայտնէր : Իսկ Պրքինկ-
հէմի՝ հաղիւ ուրեմն իշխանուհին մտադիր էր . իրեն համար այս
փախտականը, այս տարադիրը յիշատակ մ'էր, և չէ թէ մարդ-
մը : Թեթև սիրտերն այսպէս են, ներկային բոլորանուէր, բռնա-
պէս ամէն յարաբերութիւն կ'կտարեն այն ամէն բաներու հետ
որ կրնան իրենց եսական բարօրութեան փոքրիկ հաշիւները խան-
գարել :

Գուքսը քաջ նկատեց այս փոփոխութիւնը, իր սէրը կարե-
վէր վիրաւորուեցաւ : Ի բնէ փափկասուն, հպարտ և խորին սի-
րոյ ընդունակ լինելով, անիծեց այն օրն երբ սէրն իր սրտին
մէջ մուտ գտաւ : Իշխանուհւոյն ուղղած ակնարկները փոքր առ
փոքր պաղեցան իր մտայ սառնապին խորհուրդներէն : Տակաւին
չէր կարող քամահել, բայց բաւական զօրեղ գտնուեցաւ սրտին
աղմկալից աղաղակները լուսնել : Իշխանուհին՝ քանի այս փոփո-
խութիւնը կ'զուշակէր, գործունէութիւնը կ'աւելցնէր իր ձեռքէն
և ընող լուսափայլ ներդրումութիւնը վերաստանալու . 'ի սկզբան
իր վեհերոտ և անորոշ միտքը փալիւրն նշաններով երևան ե-
լաւ . որ և է կերպով պէտք էր որ ամէն բանէ աւելի, նոյն իսկ
թաղաւորէն աւելի ուշադրութիւն դրաւ, և իրօք ալ զբաւեց :

Թաղաւորը՝ որ արդէն ձիւց և սնապարծ էին, ընտելացան
և ծիծաղեցան : Մայր թաղաւորին, աիկին Հանրիէզ՝ այս իր սոհ-
մին վրայ ժայթքող փայլէն սքանչացաւ, Հանրի Գի թոռուհւոյն
շնորհիւ :

Թաղաւորը՝ որ իբրև երիտասարդ այնքան նախանձոտ էր, այն-
չափ նախանձոտ էր իբրև թաղաւոր զինքը շրջապատող զերա-
զանցութեանց վրայ, չկրցաւ զինաթափ չմնալ այս դաղընական

աշխուժութեան առջև, որուն ազդուութիւնն անկլիական խնդասիրութենէ աւելի մեծ արժէք կ'ստանար: Իբրև տղայ մը զարնուեցաւ այն լուսազեղ դեղնցկութենէ որ խելքի շնորհիւ կ'զրուէր:

Իշխանուհւոյն աշունքը կայծակներ կ'արձակէին: Իր ծիրանեղոյն շրթերէն զուարթութիւնը դուրս կ'հոսէր ինչպէս ծերունի յոյն հետգորի շրթերէն համազումը:

Թաղուհիներու և թագաւորի առջև՝ բոլոր արքունիքը՝ այս համայութեանց ենթակայ դանուելով, առաջին անգամ կ'դիտէին որ աշխարհիս ամենէն մեծ թագաւորին առջև կարող էին ծիծաղել, իբրև մարդիկ որ արժանի էին աշխարհիս ամենէն քաղաքավար և ուշիմ էակներ կոչուելու:

Այն իրկուսէն՝ իշխանուհին այնպիսի յաջողութիւն մը ստացաւ որ կարող էր շուարեցնել անձ մ'որ գահ ըսուած բարձր վերնադասուներու մէջ ծնունդ չէր առած, և որոնք՝ իրենց բարձրութեան չնայելով թալուկ տալու զօրութենէ հեռու են:

Այն ատենէն ՚ի վեր՝ Լուի ԺԳ՝ իշխանուհին իբրև նշանաւոր անձ մը նկատեց: Պրքինկհէմ իբրև սյուսէր կին մը նկատեց, որ ամենէն ծանր տանջանայ արժանի էր. Աիշ զանի իբրև զիցուհի մը պաշտեց. իսկ պալատականները՝ իբրև աստղ մը՝ որու լոյսն որ և է շնորհքի, որ և է իշխանութեան համար վաւարան մը կրնար դառնալ:

Եւ սակայն Լուի ԺԳ՝ քանի մը տարի առաջ՝ և ոչ իսկ հաճեր էր պարահանդիսի մը մէջ իր ձեռքը տալ այսպիսի արքայուհի մը: Սակայն Պրքինկհէմ այս սյուսէր կինը պաշտեր էր ծուր գնելով. սակայն Աիշ այս զիցուհին իբրև կին նկատեր էր, և սակայն պալատականները՝ այս աստղին անցնելու ատենը ծափ զարնելու չէին իշխած առ ահի որ թագաւորին անստորժ գործ մը ըրած չլինին, որու այս աստղն երբեմն անհաճոյ թուեր էր:

Ահաասիկ՝ այն յիշատակելի իրկուսնը՝ թագաւորին խաղին ատեն անցած դարձածը:

Նորասի թագուհին՝ թէև Սպանուհի և Աննա թագուհւոյն քեռազջիկը՝ կ'սիրէր թագաւորը՝ և կեղծել չզիտէր: Աւտորիոյ Աննան՝ իբրև ամէն կին զիտող և իբրև ամէն թագուհի իշխանա-

սէր լինելով, իշխանուհւոյն զօրութիւնը զգաց և իսկոյն խոնարհեցաւ. ասոր վրայ նորասի թագուհին տեղէն ելաւ, և իր սենեակը դարձաւ: Թագաւորը հազիւ ուրեմն այս չուին ուշադրութիւն մատոյց՝ թէև թագուհին կեղծ անհանգստութեան նշաններ ցցուց:

Լուի ԺԳ՝ իր արքունիքը մտցնելու սկսած էր: Երբեք օրինաց համեմատ՝ բնաւ վրդով մը չցցուց. իր ձեռքն իշխանուհւոյն ընծայեց՝ աւանց իր եղբորը նայելու, և զանի մինչև իր սենեակին դուռն առաջնորդեց:

Ամենքը զիտեցին որ դրան սեմին վրայ՝ Նորին Աւհափառութիւնը՝ ամէն բունազրօսութենէ ազատ, կամ իր կացութենէ ընկճեալ, ահագին հառաչ մ'արձակեց: Անայք, ըստ որում ամէն բան կ'զիտեն, օրինակի համար օրիորդ Մօնդալէ, իրենց ընկերուհիներուն ըսելու փութացին:

— Թագաւորը հառաչեց:

— Իշխանուհին հառաչեց:

Այս իրաւ էր: Իշխանուհին անձայն հառաչեր էր, բայց թագաւորին անհանգստութեան համար շատ աւելի վտանգաւոր եղանակով մը: Իշխանուհին հառաչեր էր իր աղոր սև աչերը գոցելով, ապա բացեր էր, և՛ երբ անպատում տրտմութեամբ լի էին, թագաւորին վրայ յաւեր էր զանոնք, որուն դէմքը նոյն պահուն յայանապէս սաստիկ կարմրեր էր:

Այս կարմրութենէ, այս փոխադարձ հառաչներէ և թագաւորին այս շարժումէն սա հետեւեր էր որ Մօնդալէ անխոհեմութիւն մը գործեր էր, և այս անխոհեմութիւնն իրապէս ներդործեր էր իր ընկերուհւոյն վրայ, վասն զի օրիորդ Լա Աալիէր, անսարսիցս նուազ խորագէտ լինելուն՝ գեղնեցաւ երբ թագաւորը կարմրեցաւ, և ըստ որում իշխանուհւոյն սպասաւորելու կոչուած էր, անոր ետէն ներս մտաւ գողգոջուն՝ իր ձեռնոցները մտնալով, ինչպէս որ արարողութիւնը կ'պահանջէր:

Իրաւ է որ այս գառաւայի օրիորդը կրնար առարկել իբրև արդարացում թէ՛ արքայական վեհափառութենէ կ'վրդովէր: Արքարե՛ օրիորդ Լա Աալիէր, դուռը գոցելու միայն զբաղած լի-

ներուլ, ահամայ իր աչքը թաղաւորին վրայ սեւեռեր էր, մինչդեռ նա ետ ետ կ'ըթալէր :

Թագաւորը խաղը սրահը մտաւ . այլ և այլ մարդոց խօսիլ կ'ուզէր, բայց դիւրին էր գիտել որ խելքը գլուխը չէր :

Այլ և այլ խաղի հաշիւներ խառնակեց որոցմէ այլ և այլ աղնուականներ օլուտ քաղցիին, և ասոնք ալ սոյն սովորութիւնը սորվեր էին Պ. Մազարէնէն, վատ յիշողութեան տէր այլ լաւ թուաբան : Այսպէս Մանիքան՝ որ յետին ծայր անմտաղիւր մարդ էր, թող այս կէտը չմոռնայ ընթերցողը, Մանիքան՝ աշխարհ հիս ամենապարկեշտ մարդը, պարզապէս քսան հազար Ֆրանք հաւաքեց որ սեղանին վրայ սիւսած էին, և որու և ոչ մէկուն օրինաւոր սեպհականութիւնը լինելը կ'երեւէր :

Այսպէս Պ. Վարդ՝ որ գլուխը փոքր ինչ շփսթած էր նոյն երեկոյեան զործերէն, Պ. Պրքինկհէմէն վաստըլիւս հարիւր քսան ոսկին ձգեց, և այս ալ իր հօրը պէս՝ որ և է գրամով իր ձեռքն աղտոտելու անյօժար, ամէն դրամը ճրագավաւ ին թողաց, այս ճրագավաւը կենդանի իսկ լինէր :

Թագաւորը փոքր ինչ ուշաբրեցաւ միայն երբ Գօլպէր՝ որ քանի մը վայրկեանէ վեր յարմար միջոց մը կ'փնտռէր, մտեցաւ, և անտարակոյս շատ յարգանք՝ բայց թախանձաղին՝ խորհարդ մը փսփսայ Նորին Վեհափառութեան դեռ ևս գրնչող ախանջին մէջ :

Լուի՝ իր աչքն իսկոյն առջևը նետելով,
— Միթէ Պ. Ֆուքէ — ըսաւ նա — զնայ :

— Ո՛չ, ո՛չ, Վեհափառ — պատասխանեց վերատեսչին ձայնը երբ Պրքինկհէմի հետ կ'ստուակէր : Եւ թագաւորին մօտ եկաւ :

Թագաւորն անոր կողմը քայլ մ'առաւ սիրալիւր և ընտանեկան գէմքով մը :

— Ներէ, պարոն վերատեսուչ, եթէ խօսակցութիւնդ կ'վրդովեմ, բայց ո՛ր որ լինիս կ'կոչեմ քեզ երբ պէտք ունեւամ :

— Իմ՝ ծառայութիւնս թագաւորին նուիրելու պատրաստ եմ միշտ — ըսաւ Ֆուքէ :

— Եւ մանաւանդ արկղդ — ըսաւ թագաւորը սուտ ժպիտով մը ծիծաղելով :

— Իմ արկղս, ամէն բանէ աւելի — ըսաւ Ֆուքէ պարզութեամբ :
— Աստիկ խնդիրը, պարոն . կ'ուզեմ հանդէս մը տալ ՚ի Փօնդէնայլօ : Տունս տասն հինգ օր բաց պիտի մնայ : Պէտք ունիմ . . . :

Եւ թագաւորը շեղակի Գօլպէրի նայեցաւ :
Ֆուքէ առանց այլայլելու սպասեց :

— Գումար մը — ըսաւ :
— Չորս միլիօնի — յարեց թագաւորը, Գօլպէրի անդու թ ժըպօսին պատասխան տալով :

— Չորս միլիօն — ըսաւ Ֆուքէ խորին խոնարհութիւն մ'ընելով :

Եւ իր ըշտնդը՝ իր կուրծքը մղուելով՝ արիւնալի ախոս մը բացին, թէև իր գէմքին հանդարտութիւնն ասով չայլայլեցաւ :

— Այո՛, պարոն — ըսաւ թագաւորը :
— Ե՛րբ, Վեհափառ :

— Բայց . . . ժամանակ ունիս . . . այսինքն . . . ո՛չ . . . կարելի եղածին չափ շուտով կ'ուզեմ :

— Ժամանակ պէտք է որ . . . :
— Ժամանակ — զոչեց Գօլպէր յաղթանակելով :

— Սկուտները համրելու ժամանակ — ըսաւ վերատեսուչը վեհապանծ արհամարհանօք . — օրը մէկ միլիօն միայն կ'հանուի և կ'կշուի, պարոն :

— Ուրեմն, չորս օր պէտք է — ըսաւ Գօլպէր :
— Ո՛հ — պատասխանեց Ֆուքէ թագաւորին դառնալով — իմ՝ զործակալներս Չեր Վեհափառութեան համար հրաշքներ կ'զործեն : Գումարն երեք օրէն պատրաստ պիտի լինի :

Գօլպէր ըստ կարգի գեղնեցաւ :

Ֆուքէ առանց անսպարճութեան, առանց տկարութեան քաշուեցաւ, շատ մը բարեկամաց ժպտելով՝ որոց նայուածքին մէջ ինք միայն ճշմարիտ բարեկամութիւն, կարեկցութեան մօտ հոգատարութիւն մը կ'տեսնէր : Ֆուքէն իր ժպիտէն դատել պէտք չէր, Ֆուքէ իրօք մահը սրտին մէջ ունէր : Գանի մ'արեան կաթիլներ իր զվեստին ներքև կ'աբասէին իր կուրծքը ծածկող բարակ

կտաւր : Զգեաւոր կ'ծածկէր արիւնը , իր ժպիտը կ'ծածկէր կատ-
ղութիւնը :

Իր կառքին մօտենալու կերպէն՝ սպասաւորները դուշակեցին որ
սրանեղութիւն մը կայ իրենց տիրոջ վրայ : Այս խմանալով՝ սպա-
սաւորներն այնպիսի ճշտութեամբ կատարեցին իրենց տիրոջ հրա-
մաններն որ միայն պատերազմական նաւու վրայ կ'սեննուի երբ
այն զայրացած նաւապետի մը հրամանատարութեան ներքե է :
Կառքը չզլորեցաւ այլ թուաւ : Քուքէ հազիւ թէ ուղեորութեան
ատեն՝ խորհելու ժամանակ ունեցաւ :

Երբ իր ապարանը հասաւ՝ Արամիսին սենեակն ելաւ : Արամիս
տակաւին սրտկած չէր : Իսկ Բորթոս խորոված զիստ մը , երկու
փասիան և անթիւ խեցեգետին կերեր էր . յետոյ իր մարմինը հո-
տաւէտ իւղերով օծեր էր՝ հինաւորոյ ըմբիշներուն պէս , վերջը՝
օծումն աւարտելով՝ ասուիներով փաթթուեր և տաքցած մահճի
մը մէջ տարածուեր էր :

Արամիս , ինչպէս ըսինք , բնաւ պտուկած չէր : Տնային թաւշէ
պարեպօս մը հաղած , նամակ նամակի վրայ կ'զրէր այն իր նորք
և խիստ դրով , որու մէկ երեսը հատորի մը քառորդը կ'բռնէ :

Գուռը յանկարծ բացուեցաւ . վերասեսուն երեցաւ դունաստ ,
վրդոված և բազմահող : Արամիս գլուխը վերցուց :

— Բարի իրկուն , սիրելի հիւրընկալս — ըսաւ , և իր հետա-
զնին նայուածքն այն իր բոլոր արտամութիւնը , այն շփոթութիւնը
դուշակեց :

— Աղո՞ր խաղ թաղաւորին սրաւտը — հարցուց Արամիս խօ-
սակցութիւնը սկսելու համար :

Քուքէ նստաւ , և իրեն ետեէն եկող սպասաւորին շարժումով
մը դուռը ցցուց : Յետոյ՝ երբ սպասաւորը դուրս ելաւ ,

— Շատ աղւոր — ըսաւ նա :
Եւ Արամիս՝ որ աչքովը անոր կ'հետեւէր , տեսաւ որ դողդոջ
անհամբերութեամբ մը բարձերուն վրայ երկնցաւ :

— Ինչպէս միշտ , դարձեալ կ'թուեցա՞ր — հարցուց Արամիս :
դրիչ 'ի ձեռին :

— Սովորականէն աւելի — պատասխանեց Քուքէ :

— Բայց զիտենք որ դու կորուստի քաջ կ'դիմանաս :

— Երբեմն :

— Լաւ , Պ . Քուքէ անպիտան խաղամու :

— Խաղ կայ խաղ ալ կայ , Պ . Հէրպլէյ :

— Ուրեմն որչափ կորուստ ըրիր , աէր իմ — հարցուց Արա-
միս դոյզն ինչ մտատանջութեամբ :

Քուքէ պահ մ'ինքզինքը ժողվեց որ իր ձայնը շտկէ , ապա՝ ա-
ռանց որ և է այլայլութեան ,

— Այս դիշերուան խաղն ինձ չորս միլիօնի նստաւ — ըսաւ
նա : Եւ դառն ժպիտ մ'իւր խօսքին յետին հնչման մէջ կորաւ :

Արամիս այսչափ դումարի չէր յուտար , իր դրիչը ձեռքէն ձգեց :

— Չորս միլիօն — ըսաւ նա : — Չորս միլիօնի՞ համար խա-
ղացիր , անկարելի բան :

— Պ . Գօլպէր իմ թղթերս կ'բռնէր — պատասխանեց վերա-
տեսուչը նոյն չարագուշակ ժպիտով :

— Ա՛հ , հիմակ կ'իմանամ , տէր իմ : Այսպէս նորէն ստակ
կ'պահանջեն քեզնէ :

— Այո՛ , բարեկամդ իմ :

— Յանուն թաղաւորի :

— Նոյն իսկ իր բերնովը : Անհնար է տանջել մարդ մ'անկից
աւելի դեղեցիկ ժպիտով մը : Ի՞նչ կ'խորհիս ասոր վրայ :

— Տէր վկայ , կ'խորհիմ՝ որ քեզ կործանել կ'ուզեն , ակներև
է այս :

— Այսպէս , քու կարծիքդ այս է միշտ :

— Միշտ : Բայց ասոր մէջ քեզ զարմացնելու բան մը չկայ ,
վասն զի մեր դուշակած բանն է :

— Թո՛ղ այդպէս լինի . բայց չէի կարծեր որ չորս միլիօնի
դումար մը պահանջէ :

— Իրաւ է որ այս դումարը ծանր է , բայց վերջապէս չորս
միլիօն մարդու մը մահը չէ , և ժամն է այս ըսել , մանաւանդ երբ
այս մարդը Պ . Քուքէ կ'կոչուի :

— Թէ որ արկղին տակը դիտանայիր , սիրելեղ իմ Պ . Հէր-
պլէյ , այդչափ հանդարտ չպիտի մնայիր :

- Եւ միթէ վճարելու խոստացար :
- Ի՞նչ կ'ուզէիր որ ընէի :
- Իրաւունք ունիս :
- Այն օրն որ պիտի մերժեմ, Գօլպէր դրամ պիտի դանէ, սակից չգիտեմ, բայց պիտի դանէ, և այն ատեն իմ բանս կը բուսնի :
- Անտարակոյս : Եւ այս չորս միլիօնը քանի՞ օրուան մէջ տալու խոստացար :
- Երեք օրուան մէջ : Թագաւորը շատ շտապած կ'երևի :
- Երեք օրուան մէջ :
- Ա՛հ, բարեկամը իմ — վրայ բերաւ Գոլքէ — երբ քիչ մը առաջ փողոցէն կ'անցնէի, մարդիկ կ'սլուային. Ահա հարուստ Գոլքէն, ի՞նչ կ'ըսես, Հէրպլէյ, խենդանալը բան մը չէ :
- Ա՛հ, ս'չ, տէր իմ, մի՛ արտօրար. այդչափ իրար անցնելու չափ ծանր չէ գործը — ըսաւ Արամիս սառնութեամբ՝ իր նսր պրած նամակին վրայ աւազ թափելով :
- Աւրեմն դեղ մը գտիր, դեղ մ'այս անդարմանելի հիւանդութեան :
- Հաս մը միայն կայ : Աճարէ՛ :
- Բայց հազիւ թէ այդ դումարն ունիմ. բոլոր ունեցածս պիտի սպառեմ. Պէլ-Իսլի համար վճարեցի, թողակները վճարեցի, գրամը, վարձակալներու խաղաղութենէ վեր՝ գրամը նուազած է : Ենթադրելով որ այս անգամ պիտի վճարենք, միւս պահանջքն ինչպէս պիտի վճարուի. վասն զի, քաջ գիտցիր, դեռ վերջը չտանք : Երբ միանգամ թողաւորները ստակ կ'առնակեն, միւս ճաշակող վաղըներուն կ'անմանին, կ'իլանեն : Օր պիտի գայ որ պէտք է ըսեմ. անկարելի բան. լաւ, այն օրը պիտի կորստիմ :
- Արամիս իր ուսերը թեթեւ մը բարձրացուց :
- Գու՛րբքդ ունեցող մարդ մը, տէր իմ — ըսաւ — կ'կորստուի միայն երբ որ կորստիլ կամենայ :
- Մարդ մ'ի՞նչ վիճակ որ ունենայ, թողաւորի մը դէմ չէ կարող մաքառիլ :

- Բան, իմ երիտասարդութեան ատեն՝ ես Ռիշլիէօ կարտինալին դէմ մարտեցայ թէ և, ես, անոր դէմ որ Ֆրանսայի թագաւոր էր, և ասկից զատ՝ կարտինալ մը :
- Միթէ ես բանակներ, զօրք, զանձ ունիմ : Եւ ոչ իսկ Պէլ-Իսլ իմս է :
- Ա՛յ, հարկը պիտի մայրն է, երբ ամէն ինչ կորսուած գատես . . . անակնկալ բան մը հնարուելով ամէն ինչ կրնայ ազատել :
- Եւ ո՞վ պիտի դանէ այդ հրաշալի բանը :
- Գու՛ :
- Ե՞ս : Ես գտիչ լինելէ կ'հրաժարիմ :
- Աւրեմն ես :
- Թո՛ղ այդպէս լինի : Աւրեմն անյատաղ գործի սկսէ :
- Ա՛հ, շատ ժամանակ ունինք :
- Այո՛ քո անյողողը ընթացքովդ զիս կ'սպաննես, Հէրպլէյ :
- Ըսաւ վերասնստ չն իր թաշկինակը ճակտին տանելով :
- Միթէ չէն յիշեր թէ օր մը քեզ ի՞նչ ըսի :
- Ի՞նչ ըսիր :
- Ըսի որ անհանդիստ չլինիս, եթէ արի ես. միթէ ես :
- Կարծեմ թէ եմ :
- Աւրեմն մի՛ անհանդիստ լինիր :
- Աւրեմն, խօսք կ'տան, ծայրադոյն վայրկենին ինձ օգնութեան պիտի հասնիս, Հէրպլէյ :
- Այս ընելիքս քեզն պարտաւոր եղածս պիտի լինի, տէր իմ :
- Գրամատեր մարդոց արհեստն է, քեզն պէս մարդոց պիտոյքը կանխել, Հէրպլէյ :
- Եթէ բարեսիրութիւնը դրամատէրներու արհեստն է, եկեղեցոյ պաշտօնէից արհեստն ալ գթասիրութիւնն է : Մինակ՝ այս անգամ ևս դէմ մի՛ կենար. տակաւին այնչափ վատ չես եղած. յետին ժամուն՝ պիտի տեսնենք :
- Աւրեմն քիչ ատենէն պիտի տեսնենք :
- Լաւ, հիմակ, ներք ինձ ըսելու որ շատ կ'ցառիմ ես մասնաւորապէս դրամի նեղութեան մէջ գտնուելուդ :

- Ինչո՞ւ համար :
- Վասն զի քեզնէ ստակ պիտի խնդրէի :
- Քեզի՞ համար :
- Ինձի կամ իմիններուս համար, իմիններուս կամ մերիննե-
րուն համար :
- Ի՞նչ գումար :
- Ո՛հ, մի վրդովիր. կլորիկ գումար մը, իրաւ, բայց ոչ
չափազանց :
- Ըսէ՞ գումարը :
- Ո՛հ, յիսուն հազար Ֆրանք :
- Չնչին գումար :
- Իրան :
- Անշուշտ, յիսուն հազար Ֆրանք միշտ կ'դանուի : Ա՛հ,
ինչո՞ւ համար այն անդգամն որ Գօլպէր կ'կոչուի, քեզի պէս քե-
չով չչատանար : Այն ատեն այսչափ նեղութեան մէջ չէի մաներ :
Եւ այդ գումարին երբ պէտք ունիս :
- Վաղն առտու :
- Լաւ, և . . . :
- Ա՛հ, իրաւ է, նպատակը, ըսել կ'ուզես :
- Ո՛չ, ասպետ, ո՛չ, բայցատրութեան պէտք չունիմ :
- Ինչո՞ւ չէ, վաղը յունիս Ա է, մեր մէկ պարտքին պայմա-
նաժամին լրումը :
- Ուրեմն պարտքեր ունինք :
- Անտարակոյս, վաղը մեր վերջին երրորդ մասը կ'վճարենք :
- Ի՞նչ երրորդ մասը :
- Պէզմօի հարիւր յիսուն հազար Ֆրանքին :
- Պէզմօ, ո՞վ է այդ :
- Պատգիլլի կառավարիչը :
- Ա՛հ, այո՛, իրաւ է, այս մարդուն համար հարիւր յիսուն
հազար Ֆրանք վճարել կ'տաս ինձ : Բայց ի՞նչ առթիւ :
- Իր գնած պաշտօնին առթիւ, կամ լաւ ևս ըսեմ Լուվիե-
րէն և Գրանսլէյէն մեր զնած պաշտօնին համար :
- Այդ ամենը շատ մութ բաներ են մտքիս համար :

- Կ'իմանամ այդ բանը, այնչափ զբաղմունք ունիս : Սակայն
չեմ կարծեր թէ այս գործէն կարեորագոյն գործ մ'ունենաս :
- Ուրեմն ըսէ՛ ինձ թէ ի՞նչ նպատակաւ գնեցիրք այդ պաշտօնը :
- Բայց անոր օգտակար լինելու համար :
- Ա՛հ :
- Նախ անոր :
- Եւ ասլա որո՞ :
- Ապա մեզի :
- Ի՞նչպէս մեզի :
- Տէր իմ, կան ժամանակներ որ Պատգիլլի կառավարիչ մը
շատ ընտիր ծանօթ մ'է :
- Հէրպլէյ, բարեբաղդաբար միտքդ չեմ հասկընար :
- Տէր իմ, մեր բանաստեղծները, մեր երկրաչափը, մեր
ճարտարագետը, մեր երաժիշտները, մեր տպագրիչը, մեր պատ-
կերահաններն ունինք. պէտք էր մեզ Պատգիլլի մեր կառավարիչը :
- Ա՛հ, միթէ այդպէս կարծես :
- Տէր իմ, չխաբուինք, Պատգիլլ երթալու վտանդ կայ մեր
առաջ. . . : Սիրելիք իմ Պ. Ֆուքէ — յարեց եպիսկոպոսը՝ իր
տոյգոյն շրթերուն ներքե ցոյց տալով այն ակուններն որ տակա-
ւին՝ երստն տարի առաջ Մարի Միշօնի պաշտած զեղեցիկ ակ-
ուններն էին :
- Եւ միթէ կարծես թէ ասոր համար հարիւր յիսուն հազար
Ֆրանք խիստ մեծկակ գումար մը չէ, Հէրպլէյ : Կ'հաւատեմ
քեզ որ սովորաբար ստակի աւելի օգտակար կերպով կ'գործածես :
- Պիտի դայ օր մ'որ սխալմունքդ պիտի ճանչես :
- Սիրելիք իմ Հէրպլէյ, այն օրն որ Պատգիլլ կ'ունէ մարդ
անցեալէն չպաշտպանուիր :
- Ինչո՞ւ չէ, եթէ պարտամուրհակներն ըստ կանոնի ստորա-
դրեալ են. և ասկէ զատ՝ հաւասն ինձ, այն պատուական Պէզ-
մօն պալատականի սիրտ չունի բնաւ : Ես ստոյգ եմ որ այս ստա-
կին համար շնորհապարտ պիտի մնայ նա, թող թէ, ինչպէս ը-
սի, տէր իմ, որ մուրհակները պահած եմ :
- Այդ ի՞նչ սատանայական գործ է. բարեգործութեան մէջ
ալ վաշխառութիւն կ'լինի :

— Տէր իմ, աէր իմ, զու բնաւ այս բաներուն մի խտոնուիր՝ եթէ վաշխ կայ, ես միայն եմ ընողը: Մենք երկուքնիս օղուտ պիտի քաղենք: Այսպէս վաղը յուսամ ստանալ յիսուն հազար Փրանքը:

— Միթէ այս իրկուն կ'ուղէս:

— Աւելի լաւ կ'լինի, վասն զի առտու կանուխ ճամբայ պիտի ելնեմ: Այն խեղճ Պէզմօն, որ չգիրտէ թէ ինչ եղած եմ, վտուշերու վրայ պիտի լինի:

— Գումարը ժամէ մը պիտի ստանաս: Ա՛հ, Հէրպլէյ, քու հարիւր յիսուն հազար Փրանքիդ շահն երբէք իմ չորս միլիօն չպիտի վճարէ: — Ըսաւ Գուքէ ոտք ելնելով:

— Ինչո՞ւ համար չէ, տէր իմ:

— Գիշեր բարի, պառկելէս առաջ գործակալներուս խօսելէք ունիմ:

— Բարի գիշեր, տէր իմ:

— Հէրպլէյ, անկարելին կ'ըսողքս ինձի համար:

— Միթէ այս իրկուն իմ յիսուն հազար Փրանքս պիտի ունենամ:

— Այո՛:

— Լաւ ուրեմն, հանդիստ պառկէ, ես եմ ապահովցնող քեզ: Բարի գիշեր, տէր իմ:

Այս ապահովութեամբ և նոյնը տալու կերպին շնայելով, Գուքէ դուրս ելաւ գլուխն օրելով և հառաչանք մ'արձակելով:

Ե

Պ. ՊԵՉՄՕ ՄՕՆԼԸԶԷՕՆԻ ՄԵՆՐ ՀԷՇԻՒՆԵՐԸ

Ժամը եօթ կ'հնչէր 'ի Սէն-Բօլ, երբ Արամիս ձիով, քաղաքաւորի հագուստով, այսինքն գունաւոր չուխայ հաղած, իբրև նշանաւոր բան որսի դանակ մ'ունենալով քովընտի, Բըդի-Միւ-

սի փողոցին առջևէն անցաւ և Գուրնէլ փողոցին գիմացը, Պասղիլը բերլին դրան առջևը կայ ստաւ: Երկու պահասան այս դուռը կ'պահպանէին: Արամիսն ընդունելու բնաւ ընդդիմութիւն մը ցոյց չտուին, որ ձիով ներս մտաւ ինչպէս որ էր, և ձեռքով առաջնորդեցին զանի աջ ու ձախ կողմը շէնքեր ունեցող անցքի մ'երկայնութենէ: Այս անցքը մինչև շարժական կամուրջը կ'ստանէր, այսինքն մինչև բուն մուտքը: Շարժական կամուրջն իջած էր, բերլին պահպանութիւնը սկսեք էր կատարուիլ:

Արտաքին պահականոցին պահնորդն Արամիսը կեցոց և բաւական խրոխտ ձայնով հարցոց անոր թէ ինչ պատճառաւ կ'զարայն տեղ: Արամիս՝ իր սովորական քաղաքավարութեամբը մեկնեց թէ Պ. Պէզմօն Մօնլըզէօնի խօսելու փափաքէն յորդորեալ եկեր էր:

Առաջին պահնորդն երկրորդ պահնորդ մը կոչեց՝ որ ներքին վանդակի մը մէջ կ'զտնուէր: Ասի իր գլուխը գոնակէն անցուց և ուշադրութեամբ նորեկ մարդուն նայեցաւ: Արամիս իր փափաքը նորէն յայանեց:

Այն ասեւն պահնորդն ստորին սայայ մը կոչեց որ բաւական ընդարձակ բակի մը մէջ կ'պտըտէր, և սայայն խնդիրն իմանալով կառավարչին առաջապային պնաց ուրիշ սայայ մը կոչելու:

Այս վերջինն Արամիսի խնդիրը մտիկ ընելէն ետե՛ւ աղաչեց զինքն որ պահ մը սպասէ, քանի մը քայլ առաւ և ապա դարձաւ որ անոր անունն հարցնէ:

— Ձեմ կարող ըսել քեզ անունս, պարոն — պատասխանեց Արամիս. — մինակ գիտցիր որ այնպիսի կարեւոր բաներ հարցողքելէք ունիմ պարոն Կառավարչին, որ կանխաւ կրնամ ըսել քեզ, թէ Պ. Պէզմօն զիս տեսնելուն չափազանց պիտի ուրախանայ: Այս բաւական չէ, երբ անոր յայանես թէ յունիսի Վին սպասած անձն եմ, հաւաստի եմ որ ինքն անձամբ պիտի վազէ:

Սայայն չէր կարող խելք հասցնել որ պարոն կառավարչին պէս նշանաւոր անձ մը տեղէն շարժի՝ ձիով եկող խեղճ քաղաքաւորի մը պէս աննշան մէկու մը համար:

— Ճիշտ այդպէս, պարոն, սքանչելի կերպով կ'յարմարի: Պ.

կառավարիչը դուրս ելնելու կ'պատրաստուէր, և արդէն կառավարչութեան բակին մէջ իր կառքին լծուած լինելը տեսար: Ուստի քեզ զիմաւորելու պէտք չպիտի ունենայ, այլ անցնելու ասենը քեզ պիտի տեսնէ:

Արամիս հաւանութեան նշան մ'ըրաւ գլխովը. չէր կամեր ինքն իր վրայ բարձր գաղափար մը տալ այլոց, ուստի լռիկ մնջիկ կեցաւ, իր ձիուն թամբին վրայ կռթնած:

Տաս վայրկեան չէր անցած երբ կառավարչին կառքին զզոզիլը լսուեցաւ: Գրան մօտեցաւ: Առավարիչը դուրս ելաւ, կառքը մտաւ և դուրս ելնելու պատրաստուեցաւ: Բայց այն ատեն, ինչպէս կասկածելի օտարականի մը համար, նոյնպէս բերդապետին համար նոյն արարողական ընթացքը տեղի ունեցաւ:

Վանդակին պահնորդն ընդ առաջ վազեց այն միջոցին որ կառքը կամարին տակէն պիտի անցնէր, և կառավարիչն իր դռնակը բացաւ որպէս զի զինուորական կանոնին ինք ամենէն առաջ հնազանդի:

Այս կերպով պահնորդը կարող եղաւ համոզուելու որ ոչ ոք Պասդիլլէն դուրս կ'ելնէր խարդախութեամբ:

Կառքը կամարին տակէն գլորեցաւ: Բայն այն միջոցին որ վանդակը կ'բանային՝ սպայն կառքին մօտեցաւ երկրորդ անգամ, և կառավարչին բան մ'ըսաւ: Կառավարիչն անմիջապէս գլուխը դռնակէն դուրս հանեց և Արամիսը շարժական կամրջին ծայրը ձիով տեսաւ: Անմիջապէս ուրախութեան աղաղակ մ'արձակեց, և կառքէն դուրս ելաւ կամ լաւ ևս ըսեմ, սլացաւ, և վազելով եկաւ Արամիսի ձեռքը բռնելու՝ հաղար անգամ ներում խընդրելով. . . քիչ մնաց որ ձեռները պիտի պապնէր:

— Ի՞նչ դժուարութիւններ կային Պասդիլլ զնալու, պարօն կառավարիչ: Միթէ նոյնն է անոնց համար որ իրենց կամաց հալառակ այն տեղ կ'զրկեն, ինչպէս կամովին եկողներուն համար:

— Ներէ, ներէ, ա՛հ, տէր իմ, սրչափ ուրախութիւն կ'զգամ Ձեր Մեծութիւնը տեսնելով:

— Լուռ թիւն, մտքէդ հանէ այդ բանը, սիրելիդ իմ Պ. Պէզմօ, ի՛նչ, կ'ուզես որ մտածե՞ն երբ ատենն եսիսկոպոս մ'այս զգեստով:

— Ա՛հ, ներէ, չէի մտածեր:

— Պարօնին ձին ախտը տարէք — դռնեց Պէզմօ:

— Ո՛չ, ս՛չ — ըսաւ Արամիս — կրո՛ղ:

— Ինչո՞ւ համար այդպէս կ'խօսիս:

— Վասն զի պարկին մէջ յիսուն հաղար Փրանք կայ:

Առավարիչն այնքան յնծաց, որ եթէ կալանաւորները զինքը տեսած լինէին, պիտի հատային որ իշխանազուն մ'այցի կ'զար:

— Այո՛, այո՛, իրաւունք ունիս. կառավարչին պաշտօնատունը տարէք ձին:

— Միթէ կ'ուզես, սիրելիդ իմ Պ. Հէրպլէյ, որ կառք հեծնեք և մինչև մեր տունը քշեք:

— Ասո՞ք հեծնել որ պալատականներ ոտնակոխ ընենք. միթէ կարծես թէ այնքան անձարով եմ: Ո՛չ, պարօն կառավարիչ, ս՛չ, ոտքով երթանք:

Այն ատեն Պէզմօ՛ իր թևն իրրև նեցուկ ընծայեց, բայց ես պիսկոպոսը մերժեց:

Այսպէս կառավարչութեան տունը հասան, մինչդեռ Պէզմօ ձեռները կ'շփշփէր և աչքին ծայրով կ'նայէր, և Արամիս սև և մերկ պատերը կ'զիտէր:

Բաւական շքեղ դաւիթ մը, սպիտակ քարերէ շիտակ ստեղուղ մը՝ Պէզմօի սենեակները կ'առնէին:

Պէզմօ անցաւ նախասենեակէն, սեղանատունէն՝ ուր նախաձաշը կ'պատրաստէին, փոքրիկ դուռ մը բացաւ, և իր հիւրին հետ մեծ սենեկի մը մէջ փակուեցաւ, որու պատահանները՝ բակերուն և ախոռներուն վրայ կ'բացուէին շեղակի:

Պէզմօ նստեցուց եսիսկոպոսն այն պատուազիր քաղաքավարութեամբ որու գաղանիքը միայն բարեմիտ մարդ մը կամ երախտագէտ մարդ մը զիտէր: Թևաւոր աթոռ, ոտից ներքև բարձիկներ, ձեռքը յենլու համար գլորուն սեղան, այս ամենն ինք անձամբ կառավարիչը պատրաստեց: Նոյնպէս ինք նոյն սեղանին վրայ դուռ կրօնասէր խնամօք ոսկիի ծրարը, զոր իր զինուորներէն մին վեր բերեր էր այնչափ յարգանօք որչափ որ քահանայ մը կ'բերէ սկիհը:

Ջինուորը դուրս ելաւ : Պէզմօ անոր ետեւէն զնալով դուռը
զոցեց , պատահանին մէկ վարադոյրը քաշեց , և Արամիսի աչաց
մէջ նայեցաւ զխտելու համար թէ արդեօք եպիսկոպոսին ուրիշ բա-
նի պէտք ունէ՞ր :

— Լաւ ուրեմն , տէր իմ — ըսաւ նա առանց բաղմելու — մի-
թէ խօսքի տէր մարդոց ամենէն հաւատարիմն էք :

— Գործի մէջ , սիրելի Պ . Պէզմօ , ճշդութիւնն առաքինութիւն
մը չէ , այլ պարզ պարտաւորութիւն մը :

— Այո , գործի մէջ , կ'հասկընամ . բայց ըրածնիդ ինձի հետ
բնաւ գործ չէ , այլ ծառայութիւն մը կ'մատուցանէք ինձ :

— Աղէ , աղէ , սիրելիք իմ Պ . Պէզմօ , խոստովանէ՛ որ այս
ճշդութեամբս հանդերձ՝ դարձեալ քիչ մը մտաւանջութիւն զգայիր :

— Ձեր առողջութեան վրայ , այո՛ , անշուշտ — թո՛թովեց
Պէզմօ :

— Երէկ կ'ուզէի դալ , բայց չկրցայ , շատ յոգնած լինելով
— շարունակեց Արամիս :

Պէզմօ՛ իր հիւրին երիկամանց տակ ուրիշ բարձ մը սահեցնե-
լու փութաց :

— Բայց — վրայ բերաւ Արամիս — մտադրեցի այսօր կանուխ
դալ քեզի այցելութեան :

— Պատուական էք , տէր իմ :

— Եւ կարծեմ թէ փութալու աղէկ եղաւ :

— Ինչպէ՞ս :

— Այո , դուրս պիտի ելնէիր :

Պէզմօ կարմրեցաւ :

— Արդարեւ — ըսաւ նա — գուրս կ'ելնէի :

— Աւրեմն , անհանդիստ կ'ընեմ քեզ :

Պէզմօի շփոթութիւնն աչքի կ'զարնէր :

— Աւրեմն , քեզ կ'նեղեմ — շարունակեց նա՝ իր սուր աչքը
խեղճ կառավարչին վրայ սեւեւելով : — Եթէ զխանայի այդ , չպի-
տի գայի :

— Ա՛հ , տէր իմ , ինչպէս կրնաք մտածել որ ինձ երբէք նե-
ղութիւն կ'տաք , գո՛ւք :

— Խոստովանէ՛ որ ստակ փնտուելու դուրս պիտի ելնէիր :

— Ո՛չ — թո՛թովեց Պէզմօ — ո՛չ , կ'երգնում , կ'երթայի մի-
այն . . . :

— Պ . կառավարչն արդեօք Պ . Ֆուքէի տունն երթալու է
դարձեալ թէ ոչ — զոչեց վարէն հաղարասիտին ձայնը :

Պէզմօ խենդի պէս պատահանը վազեց :

— Ո՛չ , ո՛չ — սրտայ նա յուսահատ — ո՛վ է այն որ Ֆուքէի
խօսք կ'ընէ : Միթէ դիտով է խօսողը , ինչո՞ւ համար կ'նեղեն
զիս երբ գործի վրայ եմ :

— Աւրեմն Պ . Ֆուքէի տունը պիտի երթայիր — ըսաւ Արա-
միս շրթերը խաճնելով — արբայի՛ն թէ ոչ վերատեսչին :

Պէզմօ շատ փափաք ունէր սուտ խօսելու , բայց արիւթութիւնը
չունեցաւ :

— Վերատեսչին քովը — ըսաւ նա :

— Կ'տեսնեն ուրեմն , որ դրամի պէտք ունէիր , քանի որ այն
մարդուն տունը կ'երթայիր որ դրամ կ'տայ :

— Բայց ո՛չ , տէր իմ :

— Օ՛ն , վստահութիւն չունիս իմ վրայ :

— Սիրելի տէր իմ , մինակ անստոյգ , մինակ անպէտ լինելով
թէ ո՛ւր կ'բնակիք՝ հասկընալ կ'ուզէի :

— Ո՛հ , Պ . Ֆուքէէն պիտի կրնայիր դրամ ստանալ , սիրե-
լիք իմ Պ . Պէզմօ , ձեռքը բաց մարդ մ'է :

— Կ'երգնում որ երբէք չպիտի համարձակէի Պ . Ֆուքէէն
դրամ խնդրել : Մինակ ձեր հասցէն կ'ուզէի անոր հարցնել :

— Իմ հասցէս , Պ . Ֆուքէի տունը — զոչեց Արամիս ակամայ
իր աչերը բանալով :

— Բայց — ըսաւ Պէզմօ եպիսկոպոսին ակնարկէն վրդովելով
— այո՛ , անշուշտ , Պ . Ֆուքէի տունը :

— Հող չէ , սիրելիք իմ Պ . Պէզմօ , մինակ կ'զարմանամ թէ
ինչո՞ւ համար Պ . Ֆուքէի տունէն իմ հասցէս իմանալ կ'ուզէիր :

— Ձեզն զրեւու համար :

— Կ'իմանամ — ըսաւ Արամիս ժպտելով — ուստի ես այդ ը-
սել չէի ուզեր . չեմ հարցնիր թէ ինչ ընելու համար հասցէս

կ'հարցնէիր, այլ կ'հարցնեմ թէ ինչ առթիւ Պ. Ֆուքէի սուսնը կ'երթայիր իմանալու :

— Ա՛հ — ըսաւ Պէզմօ — վասն զի Պ. Ֆուքէն Պէլ-Իսլն ունենալով . . . :

— Է՛ջ բարի :

— Պէլ-Իսլն որ վանի թեմն է, և թէ՛ ըստ որում վանի եպիսկոպոս էր . . . :

— Սիրելի Պ. Պէզմօ, քանի որ դիտես թէ վանի եպիսկոպոս եմ, պէտք չունէիր Պ. Ֆուքէի հարցնելու իմ հասցէս :

— Վերջապէս, սարոն — ըսաւ Պէզմօ շուարած — միթէ անհտեթեմ գործ մ'ըրի, եթէ ըրի ձեզնէ ներում կ'խնդրեմ :

— Ամենևին. և ի՞նչ բանի մէջ անհտեթեմ գործ մ'ըրած պիտի լինէիր — հարցուց Արամիս հանդարտութեամբ :

Եւ որչափ որ իր դէմքը զուարթաղին կ'սարդէր, և որչափ որ կառավարչին կ'ժպտէր, Արամիս կ'հարցնէր իւրովի թէ ի՞նչպէս Պէզմօ, որ իր հասցէն չգիտէր, գիտէր սակայն որ վան իր բնակութեան տեղն էր :

— Պիտի լուսարանեմ այս բանը — ըսաւ ինքնիրեն :

Ապա բարձր ձայնով.

— Նայինք, սիրելիք իմ կառավարիչ — ըսաւ — կ'ուզես որ մեր փոքրիկ հաշիւները կարգադրենք :

— Չեր հրամանին պատրաստ եմ, տէր իմ : Բայց ամենէն առաջ, ըսէք ինձ, աէր իմ . . . :

— Ի՞նչ ըսեմ :

— Միթէ չ'պիտի սրտուէք զիս՝ ըստ սովորականին՝ ինձի հետ նախաձաշելու :

— Անշուշտ, յօժարակամ :

— Շատ լաւ ուրեմն :

Պէզմօ երեք հարուած տուաւ սկահակի մը :

— Ի՞նչ կ'նշանակէ այս — հարցուց Արամիս :

— Կ'նշանակէ թէ նախաձաշիկի համար հիւր ունիմ և ըստ այնմ վարուին :

— Ա՛հ, կրո՛ղ, և միթէ երեք անգամ կ'զարնես : Գիտես,

սիրելիք իմ սարոն կառավարիչ, որ ինձի հետ օտարի պէս կը վարուիս :

— Ո՛հ, բնաւ. բայց դարձեալ որչափ մեծարեմ ձեզ կ'արժէ. վասն զի չկայ իշխան մ'որ ձեր ըրածն ինձ ըրած լինի :

— Օ՛ն, ուրիշ բանի վրայ խօսինք. կամ լաւ ևս, ըսէ ինձ, միթէ գործերդ կարդին են, շահ ունին 'ի Պասղիլ :

— Ի՞նչպէս չէ :

— Ուրեմն, կալանաւորը շահաւոր է :

— Ո՛չ շատ :

— Կրո՛ղ :

— Պ. Մաղարէն բաւական խստապահանջ չէր :

— Ա՛հ, այո՛, քեզի կասկածոտ կառավարութիւն մը պէտք էր, օրինակի համար մեր հին կարտինալը :

— Այո՛, անոր օրովը, այդ լաւ կ'բալէր : Նորին ալեւոր Բարձրութեան եղբայրն իր բաղդը շինեց :

— Հաւատն ինձ, սիրելիք իմ կառավարիչ — ըսաւ Արամիս Պէզմօի մօտենալով — նորատի թագաւոր մը ծերունի կարտինալ մը կ'արժէ : Երիտասարդութիւնն իր կասկածանքն ունի, նոյնպէս ցասումներն ու ցիբքը, եթէ ծերութիւնն ունի իր ատելութիւնները, զգուշութիւնները, երկիւղները : Միթէ Լուվիէրի և Գրանսպլէյի չվճարեցիր քու եռամեայ վաստակդ :

— Ո՛հ, Աստուած իմ, այո՛ :

— Այնպէս որ քեզի բերած յիսուն հազար Փրանքը միայն ունիս տալու :

— Այո՛ :

— Այսպէս, ստակ չես կարող պահել :

— Ա՛հ, տէր իմ, իմ կողմէս այս սարոններուն յիսուն հազար Փրանք տալով, կ'երդնում որ բոլոր վաստակս անոնց կ'տամ : Այս կ'ըսէի երէկ իրիւն Պ. ա'Արդանեանի :

— Ա՛հ — ըրաւ Արամիս, որու աչերը փայլեցան, բայց իսկոյն մարեցան. — ա՛հ, երէկ ա'Արդանեանը տեսար, և ի՞նչ պէս է այս մեր սիրելի բարեկամը :

— Քաջաւորջ է :

- Եւ ինչ կ'ըսէիր անոր, Պ. Պէզմօ :
- Անոր կ'ըսէի թէ — շարունակեց կառավարիչն առանց իր անխոհեմութիւնը զգալու — կ'ըսէի անոր որ իմ կալանաւորներս՝ շատ լաւ կ'կերակուէի :
- Քանի՞ հատ ունիս — հարցուց Արամիս անհոգ կերպով մը :
- Աւթսուն հատ :
- Հէ, հէ, այդ բաւական կ'ըր թիւ մ'է :
- Ա՛հ, տէր իմ, եղած են երբեմն տարիներ որ երկու հաւրիւր հատ գտնուած են :
- Բայց վերջապէս, ամենէն քիչ թիւը վաթսուն է, դարձեալ դանդաղելու իրաւունք չունիս :
- Ո՛չ, անշուշտ. վասն զի՛ իզնէ զատ՝ որ և է ուրիշ մարդու՛ իւրաքանչիւր կալանաւոր եօթսունը հինգ ոսկի պիտի բերէր :
- Եօթսունը հինգ ոսկի :
- Հասցնա՛, հաշիւ ըրէք. արքայազն իշխանի մը համար, օրինակի աղաղաւ, յիսուն ֆրանք ունիմ՝ օրը :
- Մինակ արքայազուն իշխան չունիս, ինչպէս որ գէթ կ'ենթադրեմ — ըսաւ Արամիս ձայնին թեթեւ դող մը տալով :
- Փանք Աստուծոյ, ո՛չ, չունիմ, ո՛չ, չունիմ դժբաղդաբար :
- Ի՞նչպէս դժբաղդաբար :
- Անտարակոյս, անով վաստակս կ'աւելնար :
- Իբաւ է :
- Ուրեմն, արքայազնի գլուխ յիսուն ֆրանք ունիմ :
- Այո՛ :
- Քրանսայի մարաջախտի գլուխ՝ երսունը վեց ֆրանք :
- Բայց այժմ ինչպէս մարաջախտ նոյնպէս արքայազուն չունիս՝ ի բանտ, այնպէս չէ՞ :
- Բա՛րէ, չունիմ. իբաւ է որ ընդհանուր տեղակո՛ւներն ու զնդսպետները քսան չորս ֆրանք են մարդու գլուխ, և երկու հատ ունիմ :
- Հա՛, հա՛ :
- Ասի՛ք զատ՝ կան նաև Բարլմէնդի խորհրդակիանները, որքան սասն հինգ ֆրանք կ'բերեն :

- Եւ ո՞րչափ ունիս :
- Չորս հատ ունիմ :
- Չգիտէի որ խորհրդակիաններն այդչափ լաւ ստակ կ'բերեն :
- Ըսաւ Արամիս :
- Այո՛, բայց տասն հինգ ֆրանքէն իսկոյն տասնի կ'իջնեմ :
- Տասնի՞ :
- Այո՛, սովորական դատաւորի համար, ամբաստանեալի մը համար, եկեղեցականի մը համար, տաս ֆրանք :
- Եւ եօթ հատ ունիս, լաւ գործ :
- Ո՛չ, դէշ գործ :
- Ինչո՞ւ համար :
- Ի՞նչպէս կ'ուզէք որ այս աղքատներուն հետ՝ որ վերջապէս բան մ'են, չվարուիմ, ինչպէս Բարլմէնդի խորհրդակիաններու հետ :
- Արդարև, իբաւունք ունիս, անոնց մէջ հինգ ֆրանք տարբերութիւն չեմ տեսներ :
- Ա՛խմանա՛ք, եթէ լաւ ձուկ մ'ունենամ, միշտ չորս հինգ ֆրանք կ'վճարեմ, եթէ լաւ վառեակ մ'ունենամ, ինձի մէկ ու կէս ֆրանքի կ'նստի : Իմ հաւնոցիս հաւերը լաւ կ'զերոյնեմ, պէտք է որ ցորեն զնեմ, և չէք կրնար երեւակայել թէ ո՞րչափ մեծ է աստ մուկերու բանակը :
- Լա՛ւ, ինչո՞ւ համար անոնց գէ՛մ վեց հատ կատու չես հաներ :
- Ի՛հ, այո՛, կատու, մուկերը զանոնք կ'ուտեն. ստիպուեցայ ետ կենալու այս փորձէն : Գատեցէք այժմ թէ ինչպէս կ'ուտեն ցորենս : Ստիպուած եմ Անկլիայէն զեանափոր շներ բերել տալ մուկերը խեղդելու համար : Շուները սոսկալի ախորժակ մը ունին, հինգերորդ կարգի կալանաւորի չափ կ'ուտեն, թող թէ երբեմն իմ ճագարներս ու հաւերս ալ կ'խեղդեն :
- Արամիս մտիկ կ'ընէր, թէ մտիկ չէր ըներ, ոչ որ կարող պիտի լինէր ըսելու. իր վար առած աչերը կ'յայտնէին մտադիր մարդը, իր անհանդիստ ձեռքը մտախոհ մարդը կ'յայտնէին : Արամիս կ'խորհէր :
- Ա՛րաւի ձեզ ուրեմն — շարունակեց Պէզմօ — բաւական աղէկ հաւ մէկ ու կէս ֆրանքի կ'զար ինձ, և աղ որ ձուկ մը չորս

Հինգ ֆրանք կ'արժէր : Պատկիլի մէջ երեք անգամ կերակուր կ'ուտեն կալանաւորները , որոնք բան դործ չունենալով անգաղար կ'ուտեն . տաս ֆրանք վճարող մարդ մը եօթ ու կէս ֆրանք ծախս ունի :

— Բայց կ'ըսէիր ինձ թէ տաս ֆրանքի մարդիկը տասն Հինգ ֆրանք վճարողներուն պէս կ'ընենք :

— Այո՛ , անտարակոյս :

— Շատ լաւ , ուրեմն տասն Հինգ ֆրանք վճարողներէն եօթ ֆրանք ու կէս կ'վաստկիս :

— Բայց պէտք է լաւ փոխարինել — ըսաւ Պէզմօ , որ տեսաւ թէ բռնուեր էր :

— Իրաւունք ունիս , սիրելի կառավարիչ . բայց միթէ տաս ֆրանքէն վար կալանաւորներ ունիս :

— Ո՛հ , ինչպէս չէ . ոստանիկն ու փաստաբանն ունինք :

— Շատ լաւ , քանի՛ ֆրանք տուրք կ'գնես անոնց վրայ :

— Հինգ ֆրանք :

— Միթէ ասոնք ալ ուտող են :

— Անորէն , մինակ կ'իմանաք որ ամէն օր անոնց ձուկ , կամ խորոված վառեակ և Սպանիոյ դինի չենք տար . բայց վերջապէս շաբաթն երեք անգամ իրենց սեղանին վրայ համադամ սնակ մը կ'տեսնեն :

— Բայց այդ մարդասիրական դործ է , սիրելի կառավարիչ և ասու վրայ փլիս :

— Ո՛չ , քաջ հասկցիք , երբ տասն Հինգ ֆրանքնոց կալանաւորն իր հաւը չլնացներ , կամ տաս ֆրանքնոցն աւերորդ կերակուրները ձգած է , Հինգ ֆրանքնոցին կ'ըրկեմ , և այս ալ խնջոյք մ'է խեղճ աղքատին համար : Ի՛նչ ընեմ , պէտք է զթասէր լինիլ :

— Աւեր ՚ի վերոյ Հինգ ֆրանքնոցէն ի՛նչ կ'մնայ քեզ :

— Երսուն սու :

— Օ՛ն , ուղիղ մարդ մ'ես դու , Պէզմօ :

— Շնորհակալ եմ :

— Ո՛չ , իրաւի անկատակ կ'ըսեմ :

— Շնորհակալ եմ , շնորհակալ , տէր իմ : Բայց կարծեմ թէ Հիմակ իրաւունք ունիք : Միթէ դիտէք թէ որո՞ւ համար կ'ցարիմ :

— Ո՛չ , չգիտեմ :

— Լաւ ուրեմն , փոքրիկ սոցոց և սպասաւորներու համար որ Երեք ֆրանք տալու պարտաւոր են : Ասոնք Հոննոսի ծածան և Մանշի թառափ չեն տեսներ :

— Լաւ , արդեօք Հինգ ֆրանքէն քեզի բան մը չ'մնար :

— Ո՛հ , տէր իմ , մի՛ կարծէք թէ այս աստիճան դժուծ լինիմ . և երջանիկ կ'ընեմ փոքրիկ ոստանիկը կամ գրադրի սպասաւորը , տալով անոր կաքաւի թե մը , եղջերուի քամակ մը , արջտակէ կարկանդակ մը , այնպիսի կերակուրներ որ երբէք երազն անգամ անտած չէ . վերջապէս քսան ու չորս ֆրանքի մնացորդներն են ասոնք . կ'ուտէ , կ'խմէ , մրդի ատեն՝ կեցցէ թաղաւոր կ'պուռայ և Պատկիլը կ'օրհնէ . Շանբանցի աղւոր գինիէն երկու շիշ՝ որ Հինգ սուի կ'գայ ինձ , ամէն կիրակի զանի կ'գինովցնեմ : Ո՛հ , ասոնք զիս կ'օրհնեն , ասոնք ախամայ կամօք բանտէն կ'մեկնին : Գիտէք թէ ի՛նչ գիտեցի :

— Իրաւ որ չ'գիտեմ :

— Լաւ ուրեմն , զիտեցի . . . : Միթէ դիտէք որ մեր տան համար երջանկութիւն մ'է : Լաւ ուրեմն , զիտեցի . . . : Գիտէք արդեօք որ տանս համար պատիւ մ'է : Լաւ ուրեմն , զիտեցի որ քանի մ'ազատադիր գերիներ , գրեթէ անմիջապէս ինքզինքնին քանտարկել տուին : Ինչո՞ւ համար արդեօք , եթէ ոչ իմ կերակուրներս ճաշակելու համար : Ո՛հ , բայց այս լիովին ստոյգ է : Արամիս կասկածոս դէմքով մը ժպտաց :

— Կ'ժպտիք :

— Այո՛ :

— Կ'կրկնեմ որ երեք տարուան մէջ մի և նոյն անունները գարձած են :

— Պէտք է ինձ տեսնել հաւտալու համար :

— Ո՛հ , այդ կրնամ ցոյց տալ ձեզի , թէ և արդիլեալ է օտարականաց արձանադիրները ցոյց տալ :

— Կարծեմ :

— Բայց զուք, տէր իմ, եթէ կ'ուզէք աչքով տեսնել խնդիրը . . . :

— Չափազանց սխալի հրճու իմ, արդարեւ :

— Լաւ ուրեմն, թող այդպէս լինի :

Պէզմ մեծ պահարանի մը կողմը դնաց և անկից մեծ արձանաց զիրք մը բերաւ :

Արամիս աչքն հետաքրքրութեամբ կ'հետեւէր անոր :

Պէզմ գարձաւ, սեղանին վրայ դրաւ արձանագիրքը, զանի պահ մը թղթատեց և Մ. տառին կեցաւ :

— Ահա — ըսաւ — օրինակի համար :

— Մարտինիէ յունվար 1659, Մարտինիէ յունիս 1660, Մարտինիէ մարտ 1661, պարսապիր, Մազարէնական, և այլն : Կ'իմանաք որ այս լուկ պատրուակ մ'է, խեղկատակութեանց համար Պասղիյլ չէր երթար մարդ, մեր բարեկամը ինչպէ՞ս սխալի մասնէր ոտիկանութեան որ զինքը բանտն :

— Եւ ինչ նպատակաւ, սարոն :

— Երեք ֆրանքով իմ խոհանոցիս կերակուրներն ուտելու համար :

— Երեք ֆրանքով, թշուա՞ւր :

— Ինչ, տէր իմ, բանաստեղծ է յետին աստիճան : Բայց ձեզի կ'ըսէի թէ միշտ ասոնք յանկարծակի կ'բերէի ազուր կերակուրներ տալով :

Եւ Արամիս՝ արձանագրին թղթերը մեքենայէս կ'զարձնէր, և ընթերցումը կ'շարունակէր առանց որ և է կերպով կարդացածին մտադիր երևելու :

— Կ'նայի՞ք — ըսաւ Պէզմ — 1661ին ութսուն կալանաւոր կային, 1659ին՝ ութսուն :

— Ա՛հ, Սէլտօն — ըսաւ Արամիս — կ'երևի ինձ որ այս անունը դիտեմ : Միթէ զու չէիք ինձ պատանոց մը վրայ խօսողը . . . :

— Այո՛, այո՛, թշուառական ուսանող մ'որ շարագրեց . . . ինչպէս կ'անուանէք այդ, երկու լատինական ոտանաւորներ որ իրարու կ'դպին :

— Երկատիք :

— Այո՛, ճիշտ այդ է :

— Չարաբա՛ղըր, երկատիքի՛ համար :

— Կրո՛ղ, ինչպէս շուտ մը կ'զատէք : Գիտէ՞ք արդեօք որ ժէզ-Վիթներուն դէմ յօրինեց այդ երկատիքը :

— Հա՛, հա՛, ինչ որ է, պատիժը շատ ծանր կ'երևի ինձ :

— Մի ցաւիք անոր վրայ, անցած տարի այնպէս երեցաւ ինձ որ անոր հոգ կ'տանիք, լաւ ուրեմն, այդ ձեր հոգաատարութիւնն ս'ըջախի զօրաւոր է այս տեղ, տէր իմ, այն օրէն վեր իբրև տան հինգ ֆրանքնային մէկը կ'մեծարեմ զինքը :

— Ուրեմն, ասոր պէս — ըսաւ Արամիս, որ արձանագիրքը թղթատելը շարունակէր էր և Մարտինիէի ետևէն եկող անուան մը վրայ կեցեր էր :

— Ճիշտ, ասոր պէս :

— Միթէ իտալացի՞ է այս Մարքիալին — հարցուց Արամիս իր ուշը դրաւող անունը մատին ծայրովը ջոյց տալով :

— Սո՛ւս — ըսաւ Պէզմ :

— Ինչպէս սո՛ւս — ըսաւ Արամիս՝ իր սպիտակ ձեռքն ակամայ կարկառելով :

— Ես կարծէի թէ արդէն խօսեր եմ այս Մարքիալի վրայ :

— Ո՛չ, առաջին անգամն է որ իր անունը կ'լսեմ :

— Կարելի է, կ'երևի թէ առանց անունը տալու խօսած եմ անոր վրայ :

— Եւ միթէ հին մեղաւոր մ'է այդ — հարցուց Արամիս ժպտալու փորձելով :

— Ո՛չ, բոլորովին նորասի է, ընդ հակառակն :

— Հա՛, հա՛, ուրեմն իր յանցանքը շատ մեծ է :

— Աններելի է :

— Միթէ մա՞րդ սպաննեց :

— Բա՛ :

— Հրձիգ է :

— Է՛հ, ո՛չ : Այն մարդն է որ . . . :

Եւ Պէզմ Արամիսի ականջին մօտեցաւ՝ իր-երկու ձեռքը լաւ Քանական շեփոր մը յօրինելով :

- Այս անձն այն է որ կ'իշխէ նմանելու . . . :
- Հն , այն , այն — ըսաւ Արամիս : — Իրաւ զիտեմ , արդէն անյաճ տարի ինձ խօսեր էիր , բայց յանցանքն ինձ շատ թեթև երևցեր էր :
- Թեթև :
- Կամ լաւ ևս կամաւոր չէր :
- Տէր իմ , մարդ ահամայ այսպիսի նմանութիւն մը չբերեր :
- Աերջապէս՝ մոռցեր էի , զործն այս է :
- Բայց առ նայիմ , սիրելի Տիւրքնկալս — ըսաւ Արամիս արձանագիրը զոցելով — աւասիկ , կարծեմ թէ քեզ կ'կանչեն :
- Պէզմօ արձանագիրն առաւ , շուտ մը պահարանը տարաւ , զոցեց զայն և անոր բանալին զրպանը դրաւ :
- Կ'հաճի՞ր որ նախաճաշիկ ընենք , տէր իմ — ըսաւ նա — վասն զի չէք սխալիր , մեզ նախաճաշիկ կ'կոչեն :
- Ինչպէս որ կամիք , սիրելի կառավարիչ :
- Եւ սեղանատունն անցան :

Զ

Պ. ՊԵՋՄՕԻ ՆԱԽԱՃԱՆԻԿԸ

Սովորաբար Արամիս ժուժկալ էր , բայց այս անգամ որչափ օր զինին զգուշութեամբ կ'լսէր՝ Պէզմօն նախաճաշիկը՝ որ իրօք պատուական էր՝ ակտիվացած կերաւ :

Իսկ Պէզմօ իր կողմէ ուրախ զուարթ էր յոյժ . յիսուն հազար ֆրանքին տեսն ուրու վրայ մերթ ընդ մերթ կ'նայէր՝ իր սիրտը կ'բանար : Ատեն ատեն Արամիսի կ'նայէր անուշ զորովով մը :

Արամիս իր աթոռին վրայ լարուեր էր և շրթերուն ծայրովը քանի մը կ'աթիլ զինի կ'ըմպէր և իբրև զիտակ կ'ճաշակէր :

— Թո՛ղ այսուհետև չըսեն ինձ որ Պասղիլլի մէջ գէշ կ'ճաշեն — ըսաւ նա աչերը թարթելով — երջանիկ են բանտարաններն որ ամէն օր կէս շիշ Պուրկօնի զինի կ'ընդունին :

- Ամէն տասն հինգ ֆրանքնոցներն այդ զինիէն կ'ըմպեն — ըսաւ Պէզմօ : — Շատ հին քննէ՞ք մ'է :
- Այսպէս մեր խեղճ ուսանողը , մեր խեղճ Յէլտօնը , այդ պատուական քննէ՞ք զինիէն կ'ստանայ :
- Ո՛չ , բնաւ ո՛չ :
- Այնպէս կարծեցի թէ տասն հինգ ֆրանքի կարդէն է :
- Այն , երբէք . մարդ մ'որ երկուստիք . . . ինչպէս ըսիք , մոռցայ :
- Երկստիք :
- Տասն հինգ ֆրանքի , բնաւ . իր դրացին է տասն հինգ ֆրանքնոցը :
- Ո՛ղ է այն :
- Միւսը , երկրորդ Պէրգօտիէր :
- Սիրելի կառավարիչս , ներէ ինձ , բայց այնպիսի լեզու մը կ'խօսի որու համար փոքր լնչ վարժութիւն պէտք է :
- Ստոյգ է , ներեցէք . տեսէք , երկրորդ Պէրգօտիէր կ'նշանակէ Պէրգօտիէր աշտարակին երկրորդ դասիկոնը բնակողը :
- Այսպէս ուրեմն , Պէրգօտիէր Պասղիլլի մէկ աշտարակին անունն է : Արդարև իմացայ որ ամէն մէկ աշտարակ իր անունն ունի : Եւ ո՛ր է այդ աշտարակը :
- Ահա , ահա — ըսաւ Պէզմօ պատուհանն երթալով : — Սա ձախ կողմի երկրորդ աշտարակն է :
- Շատ աղէկ : Ա՛հ , միթէ տասն հինգ ֆրանքնոց կալանաւորն ա՛նդ է :
- Այո՛ :
- Եւ քանի՞ ատենէ վեր անդ է :
- Ա՛հ , իրաւ որ , զրեթէ եօթ ութ տարիէ վեր :
- Ի՞նչպէս գրեթէ , միթէ աւելի ստուգութեամբ թուականները չգիտեն :
- Իմ ժամանակս եկած չէ , սիրելի իմ Պ . Հէրպլէյ :
- Բայց լուրիկէր , բայց Գրանպլէյ , ասոնք պարտաւոր են քեզի տեղեկութիւն տալ :
- Ո՛հ , Պասղիլլի գաղտնիքը կառավարչութեան բանալիններով չեն յանձնուիր :

— Հատ լաւ — սրտասխանեց Արամիս — բայց այն ատեն, ինչո՞ւ համար աւելի աղատութեամբ կ'իսուիս Սէլուծնի վրայ քան թէ . . . :

— Քան թէ Պէրդօտիէրի երկրորդին վրայ :

— Այո՞ :

— Վասն զի՛ ըստ իս՛ երկստիք շինողի մը յանցանքն աւելի մեծ է քան թէ անոր որ կ'նմանի . . . :

— Այո՛, այո՛, կ'իմանամ միտքդ . հասցա բանտարահները . . . : Միթէ կալանաւորներուդ հետ չէ՞ն խօսիր :

— Անտարակոյս :

— Ուրեմն, կալանաւորներդ անոնց կ'ըսեն անշուշտ որ յանցաւոր չեն :

— Այդ միայն կ'ըսեն, այս է ընդհանուր բանաձևը, տիեզերական փոխասացութիւնը (antienne) :

— Այո՛, սիրելիք իմ Հէրպլէյ, ձեզի պէս սլալատական պէտք է լինի մարդ որ այսպիսի մանր պարագաներու պարապի :

— Հազար անգամ իրաւունք ունիս, սիրելիք իմ Պ. Պէզմօ : Տնօր նայիմ սա Քե՛նէյէդ կաթիլ մ'ալ, կ'աղաչեմ :

— Չէ թէ կաթիլ մը, այլ բաժակ մը :

— Ո՛չ, ո՛չ : Ոտքէդ ցղլուխ հրացանակիր մնացեր ես, Պէզմօ, մինչդեռ ես եպիսկոպոս եղեր եմ : Կաթիլ մ'ինձի համար, բաժակ մը քեզի համար :

— Թո՛ղ այդպէս լինի :

Եպիսկոպոսն ու կառավարիչը բաժակները զարկին :

— Եւ սպա — ըսաւ Արամիս՝ որ իր փայլուն ակնարկը սեւեռելով հոսանուտ սուտակին վրայ զոր մինչև աչքին բարձրութիւնը վերցուցեր էր, որպէս թէ իր բոլոր զոյայարանօք վայելել կ'ուզէր — և սակայն նմանութիւն ըսածդ, թերևս ուրիշ մը պիտի դիտէ :

— Ո՛հ, անտարակոյս պիտի դիտէ որ և է մէկն եթէ ճանչէ այն անձն որու այս կ'նմանի :

— Կարծեմ, Պ. Պէզմօ, որ այս սլարզապէս մտքիդ մէկ խաղն է, պատրանք մ'է :

— Ո՛չ, ո՛չ, խօսքս վկայ :

— Մտիկ ըրէ — շարունակեց Արամիս — շատ մարդիկ տեսայ որ կ'նմանէին մեր ըսած անձին, բայց ակնածութենէ չէին խօսեր :

— Անշուշտ, նմանութիւն կայ նմանութիւն ալ կայ : Այս իմ ըսածս շատ զարմանալի պիտի դտնէք, եթէ տեսնէք . . . :

— Լաւ ուրեմն :

— Դուք իքնին պիտի խոստովանիք :

— Եթէ տեսնէի — ըսաւ Արամիս բնական կերպով մը — բայց՝ ըստ ամենայն հաւանականութեան՝ չպիտի տեսնեմ :

— Եւ ինչո՞ւ համար :

— Վասն զի, եթէ ոտք կոխեմ այն սոսկալի սենեակներէն միոյն մէջ, ինքզինքս 'ի սպառ թաղուած պիտի համարիմ :

— Է՛հ, ո՛չ, բնակարանը լաւ է :

— Ո՛չ :

— Ի՞նչպէս ո՛չ :

— Ես խօսքիդ վկայութեան չեմ հաւտար, այս է բանը :

— Ներեցէք, ներեցէք, երկրորդ Պէրդօտիէրի վրայ դէ՛ռ մի խօսիք : Կրօ՛ղ, լաւ սենեակ մ'է, շատ աղոր կահ կարասիք ունի, և գորդ մը :

— Սատանայ՝

— Այո՛, այո՛, այս տղան դժբաղդ չեղաւ, Պասդիլլի ամենէն լաւ բնակարանն անոր տրուեցաւ :

— Օ՛ն, ծն — ըսաւ Արամիս պաղութեամբ — երբէք չպիտի հաւտացնես ինձ որ Պասդիլլի մէջ լաւ սենեակներ կան, իսկ գորդերդ . . . :

— Իսկ գորդերս . . . :

— Լա՛ւ, միայն երևակայութեանդ մէջ գոյութիւն ունին . սարդեր, մուկեր, մինչև անգամ արջնագորտ կ'տեսնեմ :

— Արջնագորտ :

— Չնդաններուն մէջ :

— Միթէ ձեր աչօք տեսնելով համոզուելու մտքդ էք — ըստ Պէզմօ եռանդաղիս :

— Ո՛հ, ո՛չ, Տէր վկայ, ո՛չ :

- Նոյնպէս այն նմանութիւնը ստուգելու համար, զոր զորք գերուն պէս կ'ուրանաք :
- Ուրուական մը, ստուեր մը, չարաբաղդ հոգեվար մը :
- Ո՛չ, ամենևին ո՛չ :
- Բօն-Նէօֆի պէս քաջառողջ թշուառական մը :
- Տխուր և սէղ :
- Ամենևին, խնդուներես :
- Ի՞նչ կ'ըսես :
- Ճիշտ է ըսածս, եկեք ինձի հետ :
- Ի՞նչ ընելու համար :
- Պատկիյլի մէջ շրջան մը, դո՛ք, դուք ձեր աչօք պիտի տեսնէք :
- Հապա կանոնադիրը :
- Ո՛հ, այդ բան մը չէ : Իմ հաղարայետախ դուրս ելնելու օրն է, տեղակալը սլահպանութեան շրջանը կ'ընէ մարտկոյներուն վրայ, մենք այժմ այս տեղ տէր ենք :
- Ո՛չ, ո՛չ, սիրելի կառավարիչ, եթէ մեր քաջելէք նիդերուն ձայներն իսկ միտքս բերեմ, գող կ'ելնեմ :
- Ի՞նչ կ'ըսէք :
- Այն ատեն միայն երրորդ կամ չորրորդ Պերդօտիէրի մը մէջ կրնաս մոռնալ զիս . . . : Պրօւ սւ սւ . . . :
- Կատակ կ'ընէք :
- Ո՛չ, ծանրաբար կ'իստիմ :
- Մէկ հատիկ առիթ մը ձեռքէ կ'հանէք : Գիտէք արդեօք որ իմ ձեզի ձրիապէս առաջարկած շնորհիս համար՝ կան արքայազուն իշխաններ որ մինչև յիսուն հազար Փրանք վճարեցին :
- Ուրեմն ճշմարտապէս շատ հետաքրքրական է :
- Արդիլեալ պտուղը, տէր իմ, արդիլեալ պտուղը, դուք որ եկեղեցւոյ մարդ էք, այս զիանալ պէտք էք :
- Չգիտեմ : Եթէ ես հետաքրքրութիւն մ'ունենայի, երկստիքին խեղճ աշակերտին համար պիտի լինէր :
- Լաւ ուրեմն, այն ուսանողն երթանք տեսնելու, ճիշտ՝ երրորդ Պերդօտիէրը կ'ընակի :

- Ինչո՞ւ համար, ճիշտ կ'ըսես :
- Ասան զի ես, եթէ հետաքրքրութիւն մ'ունենայի, օթոց ունեցող զեղեցիկ սենեկին և անոր մէջ բնակողին համար պիտի լինէր : Տասն հինգ Փրանքնոց մը, տասն հինգ Փրանքնոց մը, տէր իմ, միշտ հետաքրքրաշարժ բան է :
- Ի՛հ, ճիշտ, այդ բանին վրայ հարց ու փորձ ընելու կը մոռնայի : Ինչո՞ւ համար տասն հինգ Փրանք անկից կ'առնուս, և խեղճ Սէլտօնէն միայն երեք Փրանք :
- Ահա, տեսէք ի՞նչ պատուական բան է այս զանազանութիւնը, սիրելիդ իմ պարոն, և ահա ասոր մէջ թաղստորին բարութիւնն ակներև երևան կ'երևէ. ըսել կ'ուզեմ կարտինալին : Պ, Մաղարէն ինքնիրեն ըսած պիտի լինի, այս դժբաղդը միշտ բանալ մնալու սահմանուած է :
- Ինչո՞ւ համար :
- Կ'հարցնէք, կ'երևի ինձ որ իր յանցանքն յախտենական է, ուստի սլապիմն ալ պէտք է այնպէս լինի :
- Յախտենական :
- Անտարակոյս : Եթէ ծաղիկ ունենալու բաղդը չունի, կ'ըմբռնէք. և այս բաղդն ալ իրեն դժուարին է, վասն զիս Պատկիյլի մէջ գէշ օդ չկայ :
- Այդ բանադատութիւնդ շատ հանճարեղ է, սիրելի Պ. Պերդօ :
- Այնպէս չէ :
- Ուրեմն ըսել կ'ուզես որ այս չարաբաղդ մարդն անդադար և անվերջ պիտի տառապէր :
- Տառապէր, ես այդպէս խօսք չըսի, տէր իմ, տասն հինգ Փրանքնոցը չտառապիր :
- Գեթ բանալ տառապիլ :
- Անշուշտ կոյր բաղդ մ'է այդ, բայց այդ տառապանքը մեղձ մնալու կ'աշխատինք : Աերջապէս, խոստովանիք պիտի որ այս թշուառականն աշխարհ եկած էր միայն իր կերած ամէն լաւ բաներն ուտելու համար : Տէր վկայ, պիտի տեսնէք : Ահա սա կարկանդակն ունինք որու ձեռք չըպաւ, սա խեցետիներն որ ամ-

բողջ կ'մնան, Մարնի խեղդեմիններ՝ որ ծովու խառնիճներու պէս խոշոր են, տեսէք: Լւն, այս ամենն երկրորդ Պէրդօտիէրի ճամբան պիտի բռնեն շիշ մ'այս վօլնէյի զինիով, զոր այնչափ աղ որ կ'դանէք: Յուսամ որ տեսնելէն ետև՝ չպիտի այնուհետև տարակոյս ունենաք:

— Ա՛չ, ո՛չ, սիրելի կառավարիչ, ո՛չ. բայց այս ամէն բանի մէջ մինակ երանելի տասն հինգ ֆրանքնոցը կ'մտածես, և միշտ խեղճ Սէլտօնը կ'մոռնաս, որ իմ սանս է:

— Լւն, ձեր սիրոյն համար, տօնի օր պիտի լինի այսօր իրեն համար. պաքսիմատ և շաքարեղէն պիտի ունենայ, սա Բօրթօի գինիով:

— Գու բարեսիրտ մարդ մ'ես, արդէն ըսի և վերստին կ'ըսեմ, սիրելիք իմ Պէզմօ:

— Մեկնինք, մեկնինք — ըսաւ կառավարիչը փոքր ինչ շուարած, կէս մը խմած գինիէն, կէս մ'ալ Արամիսին դօլեստներէն:

— Հաւատս վկայ, քեզ պարտաւորելու համար կ'ընեմ այս բանս — ըսաւ եպիսկոպոսը:

— Ա՛հ, ՚ի դարձին ինձ շնորհակալ պիտի լինիք:

— Աւրեմն, մեկնինք:

— Կեցիք որ բանալիկրին իմաց տամ:

Պէզմօ երկու անգամ հնչակը զարկաւ: Մարդ մ'երեցաւ:

— Աշտարակները պիտի երթամ — գոչեց կառավարիչը: —

Պահակներ պէտք չեն, ո՛չ թմբուկ, վերջապէս աղմուկ պէտք չէ:

Բանալիկրն կառավարչին առջևն անցաւ, Արամիս աջ կողմը բռնեց. բակը դանուող քանի մը զինուորներ գերաններու տէս ձիգ կեցան կառավարչին անցնելու ատենը:

Պէզմօ իր հիւրը շատ մ'ատիճաններէ անցուց՝ որ տեսակ մը հրատարակ կ'տանէին. անկից՝ շարժական կամուրջն եկան, որու վրայ գտնուող սպահակները կառավարիչն ընդունեցան և զանի ճանչեցին:

— Պարոն — ըսաւ այն ատեն կառավարիչն Արամիսի կողմը դառնալով և այնպէս խօսելով որ սպահակներն իր և ոչ մէկ խօսքը չկորուսին — պարոն, լաւ յիշողութիւն ունիք, այնպէս չէ:

— Ինչո՞ւ համար — հարցուց Արամիս:

— Ձեր յատակագիծերուն և չափերուն համար, վասն զի պիտեք որ մինչև անգամ ճարտարապետներուն ներեալ չէ, կալանաւորներու մօտ երթալ թողթով, գրիչներով և մատիտով:

— Լւն — ըսաւ Արամիս իւրովի — կ'երևի թէ ես ճարտարապետ մ'եմ: Միթէ այս ալ տ'Արդանեանի մէկ կատակը չէ՞, քանի որ զիս ՚ի Պէլ-Իսլ ճարտարագէտ տեսաւ:

Ապա բարձր ձայնով.

— Հանդարտէ, պարոն կառավարիչ — ըսաւ նա — մեր վեճակի մարդոց համար սպարապէս նայուածքն ու յիշողութիւնը կը բաւեն:

Պէզմօ բնաւ վրդով մը չցցուց. սպահակներն Արամիսը սեպեցին ինչ որ կ'երևէր լինիլ:

— Լաւ ուրեմն, նախ Պէրդօտիէր զնանք — ըսաւ Պէզմօ — միշտ ներկայ սպահակներէ լսուելու դիտմամբ:

— Երթանք — պատասխանեց Արամիս:

Յետոյ՝ բանալիկրին դառնալով,

— Այս ժամանակէն օդուտ քաղելով — ըսաւ անոր — Ձ թուահամարին քեզի ցոյց տուած համադամները պիտի տանիս:

— Սիրելի Պ. Պէզմօ, կ'մոռնաս, միշտ կ'մոռնաս Յ թիւը:

— Իբրաւ է:

Ներս մտան:

Այս դաթին մէջ գտնուած բոլոր նիղերը, վանդակները, պարզունակները միայն բաւական էին ամբողջ քաղքի մը պահպանութեան համար:

Արամիս որ մտախոհ և ոչ զգայուն մարդ էր, իր երիտասարդութեան ժամանակ ոտանաւորներ յօրինած էր, բայց սպառ սըրտով էր, յիսուն հինգ տարու մարդոց պէս որ կանայքը շատ սիրած կամ լաւ ևս անոնցմէ շատ սիրուած էր:

Բայց երբ որ ոտքը դրաւ քարէ աստիճաններուն վրայ, որմէ անբաւ աղէտք անցնելուն մաշեր էին, երբ որ այն արտասուքէ տամուկ և մթին կամարներուն մթնոլորտէն ինքզինքը սպաշարուած գտաւ, անտարակոյս սիրտը շարժեցաւ, վասն զի իր ճակատը ծռեց,

իր աչերը պղտորեցան, և Պէզմօի ետեէն գնաց առանց խօսք մը ըսելու :

Է

ՊԷՐԳՕՏԻԷՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՏԻԿՈՆԸ

Երբ այցելուն երկրորդ գտնուեց Տասա, յօնու թնէ սեպէ, այլայլութենէ սեպէ, իր շունչը կտրեցաւ :

Պատին տուաւ կռնակը :

— Առդէք ասկից սկսիլ այցելութիւնդ — ըսաւ Պէզմօ — քանի որ միայն բանտէն միւսին բանտը կ'անցնինք, կ'երևի ինձ թէ՛ փոյթ չէ, եթէ երկրորդէն երրորդին իջնենք, կամ երրորդէն երկրորդին իջնենք : Սակայն այս սենեկին մէջ քանի մը նորոգութիւններ կան ընելիք — փութաց նա ըսելու որպէս զի բանտապահը լսէ, որ իր ձայնը մտիկ ընելու չափ մօտ կ'գտնուէր :

— Ո՛չ, ո՛չ — դռնէց Արամիս աշխուժով — աւելի վեր, վեր ելնենք, պարոն կառավարիչ, եթէ կ'հաճիս, աւելի ստիպողապէս է մեզ վեր ելնելը :

Ուստի վեր ելնելը շարունակեցին :

— Բանալիները բանտապահէն ուզէ — փսիսաց Արամիս :

— Յօժարակամ :

Պէզմօ բանալիքն առաւ և ինքնին երրորդ սենեկին դուռը բացաւ : Բանալիներն ամենէն առաջ ներս մտաւ և սեղանին վրայ դրաւ բարի կառավարչին համադամ անուանած կերակուրները :

Յետոյ գուրս ելաւ :

Կալանաւորը շարժում մը չէր ըրած :

Այն ատեն Պէզմօ ըստ կարգի ներս մտաւ, մինչդեռ Արամիս սեմին վրայ կ'կենար :

Անկից՝ պատանի մը, տասն ութ տարեկան աղայ մը տեսաւ, որ՝ անսովոր աղմկին վրայ՝ զլուխը վերցնելով՝ անկողնէն վար նետուեցաւ կառավարիչը տեսնելով՝ և՛ ձեռներն իրարու միացնելով՝ սկսաւ պոռալ :

— Մայր իմ, մայր իմ :

Այս պատանիին ձայնն այնքան աղիողորմ էր որ Արամիս ահա գող ելաւ :

— Սիրելի հիւրս — ըսաւ անոր Պէզմօ ժպտելու փորձելով — քեզի սփոփում և միանդամայն սովորականէն դուրս ուտելիք կը բերեմ, սփոփումը մտքի և կերակուրը մարմնոյ : Աւասիկ այս պարոնը քեզի համար բարեխօս պիտի լինի, և ահա շաքարեղէններ աղանդերիդ համար :

— Ո՛հ, պարոն, պարոն — ըսաւ պատանին — զիս տարի մը մինակ թող, տարի մը չոր հացով և ջրով կերակրէ՛ զիս, բայց ըսէ՛ ինձ որ տարիէ մ'ետք՝ ասկից դուրս պիտի ելնեմ, մայրս պիտի տեսնեմ :

— Բայց, բարեկամէ իմ — ըսաւ Պէզմօ — ես քու բերնէդ լսեցի որ մայրդ շատ աղքատ է, թէ անոր մօտ հանդիստ բնակարան չունէիր, մինչդեռ այս տեղ, կրո՞ղ :

— Եթէ աղքատ էր, պարոն, այդ ալ նոր պատճառ մ'է որ իր նեցուկն իրեն յանձնուի : Ե՛ս հանդիստ չունէի անոր մօտ : Ո՛հ, պարոն, մարդ միշտ հանդիստ կ'բնակի երբ աղատ է :

— Աւերջացէս, քանի որ դու ինքնին կ'խոստովանիս թէ այն չարաշուք երկստիքը շինած ես . . . :

— Եւ առանց մասնաւոր նպատակի մը, պարոն, առանց որ և է նպատակի, կ'երգնում ձեզի. Մարտիալ կ'կարգայի երբ անոր խորհուրդն յղացայ : Ո՛հ, պարոն, թող զիս պատժեն, զիս, թող կարեն այն ձեռքս որով գրեցի ոտանաւորը, բայց թող մայրս ինձ դարձնեն :

— Տղան — ըսաւ Պէզմօ — գիտես թէ այդ բանն իմ ձեռքս չէ, ես միայն քու կերակուրդ կրնամ աւելցնել, փոքրիկ բաժակ մը Բօրթօի գինի տալ, և երկու սնակի մէջ սպասիմատ մը սահեցնել :

— Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ — դռնէց պատանին կըլանակի վրայ գառնալով և գետինը գլորելով :

Արամիս՝ այս տեսարանիս աւելի ևս հանդուրժելու անկարող, մինչև գաւիթը քաշուեցաւ :

— Չարաբանդդ պատանի — կ'մրմուար նա մեղմիկ :

— Ո՛Տ , այո՛ , պարոն , շատ չարաբաղդ է . բայց այս իր ծննդը լացը յանցանքն է :

— Ի՞նչպէս :

— Անտարակոյս : Ինչո՞ւ համար անոր լատիներէն սորվեցնել կ'տային . . . : Չափէն աւելի դիտութիւնը , հաւտայէք ինձ , պարոն , մնատակար է . . . : Ես ոչ կարգալ և ոչ գրել գիտեմ . ասոր համար բանտը չեմ :

Արամիս այս մարդուն նայեցաւ , որ կարծէր թէ բանտը լինիլ չէ Պատիլլի մէջ բանտապետ լինելու :

Իսկ Պէզմո՛ տեսնելով որ իր խորհուրդներն ու զիննն աղղեցութիւն չեն ըներ բնաւ , բոլորովին շփոթած դուրս ելաւ :

— Լաւ , հապա գո՛ւուր , գո՛ւուր — ըսաւ բանտապետը — դու ուր գոցելու կ'մտնաս :

— Իրաւ է — ըսաւ Պէզմո : — Ա՛ն , սն , աւասիկ բանալիները :

— Այս տղուն ազատութեան շնորհը պիտի խնդրեմ — ըսաւ Արամիս :

— Եւ եթէ չկրնաք ստանալ — ըսաւ Պէզմո — գոնէ խնդրեցէք որ իր օրական թոշակը տաս ֆրանքի հանեն , ասով երկուքնիս ալ շահաւոր պիտի ելնենք :

— Եթէ միւս կալանաւորն ալ իր մայրը կոչէ — ըսաւ Արամիս — լաւ ևս ունիմ ներս չմտնել , դրսէն պիտի աւնում չափը :

— Ո՛Տ , ո՛Տ — ըսաւ բանտապետը — մի՛ վախնաք , պարոն՝ ճարտարապետ , անի գաւնուկի պէս հեղ է . մայրը կոչելու համար պէտք է որ խօսի , և երբէք չխօսիր :

— Ուրեմն ներս մտնենք — ըսաւ Արամիս ցած ձայնով մը :

— Ո՛Տ , պարոն — ըսաւ բանալիկերն — միթէ բանտերու ճարտարապետ էք :

— Այո՛ :

— Եւ ի՞նչպէս չէք վարժած այս բանին : Զարմանալի է :

Արամիս դիտեց որ կասկածներ չաղղելու համար՝ պարտաւոր էր բոլոր ոյժն իրեն օգնութեան կոչել :

Պէզմո բանալիներն ունէր , դուռը բացաւ :

— Գո՛ւրս կեցիր — ըսաւ բանալիկերն — և սանդղէն վար մեզնէս պատէ :

Բանալիկերն հնազանդելով քաշուեցաւ :

Պէզմո առաջ անցաւ և ինքն երկրորդ դուռը բացաւ :

Այն ատեն՝ վանդակաւոր պատուհանէն ներս սրսկող քառակուսի լուսոյ մէջ տեսնուեցաւ՝ զեղեցիկ երիտասարդ մը , կարճաճատակ , կարճ մազերով և արդէն բաւական մեծցած մօրուքով . աթոռակի մը վրայ նստած էր , արմուկը թեւթուի մը մէջ , որու կաթներ էր մարմնոյն վերի կողմը :

Իր զգեստը՝ անկողնին վրայ նետած , սև բարակ թաւշէ էր , և կ'շնչէր զով օդ մ'որ կարելի եղածին չափ բարակ կտաւով ծածկուած կուրծքը կ'լեցուէր :

Երբ որ կառավարիչը ներս մտաւ , այս երիտասարդը կատարեալ դանդաղութեամբ գլուխը դարձուց , և ըսաւ որում Պէզմոն ճանչեց , ոտք ելաւ և մարդավարութեամբ բարեկց :

Բայց երբ իր աչքն ածեց Արամիսի վրայ՝ որ մթուն մնացեր էր , ասի սարսուռ մ'զղաց . զոյնը նեանց , և իր գլխարկը զոր ձեռքը բռներ էր վար ընկաւ որպէս թէ բոլոր ջիւերը յանկարծ թուլացած լինէին :

Նոյն միջոցին՝ Պէզմո՛ իր կալանաւորին ներկայութեան սովոր լինելով , կարծես թէ Արամիսը յուզուլ այլայլութեանց անհազորդ էր . սեղանին վրայ կ'զնէր իր բլիթն ու խեցեգետինները , իբրև եռանդաղին սպասաւոր մը : Այսպէս զսաղած լինելով չէր դիտեր բնաւ իր հիւրին վրդովը :

Բայց երբ գործն աւարտեց՝ խօսքը նորատի կալանաւորին ուղղելով ,

— Բաջաւողջ կ'երևիս — ըսաւ նա — լաւ նշան է այդ :

— Շատ աղէկ եմ , պարոն , շնորհակալ եմ — պատասխանեց երիտասարդը :

Արամիս այս ձայնէն քիչ մնաց վար պիտի ընկնէր : Ակամայքայլ մ'առաւ ընդ առաջ , դողդոջուն շրթերով :

Այս շարժումն այնքան տեսանելի էր որ Պէզմոն չվրիպեցաւ , որչափ որ զսաղած էր :

- Աւասիկ ճարտարապետ մ'որ կրակարանդ պիտի քննէ — ըսաւ Պէզմօ — արդեօք կ'ծխայ :
- Երբէք , պարոն :
- Ա՛րսէիք թէ մարդ բանտի մէջ չկրնար երջանիկ լինիլ — ըսաւ կառավարիչը ձեռքերը շփելով — սակայն աւասիկ կալաւաւոր մ'որ երջանիկ է : Յուսամ որ տրտունջ մը չունիս :
- Երբէք :
- Միթէ չե՞ս ձանձրանար — ըսաւ Արամիս :
- Երբէք :
- Հէյն — ըրաւ Պէզմօ ցած ձայնով — միթէ իրաւունք չունէի՞ :
- Ճշմարիտը , ինչ ըսեմ , պարոն կառավարիչ , պարտաւոր եմ համոզուիլ աչօքս տեսածիս : Արդեօք ներելի է անոր հարցումներ ընել :
- Ա՛րչափ որ կամիք :
- Լաւ ուրեմն , շնորհ ըրէ անոր հարցնելու թէ դիտէ՞ ինչո՞ւ համար այս տեղ է :
- Պարոնը կ'անդրէ լզնէ հարցնել քեզ — ըսաւ Պէզմօ — թէ արդեօք բանտարկութեանդ պատճառը գիտես :
- Ա՛չ , պարոն — ըսաւ երիտասարդը պարզապէս — չգիտեմ :
- Բայց այդ անկարելի է — ըսաւ Արամիս ակամայ բորբոքելով : — Եթէ բանտարկութեանդ պատճառը չգիտնայիր , պիտի կատղէիր :
- Առաջին օրերն իրօք կատղեր էի :
- Ինչո՞ւ համար հիմակ չես :
- Ասան զի մտածեցի :
- Տարօրինակ բան — ըսաւ Արամիս :
- Միթէ իրօք զարմանալի չէ՞ — հարցուց Պէզմօ :
- Եւ ինչ մտածեցիր — հարցուց Արամիս : — Միթէ կրնամ հարցնել քեզ , պարոն :
- Մտածեցի որ յանցանք մը գործած չլինելուս , Աստուած չէր կարող զիս պատժել :
- Բայց ինչ է բանար — հարցուց Արամիս — եթէ ոչ պատիժ մը :

- Ափսո՛ս — ըսաւ երիտասարդը — չգիտեմ . այսչափ միայն կրնամ ըսել , որ եօթ տարի առաջ ըսածիս հակառակն է այս :
- Պարոն , քեզ մտիկ ընողը , այդ երկայնմտութիւնդ տեսնողը պիտի յորդորուի կարծելու որ բանտը կ'սիրես :
- Ա՛հանդուրժեմ միայն :
- Օր մ'ազատ լինելու ստուգութեամբ :
- Պարոն , այդ ստուգութիւնը չունիմ , այլ միայն յոյս . և սակայն ամէն օր , կ'իտաստովանիմ որ այդ յոյսս կ'կորսուի :
- Բայց վերջապէս , ինչո՞ւ համար ազատ չլինիս , քանի որ արդէն ազատ եղած ես :
- Ճիշտ այդ պատճառաւ է որ ազատութենէ յոյս չունիմ — պատասխանեց երիտասարդը . — ինչո՞ւ համար զիս պիտի բանտարկէին եթէ վերջէն ազատ թողլու միտք ունէին :
- Քանի՞ տարեկան ես :
- Չգիտեմ :
- Ի՞նչ է անունդ :
- Մոռցայ ինձ տրուած անունը :
- Ա՛յք ե՛ն ծնողքդ :
- Երբէք գա՛նոնք չեմ ճանչցած :
- Հասա քեզ մեծցնողները :
- Ձիս իրենց որդին չէին անուաներ :
- Այս տեղ գալէն առաջ մէկը կ'սիրէիր :
- Իմ ստնտուս և ծաղիկներս կ'սիրէի :
- Ա՛յսչափ միայն :
- Ա՛սիրէի նաև իմ սպասաւորս :
- Միթէ այդ ստնտուդ և սպասաւորդ կարօտցեր ես :
- Շատ լացի երբ որ մեռան :
- Այս տեղ գալէդ ՚ի վեր մեռան թէ ոչ առաջ :
- Ձիս յափշտակած օրերնուն առջի իրկուներ մեռան :
- Միթէ երկուքնին նոյն ատեն :
- Երկուքնին ալ նոյն ատեն :
- Եւ ի՞նչպէս յափշտակեցին քեզ :
- Մարդ մ'եկաւ զիս առնլու , կառք մը դրաւ՝ որ պարզու նակներով զոցուած էր և զիս այս տեղ բերաւ :

- Այդ մարդը կրնայիր ճանչել :
- Գիմակ մ'ուներ :
- Միթէ այս պատմութիւնը կարդէ դուրս չէք գտներ — Ըստ Գեղամ կամացուկ մ'Արամիսին :
- Արամիս հազիւ կարող էր շնչելու :
- Այո՛ , արտաքոյ կարգի — միմուաց նա :
- Բայց աւելի արտաքոյ կարգի բանը սա է որ ինձի այնչափ բան ըսած չէ որչափ որ ձեզի ըստ :
- Կարելի է սա պատճառաւ որ երբէք անոր հարց ու փորձ չըրիր — ըստ Արամիս :
- Կարելի է — պատասխանեց Գեղամ : — Ես հետաքրքիր չեմ : Բայց , աւասիկ սենեակը կ'տեսնես , աղւոր է , այնպէս չէ :
- Շատ աղ որ :
- Օթոց մը . . . :
- Փառաւոր է :
- Գրաւ կ'գնեմ որ անոր նման օթոց մը չկար անոր գալէն ստաջ :
- Կ'հատամ :
- Յետոյ երիտասարդին դառնալով ,
- Միթէ չէս յիշեր — հարցոց նա — որ օտարական մարդ կամ կին զը քեզի այցի եկած լինի :
- Ո՛հ , անշուշտ , երեք անգամ կին մ'եկաւ , որ ամէն անգամունձ դրան առջև կեցոց կատքը , ինք ներս մտաւ քողով մը ծածկուած , և այս քողը վերցոց միայն երբ սենեակն առանձինն մնացինք :
- Միթէ այս կինը կ'յիշե՞ս :
- Այո՛ :
- Ի՞նչ կ'ըսէր քեզի :
- Երիտասարդը արտմութեամբ ժպտաց :
- Նա հարցոցածդ կ'հարցնէր ինձ , թէ երջանիկ եմ թէ ոչ կ'ձանձրանամ :
- Եւ երբ գար կամ մեկնէր . . . :
- Նա զրկայը մէջ զիս կ'սեղմէր , սրտին վրայ առնելով զիս կ'զրկէր :

- Միթէ կ'յիշե՞ս զանի :
- Շատ աղէկ կ'յիշեմ :
- Կ'հարցնեմ թէ արդեօք դեմքը կ'ձանչե՞ս :
- Այո՛ :
- Ուրեմն եթէ դիպուածով նա առջևդ ելնէր , կամ դու անոր առջևը :
- Ո՛հ , անտարակոյս :
- Վաղանցուկ գոհունակութեան նշոյլ մը Արամիսին դեմքէն անցաւ :
- Նոյն պահուն Գեղամ լսեց բանալիլրին ոտքի ձայնն որ վեր կ'եկնէր :
- Միթէ կ'ուզէք որ դուրս ելնենք — ըստ նա արտօրնօք Արամիսին :
- Հաւանօրէն Արամիս դիտնալ ուզածն իմացեր էր :
- Երբ որ կամենաս — ըստ նա :
- Երիտասարդն անոնց մեկնելու պատրաստութիւնը տեսաւ և մարդավարութեամբ բարեեց :
- Գեղամ պատասխանեց պարզապէս զլուխը ծռելով :
- Արամիս՝ անտարակոյս դժբաղդութեան առջև ակնածու դառնալով , խորին յարգանօք բարե տուաւ կալանաւորին :
- Յետոյ դուրս ելան . Գեղամ անոնց ետեէն դուռը դոցեց :
- Է՛յ բարի — ըստ Գեղամ սանդղին վրայ — ի՞նչ կ'ըսէք այս ամէն բանին :
- Գաղանիքը դտայ , սիրելիդ իմ կառավարիչ — ըստ նա :
- Վա՛հ , և ի՞նչ գաղտնիք :
- Այն տան մէջ մարդասպանութիւն մ'եղած է :
- Ի՞նչ կ'ըսէք :
- Չլսեցիր , սպասաւորն ու սանտուն մի և նոյն օրը մուտք են :
- Լա՛ւ , ի՞նչ կ'հետեի :
- Թոյն :
- Հա՛ , հա՛ :
- Դու ի՞նչ կ'ըսես :
- Կ'ըսեմ որ թերևս ստոյգ է այդ . . . : Ի՞նչպէս , այս պատանին արդեօք մարդասպան մ'է :

— Գէն , աղէկ որ կարդացի — ըսաւ Պէզմօ — միտքս ընկաւ ,
պիտի խնդիր մատուցանեմ :

Արամիս զիբքը զոցեց :

— Այ՛ , — ըսաւ նա — նոյն իսկ Պ . Մաղարէնի ձեռագիրն է .
կ'ճանչեմ իր գիրը : Հիմակ , սիրելիդ իմ կառավարիչ — շարա-
յարեց նա , որպէս թէ այս վերջին հաղորդակցութիւնն իր հե-
տաքրքրութիւնը բոլորովին դո՛՛հ ըրած լինէր — եթէ կամիս , անց-
նինք մեր փոքրիկ հաշիւներուն :

— Լաւ , ինչ պայմանաժամ դնեմ , գուք ինքնին որոշեցէք :

— Պայմանաժամ մի դներ , մինակ հարիւր յիսուն հազար Ֆրանս-
քին համար պարզապէս ապահովադիր մը տուր :

— Պահանջելի՞ , . . . :

— Ըստ իմ կամաց : Բայց պէտք է զխնաս որ պիտի ուզեմ
միայն երբ գու ալ ուզես :

— Ա՛հ , այդ մասին անհոգ եմ — ըսաւ Պէզմօ ժպտելով —
բայց արդէն ձեզի երկու ընկալադիր տուած եմ :

— Ուստի՛ , ես ալ ահա կ'սլատուեմ զանոնք :

Եւ Արամիս՝ երկու ընկալադիրները կառավարչին ցոյց տալն
ետեւ , իրօք զանոնք պատուեց :

Այս վստահութեան յայտարարութենէ ընկձեալ , Պէզմօ ա-
ռանց վարանման ստորադրեց պարտամուրհակ մը հարիւր յիսուն
հազար Ֆրանքի՛ եպիսկոպոսին կամաց համեմատ վճարելի :

Արամիս՝ որ կառավարչին ուսին վրայէն անոր զրիչը զիտեր
էր , պարտամուրհակը գրպանը դրաւ , առանց կարդացած լինելն
յայտնելու , որով Պէզմօ բոլորովին ապահով մնաց :

— Հիմակ — ըսաւ Արամիս — զիս չպիտի մեղադրես , այնպէս
չէ՛ , եթէ կալանաւոր մը յափշտակեմ :

— Ի՞նչպէս յափշտակէք :

— Անշուշտ անոր ազատութեան շնորհը խնդրելով : Օրինակի
համար , չըսի՛ քեզի որ հէք Սէլտօնի հոգը կ'տանիմ :

— Ա՛հ , իրաւ է :

— Է՛յ լաւ :

— Այդ ձեր զխոնալէք բանն է , ինչպէս որ կ'ուզէք այնպէս
շարժեցէք : Կ'նայիմ՝ որ երկայն թեւ և լայն ձեռք ունիք :

— Մնաս բարեաւ , մնաս բարեաւ :
Եւ Արամիս մեկնեցաւ՝ կառավարչին օրհնութիւնները տանելով :

Ը

ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒՀԻՔ

Այն միջոցին որ Պ . Պէզմօ Արամիսին ցոյց կ'տար Պասդիյ-
լի կալանաւորները՝ կառք մը կ'կենար Պէլիէր տիկնոջ դրան առ-
ջև , և դեռ ևս այնպէս կանուխ առաւօտուն՝ դրանդին վրայ կը
հանէր մետաքսէ քողով ծածկուած նորատի կին մը :

Երբ որ տիկին Պէլիէրի ծանուցին տիկին Վանէլի զալուստը ,
տիկին Պէլիէր զբաղած էր կամ լաւ ևս բոլորովին կարգալով
գրաւուած էր զիբ մը զոր արտորնօք կնքեց :

Հազիւ թէ իր առաւօտեան հազուսան ու կապուստը կ'աւար-
տէր , իր նաժիշտները տակաւին մօտակայ սենեակն էին :

Տիկին Մարգարիտ Վանէլի անունն ու քալուածքը լսելուն՝
տիկին Պէլիէր անոր առաջը վազեց , իր բարեկամուհւոյն աչաց
մէջ փայլ մը տեսնել կարծեց որ քաջառողջութեան և խնդու-
թեան փայլ չէր :

Մարգարիտ զանի համբուրեց , անոր ձեռքը սեղմեց , և հազիւ
ժամանակ թողուց որ նա խօսի :

— Սիրելիդ իմ — ըսաւ — ուրեմն զիս կ'մոռնաս : Ուրեմն բո-
լորովին արբունեաց զուարճութեանց տուեր ես ինքզինքդ :

— Եւ ոչ իսկ ամուսնութեան հանդէսները տեսայ :

— Ուրեմն ի՞նչ կ'ընես :

— Պէլիէր երթալու կ'սլատրաստու իմ :

— Պէլիէր :

— Այո՛ :

— Ուրեմն զեղջուհի , կ'ախորժիմ այդ տրամագրութեանց մէջ
տեսնել քեզ : Բայց գու զուճատ ես :

- Ա՛՛՛, քաջառողջ եմ:
- Շատ լաւ, ես անհանդիստ էի քու վրայ: Չգիտես թէ ինչ ըսեր էին ինձ:
- Ինչե՛ր չեն ըսեր:
- Ո՛՛՛, իմ լսածս արտաքոյ կարգի բան մ'է:
- Մարդարիտ, որչափ ունկնդիրներուդ հոգին կ'հասցնես:
- Աւասիկ պիտի ըսեմ, բայց կ'վախնամ որ քեզ չսրբողցնեմ:
- Ո՛՛՛, երբէք: Գու իմ անվրդով բնաւորութեանս վրայ զարմացող չես:
- Լաւ ուրեմն, կ'ըսեն թէ . . . : Ա՛՛՛, ճշմարիտը, երբէք չպիտի կարենամ խոստովանիլ քեզի այս բանս:
- Ուրեմն մի խօսիր — ըսաւ տիկին Պէլիէր, որ այս յառաջաբանին ներքեւ չարամտութիւն մը կ'դուշակէր, բայց և այնպէս հետաքրքրութեանէ կ'մաշէր:
- Լաւ ուրեմն, սիրելիք իմ մարքիղուհի, կ'ըսեն թէ բաւական ատենէ 'ի վեր այնչափ չես ողբար Պ. Պէլիէրի վրայ, հէք մարդը:
- Այդ անշահ ձայն մ'է, Մարդարիտ, ես կ'ողբամ և միշտ պիտի ողբամ իմ ամուսինս, բայց արդէն երեք տարի է որ մեռած է. ես քսան տարու եմ միայն, և անոր կորստեան համար զղացած վիշտս պէտք չէ որ կենացս բոլոր գործերուն և մտածութեանց վրայ իշխէ: Եթէ ըսէի, դու, դու Մարդարիտ, կատարեալ կին, դու ինձ չպիտի հատայիր:
- Ինչո՞ւ համար: Գո՞ւ զգայուն սիրտ ունիս — պատասխանեց չարամտութեամբ տիկին Աննէլ:
- Քու սիրտդ ալ զգայուն է, Մարդարիտ, և երբ սիրտդ վիրաւոր էր տեսայ որ վիշտը քեզ վհատութեան չէր տաներ:
- Այս խօսքն ուղղակի ակնարկութիւն մ'էր Մարդարտին և վերջատեսչին մէջ պատահած դժտութեան: Կոյնպէս քողարկեալ յանդիմանութիւն մ'էր, այլ նորատի կնոջ սրբին ուղղակի քար մը:
- Որպէս թէ այս նշանին կ'սպասէր Մարդարիտ իր նեան արձակելու, գոչեց.
- Լաւ ուրեմն, Էլիզ, կ'ըսեն թէ սիրահարած ես:

- Եւ նայուածքով տիկին Պէլիէրը կլլեց, որ ականայ կարմրեցաւ:
- Մարդիկ բնաւ չեն դանդաղեր կիները զըզարտելու — պատասխանեց մարքիղուհին պահ մը լուռութիւն պահելէն ետեւ:
- Ո՛՛՛, չեմ զըզարտեր քեզ, Էլիզ:
- Ինչպէ՞ս, կ'ըսեն թէ սիրահարած եմ, և զիս չեն զըզարտեր:
- Նախ՝ եթէ ստոյգ է այս, զըզարտութիւն չկայ, այլ միայն քսութիւն. յետոյ՝ վաճառ զի չես թողուր որ խօսքս աւարտեմ, հասարակութիւնը չըսեր որ դու այդ սիրոյն անձնատուր եղած ես: Այլ՝ ընդ հակառակն՝ իբրև առաքինի սիրուհի քեզ կ'նկարագրէ, ճիրաններով և ակնաներով զինեալ, տանդ մէջ՝ իբրև բերդի մէջ փակուած, և Գանաէի ամրոցէն շատ աւելի անառիկ ամրոց մը, թէև Գանաէի աշտարակը պղնձէ շինուած էր:
- Գու խելք ունիս, Մարդարիտ — ըսաւ տիկին Պէլիէր գողգոջուն:
- Գու զիս շողբորթած ես, Էլիզ. . . : Մէկ խօսքով կ'ըսեն թէ անկաշառելի ես և անհպելի: Նայէ թէ քեզ կ'զըզարտեն. . . : Բայց ի՞նչ բանի վրայ կ'խորհիս երբ ես քեզի կ'խօսիմ:
- Ե՞ս:
- Այո՛, բոլորովին կարմիր և համր ես:
- Կ'աշխատիմ — ըսաւ մարքիղուհին բանալով իր գեղեցիկ աչեքն որ սկսեր էին փայլիլ բարկութեանէ — կ'աշխատիմ իմանալու թէ ի՞նչ բանի կ'ակնարկէիր, դու որ այդչափ հմուտ ես գիցաբանութեան մէջ, զիս Գանաէի հետ համեմատելով:
- Հո՛ւ, հո՛ւ — ըրաւ Մարդարիտ — այդ կ'փնտուես:
- Այո՛, միթէ չես յիշեր որ վաճառը, երբ թուաբանական խնդիրներ կ'փնտուէինք. . . : Ա՛՛՛, այս ըսելիքս ալ գիտական բան է, բայց իմ կարգս է. . . : Միթէ չես յիշեր որ՝ երբ մէկ եղբը մեզի կ'տրուէր պարաւոր էինք միւսը գտնելու: Ուրեմն, փնտուէ, փնտուէ:
- Բայց չեմ դուշակեր թէ ի՞նչ ըսել կ'ուզես:
- Սակայն ասկից աւելի պարզ բան չկայ: Գու կարծես թէ սիրուհի եմ, այնպէս չէ՞:
- Ինձ այդպէս ըսին:

— Լաւ ուրեմն, չեն ըսեր թէ վերացականութեան մը սիրա-
հար եմ. անշուշտ այս ձայնին մէջ անուն մը պիտի լինի :

— Անշուշտ կայ անուն մը :

— Լաւ ուրեմն, սիրելի, զարմանք չեն որ այդ անունը փնտուե-
լու պարտաւորիմ, քանի որ դու չես ըսեր :

— Սիրելի մարքիզուհի, տեսնելով որ կ'կարմրիս, կարծէի թէ
երկար ատեն չպիտի փնտուես :

— Բու Գանաէի բառը զիս զարմացուց : Գանաէ ըսողը, ոսկի
անձրև ըսել կ'ուզէ, այնպէս չէ :

— Այսինքն Գանաէի Արամազդն անոր համար ոսկի անձրև
կ'փոխուի :

— Ուրեմն իմ սիրահարս . . . այն զոր դու ինձ կ'տաս . . . :

— Ո՛հ, ներողութիւն, ես քու բարեկամուհիդ եմ և ոչ զոք
քեզի կ'տամ :

— Բարի . . . հապա թշնամիները :

— Կ'ուզես որ անունը քեզի ըսեմ :

— Կէս ժամ կայ որ այդ անուան կ'սպասեմ և դու չես ըսեր :

— Հիմակ պիտի ըսես անունը : Մի խրատչեր, զօրաւոր մարդ
մ'է :

— Լաւ :

Մարքիզուհին իր սուր բղունդները ձեռաց մէջ կ'մղէր՝ ինչ
պէս մահապարտն երկաթին տեսքին :

— Շատ հարուստ մարդ մ'է — շարունակեց Մարդարիտ —
կարելի է ամենէն հարուստը : Աերջապէս այս անձն է . . . :

Մարքիզուհին պահ մը գոցեց աչքը :

— Պըքինկէմի դուքսն է — ըսաւ Մարդարիտ քահ քահ ծի-
ծաղելով :

Այս նենդութիւնն անհատաւորի հնարադիտութեամբ պատ-
րաստուած էր : Այս անունը՝ որ մարքիզուհւոյն սպասած անուանե-
տեղ՝ ընդունայն կ'ընկներ, խեղճ կնիսն վրայ բութ տապարնե-
րու նման՝ որ առանց ստաննելու հերձեր էին Պ. Շալէն և Պ.

Թուն իրենց գլխատութեան բեմին վրայ :

Սակայն մարքիզուհին խելքը զլուխը ժողվեց :

Սակայն մարքիզուհին խելքը զլուխը ժողվեց :

— Շատ իրաւունք ունէի — ըսաւ նա — քեզ մտացի կին մը
անուանելու . . . ակործելի յամ մը կ'անցընեմ քու շնորհիւդ : Այդ
կատակդ զմայլելի է . . . : Ես երբէք Պ. Պըքինկէմը տեսած
չեմ :

— Երբէք — ըսաւ Մարդարիտ իր քեքիջը բռնելով :

— Ոտքս տունէս դուրս չեմ հանած դուքսը Բարիզ գտնուե-
լէն վեր :

— Ո՛հ — վրայ բերաւ տիկին Աանէլ իր ըմբոստ ոտքը ձգե-
լով դէպ 'ի թուղթ մ'որ օթոցի մը վրայ պատուհանին մօտ կը
թռթռար — կարելի է որ մարդիկ իրարու հետ չտեսնուին, բայց
կրնան իրարու գրել :

Մարքիզուհին գող ելաւ : Այս թուղթն այն նամակին պահա-
րանն էր զոր իր բարեկամուհւոյն գալու ատենը կ'կարդար : Այս
նամակը վերատեսչին զինադրոջմ կնիքը կ'կրէր :

Տիկին Պէլիէր իր բազմոցին վրայ ետ ետ գնալով իր մետաքս-
եայ շրջադիտախին թանձր ծալքը սոյն թղթին վրայ տարածեց և
այսպէս ծածկեց :

— Նայինք, Մարդարիտ, ստոյգ ըսէ — վրայ բերաւ նա —
միթէ այդ խենդութեամբ խօսքերն ըսելու համար այսպէս կա-
նուխ ինձի եկար :

— Ո՛չ, եկայ նախ քեզ տեսնելու և մեր վաղեմի՛ այնչափ ա-
նուշ և ընտիր յարաբերութիւնները քեզի յիշելու, երբ Աէն-
սէն կ'երթայինք պտրտելու, և կաղնիի մը ներքև անտառակի մը
մէջ նստելով՝ կ'խօսակցէինք անոնց վրայ զոր կ'սիրէինք և մեզ
կ'սիրէին :

— Միթէ շրջադայութիւն մը կ'առաջարկես ինձ :

— Իմ կառքս ունիմ և երեք ժամ ազատ եմ :

— Հաղուած չեմ, Մարդարիտ . . . և . . . եթէ կ'ուզես որ
խօսակցինք, առանց Աէնսէնի անտառը գնալու, ապարանիս
պարտիզին մէջ կրնանք գտնել աղւոր ծառ մը, նշդարի հովա-
նոցներ, մարդարտի ծաղիկներով զարդարուն գալարի, և բոլոր
այս մանիշակներն որոյ անուշ հոտը մեզի կ'հասնի :

— Սիրելի մարքիզուհիս, կ'ցաւիմ որ խնդիրս կ'մերթես . . . :
Պէտք ունէի սիրտս քեզի բանալու :

— Միթէ շրջադայութիւն մը կ'առաջարկես ինձ :

— Իմ կառքս ունիմ և երեք ժամ ազատ եմ :

— Հաղուած չեմ, Մարդարիտ . . . և . . . եթէ կ'ուզես որ
խօսակցինք, առանց Աէնսէնի անտառը գնալու, ապարանիս
պարտիզին մէջ կրնանք գտնել աղւոր ծառ մը, նշդարի հովա-
նոցներ, մարդարտի ծաղիկներով զարդարուն գալարի, և բոլոր
այս մանիշակներն որոյ անուշ հոտը մեզի կ'հասնի :

— Սիրելի մարքիզուհիս, կ'ցաւիմ որ խնդիրս կ'մերթես . . . :
Պէտք ունէի սիրտս քեզի բանալու :

— Սիրելի մարքիզուհիս, կ'ցաւիմ որ խնդիրս կ'մերթես . . . :
Պէտք ունէի սիրտս քեզի բանալու :

— Ա՛լըկնեմ, Մարգարիտ, իմ սիրտս քոյդ է, ինչպէս այժմ սենեկիս, ինչպէս այս տեղ մօտ, իմ պարտիզիս թմբին ներքեւ : նոյնպէս վարը՝ անտառին կաղնիին ներքեւ :

— Ինձի համար նոյն բանը չէ . . . : Վէնսէնի մօտենալով, մարքիզուհի, իմ հառաչներս կ'մօտեցնէի այն նպատակին ուր կը ձգտին քանի մ'օրէ ՚ի վեր :

Մարքիզուհին յանկարծ զլուխը վերցուց :

— Ա՛ղարմանաս, այնպէս չէ՞ . . . որ տակաւին Սէն-Մանտէի վրայ կ'խորհիմ :

— Սէն-Մանտէի՞ — գոչեց տիկին Պէլիէր :

Եւ երկու կանանց նայուածքը՝ իբրև երկու սուրբը՝ իրարու հանդիպեցան՝ առաջին սրտերազմ մը սկսելու մտառանջութեամբ :

— Գու. այլ չափ հպարտ . . . — ըսաւ մարքիզուհին արհամարհ հանօք :

— Ես . . . այնքան հպարտ — պատասխանեց տիկին Վանէլ :

— Այսպէս է իմ բնուորութիւնս . . . : Չեմ ներեր երբ մոռնան զիս, և չեմ կարող անհաւատարմութեան հանդուրժել : Երբ կ'հեռանան և կ'լան, զեռ. ևս սիրելու կ'յորդորուիմ, սակայն երբ իզնէ կ'հեռանան և կ'ծիծաղին, խելացնորի պէս կ'սիրեմ : Տիկին Պէլիէր ակամայ շարժում մ'ըրաւ :

— Կ'նախանձի — ըսաւ Մարգարիտ իւրովի :

— Ուրեմն — շարունակեց Մարքիզուհին — դու խելացնորի պէս կ'սիրես . . . Պ. Պրքինկէ մը . . . սչ, կ'սխալիմ . . . Պ. Ֆուքէն :

Այս քարն զգայ տիկին Վանէլ և իր արինը սրտին զարկաւ :

— Եւ Վէնսէն կ'ուղէ իր երթալ . . . նոյն իսկ ՚ի Սէն-Մանտէ :

— Չդիտեմ թէ ի՞նչ կ'ուզէի, կարելի է ինձ խորհուրդ կը տայիր :

— Ի՞նչ բանի մէջ :

— Ստէպ խորհուրդ տուած ես ինձ :

— Ճշմարիտը, այսպիսի պարագայի մէջ խորհրդատու մը չպիտի լինէի. վառն զի ես, քեզի պէս չեմ ներեր : Արեւի է նուազ սիրեմ. բայց երբ միանգամ սիրտս վիրաւորեն, սէքս լեռ վին կ'զազրի :

— Բայց Պ. Ֆուքէն քեզ չվիրաւորեց — ըսաւ Մարգարիտ Վանէլ կուսական սրբզմտութեամբ մը :

— Քաջ կ'իմանաս թէ ինչ ըսել կ'ուզեմ. Պ. Ֆուքէն զիս չվիրաւորեց, ծանօթ չէ ինձ ոչ շնորհ մը և ոչ նախատինք մը ըրած լինելուն, բայց դու անորմէ դանդատելու պատճառ ունիս : Գու իմ բարեկամուհիս ես և քու ուզած խորհուրդը չպիտի տամ քեզի :

— Ա՛հ, դու կ'կանխադատես :

— Քու արդէն ըսած հառաչանքդ սիրոյ նշաններէ աւելի են :

— Ա՛հ, բայց դու զիս կ'ընկճես — ըսաւ յանկարծ նորատի կինն իր բոլոր ոյժը հաւաքելով իբրև ըմբիշ մ'որ վերջին հարուածը տալու կ'պատրաստուի — դու միայն իմ անշահ կիրքս ու տկարութիւններս ՚ի համար կ'առնուս. իսկ իմ ունեցած մաքուր և վեհանձն զղայումներս բնաւ չես նկատեր : Եթէ այս միջոցին պարոն վերաատեսչին կողմը կ'հակիմ, եթէ քայլ մ'անդամ անոր կողմը քալեմ, և այս հաւանական է, կ'խոսատուանիմ քեզի որ Պ. Ֆուքէի վիճակին է որ սիրտս սաստիկ կ'շարժէ, վասն զի, ըստ իս, ամենէն դժբաղդ մարդերէն մին է :

— Ա՛հ — ըսաւ մարքիզուհին ձեռքը սրտին վրայ յենլով — ուրեմն նոր բան մը կայ :

— Ուրեմն չգիտես :

— Բան մը չգիտեմ — ըսաւ տիկին Պէլիէր անձկութեան դուրով մ'որ խօսք ու մտածմունք կ'զազրեցնէ, որ մինչև անգամ կեանքը կ'զազրեցնէ :

— Սիրելիդ իմ, ամենէն առաջ սա կայ որ թագաւորին բողոք վստահութիւնը Պ. Ֆուքէի վրայէն ելած և Պ. Գօլպէրի անցած է :

— Այո՛, այդպէս կ'ըսեն :

— Այս ակներև բան է, Պէլ-Իսլի գաւազրութիւնն երևան ելնէէն ՚ի վեր :

— Հաւատար էին ինձ որ այն ամբուլթեանց երևան ելնելը Պ. Ֆուքէի պատուոյն նպատարուր ելք մ'ունեցեր է :

Մարգարիտ այնպէս անզութ կերպով սկսաւ ծիծաղիլ որ տի-

կին Պէլիէր խնդագին անոր սիրտը դաշոյն մը մղելու չպիտի վարանէր :

— Սիրելիդ իմ — շարունակեց Մարգարիտ — խնդիրը Պ. Ֆուքէի պատուոյն վրայ անդամ չէ, խնդիրն անոր փրկութեան վրայ է. երեք օրէն առաջ վերատեսչին կործանումն իրացած գործ մը պիտի լինի :

— Ո՛հ — ըսաւ մարքիզուհին ըստ կարգի ժպտելով — քիչ մը շատ շուտ կ'արես կ'իմպիես :

— Երեք օր ըսի, վասն զի յուսով օրօրուելու տրամադիր եմ : Բայց անտարակոյս այս պատահարը քսան չորս ժամէն տեղի պիտի ունենայ :

— Եւ ինչո՞ւ համար :

— Ամենէն պարզ պատճառաւ մը. Պ. Ֆուքէ այլ ևս զրամ չունի :

— Գրամական գործերու մէջ, սիրելի Մարգարիտ, այն որ այս օր ստակ չունի, վաղը միլիօններ կրնայ ձեռք ձգել :

— Այս կարելի բան էր Պ. Ֆուքէի համար երբ երկու բարեկամ ունէր հարուստ և ճարտար որ իրեն համար կ'ժողովէին և ամէն արկղներէ ստակ կ'հանէին : Բայց այս բարեկամները մեռան :

— Սկուտները չեն մեռնիր, Մարգարիտ. պահուած են, դասնք կ'փնտռեն, կ'դնեն և կ'դտնեն :

— Գու ամէն բան սպիտակ և վարդագոյն կ'տեսնես, երանիքեղի : Յաւալի է որ դու Պ. Ֆուքէի Եղերիան չես, դու անոր ցոյց պիտի տայիր թէ որ աղբիւրէն կարող էր հանել այն միլիօնները զոր թաղաւորն երէկ իրմէ պահանջեց :

— Միլիօններ — ըսաւ մարքիզուհին սոսկումով :

— Չորս . . . զոյգ թիւ մ'է :

— Աստանո՞ւն — մըմուաց աիկին Պէլիէր այս վայրագ խնդութենէ տանջուելով . . . — Պ. Ֆուքէ չորս միլիօն ունի կարծեմ — պատասխանեց նա արիարար :

— Եթէ թաղաւորին խնդրածն այսօր ունի — ըսաւ Մարգարիտ — կարելի է չպիտի ունենայ ամսէ մը թաղաւորին խնդրելիք զուժարը :

— Միթէ թաղաւորը նօրէն ստակ պիտի պահանջէ :

— Անշուշտ. և ահա ասոր համար կ'ըսեմ որ այն խելճ ֆուքէին կործանումն անվերիպելի է : Գուողութենէն զրամ պիտի դանէ, և երբ ստակը պակսի, պիտի ընկնի :

— Սոյոգ է — ըսաւ մարքիզուհին գողգողալով — այդ յատակագիծը զօրաւոր է . . . : Ըսէ ինձ, արդեօք Պ. Գօլպէր շատ կ'ատէ՞ Պ. Ֆուքէն :

— Կարծեմ թէ չսիրեր զանի. 'ի մտուստ տեսնելով այս մարդը կարելի է դնհատել. հսկայական խորհուրդներ, կամք, խոհակահոտ թիւն ունի, շատ պիտի յառաջանայ :

— Աւերատեսնո՞ւչ պիտի լինի :

— Հաւանական է . . . : Ահա ասոր համար, իմ բարի մարքիզուհիս, սիրտս կ'շարժէր այն հէք մարդուն համար որ զիս սիրեց և պաշտեց իսկ, ահա ասոր համար, այնչափ դժբաղդ տեսնելով զինքը, ներքի անոր անհաստարմութեան . . . որմէ կը զղջայ, ինչպէս որ իրաւունք ունիմ կարծելու : Ահա ասոր համար չպիտի վարանէի անոր միսթարութիւն մը, լաւ խորհուրդ մը տանելու. իմ ընթացքս պիտի հասկընար և պիտի հաւանէր : Անուշ բան է սիրուիլը, դիտե՛ս : Մարդիկ սիրոյ արժէքը քաջ կ'ձանչեն երբ իշխանութեամբ կուրացած չեն :

Մարքիզուհին այս գծնակ յարձակումներէն շուարած և ճղզմուած, որոնք թնդանօթի ումբի պէս ճշգրութեամբ նշան կ'առնէին, այլ ևս չգիտէր թէ ինչպէս պատասխան տայ, չգիտէր թէ ինչպէս մտածէ :

Խորամանկ կնոջ ձայնն ամենասիրուն հնչիւններ աւեր էր իրբև կին կ'սօսէր նա և ընձու մը բնազդումը կ'ծածկէր :

— Լաւ ուրեմն — ըսաւ աի'ին Պէլիէր, որ անողոշակի յուսաց որ Մարգարիտ նկուն թշնամին զարնէլէն կ'զագրէր — լաւ ուրեմն, ինչո՞ւ համար Պ. Ֆուքէն տեսնելու չես երթար :

— Ճշմարիտը, մարքիզուհի, զիս մտնուքի տարիր : Ո՛չ, անվայել է որ ես առաջին քայլն առնում : Պ. Ֆուքէ անշուշտ կը սիրէ զիս, բայց շատ հպարտ է : Չեմ կարող նախաախնդի մը ենթարկիլ . . . : Ասկէ զատ իմ ամուսինս ունիմ խնայելու : Բան

մը չես ըսեր : Լաւ , ես ալ այս մասին Պ . Գօլպէրի խորհուրդք պիտի հարցնեմ :

Թպտելով ոտք ելաւ . հրածեշտ տալու համար : Մարքիզուհին անոր հեռեկեղծ ոյժ չունեցաւ :

Մարդարիտ քանի մը քայլ առաւ որպէս զի իր ոտիսին նուաւ տացուցիչ վիշտը վայելէ . ապա յանկարծ .

— Ձիս չես առաջնորդեր — ըսաւ նա :

Մարքիզուհին ոտք ելաւ գունատ և պաղ , առանց հող տանելու այն սրահարանին որ խօսակցութեան սկիզբն այնքան ուշք զրաւեր էր և որ առաջին քայլն առնելուն երևան ելաւ :

Յետոյ իր զարդարանին գուռը բացաւ , և առանց իր զլուխն իսկ Մարդարիտ Վանէլի կողմը դարձնելու , ներսը փակուեցաւ :

Մարդարիտ երեք չորս բառ արտասանեց կամ լաւ ևս թոթոփեց և տիկին Պէլիէր և ոչ իսկ լսեց :

Բայց այն ինչ մարքիզուհին աներևոյթ եղաւ , որ իր նախանձութեամբ թշնամուհին իր կասկածները ստուգելու փափաքին չկրցաւ դիմանալ , և իբրև ինձ երկնալով սրահարանն առաւ :

— Ա՛հ — ըսաւ ակունները կրճտելով — հասկցեր էի որ Պ . Քոքէի նամակն էր՝ կարդացածն երբ ներս մտայ :

Եւ ըստ կարգի սենեկէն գուրս սրացաւ :

Նոյն սրահուն՝ մարքիզուհին՝ իր գրան ետնն հասնելով զզայց որ բոլորովին ուժէ կտրած է . սրահ մը ձիւզ , գունատ և անշարժ մնաց արձանի պէս , ապա արձանի մը պէս որ մրրկէն կ'զլզլէ հիմէն , երերաց և գորգին վրայ անկենդան ընկաւ :

Իր անկեան աղմուկը հնչեց ճիշտ այն միջոցին որ ապարանէն ելնելով Մարդարիտ Վանէլի կառքին որոտումը կ'հնչէր :

Թ

ՏԻԿԻՆ ՊԵԼԻԵՐԻ ԱՐԾԱԹԻՔ

Հարուածն այնքան աւելի վշտաբեր էր որքան որ անակնկալ

էր : Հետեապէս մարքիզուհին քիչ մը ժամանակ անցուց ինքզինք գտնելու համար : բայց երբ միանգամ ուշաբերեցաւ սկաւ անմիջապէս խորհիլ այն դէպքին վրայ ինչպէս որ կ'յայտնուէին :

Այն ատեն նորոգեց այն խորհուրդները զոր իր անհաշտ բարեկամն իրեն թելադրեց , աչքն առնելով ամէն վտանգ , մինչև անգամ կենաց կորուստը՝ եթէ հետեւած ճամբուն մէջ անյաջող եղնէր :

Մատնութիւն , յետոյ չարաշուք սպառնալէք՝ հասարակաց օգտին ծառայելու բարուրանօք , ահա ասոնք էին Գօլպէրի հնարքը :

Յօտալուտ անկեան մը համար զգուշիւ ուրախութիւն , այս նպատակին հասնելու համար անձանձիր ճիւղ , ոճրէն ոչ նուազ դատապարտելի հրապոյրներ , ահա Մարդարիտ ի զործ դրած միջոցները :

Տէքարդի ակիշաւոր հիւլէները կ'յաղթանակէին . անադորոյն մարդու մը հետ անսիրտ կին մը զաշնակցեր էր :

Մարքիզուհին՝ ոչ այնչափ սրտմտութեամբ որչափ արտմտութեամբ տեսաւ որ թաղաւորը մասնակից գտնուած լինի այնպիսի դաւադրութեան մ'որ արդէն ծերացած Լուի ԺԳԻ խորամանկութիւնը , Մաղարեի ժլատութիւնն երևան կ'հանէր , երբ տակաւին ժամանակ չունէր զաղղիացուց ոսկիովը սրարարելու :

Բայց շատ չանցաւ այս արիասիրտ կնկան միտքն իր բոլոր զօրութիւնը ստացաւ , և կարեկցութեան յետադէմ նկատումները մէկդի թողուց :

Մարքիզուհին այն անձանց դասէն չէր որ կ'արտասուեն երբ պարտ է գործել և աղէտ մը ողբալով ժամանակ կ'անցընեն երբ որ զայն սիտիելու միջոցն ունին :

Գրեթէ տաս վայրկեանի չափ իր ճակատը սառնագին ձեռաց մէջ դրաւ , ապա ճակատը վերցնելով իր նաժիշաները կոչելու համար աղղուութեամբ լի շարժումով մը հնչակը զարկաւ :

Իր որոշումն արդէն ըրած էր :

— Միթէ ամէն ինչ սրտրաստեցի՞ն իմ չուխ համար — հարցուց նա ներս մտնող մէկ կնկան :

— Այո՛ , բայց չէինք կարծեր , մարքիզուհիս , որ երեք օրէն առաջ Պէլիէր գնալու ճամբայ պիտի ելնէք :

— Սակայն ամէն զարգարանքի և արժէքի վերարեւելալ բանե-
րը անտուկները զրուած են :

— Այո՛ , տիկին , բայց այս ամէնը Բարիւղ թողու սովոր ենք :
Ընդհանրապէս ձեր գոհարեղէնները դեղը չէք տանիր :

— Եւ միթէ այդ ամենը տեղաւորուած է , ըսիր :

— Ձեր դահլճին մէջ , տիկին :

— Հասցա ոսկեղէնները :

— Սնտուկներուն մէջն են :

— Հասցա արծաթիքը :

— Կաղնիէ մեծ սրահարանին մէջ :

Մարքիզուհին լուեց , ասլա՛ հանդարտ ձայնով մը .

— Ոսկերիչս բերել տուէք :

Կածիչտները քաշուեցան այս հրամանը կատարելու համար :

Սակայն մարքիզուհին իր դահլիճը նստեր էր , և իր գոհարե-
ղէնի տուփերը կ'ընէր ուշի ուշով :

Երբէք այնչափ ուշադրութեամբ չէր քննած այս հարստութիւն-
ներն որ կնկան մը սլարձանքն են , երբէք չէր նայած այս զար-
գարանքն այլ միայն իրենց շէնքին և դոյնին համեմատ ընտրելու
համար : Այսօր սուտակներու խոշորութեան և անդամանդներուն
յստակութեան վրայ կ'ըմայլէր , երբ բիծ մը , թերութիւն մը տես-
նէր կ'վշտանար . ոսկին շատ թեթև և գոհարներն ողորմելի կը
դանէր :

Երբ ոսկերիչը հասաւ այս զբաղման մէջ գտաւ մարքիզուհին :

— Պ. Ֆօշէօ — ըսաւ մարքիզուհին — կարծեմ թէ դուք ծա-
խեցիք ինձ բոլոր ոսկեղէն անօթներս :

— Այո՛ , մարքիզուհիս :

— Ձեմ յիշեր թէ ինչ գին գրեր էիր :

— Կոր անօթներուն , տիկին , թէ ոչ Պ. Պէլիէրի գնածնե-
րը զոր ձեզի տուաւ կարդուելու ատեն : Երկուքն ալ ես մասա-
կարարեցի :

— Լսա՛ , նորերը , առաջ :

— Տիկին , ստոմանները , տաշտերն և սնակներն իրենց սլա-
տեաններով , զարդանօթն ու հայելիով աշտանակները , շաքարե-

ղէնի աւաղաններն ու ազրիւրները վաճառն հազար ֆրանք ար-
ձեցին մարքիզուհուցուց :

— Տէ՛ր Աստուած , այնչափ միայն :

— Այն ատեն , մարքիզուհիս , այս գինը շատ բարձր դատք :

— Իրա՛ւ է , իրա՛ւ է : Արգարև կ'յիշեմ որ սուղ էր , աշխա-
տութիւնը , այնպէս չէ՛ :

— Այո՛ , տիկին , փորագրի , քանդակի համար , նոր ձևեր :

— Աշխատութիւնն ինչ կ'կարէ այս դնոյն մէջ , մի վարանիք :

— Արժէքին մէկ երրորդ մասը , տիկին : Բայց . . . :

— Տակաւին միւս , հին սպասք , իմ ամուսնոյս սպասքն ունինք :

— Ո՛հ , տիկին , այնչափ բարակ դործուած չեն անոնք : Եր-
տուն հազար ֆրանք զուտ կ'արժեն անոնք :

— Եօթանասուն — մըմուսց մարքիզուհին : — Բայց , Պ. Ֆօ-
շէօ , տակաւին մօրս արծաթեղէնները կան , դիտեք . բոլոր այն
ձուլածոյն զոր չուղեցի աւրել 'ի յիշատակ :

— Ա՛հ , տիկին , իրաւի , նշանաւոր ազրիւր մ'է այդ այն ան-
ձանց համար որ , մարքիզուհուցուց պէս , ազատ չեն իրենց անօթ-
ները սրահելու : Տիկին , այն ատեն այսօրուան պէս չէին աշխա-
տեր : Չուլով կ'դորձէին : Բայց այդ անօթները դորձածելի չեն ,
մինակ , ծանր կ'կշռեն :

— Ահա այդ , այդ միայն պէտք է : Ո՛րչափ կ'կշռեն :

— Գէթ յիսուն հազար ֆրանք : Հաշուի չեմ աւաներ դարա-
նայն ամաններն որ միայն հինգ հազար ֆրանքի արծաթ կ'կշռեն .
երկուքը մէկէն տաս հազար ֆրանք սեպէ :

— Հարիւր երսուն — մըմուսց մարքիզուհին : — Միթէ ստոյգ
էք որ այդ գինը պիտի բռնեն , Պ. Ֆօշէօ :

— Ստոյգ , տիկին : Բայց դարձեալ գիւրին է կշռել :

— Իմ հաշուեգրիս մէջ քանակութիւնները զրուած են :

— Ո՛հ , դուք կարդապահ կին մ'էք , տիկին :

— Ուրիշ բանի անցնինք — ըսաւ Պէլիէր տիկինը :

Եւ գոհարեղէնի տուփ մը բացաւ :

— Այս զմբուխտները կ'ձանչեմ — ըսաւ վաճառականը — ետ
անոնց շէնքը շինել տուի . արքունեաց լաւադոյն զմբուխտներն են :

այսինքն , ո՛չ . ամենէն զեղեցիկ զմրութաները տիկին Շաղիլյճն ունի , Նիզեբէն ստացած է , բայց ձերկններն անոնցմէ ետքը կ'իման :

— Ի՞նչ կ'արժեն :

— Շէնքով :

— Ո՛չ , ենթադրեցէք որ զանոնք ծախել ուզենք :

— Քաջ չգիտեմ թէ ո՞վ պիտի գնէ — դռնեց Պ . Ֆօշէօ :

— Ահա ճիշտ ես ալ այդ կ'հարցնեմ : Աւրեմն , առնող կը գտնուի :

— Ձեր բոլոր զոհարեղէնները գնող կ'գտնուի , տիկին . ամէն մարդ զիտէ որ Բարիդի մէջ ամենէն ընտիր զոհարները դուք ունիք : Գուք զԻւրափափոխ կիներէն չէք . երբ ծախու կ'առնուք , զեղեցիկը կ'առնուք . երբ որ ձեռք ձգէք , կ'սրահէք :

— Աւրեմն այս զմրութաները ստակ կ'ընեն :

— Հարիւր երսուն հազար Փրանք :

Մարքիզուհին թղթակալին մէջ դրեց մատիտով մը ոսկերչին ըսած թիւը :

— Հասցա սա սուտակէ մանեակը — ըսաւ նա :

— Յարգազոյն սուտակ :

— Աւասիկ :

— Աղւոր են , շքեղ են : Տիկին , չցիտէի որ այսպիսի քարեր ունիք :

— Գինը կտրեցէք :

— Երկու հարիւր հազար Փրանք : Մէջ տեղինը միայն հարիւր հազար կ'արժէ :

— Այո՛ , այո՛ , ես ալ այդպէս կարծէի — ըսաւ մարքիզուհին : — Անդամանդները , անդամանդները , ո՛հ , շատ ունիմ , մատաններ , օղակներ , օղեր և զինդեր , կոճակներ , ասղիկներ : Գին կտրէ , Պ . Ֆօշէօ , զին կտրէ :

Ոսկերիչն իր խոշորացոյցն առաւ , նոյնպէս կշիւքը , կշուեց , զիտեց և իր հաշինն ընելով մեղմիկ ,

— Աւասիկ այս քարերը — ըսաւ մարքիզուհւոյն — քառսուն հազար Փրանք եկամուտ կ'արժեն :

— Աւթ հարիւր հազար Փրանք զին կ'տաս . . . :

— Գրեթէ :

— Ես ալ ճիշտ հաշուեր էի : Բայց շինուածքը մէջը չէ :

— Ինչպէս միշտ , տիկին : Եւ եթէ առաջարկեն ինձ ծախելու կամ գնելու , միայն ոսկիին զինը տալով դո՛հ պիտի լինիմ , իբրև վաստակ , դարձեալ քսան հինգ հազար Փրանք պիտի ունենամ :

— Աղւոր դումար :

— Այո՛ , տիկին , շատ աղւոր :

— Միթէ վաստակը կ'ընդունիք , սա պայմանաւ որ զոհարներս ծախէք դրամ ընէք :

— Բայց , տիկին — դռնեց ոսկերիչը շփոթած — կարծեմ թէ անդամանդները ծախելու միտք չունիք :

— Լուռ թիւն , Պ . Ֆօշէօ , այս մասին հոգ մի՛ ընէք , մինակ ինձի պատասխան սուէք : Գուք պարկեշտ մարդ էք , երսուն տարիէ վեր մեր տան ոսկերիչն էք , իմ մայրս և հայրս ճանչցաք , որ ձեր մօրն ու հօրը բարիք ըրած են : Ձեզի իբրև բարեկամի կ'սօսիմ . միթէ կ'ընդունիք կապիճներուն ոսկին դումարի մը փոխարէն զոր ինձի պիտի վճարէք :

— Աւթ հարիւր հազար Փրանք , բայց այս ահաղին դումար է :

— Գիտեմ :

— Կարելի չէ գտնել :

— Ո՛հ , այդպէս մի՛ ըսէք :

— Բայց , տիկին , մտածեցէք թէ ինչ ներդործութիւն պիտի ընէ ընկերութեան մէջ , երբ իմացուի որ ձեր զոհարները ծախու հանած էք :

— Ո՛չ որ պիտի իմանայ . . . : Նոյնչափ սուտ քարերով զարդեր շինել պիտի տաք ինձի համար : Բան մը մի՛ պատասխանէք . ես այսպէս կ'ուզեմ : Մաս առ մաս ծախեցէք , քարերը միայն ծախեցէք :

— Այդպէս զիւրին է . . . : Արքային եղբայրը մերկ անդամանդներ կ'փնտռէ իր կնոջ համար : Մըցում կայ : Շատ զիւրաւ վեց հարիւր հազար Փրանքի ասլրանք կրնամ ծախել արքայաղջին : Ստոյգ եմ որ ձերիններն ամենէն զեղեցիկ են :

— Ե՞րբ պիտի ծախէք :

— Երեք օրէն :

— Լա՛ւ , մնացածը մասնաւորներու կ'ծախէք : Առ այժմ , սայ-
մանադիր մը գրեցէք ապահովցնելով վաճառքը . . . : Իսկ վճա-
րում չորս օրէն :

— Տիկին , աիկին , մտածեցէք , կ'սղաղատիմ ձեզ . . . Եթէ
չտասպէք , հարիւր հազար ֆրանք կ'կորուսնէք :

— Թո՛ղ երկու հարիւր հազար կորուսնեմ : Ա՛ռ զեմ որ այս
կրկուն գործը լմնայ : Ա՛րնդունի՛ք :

— Ա՛րնդունիմ , մարքիզուհի . . . : Ձեմ պահեր որ այս գոր-
ծէն երկու հազար հինգ հարիւր ոսկի պիտի շահիմ :

— Աւելի աղէկ : Ստակն ինչպէս պիտի ստանամ :

— Ոսկի կամ Լիօնի պանքային գրամատոմներ , վճարելի 'ի
Պ . Գօլպէրէ :

— Ա՛րնդունիմ — ըսաւ մարքիզուհին աշխուժիւ . — գրատուն-
նիդ դարձէք և դումարը գրամատոմի վերածեալ ինձի բերէք .
կ'լսէք :

— Այո՛ , աիկին . բայց , կ'աղաչեմ . . . :

— Ուրիշ խօսք չեմ ուզեր , Պ . Ֆօշէօ : Չմոռնամ , արծաթի-
քը . . . ո՞րչափ պիտի կտրեն :

— Յիսուն հազար ֆրանք , աիկին :

— Միլիօն մ'եղաւ . — մրմնջեց մարքիզուհին մեղմիկ : — Պ .
Ֆօշէօ , ոսկեղէն և արծաթեղէն անօթներն ալ պիտի առնուք բո-
լոր սպասքով : Պիտի պատճառեմ թէ իմ ճաշակիս յարմար ձե-
ւով նոր անօթներ պիտի թափել տամ . . . : Ուրեմն հալեցու-
ցէք , և փոխարէն արժէքն ոսկի տուէք ինձ . . . անմիջապէս :

— Բարի , աիկին :

— Այդ ոսկին արկղի մը մէջ դրէք . ձեր մէկ գրագրին հետ
կ'առաքէք այդ ոսկին , այնպէս որ իմ սպասաւորներս չտեսնեն .
ձեր այս գործակալը զիս կառքի մը մէջ պիտի սպասէ :

— Տիկին Ֆօշէօի՞ կառքին մէջ — ըսաւ ոսկերիչը :

— Եթէ կ'ուզէք , դամ ձեր տունէն առնում :

— Այո՛ , աիկին մարքիզուհի :

— Իմ սպասաւորներէս երեք հոգի առէք որպէս զի արծաթե-
ղէնները ձեր գրատունը տանին :

— Այո՛ , աիկին :

Մարքիզուհին հնչակը զարկաւ :

— Սայլը — ըսաւ նա — Պ . Ֆօշէօի հրամանին ներքև գրէք :

Ոսկերիչը բարեկց և դուրս ելաւ , հրաման տալով որ սայլն
իր ետեէն դայ և ինքն անձամբ իմացուց որ մարքիզուհին անօթ-
ները հալեցնել կ'տար որպէս զի նորերը շինել տայ :

Երեք ժամ ետք՝ Պ . Ֆօշէօի տունը կ'երթար մարքիզուհին և
անորմէ կ'ընդունէր Լիօնի պանքայի գրամատոմներ ու թ հարիւր
հազար ֆրանքի արժէք , և երկու հարիւր յիսուն հազար ֆրանք
ոսկի , որոնք արկղի մը մէջ ամփոփուած էին , և այս արկղը
դժուարաւ կ'տանէր գործակալ մը մինչև աիկին Ֆօշէօի կառքը :

Վասն զի աիկին Ֆօշէօ կառք մ'առնէր . ելումայ խորհրդոյ
նախագահի մ'աղջիկը լինելով իր ամուսնոյն երստն հազար ֆրանք
բերէր էր , որ ոսկերիչներու իրաւարարն էր : Ոսկերիչը միլի-
օնի տէր մարդ էր և համեստ : Իրեն համար կառք մը գներ էր
պատկառելի , որ 1648ին շինուած էր , թագաւորին ծննդենէ
տաս տարի ետք : Այս կառքը , կամ լաւ ևս այս զլորուն տու-
նը՝ թողին զարմացումը կ'պատճառէր . այլաբանական նկարներով
և ամպերով ծածկուած էր , ոսկի ու ոսկեղօծ արծաթի աստղե-
րով զարդարուն :

Ահա այս փոքր ինչ գեղջական կառքը հեծաւ ազնուական
կինը , գործակալին զիմացը , որ իր ծունկերը կ'քաշէր վախնա-
լով որ մարքիզուհին շրջադղեստին չդաշին :

Ահա այս գործակալն էր որ , մարքիզուհի մ'աջնորդելու հպար-
տացած՝ կառապանին ըսաւ .

— Սէն-Մանտէի ճամբան :

Ժ

Օ Ժ Ի Տ

Պարոն Գօշէօի ձիերը Բերշի պարկիշտ ձիանք էին, որ խոշոր ծունիեր և փոքր ՚ի շատե ուռուցիկ սրունք ունէին: Ասորին պէս անցեալ դարէ մնացեր էին:

Ուստի Պ. Գուքէի անկլիական ձիերուն պէս չէին վազեր: Հետեապէս Սէն-Մանտէ հասնելու համար երկու ժամ առին: Արնանք ըսել թէ վեհափառութեամբ կ'քալէին:

Վեհափառութիւնը շարժումը կ'արտաքսէ: Մարքիզուհին քաջ ծանօթ դրան մ'առջև կեցաւ, թէև զանի միանգամ տեսեր էր, ինչպէս որ կ'յիշէնք, ոչ նուազ տաժանելի պարագայի մէջ քան ինչ որ այժմ զանի նոյն վայրը կ'բերէր վերատին:

Մարքիզուհին զրպանէն բանալի մը հանեց, իր փոքրիկ սպիտակ ձեռօք նիղին մէջ դրաւ, դուռը քշեց՝ որ անձայն բացուեցաւ, և գործակալին հրաման տուաւ արկղիկն առաջին դստիկոնը տանելու:

Բայց այս արկղիկն ծանրութիւնն այնչափ էր, որ գործակալը ստիպուեցաւ կառապանին աջակցութիւնը խնդրել:

Արկղիկը դրուեցաւ այն փոքրիկ դահլձին մէջ, նախասենեակ կամ զարդարան, որ կից էր այն սրահիկն ուր Պ. Գուքէն անանք մարքիզուհոյն ոսքը:

Տիկին Պէլիէր կառապանին ոսկի մը տուաւ, գործակալին սիրուն ժպիտ մը, և երկուքն ալ ճամբեց:

Երբ գուրս ելան, դուռը զօցեց և այսպէս սպասեց՝ միայնակ և պատենշապատ: Սպասաւոր մը չէր երևեր ներսի կողմը:

Բայց ամէն ինչ պատրաստուած էր որպէս թէ անտեսանելի ողի մը սպասուած հիւրին կամ հիւրուհոյն պիտոյքն ու փափաքները գուշակած լինէր:

Արակը պատրաստ էր, մօմերն աշտանակներու վրայ, դարակին վրայ ուսելիք, սեղաններուն վրայ դիրքեր, ճարոնի ամաններու մէջ թարմ ծաղիկներ: Արթեւ թէ հմայեալ տուն մ'էր:

Մարքիզուհին աշտանակները վառեց: ծաղիկներու հոտը շնչեց, նստաւ և քիչ ատենէն խոր մտմտութի մէջ ընկաւ:

Բայց այս մտմտութիւնը՝ թէև մեղամաղձիկ՝ դոյզն ինչ անուշուժութեամբ խառնուած էր:

Սենեակին մէջ՝ իր առջև պարզապէս կ'տեսնէր՝ զանձ մը, միլիօն մը զոր իր հարստութենէ քաղեր հաներ էր ինչպէս որ հնձողն իր թագէն շուշան մը կ'հանէ:

Ամենէն անուշ երազները կ'երկնէր:

Նա մանաւանդ կ'խորհէր որ բոլոր այս ստակը Պ. Գուքէի թողլու միջոց մը զանէ, և նա չդիտնայ թէ սակից կ'ըլլայ այս պարկերը: Այս միջոցը բնականապէս իր մտքին ամենէն առաջ ներկայացածն էր:

Բայց թէև մտածելով ինդիրն իրեն գժուարին կ'երևէր, սակայն այս նպատակին հասնելու չէր յուսահատեր:

Նա պարտաւոր էր հնչակը զարնել Պ. Գուքէն կոչելու, և աւելի երջանիկ խոյս տալ, որպէս թէ ինք միլիօն մը պիտի զբտնէր, փոխանակ միլիօն մը տալու:

Բայց այն տեղը հասնելէն վեր՝ այս զարդարանը տեսնելէն վեր՝ զարդարան մ'որ այնքան բարելի էր որպէս թէ սենեկապանուհի մը մինչև յետին փոշին այն ինչ եկեր սրբեր էր, երբ այնչափ մաքուր պահուած սրահիկը տեսաւ, որ կարծես թէ ինք նոյն վայրը բնակող պայերը վաներ էր, հարցուց իւրովի թէ արդեօք իր արդէն վաճառած էակներուն նայուածքը, այս է, պայերու, ողիներու, ճիւղակներու, կամ մարկային արարածներու աչքը զինքը չէ՞ն ճանչցած:

Այն ատեն Գուքէ ամէն բան պիտի խմանար. ինչ որ չխմանար պիտի դուշակէր. այն ատեն Գուքէ իբրև պարզ և ընդունելու պիտի մերժէր ինչ որ թերևս իբրև փոխ դրամ ընդուներ էր: և այս կերպ վարուելով, իր ձեռնարկութիւնը նպատակէն պիտի վրիպէր և ինքն ալ ակնկալած արդիւնքը չպիտի ստանար:

Ուրեմն պէտք էր որ լրջաբար գործն առաջարկէր, պէտք էր որ վերատեսուչն իր կացութեան բոլոր ծանրութիւնն հասկընար որպէս զի կնկան մը վեհանձն հաճոյից հպատակէր, վերջապէս պէտք էր, զանի համոզելու համար, ճարտասան բարեկամութեան մը բոլոր հրապոյրը, և եթէ այս ևս բաւական չլինէր, հրասապ սիրոյ մը բոլոր արբեցութիւնը գործածելու էր որ համոզելու համար բացարձակ փափաք մը պիտի ունենար:

Արդարեւ՝ միթէ վերատեսուչն իբրև փափկասիրտ և արժանընտիր մարդ մը ճանչցուած չէր: Միթէ պիտի յանձն առնուր կընկան մ'ի նչքն ընդունիլ: Ա՛չ. պիտի գիմադրէր, և եթէ աշխարհիս երեսը կար ձայն մ'որ կարենար անոր գիմադրութիւնը նուաճել, այս ձայնն իր սիրած կնկանն էր:

Այժմ ուրիշ կասկած մը, անագորոյն կասկած որ տիկին Պէլիէրի սիրտը կ'մտնէր գաշոյնի մը կծու պաղուժեամբ և ցատով: Միթէ կ'սիրէր Ֆուքէ:

Այս թեթև միաքը, այս թուոյցիկ սիրտը պիտի որոշէր պահ մը հաստատ մնալու, զոնէ հրեշտակ մը նկատելու համար:

Միթէ Ֆուքէ ալ, իր բոլոր հանճարովք, իր բոլոր ուղղութեամբը՝ չէր նմաներ այն յաղթականներուն որ պատերազմի գաշտին վրայ արտսուք կ'ըմպեն յաղթութիւնը տանելէն ետև:

— Լաւ ուրեմն, պէտք է որ այս կէտը լուսաբանեմ, պէտք է որ այս բանիս վրայ դատեմ — լսաւ մարքիղուհին: — Ո՞վ գիտէ, թերևս այս ցանկալի սիրտը գուհիկ և անարդ է, ո՞վ գիտէ, թերևս այս միտքը՝ երբ փորձաքարին զարնեմ, սին և նուաստ ընտթեամբ չպիտի դանեմ. . . : Օ՛ն, օ՛ն — գոչեց նա — չափազանց կասկած, չափազանց վարանում մ'է այս, փո՛րձը, փո՛րձը:

Եւ ժամացոյցին նայեցաւ:
— Ահա ժամը եօթն է, եկած պիտի լինի, ստորադրութեանց ժամն է: Օ՛ն:

Եւ՝ ոտք ելնելով անդային անհամբերութեամբ մը, դէպ 'ի հայլին դնաց, որու մէջ ինքնիրեն կ'ժպտէր անձնուիրութեան ազդու ժպտով մը. մարքիղուհին զսպանակը շարժեց և հնչակին կոճակը քաշեց:

Ապա՝ կանխառ վաստակարեկ երևելով սկսած սայ.քարէն, դնաց ընդարձակ թեւթուի մ'առջև շուարեալ ծունր դրաւ, և այն սեղ իր գողգոջուն ձեռաց մէջ գլուխն ամփոփեց:

Տաս վայրկեան ետք՝ դրան զսպանակին զզրդիւնը լսեց:
Գուռն իր անտեսանելի ծխնիներուն վրայ դարձաւ:
Ֆուքէ երեցաւ:
Գունատ էր, դառն մտածութեան մը ներքև ծուած էր:
Չէր վազեր նա, կ'դար միայն:

Անտարակոյս իր մտմտոքը շատ զօրաւոր պիտի լինէր որ այս զուարճատէր մարդը, որու համար զուարճութիւնն ամէն բան է, այսչափ ծանր քալէր այսպիսի կոչման մը սպասախանելու համար:

Իրօք՝ զիշերը՝ որ վշտալի երազներ առատօրէն կ'բերէ, նիհարեցներ էր իր դէմքն որ սովորաբար այնքան ազնուութեամբ անհոգ էր, և իր աչաց շուրջը կապտադոյն դիծ մը քաշեր էր:

Միշտ գեղեցիկ, միշտ ազնիւ էր նա, և իր բերնին մեղամաղձիկ երեւոյթը, երեւոյթ մ'որ այս մարդուն համար շատ հազուադիւր էր, իր գէպին նոր կերպարան մը կ'տար և աւելի առոյգ կ'ցուցնէր:

Բոլորովին սևեր հագուած, կուրծքը տանթեղնեղով ուռած զոր իր անհանդիստ ձեռօք աւերեր էր, վերատեսուչը կայ առաւ խորհուն աչօք մը սոյն սենեկին սեմին վրայ, ուր քանի քանի անգամ անձկալի երջանկութիւնը գտնելու համար եկած էր:

Այս տխուր անուշութիւնը, այս գեղածիծաղ տրտմութիւնն որ ուրախութեան խանդին տեղն անցեր էր, տիկին Պէլիէրի վերայ, որ զինքը հեռուէն կ'զիտէր, անասելի ներգործութիւն մը ունեցան:

Անկան մ'աչքը դիտէ կարդալ ամէն գոռոզութիւն կամ ամէն տառապանք իր սիրած մարդուն կերպարանին վրայ. կարծես թէ իրենց տկարութեանց չափովն Աստուած ուղեց շնորհել կանանց միւս արարածոց շնորհածէն աւելի:

Ասոնք կարող են իրենց զգացումները մարդոցմէ ծածկել. մարդը չէ կարող երես զգացումները պահել:

Մարքիզուհին մէկ ակնարկով դուշակեց վերասեսին բոլոր գժբազու թիւնը :

Գուշակեց որ անբուն զիշեր մ'անցուցած է , սպարանօք օր մը անցուցած է :

Հետևապէս զօրացաւ նա , կ'զգար որ ամէն բանէ աւելի կ'սիրէր զՖուքէն :

Ուստի օտք ելաւ , և անոր մտենալով ,

— Այս առտու կ'զրէիր ինձ — ըսաւ անոր — որ սիւսեր ես զիս մոռնալու , և թէ ես՝ զոր տեսած չլինելով վերատին , անաարակոյս քեզի մտածելէն դադրած եմ : Եկայ որ կարծիքդ սուտ հանեմ , պարոն , և այս ալ այնքան ճշգիւ որ աչացի մէջ բան մը կ'կարդամ :

— Ի՞նչ բան կ'կարդաս — հարցուց Ֆուքէ :

— Այսինքն թէ այս ժամէն աւելի շատ զիս չես սիրած , ինչպէս որ այս իմ ընթացքէս պիտի հասկընաս որ ես բնաւ քեզ մոռցած չեմ :

— Ո՛հ , դու , մարքիզուհի — ըսաւ Ֆուքէ , որու ազնիւ դէմքն ուրախութեան նշոյլով մը պահ մը լուսաւորեցաւ — դու , դու հրեշտակ մ'ես , և մարդիկ իրաւունք չունին քեզնէ կասկածելու :

Ուրեմն ուրիշ ընելիք չունին այլ միայն խոնարհել և շնորհ խընդրել քեզնէ :

— Ուրեմն այդ շնորհը կ'ընծայեմ քեզ :

Ֆուքէ ուզեց ծունր զնել :

— Ո՛չ — ըսաւ նա — իմ քովս նստիր : Ա՛հ , ահա դէշ խորհուրդ մը կ'անցնի մտքէդ :

— Եւ ինչէն հասկրցար այդ բանը , տիկին :

— Ժպիտե՛ղ , որ այդ կերպարանդ բոլորովին աւրեց : Նայինք ի՞նչ բանի վրայ կ'խորհիս : Ըսէ , համարձակ եղիր , բարեկամաց մէջ գաղանիք չկայ :

— Լաւ ուրեմն , տիկին , ըսէ ուրեմն ինձ , թէ ինչո՞ւ համար երեք չորս ամիս ինձի հետ այդչափ խտտութեամբ վարուեցար :

— Ա՛յսչափ խտտութիւն :

— Այո՛ , միթէ չարդիւնցի՞ր որ քեզի այցելութեան գամ :

— Ափսո՛ս , բարեկամի՛ իմ — ըսաւ տիկին Պէլիէր խորին հաւատով մը — վասն զի իմ տանս ըրած այցելութիւնդ մեծ գժբազուութիւն պատճառեց քեզ , վասն զի իմ տանս վրայ կ'հասկեն , վասն զի նոյն աչքերն որ քեզ տեսան կրնային վերստին տեսնել քեզ , վասն զի այնչափ վտանգաւոր չեմ գտներ քեզի համար իմ այս տեղ գալս , քան թէ քու իմ տունս գալի , վերջապէս , քեզ բաւական դժբազու կ'գտնեմ և չեմ ուզեր որ զըմբազուութիւնդ աւելի ևս աւելցնեմ . . . :

Ֆուքէ գոչ ելաւ :

Այս խօսքն իր վերատեսչութեան հոգերը միտքը ձգեց , ինքն որ քանի մը վայրկեան սիրահարի յոյսերը միայն կ'լիչէր :

— Գժբանդդ , ես — ըսաւ ժպտելու փորձելով . — բայց , ճշմարեալ , մարքիզուհի , այդ քու տրտմութեամբդ պիտի հատուցընես որ դժբազու եմ : Այդ քու զեղեցիկ աչերդ մի միայն իմ վերայ ցաւելու համար ինձ կ'նային : Ա՛հ , ես անոնցմէ ուրիշ զգացում մը կ'սպասեմ :

— Տրտումն ես չեմ , պարոն . նայէ՛ սա հայլիին մէջ , դուն ես :

— Մարքիզուհի , քիչ մը դունատ եմ , իրաւ է , բայց չափազանց աշխատանքն է պատճառը . թաղաւորն երէկ ստակ խնդրեց իննէ :

— Այո՛ , չորս միլիօն , զիտեմ՝ այդ :

— Գիտե՛ս այդ — գոչեց Ֆուքէ զարմանահար : — Եւ ի՞նչպէս զիտես : Մինակ խաղի ատեն , թաղուհիներուն մեկնելէն ետեւ՝ և մէկ մարդու սուջև միայն էր որ թաղաւորը . . . :

— Կ'տեսնես որ զիտեմ . այս բաւական է , այնպէս չէ : Ուրեմն շարունակէ՛ , բարեկամ , թաղաւորը խնդրեց ըսիք . . . :

— Ե՛յ աղէկ , կրնաս մտածել , մարքիզուհիս , որ պէտք եղաւ այն դրամը գտնել , սպա համրել , սպա արձանազրել տալ , երկայն գործ է : Պ . Մաղարէնի մահուանէ՛ ի վեր , ելուամից գործերու մէջ փոքր ինչ յոյսութիւն և շփոթութիւն մտան : Իմ պաշտօնս ծանրաբեռնած կ'երևի , և ահա այս պատճառաւ զիշերն անբուն մնայի :

— Այնպէս որ հիմակ դումարն ունիս — հարցուց մարքիզուհին մտայող :

— Ճշմարիտը զարմանալի բան մը պիտի լինէր — պատասխանեց Ֆուքէ զուարթագին — եթէ ելումտից սրաշտօնեայ մը չորս միլիօնի չնչին դումարն իր արկղերուն մէջ չունենար :

— Այո՛, կարծեմ թէ ունիս կամ պիտի ունենաս այդ գումարը :

— Ի՞նչպէս, պիտի ունենամ :

— Շատ ատեն չկայ որ երկու միլիօն ալ պահանջեց քեզնէ :

— Կարծեմ թէ՛ ընդ հակառակն՝ դար մը կայ, մարքիզուհի Բայց, խնդրեմ, գրամի վրայ չխօսինք ալ :

— Ընդ հակառակն՝ խօսինք, բարեկամդ իմ :

— Ո՛հ :

— Մտիկ ըրէ՛, ես միայն այդ բանին համար եկայ :

— Բայց ի՞նչ ըսել կ'ուզես — հարցուց վերատեսուչը, որու աչքը մտատանջ հետաքրքրութիւն մը յայտնեցին :

— Պարոն, միթէ՛ վերատեսչութիւնն անշարժ պաշտօն մ'է :

— Մարքիզուհի՛ :

— Կ'նայիս որ պատասխան կ'տամ, և համարձակօրէն իսկ :

— Մարքիզուհի, իմ զարմանքս կ'սրտաճառես, ինձ իբրև հասարակ կ'խօսիս :

— Ինչո՞ւ պարզ բան մ'է այդ. կ'փափաքիմ քովդ շահու ստանկ զնել, և բնապէս կ'ուզեմ իմանալ թէ ապահովութիւն կրնաս տալ թէ ոչ :

— Ճշմարիտը, մարքիզուհի, բոլորովին կ'շփոթիմ և չդիտեմ թէ խօսքիդ վերջն ո՞ր պիտի բերես :

— Իրօք, սիրելի Պ. Ֆուքէ, դումար մ'ունիմ որ ինձ շփոթութիւն կ'սրտաճառէ : Տաղտկացած եմ հողեր գնելէն, և կը փափաքիմ ստակս բարեկամի մը տալ շահու :

— Բայց ստիպողական գործ մը չէ, կարծեմ — ըսաւ Ֆուքէ :

— Ընդ հակառակն, ստիպողական է, և շատ ստիպողական :

— Այդ խնդրոյն վրայ ուրիշ անդամ խօսինք :

— Ո՛չ ուրիշ անդամ, վասն զի ստակս ահա աստ է :

Մարքիզուհին արկղիկը վերատեսչին ցցուց, և զայն բանալով Գրամատոմներու ծրարներ և կոյտ մ'ուսկի երևան հանեց :

Ֆուքէ տիկին Պէլիերի պէս նոյն պահուն ոտք ելեր էր, պահ մը մտմտութիւն գնաց. ապա յանկարծ՝ ընկրկելով՝ դեղնեցաւ և աթոռի մը վրայ ընկաւ երեսը ձեռացը մէջ պահելով :

— Ո՛հ, մարքիզուհի՛, մարքիզուհի՛ — մրմուռաց նա :

— Է՛յ բարի :

— Ուրեմն ի՞նչ կարծիք ունիս իմ վրայ որ այդպիսի առաջարկութիւն մը կ'ընես ինձ :

— Քո՞ւ վրայ :

— Անշուշտ իմ վրայ :

— Բայց դու ինքնին ի՞նչ կ'խորհիս ուրեմն, նայինք :

— Այդ գրամն ինձի համար կ'բերես, կ'բերես զայն վասն զի դիտես որ նեղութեան մէջ եմ : Ո՛հ, մի ուրանար. ես կ'զուշակեմ : Միթէ՛ ես քու սիրտդ չեմ ճանչեր :

— Լաւ ուրեմն, եթէ իմ սիրտս կ'ճանչես, կ'նայիս որ քեզի ընծայածս իմ սիրտս է :

— Ուրեմն լաւ գուշակեցի — գոչեց Ֆուքէ : — Ո՛հ, տիկին, ճշմարիտը, ես երբէք իրաւունք մը առած չեմ քեզի այդպէս զիս նախատելու :

— Ե՛ս նախատեմ — ըսաւ նա գունատելով : — Մարդկային տարօրինակ փափկասրտութիւն : Գու զիս կ'սիրես, ինչպէս որ ըսիր : Յանուն այս սիրոյն, իմ անունս, իմ պատիւս խնդրեցիր : Եւ երբ քեզի իմ ստակս կ'ընծայեմ, կ'մերժես :

— Մարքիզուհի, մարքիզուհի, աղատ էիր, անուն և պատիւ անուանածդ պահել : Թոյլ տուր որ ես ալ իմն պահեմ : Թո՛ղ որ կործանիմ, թող որ ընկճիմ զիս շրջապատող ատելութեան բեռին սակ, իմ գործած սխալանացս բեռին տակ, նոյն իսկ իմ խղճի խայթի բեռին տակ, բայց յանուն երկնից, մարքիզուհի, մի ձգմբ զիս այդ վերջին հարուածին ներքե :

— Քիչ մ'առաջ մտքի պակասութիւն ցոյց տուիր, Պ. Ֆուքէ — ըսաւ նա :

— Կարելի է, տիկին :

— Եւ այժմ, ահա սրտի պակասութիւն կ'ցուցնես :

Ֆուքէ իր կարկամ ձեռքով շնչասպառ կուրծքը ճնշեց :

— Տիկին, խորտակէ՛ զիս — ըսաւ նա — սպասախան մը չու-
նիմ:

— Ես քեզի իմ բարեկամութիւնս ընծայեցի, Պ. Ֆուքէ:

— Այո՛, տիկին, բայց միայն այդ սահմանին մէջ մնայիր:

— Արդեօք ըրածս բարեկամի գործ չէ՞:

— Անտարակոյս:

— Եւ կ'մերժե՞ս այս իմ բարեկամութեանս ապացոյցը:

— Կ'մերժեմ:

— Ինձ նայէ, Պ. Ֆուքէ:

Մարքիզուհւոյն աչերը կ'շողային:

— Իմ սէրս քեզի կ'ընծայեմ:

— Ո՛հ, տիկին — ըսաւ Ֆուքէ:

— Քեզ կ'սիրեմ, կ'լսե՞ս, երկար ատենէ՛ ՚ի վեր. կանայք
մարդոց պէս իրենց անպատիճ փափկասրտութիւնն ունին: Երկար
ատենէ՛ ՚ի վեր քեզ կ'սիրեմ, բայց չէի ուզեր ըսել քեզի:

— Ո՛հ — ըսաւ Ֆուքէ ձեռները կցելով:

— Լաւ ուրեմն, ահա կ'ըսեմ քեզի: Ծուռը գնելով այս սէրն
իդնէ՛ խնդրեցիր, մերժեցի. կոյր էի, ինչպէս որ քիչ մ'առաջ
դու ալ էիր: Իմ սէրս քեզի կ'նուիրեմ:

— Այո՛, սէրդ, բայց սէրդ միայն:

— Իմ սէրս, իմ անձս, իմ կեանքս, ամէն, ամէն ինչ:

— Ո՛հ, Աստուած իմ — դոչեց Ֆուքէ շայած:

— Իմ սէրս կ'ուզե՞ս:

— Ո՛հ, բայց իմ երջանկութեանս բեռին ներքեւ զիս կ'ճգմես:

— Երջանիկ պիտի լինիս, ըսէ՛, ըսէ՛, . . . եթէ քուկդ, լիո-
վին քուկդ դառնամ:

— Գերազոյն երանութիւն մ'է այդ:

— Ուրեմն ընդունէ՛ զիս: Բայց եթէ նախապաշարում մը քեզի
կ'զոհեմ, դու այլ սպասոյ կէտ մ'ի՛նձ զոհէ:

— Տիկին, տիկին, զիս մի՛ փորձեր:

— Բարեկամ, բարեկամ, մի՛ մերժեր զիս:

— Ո՛հ, մտածէ՛ թէ ինչ կ'առաջարկես ինձ:

— Ֆուքէ՛, բառ մ'եւս ունիմ. . . սչ, . . . և այս դուռը կ'բանամ:

Մարքիզուհւոյն փողոցը հանող դուռը ցցուց:

— Եւ այսուհետեւ զիս չպիտի տեսնես: Ուրիշ խօսք մ'ալ ունիմ
. . . այո՛ . . . և սէր որ կամիս հետեւիմ պիտի քեզի, աչերս դոց,
անպաշտպան, անդիմադիր, անտաղնապ:

— Էլի՛ղ. . . Էլի՛ղ. . . հասցաւ այս արկղիկը:

— Իմ օժիաս է:

— Քու կործանումդ է — դոչեց Ֆուքէ տակնուվրայ ընելով
ասիկն ու թղթերը — այս տեղ միլիօն մը կայ:

— Ճիշտ այդչափ . . . : Իմ դոհարներս, որ ինձ օգուտ մը
չունին եթէ զիս չսիրես, որ այսուհետեւ ինձ չպիտի ծառային ե-
թէ չսիրես զիս ինչպէս ես քեզ կ'սիրեմ:

— Ո՛հ, շատ է, շատ է այս — դոչեց Ֆուքէ: — Կ'զիջանիմ,
կ'զիջանիմ, եթէ ոչ ուրիշ բանի, դէ՛մ այդպիսի անձնուիրու-
թիւն մը նուիրողորժելու համար: Կ'ընդունիմ օժիտը . . . :

— Եւ աւասիկ կ'ինը — ըսաւ մարքիզուհւոյն անոր զիրկն ընկնելով:

ԺԱ

ԱՍՏՈՒԾՈՅ ՀՈՂԸ

Նոյն միջոցին՝ Պրքինկհէմ և Աարդ Բարիզէն ՚ի Քալէ ճամ-
բայ կ'կտրէին իբրև լաւ ընկերներ և կատարեալ միաբանութեամբ:

Պրքինկհէմ իր հրաժարական բարեները տալու շտապեր էր,
այնպէս որ լաւագոյն այցելութիւնները վեր ՚ի վերոյ կատարեր էր:

Արքային եղբօրը, ասոր կողակցին, նորասի թանգուհոյն և
որբւայրի թագուհւոյն ըրած այցելութիւնները հաւաքապէս եղեր
էին:

Մայր թագուհւոյն մէկ նախատեսութիւնն էր այս, վասն զի
թագուհին՝ իր որդւոյն հետ նորէն խօսելու վիշտն անոր կ'ինսա-
յէր, և արքայազուռն ալ իշխանուհին տեսնելու վասնդն անոր
կ'ինսայէր:

Պրքինկհէմ վիշն ու Ռաուլը գրկեց . առաջնոյն իր յարզանքը հաւաստեց , երկրորդին՝ իր հաստատ բարեկամութիւնն որ սահմանուած էր ամէն խոչ ու խուժ յաղթահարել և անսասան մնալ թէ՛ հեռաւորութեան և թէ՛ ժամանակի դէմ :

Սայլերն արդէն ճամբայ ելեր էին , իր բոլոր սպասաւորներով ուղի ընկաւ իրկունը :

Վարդ՝ թէև անկլիայի մ'ետեէն այսպէս ընդ քարշ երթալուն վերաւորուած՝ իր նրբամիտ գլխուն մէջ այս շղթայէն պրծելու ամէն հնար փնտռեր էր , բայց ոչ ոք իրեն օգնութեան չէր եկած , և այսպէս ստիպուեր էր իր չարամտութեան և հեղինակութեան պատիժը կրել :

Անոնք՝ որոց թերևս սիրտը բանալու ելներ , իբրև ուրիշմարդիկ , զինքը պիտի հեղնէին գքսին դերազանցութեան վրայ :

Աւրիշ ծանր , այլ խոհական մարդիկ՝ թաղաւորին հրամանները պատճառ բռնելու պիտի յորդորէին զինքը , հրամաններ որ մենամարտութիւնը կ'արդիւէին :

Աւրիշ մարդիկ ալ վերջապէս , և ասոնք ամենէն շատոր էին , որ քրիստոնէական գթասիրութենէ կամ սղոյային ինքնասիրութենէ՝ անոր զօրավիզ գալու թերևս տրամադիր գտնուէին , բնաւ հոգ չպիտի ընէին թաղաւորին աչքէն ելնելու վախը , և շատ շատ պաշտօնէից իմաց պիտի տային չու մ'որ կրնար փոքրիկ կոտորածի մը զսուածանիլ :

Այս ամէն բանէ սա հետեցաւ , որ Վարդ՝ ամէն ինչ կըռելէ ետև՝ իր սնտուկը պատրաստեց , երկու ձի առաւ , և լոկ սպանաւոր մ'իրեն հետեւելով , քաղաքադուռը զիմեց ուր Պրքինկհէմի կառքը զինքը պիտի ընդունէր :

Գուքսն ընդունեց իր հակառակորդն ինչպէս որ պիտի ընդունէր իր ամենասիրուն բարեկամը , մէկքի քաշուեցաւ տեղ բանալու , անոր շաքարեղէն ընծայեց , անոր վրայ տարածեց սամուրենին որ զիմացի նստարանին վրայ նետուած էր : Յետոյ իրաւրու հետ խօսակցեցան :

Արքունեաց վրայ , առանց իշխանուհւոյն վրայ խօսելու :

Արքայազնին վրայ , առանց իր տան վրայ խօսելու :

Թաղաւորին վրայ , առանց իր հարսին վրայ խօսելու :

Մայր թաղուհւոյն վրայ , առանց իր հարսին վրայ խօսելու :

Անկլիոյ թաղաւորին վրայ , առանց իր քրոջ վրայ խօսելու :

Իւրաքանչիւր ուղևորի սրտին վիճակին վրայ՝ առանց վտանգաւոր անուն մ'արտասանելու :

Աւստի այս ուղևորութիւնը՝ որ ծանր ծանր կ'կատարուէր , շատ զմայլելի եղաւ :

Աւստի Պրքինկհէմ , որ մտքով և դաստիարակութեամբ իրապէս գաղղիացի էր , զմայլեցաւ որ այսպէս լաւ ընտրեր էր իր ուղեկիցը :

Աղւոր կերակուրներ զոր այն ինչ կ'ճաշակէին , ճամբան կըտրող աղւոր մարդաղետիններու մէջ ձիավարժութիւններ , նապաստակներու որս , վասն զի Պրքինկհէմ իր բարակներն ունէր , այսպէս ահա ժամանակը կ'անցընէին :

Գուքսը փոքր ինչ Աէնի գեղեցիկ դետին կ'նմանէր , որ հազար անգամ իր սիրալիւր ոլորուտ շրջաններովը ֆրանսան գրկէլէն ետև միայն Ովկիանը թափելու կ'տրամադրուի :

Բայց՝ ֆրանսան թողուլ ատեն՝ Բարիզ բերած նոր Գաղղիացուհին էր մանաւանդ որ Պրքինկհէմի վիշտ կ'սպասճատէր . չուռէր մտածմունք մ'որ յիշատակ մը չլինէր , հետեւապէս ցաւ մը :

Հետևապէս՝ երբ երբեմն ինքն իր վրայ ունեցած զօրութեան դէմ , իր մտածութեանց մէջ կ'ընկղմէր , Վարդ բոլորովին ազատ կ'թողուր զանի իր մտախօհութեանց մէջ :

Այս փափկութիւնն անտարակոյս Պրքինկհէմը պիտի շարժէր և Վարդի մասին իր տրամադրութիւնները պիտի փոխէր , եթէ Վարդ՝ լուծիւն պահելու ատեն իսկ , նուազ չարասէր նայուած ունենար և նուազ նենդադիր ժպիտ մը :

Բայց ընդաբոյս ատեւութիւններն անողոքելի են , ոչ ինչ չմարեր զանոնք , երբեմն քիչ մը մոխիր զանոնք կ'ծածկէ , բայց նոյն մոխրին ներքև անոնք աւելի ուժղին կ'բորբոքին :

Ճամբուն ընծայած բոլոր սփոփանքը վայելելէն ետև՝ ինչպէս բսինք , Բալէ հասան :

Վեցերորդ օրուան վերջն էր :

Առջի իրկունեն դքսին սպասաւորներն արդէն դացեր և նաւակ մը վարձու բռներ էին : Այս նաւակը սահմանուած էր փոքրիկ սրբնթաց նաւու մ'որ 'ն սեռ կ'երթնէկէր , կամ՝ երկու ծայրէն պարան կ'կատէր , երբ իր սպիտակ թևերուն յողնութիւնն զգար , թմբէն քանի մը կ'նղրնկեց հեռաւորութեամբ :

Այս նաւակն երթալով և դառնալով դքսին բոլոր մարդիկն ու սպասքը նաւը սկիտի տանէր :

Չիերն արդէն նաւը աարեր էին , նաւակէն վեր կ'քաշէին չուանով յատկապէս շինուած սապասներու մէջ , և այնպէս բանդակամած էին որ իրենց անդամները՝ նոյն իսկ սարսափի և անհամբերութեան ուժգին սաղնայներու աստն , երկու կողմի սրմբուն կակուղ նեցուկը չէին թողուր , և իրենց մազն իսկ չէր աւրուեր :

Այս սապասներէն ութ հաս իրարու վրայ դրուելով նաւուն յատակը կ'լեցնէին : Յայտնի է , որ կարճատե ուղևորութեանց աստն՝ գողգոջուն ձիերը բնաւ կերակուր չեն ուտեր և լաւագոյն ուտելէաց սուջե իսկ կ'սարսուին թէև ցամաքի վրայ մեծ ախորժանօք կ'ուտեն :

Տակաւ առ տակաւ դքսին բոլոր կառքն ու սարքը նաւը փոխադրուեցան , և այն աստն իր սպասաւորներն եկան իմաց տալու որ ամէն ինչ պատրաստ է , և թէ , երբ դադղիացի աղատորդոյն հետ նաւ մտնել կամենայ , ուրիշ բան չմնար դուրսը :

Վասն զի մէկուն մտքէն չէր անցնէր որ դադղիացի աղատորդին լորս դքսին հետ բարեկամութեան հաշիւներէ զատ հաշիւներ ունէր կարգի գնելու :

Պրքինկհէմ նաւուն տիրոջ պատասխան զրկեց որ կազմ ու պատրաստ դանտի , բայց թէ ծափն աղւոր էր , թէ նոյն օրը փառաւոր արեւմուտ մը խոտաանալուն՝ միտք ունէր՝ իրկունը վրայն նաւ մտնել , և երեկոյեան դեղեցիկ օդէն օդուա քաղելով ծովեղջիկն վրայ պտոյս մ'ընել :

Ասկէ զատ՝ յարեց թէ ինք պատուական ընկեր մ'ունենալուն՝ ճամբայ ելնելու մեծ շտապ մը չունէր :

Այս ըսելով՝ զինք շրջապատու մարդոց ցոյց առաւ հորիզոնին վրայ ծիրանեղոյն երկնից շքեղ տեսարանը , նոյնպէս հիւ-

տաձև ամպերու ամփիթատրոն մ'որ արևուն սխառակէն մինչև զէնիթ կ'երևնէին լեռներու շղթայի մը ձևն առնլով որոյ կատարներն իրարու վրայ դիզուած էին :

Բոլոր այս ամփիթատրոնին ստորոտը տեսակ մ'արինալի մամուլ ներկուած էր՝ և արևակնի ու դաղաակրի նշոյլներու կը փոխուէր քանի ակնարկը վարէն վեր կ'երևնէր : Ծափն ալ այս նշոյլով կ'ներկուէր , և մէն մի կապուտակ կոհակի կատարին վերայ լուսաւոր կէտ մը կ'ըզզուար՝ իբրև սուտակն կանթեղի մը լուսին տրուած :

Գաղջ երեկոյ , մտախորհ երևակայութեանց սիրելի աղև անուշահոտութիւններ , արևելեան թանձր հով որ դաշնակաւոր բուրմամբ կ'փչէր , ապա հեռուէն սրբնթաց փոքրիկ նաւն որ մէկ ողմը կ'ցուցնէր մթուն՝ լուսամուտ կազմակերպանքովը , երկնի ծիրանեղոյն երեսին վրայ , և ասդիս անդին՝ հորիզոնին վրայ՝ կ'երևէին երեքիւտսի առադասներ կապուտակին ներքև՝ որորի մը թեկն նման որ ջուրը կ'ընկղմի , արդարև այս տեսարանը կ'արժէր որ վրան սքանչանային : Հետաքրքիրներու ամբօրն ոսկեղօծ սպասաւորներուն հեռեկայ , որոյ մէջ մատակարարն ու դրաղիւրը տեսնելով՝ կարծէր տեսնել տէրն ու իր բարեկամը :

Իսկ Պրքինկհէմ՝ սլարզապէս մոխրագոյն մագուսէ բաձիկն և կատրոյս թաւշէ թիկնոց մը հազած , գլխարկն աչացը վրայ դրած , առանց շքանշանի և բանաւածքի՝ Վարդին պէս անասն անցաւ , Վարդ որ փոխանորդի մը պէս սև հագուստ հագեր էր :

Գքսին սպասաւորներուն հրաման արուեցաւ որ նստահանդատին ամբարտակին մօտ նաւակ մը բերեն և սղասն պատրաստ , որպէս զի իրենց տիրոջ նաւը մտնելուն աջակից դանտին , առանց իրեն մօտ գալու , ինքը կամ՝ բարեկամը կանչէլէն առաջ :
— Ինչ որ տեսնեն — յարեր էր նա այս խօսքին վրայ ծանրանալով այնպէս որ հասկընան :

Ծովեղջիկն վրայ քանի մը քայլ առնէն ետք ,
— Աարծեմ — ըսաւ Պրքինկհէմ Վարդին — կարծեմ թէ պէտք պիտի լինի իրարու հրամարական բարև տալու : Ա՛տեսնես որ ծովը կ'բարձրանայ , սաս վայրկեանն այնպէս պիտի թրջէ ա

ւազը, որու վրայ կ'քալենք, որ դեռինը կոխելու վիճակին մէջ չպիտի դանուինք :

- Միւրօրա, հրաման'դ պատրաստ եմ, բայց . . . :
- Բայց առկաւին թաղաւորին հողին վրայ ենք, այնպէս չէ :
- Անտարակոյս :

— Լաւ ուրեմն, եկու՛ր, ինչպէս որ կ'տեսնես, վարը տեսակ մը կղզի կայ բոլորակի ջրաշեղջով մը շրջապատուած . ջրաշեղջը հետզհետէ կ'աւելնայ և կղզին վայրկեանէ առ վայրկեան կ'աներևութանայ : Այս կղզին արդարև Աստուծոյն է, վասն զի երկու ծովու մէջ է, և թաղաւորն իր աշխարհացոյց տեսրակներուն վրայ չունի դայն : Ա'տեսնես դայն :

— Ա'տեսնեմ : Հիմակ իսկ չենք կրնար այն տեղ հասնիլ առանց մեր ոտքը թրջելու :

— Այո՛, բայց դիտէ՛ միանգամ որ բաւական բարձրիկի բլուր մը կ'ձևացնէ, և ծովն ամենուստեք կ'բարձրանայ անոր սարը խնայելով : Այնպէս որ այն փոքրիկ թատրին վրայ սքանչելի դիրք մը պիտի բռնենք : Քեզի ինչպէս կ'երևի :

— Ամէն տեղ ուր իմ սուրս քու սրիդ հանդիպելու պատիւը պիտի ունենայ իմ բանին կ'դայ, միւրօրա :

— Լաւ ուրեմն, երթանք : Չափազանց կ'վշտանամ որ ոտքդ պիտի թրջել տամ, Պ. Աարդ . բայց կարծեմ թէ կարևոր է քեզ թաղաւորին ըսել . « Աւհափան, ես ձեր հողին վրայ չմեծամարտեցայ » : Թերևս փոքր ինչ կցկցանք է այս, բայց Բօրբուայալէն 'ի վեր կցկցանաց մէջ կ'լողաք : Ո՛հ, այս մասին չզանդատինք, ասով խիստ սիրուն խելք մը կ'ստանաք, և մինակ նակ ձեզի յատուկ է այդ : Եթէ կ'հաճիք, փութանք, Պ. Աարդ, վասն զի ահա ծովը վեր կ'երևնէ և մութը կ'կոխէ :

— Միւրօրա, եթէ աւելի շատ չէի քալեր, պատճառը սա էր որ Շնորհափայլութենէդ առաջ անցնիլ չէի ուզեր : Միթէ ոտքերդ չո՞ր են, պարոն դուքս :

— Այո՛, դեռ ևս չոր են : Բայց նայէ՛ վարը, առասիկ իմ թշուառական մարդիկս որ կ'վախնան թէ պիտի խղզուինք և նաւակով շրջան ընելու կ'դան մեր կողմը : Նայէ՛ միանգամ ինչպէս

կ'պարեն ալեաց կատարին վրայ, հետաքրքրական է արդարև . բայց այս տեսքն ինձ գլխի պտոյտ կ'տայ : Անհրես ինձ որ կըլուսակս անոնց դարձնեմ :

— Պէտք է դիտել, միւրօրա, որ կուսակէ անոնց դարձնելով արևն երեսիդ պիտի զարնէ :

— Ո՛հ, այս միջոցին արևը շատ տկար է և քիչ ատենէն պիտի անհետի . ուստի այս մասին հող մի՛ ընէր :

— Ինչպէս որ կամիս, միւրօրա, իմ ըսածս փափկութեան արդիւնք էր :

— Գիտեմ, Պ. Աարդ, և գիտողութիւնդ կ'գնահատեմ : Ա՛ռ դէս թիկնոցներն հանենք :

- Գու որոշէ՛, միւրօրա :
- Աւելի հանգիստ կ'լինինք :
- Ուրեմն բոլորովին պատրաստ եմ :

— Ըսէ՛ ինձ առանց քաշուելու, Պ. Աարդ, եթէ թրջած աւազին վրայ անհանգիստ ես, կամ եթէ փոքր ինչ գաղղիական հողին վրայ կարծես լինիլ : Այն ատեն Անկլիա կամ իմ փոքրիկ նաւուս մէջ մեծամարտինք :

— Միւրօրա, այս տեղ շատ աղէկ ենք : Մինակ պատիւ ունիմ դիտել տալու քեզ որ, ըստ որում ծովը վեր կ'երևնէ, հազիւ ուրեմն ժամանակ ունինք . . . :

Պըքինկհէմ հաւանութեան նշան մը ցցուց, իր թիկնոցն հանեց և աւազին վրայ նետեց :

Աարդ ալ նոյնն ըրաւ :

Երկու մարմնները՝ որ ծովեզրէն նայողներուն՝ երկու սպիտակ ուրուականներու երևոյթն ունէին, ստուերին մէջ երկնքէն իջնող կարմրադոյն կապուտակի գոյն կ'նկարուէին :

— Իրաւ որ, դուքս, չպիտի կարենանք շարժիլ — ըսաւ Աարդ — կ'նայիս ինչպէս մեր ոտքն աւազին մէջ կ'խրին :

— Ես մինչև կրուկս խրած եմ — ըսաւ Պըքինկհէմ — միւս կողմէն ալ ջուրը մեզի կ'հասնի :

— Արդէն ինձ հասաւ . . . երբ որ կամիս, պարոն դուքս : Աարդ սուրբ ձեռքն առաւ :

Գուքան անոր ըրածն ըրաւ :

— Պ. Վարդ — ըսաւ այն ատեն Պրքինկհէմ — վերջին խօսք մ'ունիմ, խնդրեմ մտիկ ըրէ . . . : Քեզի դէմ կ'մենամարտիմ, վասն զի ես քեզ չեմ սիրեր, վասն զի իմ սիրտս պատուելիք ունեցած մէկ սէրս հեղնելով, զոր այս պահուս կ'խոստովանիմ, և որու համար երջանիկ պիտի լինիմ եթէ մեռնիմ : Գու չարասէր մարդ մ'ես, Պ. Վարդ, և ամէն ճիշտ թափել կ'ուզեմ քեզ սպաննելու համար . վասն զի կ'զգամ որ եթէ այս անգամ չմեռնիս, ապագային մէջ շատ չարիք պիտի հասցնես իմ բարեկամացս : Առասիկ ըսելիքս, Պ. Վարդ :

Եւ Պրքինկհէմ սղջուեց :

— Եւ ես, միւրօրս, առասիկ այս ունիմ քեզի պատասխան : Ես քեզ չէի ատեր, բայց այժմ որ զիս դուշակեցիր, քեզ կ'ատեմ, և ամէն ձեռքէս եկածը պիտի ընեմ քեզ սպաննելու համար :

Եւ Վարդ Պրքինկհէմը բարեւեց :

Նոյն պահուն սուրերն իրարու դպան . երկու կայծ իրարու միացան մութին :

Սուրերն իրար կ'փնտուէին, կ'զգային և կ'դպէին :

Երկուքն ալ ճարտար մենամարտիկ էին . առջի շարժումներն արդիւնք մը չունեցան :

Մութը շուտով կոխեր էր . զիշերն այնքան մութ էր որ բնազդումով իրարու վրայ կ'յարձակէին և կ'պաշտպանուէին :

Յանկարծ Վարդ զգաց որ սուրը կայ առաւ . Պրքինկհէմի ուսին կծեր էր :

Գքսին սուրն իր թևին հետ վար իջաւ :

— Ո՛հ — ըրաւ նա :

— Գսայ, այնպէս չէ՞, միւրօրս — ըսաւ Վարդ երկու քայլ ընկրկելով :

— Այո՛, պարոն, բայց թեթե :

— Այլ սակայն սուրը վար առիր :

— Պաղ երկաթին առաջին տպաւորութիւնն է, բայց ինքզինքս գտայ : Վերստին սկսինք, եթէ կամիս, պարոն :

Եւ սուրը չարազոյժ շարժումը մը մղելով՝ դուքսը մարքիզին կուրծքը պատուեց :

— Ես ալ դպայ — ըսաւ :

— Ո՛հ — ըսաւ Վարդ, իր տեղն անյողգողգ մնալով :

— Ներէ՛, բայց շատիկէ բոլորովին կարմիր տեսնելով . . . —

ըսաւ Պրքինկհէմ :

— Աւրեմն — ըսաւ Վարդ կատաղօրէն — ուրեմն . . . ահա՛ քեզի :

Եւ ընդ առաջ շարժելով՝ Պրքինկհէմի բազկէն թափ անցոյց սուրը, որ երկու ոսկորներուն մէջ տեղ մտաւ :

Պրքինկհէմ զգաց որ իր աջ թևն ուժաթափ մնաց . ձախ թևն առաջ տարածեց, իր սուրը բռնեց, որ իր անդդայ ձեռքէն ընկնելու մօտ էր, և Վարդ պաշտպանութեան զիրքը բռնէն առաջ, սուրն անոր կուրծքէն թափ անցոյց :

Վարդ երերաց, իր ծունկերը կ'թոտեցան, և իր սուրը՝ դեռ ևս դքսին թևին մէջ մղուած թողլով՝ ջուրն ընկաւ, որ աւելի իրական նշոյլով մը կարմրեցաւ քան ինչ որ ամպերն իրեն կ'առաքէին :

Վարդ մեռած չէր : Չգաց իրեն սպառնացող սոսկալի վտանգը . ծովը վեր կ'ելնէր :

Գուքան ալ վտանդն զգաց : Ճիկ մը և ցաւազին աղաղակ մը հանելով իր թևէն սուրը խլեց, ապա՝ դէպ 'ի Վարդ դառնալով,

— Միթէ մուտք, մարքիղ — ըսաւ նա :

— Ո՛հ — պատասխանեց Վարդ արիւնէն խեղդուած ձայնով մ'որ թոքերէն կոկորդին կ'հասնէր — բայց քիչ մնաց :

— Լաւ ուրեմն, ի՞նչ ընելու է : Նայինք, արդեօք կրնամք քալել :

Պրքինկհէմ ծունկին վրայ դանի վերցոյց :

— Անկարելի բան — ըսաւ նա :

Ապա՝ վար ընկնելով,

— Կանչէ մարդիկդ — ըսաւ Վարդ — թէ ոչ պիտի խողովիմ :

— Ե՛հէ — դռնեց Պրքինկհէմ — է՛հէ, նա անկը, շուտ քալեցէք, շուտ :

Նառակն ամենայն ուժգնութեամբ սկսան թխալարել :

Բայց ծովը նառակին քալածէն աւելի շուտ վեր կ'ելնէր :

Պր. քինկհէմ տեսաւ որ փոքր ինչ ևս կոհակ մը սլիախ դար ծածկէր Վարդը . իր ձախ թևով՝ որ ողջ և անվէր էր , դօտի մ'ըրաւ անոր և զանի վերցոյց :

Կոհակը մինչև մարմնոյն կէսը հասաւ , բայց չկրցաւ զինքը սասանել :

Գուքսն խոյն գէտ 'ի ցամաք քալելու սկսաւ :

Բայց այն ինչ տաս քայլ առաւ որ երկրորդ կոհակ մը , աւելի բարձր վազելով սօսանալից և կատաղի քան զառաջինն , ետևաւ մինչև լանջը զարկաւ , զանի տապալից և ջրին ներքև ընկղմեց :

Ասր տեղատուութիւնը զինք տանելով՝ սրահ մը բաց թողոյց գուքսն ու Վարդը՝ առաջին վրայ սրտկած :

Վարդ մարեր էր :

Նոյն պահուն գ. քսին չորս նաւատիններ՝ որ վտանգը հասկըցան , ծովը նետուելով մէկ մանրերկրորդի մէջ գ. քսին մօտ հասան :

Մեծ եղաւ իրենց սարսափն երբ տեսան իրենց տէրն որ արեամբ կ'ծածկուէր քանի զինքը թրջող ջուրը ծունկերէն և ոտներէն վար կ'վազէր :

Ուղեցին զանի առնուլ տանիլ :

— Ո՛չ , ո՛չ — ըսաւ գուքսը — ցամաքը , ցամաքը , մարքիղը :

— Ի մահ , 'ի մահ գաղղիացին — գոչեցին անկլիայիք ցած ձայնով :

— Թշտանականներ — գոչեց գուքսը կանգնելով փառաւոր շարժմամբ մ'որ զիրենք արիւնով ուռոկեց — հնազանդեցէք : Պ. Վարդն 'ի ցամաք , ամէն բանէ առաջ Պ. Վարդն ասրահով տեղ մը հանեցիք թէ ոչ ձեզ կախել կ'տամ :

Նոյն միջոցին նաւակը մօտեցեր էր : Գրագիրն ու մատակարարն ըստ կարգի ծովը ցատկեցին և մարքիղին մօտեցան : Այլ ևս կենդանութեան նշան չունէր իր վրայ :

— Չեզ կ'յանձնարարեմ այս մարդը ձեր զլխուն վրա — ըսաւ գուքսը : — Ի ցամաք , Պ. Վարդը ծովեզրը հանեցէք :

Թեև ի վրայ առին և զանի չոր աւաղը տարին , ուր ծովը երբէք չեղներ :

Քանի մը հետաքրքիրներ և հինգ վեց ձկնորսներ ծովեզրը հաւաքուեր էին՝ և այն տեղ եկեր էին այս եզակի տեսարանը տեսնելու , ուր երկու մարդիկ մինչև ծունկ ջուր ունենալով մենամարտեր էին :

Ձկնորսներ տեսան խուճը մը մարդիկ սր վիրաւոր մարդ մը կը կրէին և իրենք ալ՝ մինչև կէս սրունք՝ ծովը մտան :

Անկլիայիք անոնց յանձնեցին վիրաւորը , այն միջոցին որ այս վերջինն իր աչքը բանալու սկսեր էր :

Ծովուն աղի ջուրն և բարակ աւազն իր վիրաց մէջ մտեր էին և անբացատրելի կսկիծներ անոր կ'սպասճատէին :

Գ. քսին զրոպիրն իր զրպանէն լեցուն քսակ մը հանեց և հանդիսականաց մէջ ամենէն նշանաւոր երեցող մարդուն տուաւ :

— Իմ տիրոջս , միլորտ Պր. քինկհէմի կողմէն է այս — ըսաւ — որպէս զի Վարդ մարքիղին համար ամէն երեակայելի ինամբ տանիք :

Եւ վերադարձաւ՝ իրեններուն հետ՝ մինչև նաւակն որու Պր. քինկհէմ մեծ դժուարութեամբ հասեր էր , այլ միայն երբ Վարդն անվտանգ ծովեզրը հասած տեսաւ :

Ծովն արդէն ալէկոծ էր . նկարէն հաղուսաներն ու դօտիները ծովն ընկղմեցան : Շատ զլխարկներ կոհակներն առին տարին :

Իսկ գ. քսին և Վարդի զգեստները մտնումը թեամբ գէտ 'ի ծովեզրն եկեր ընկեր էին :

Վարդը գ. քսին զգեստներով փաթմեցին , կարծելով թէ անոնք իրենն են և թե ի վրայ զանի գէտ 'ի քաղաքը տարին :

ԺԲ

ԵՌԱՊԱՏԻԿ ՍԷՐ

Պր. քինկհէմ մեկնուէն 'ի վեր՝ Կիչ այնպէս իմն կ'երեակայէր՝ թէ երկիրն իրենն է անբաժան :

Արքայազուներ՝ որ այլ ևս նախանձու առիթ մը չունենէր, և միանգամայն թող կ'տար որ Լօրէն ասպետը բռնորովին զինքը դրաւէ, իր տանը մէջ այնքան ազատութիւն կ'ընտրէր որ չէր մենէն խտապահանջ մարդը կարող էր փախաբիլ:

Թագաւորն ալ իր կողմէն՝ որ իշխանուհւոյն ընկերութենէ սկսեալ էր ակտիվ լինելու ամէն օր նոր նոր զուարճութիւններ կ'հնարէր որպէս զի Բարիզի բնակութիւնը հաճելի բերէ, այնպէս որ օր չէր անցնէր որ Բալէ-Բուայալի մէջ հանդէս մը կամ արքայազնին սպարանն ընդունելու թիւն մը տեղի չունենար:

Թագաւորը Ֆօնդէնայլօն պատրաստել կ'տար արքունիքն այն տեղ ընդունելու համար, և ամէն մարդ այս ուղևորութեան մասնակից գտնուելու համար ջանադիր կ'դռնուէր: Իշխանուհին բողբոջ մագլաղ կեանք մը կ'վարէր: Իր ձայնն ու զբիշք պահ մը դադար չէին առնուր:

Այլ կումին հետ խօսակցութիւնները քիչ քիչ այնպիսի կարևորութիւն մը կ'ստանային որ ի հարկէ մեծ կրօն նշաններ կը ցույցնէին:

Երբ որ կերպասներու գոյներու առթիւ եղած վիճարանութեան ատեն աչերը կ'նուաղին, երբ որ ժամ մը կ'անցնի հոտուէտ քրակի մը կամ ծաղիլի մ'արժանիքը և անուշահոտութիւնը վերլուծելու, այս տեսակ խօսակցութեան մէջ այնպիսի բառեր կը սպրդին զոր ամէն մարդ կրնայ լսել, բայց կան շարժումներ և հառաչներ զոր ամէն մարդ չկրնար տեսնել:

Իշխանուհին ընդ երկար խօսելէն ետև Պ. Այլին հետ, թագաւորին հետ կ'խօսակցէր, որու ամէն օր այցի կ'ելնէր կանոնաւորապէս: Այստեղայն, ոտանաւորներ կ'յօրինէին, նշանաբաններ և նշանակներ կ'ընտրէին. այս գարունն ոչ միայն բնութեան դարուն էր, այլ ամբողջ ժողովրդեան մ'երխտասարգութիւնն էր որու գլուխը կ'կազմէր այս արքունիքը:

Թագաւորը դեղեցիկ, նորահասակ էր և ամենէն աւելի իրանէր: Բոլոր կանայքը սիրապէս կ'սիրէր, նոյն իսկ իր կրնր թագուհին:

Միայն մեծ թագաւորն ամենէն երկչոտն էր կամ իր թագաւոր

իւր թեան մէջ ամենէն խոհականը, որչափ ատեն որ իր զգացումներն ինքն ինքնին չէր խոտովաներ:

Այս երկչոտութեամբը պարզ քաղաքավարութեան սահմանին մէջ կ'մնար, և կին մ'անդամ չէր կարող պարծիլ որ ուրիշի վրայ նախապատուութիւն մը կ'վայելէ:

Արեւի է նախատեսել որ ինքզինքն երևան հանած օրը նոր վեհապետութեան մ'արշալոյսը պիտի լինէր, բայց ինքզինքը չէր յայտնէր: Պ. Այլ այս պարագայէն օգուտ կ'քաղէր բոլոր սիրարկու արքունեաց թագաւորը լինելու:

Արեւին թէ օրիորդ Մօնդալէի հետ տաք էր, կ'ըսէին թէ օրիորդ Շադիլլօնի քուլէն չէր հեռանար, և սակայն այժմ և ոչ քաղաքավար էր արքունեաց կնկան մը հետ: Միայն կնկան մը համար աչքեր և ականջներ ունէր:

Ուստի արքայազնին տունն անդրապար կ'հաստատուէր, և արքայազունն ալ զինքը կ'սիրէր և կարելի եղածին չափ իր տան մէջ կ'պահէր:

Ի բնէ վայրենի լինելով՝ Այլ կումը շատ հեռուն կ'կենար իշխանուհւոյն դալէն առաջ, բայց երբ միանգամ իշխանուհին դարձ բաւական չէր հեռանար:

Այս բանս ամէն մարդ գիտեց, և մասնաւորապէս տան չար ողին, այսինքն Լօրէն ասպետը, որու մեծ սէր կ'յայտնէր արքայազունը, վասն զի նա զուարթ բնաւորութիւն մ'ունէր, նոյն իսկ իր չարասիրութեան մէջ, և ժամանակ անցընելու համար իրեն հնարք չէր պահներ:

Լօրէն ասպետը ինչպէս ըսինք, տեսնելով որ Այլ կումն իրեն տեղն անցնելու կ'սպառնար, մեծ հնար մը գործածեց: Անեղեցիկ եղաւ, արքայազունը միայնակ թողուով:

Իր աներեղցի լինելուն առաջին օրը՝ արքայազունը գրեթէ բնաւ զինքը չփնտռեց, վասն զի Այլ այն տեղն էր, և իշխանուհւոյն հետ ունեցած խօսակցութիւններէ զատ՝ օրուան և զիշերուան ժամերն արիւարար իշխանին կ'նուիրէր:

Բայց երկրորդ օրը՝ արքայազունն իր ձեռքին տակ մարդ չգտնելով՝ հարցուց թէ ո՞ր է ասպետը:

Պատասխան տուին իրեն թէ ոչ որ զիտէ :

Կիշն՝ իր առաօտեան ժամերն իշխանուհւոյն հետ ծոպեր և բանուածներ քննելով անցընելէն ետև, եկաւ իշխանը միթիւմարելու : Բայց ճաշէն ետք՝ դեռ ևս կակաչներ և մեղեսիկներ կային քննելու, Կիշ իշխանուհւոյն դահլիճը դարձաւ :

Արքայազունը մինակ մնաց. իր հագուելու ժամն էր. ինքզինքն ամենաթշուառ մարդ համարեց և նորէն հարցոյց թէ ասպետին վրայ լուր առած են :

— Ո՛չ որ զիտէ թէ սպարոն ասպետն ո՛ւր է : — Այս եղաւ իշխանին տրուած պատասխանը :

Արքայազունն այնուհետև իր տաղտուկը փարատելու միջոց մը չկրնալով գտնել, տնային պարեգօտ հաղած և զլիսանոցով իր իշխանուհի ամուսնոյն սենեակը դնաց :

Այն տեղ շատ մարդիկ կային որ մէյմէկ անկիւն նստած կը ծիծաղէին և կ'իփսիսային, այս տեղ խումբ մը կանայք մարդու մը շուրջն ու խեղդուկ քրքիջներ, անդին Մանիքան ու Մալիքօրն զորս Մօնդալէ կ'կթէր, նոյնպէս օրիորդ Գօնէյ—Շարանդ և ուրիշ երկու ծիծաղողներ :

Աւելի հեռուն նստեր էր՝ բարձերու վրայ՝ իշխանուհին, և Կիշ՝ անորք մօտ ծունկի վրայ եկած՝ ափ մը մարդարիտ և անդամանդներ կ'ցրուէր, որոց մէջ իշխանուհւոյն նուրբ և սպիտակ մատը կ'ցուցնէր իրեն ամենէն աւելի հաւնած դոհարները :

Ուրիշ անկիւն մը կ'տեսնուէր կիթառ ածող մ'որ սպանիական երգեր կ'նուագէր, որոց իշխանուհին սիրահարեր էր քանի որ նա լսեր էր նորատի թագուհւոյն երգելը կերպ մը մեղամաղձութեամբ. միայն ինչ որ Սպանուհին արտասուալից աչօք երգեր էր, Անկուհին կ'մըմնջէր ժպիտով մ'որ իր գաղտակրէ ակուսներն երևան կ'հանէր :

Այս դահլիճը՝ այսպէս շէն՝ զուարճութեան զեղած ծիծաղ նկարը կ'ներկայացնէր :

Ներս մտնելով՝ արքայազունը զարմացաւ որ այնչափ անձինք առանց իրեն կ'զբօսնուին : Այնչափ նախանձ զգաց որ չկրցաւ համբերել և սղու մը պէս ըսաւ .

— Ի՞նչ բան է այս, դուք այս տեղ կ'զբօսնուք, և ես՝ առանձին կ'ձանձրանամ :

Իր ձայնը կայծակի նմանեցաւ՝ որ թուշուններու դայլայլելը կը գաղբեցնէ տերևին ներքև. մեծ լուսթիւն մը տիրեց :

Կիշ խօսցն ոտք ելաւ : Մալիքօրն Մօնդալէի շրջազգեստին ետև կարելի եղածին չափ սղտիկցաւ :

Մանիքան կանդուկ կեցաւ և իր արարողական վէս կերպարանն առաւ :

Կիթառահարն իր նուազարանը սեղանի մը տակ դրաւ և օթոցը քաշեց որ զայն արքայազնին աչքէն պահէ :

Իշխանուհին միայն անշարժ մնաց, և իր ամուսնոյն ժպտելով, անոր պատասխանեց .

— Միթէ ձեր հագուելու ժամը չէ : — Ճիշտ այս ժամը կ'ընտրէք զուարճանալու համար — քրքիթմընջեց իշխանը :

Այս դժպտած խօսքը փախուստի նշանն եղաւ. կանայք ահաբեկ թուշուններու երամին պէս խոյս տուին, կիթառահարն ստուերի պէս սահեցաւ դնաց, Մալիքօրն՝ միշտ Մօնդալէի ետևը պաշտպանուած, որ իր շրջազգեստը կ'տարածէր, վիժակի մ'ետև սահեցաւ : Իսկ Մանիքան՝ Կիշին օգնութեան հասաւ, որ՝ բնապէս՝ իշխանուհւոյն մօտ կ'կենար, և իշխանուհւոյն հետ պայքարելու գիմացան : Կումը շատ երջանիկ լինելուն՝ երկան ըրածէն զժոզ էր, բայց արքայազունն իր կնիկան դէմ սրբողած էր :

Կուռի առիթ մը կ'ուղէր, կ'փնտուէր, և այս խումբին արտօրալից չուն, որ իր գալէն առաջ այնքան զուարթ էր և իր ներկայութեամբը վրդովեր էր, իրեն պատրուակ բռնեց :

— Ուրեմն ինչո՞ւ համար իմ գալուս վրայ խոյս կ'տան — ըսաւ նա զժոզ ձայնով մը :

Տիկինը սաղութեամբ պատասխանեց թէ, ամէն անդամուն որ տէրն երևան կ'գար, ընտանիքն առ յարդանս մէկդի կ'քաշուէր :

Եւ՝ այս խօսքն ըսելով, այնպիսի ծիծաղաշարժ դէմք մ'առաւ որ Կիշ և Մանիքան չկրցան ինքզինքնին զսպել. քահ քահ խնդա-

լու սկսան . իշխանուհին ալ անոնց հետեւեցաւ , նոյն իսկ արքայ-
յազունն ալ ծիծաղն ակամայ ձղեց և նստելու ստիպուեցաւ , վասն
զի՛ ծիծաղելու ատեն իր ծանրակացութիւնը շատ կ'կորուսնէր :

Վերջապէս ծիծաղը դադրեցուց , բայց իր բարկութիւնը սաստ-
կացեր էր : Աւելի ևս կատղեր էր իր կամայ դէմ՝ ծիծաղելուն
քան թէ ուրիշներուն ծիծաղին վրայ :

Մանիքանի կ'նայէր խոշոր աչերով , իր բարկութիւնը կիշ կում-
սին ցոյց տալ չհամարձակելով :

Բայց երբ ցասամբ մը նշան մ'ըրաւ , Մանիքան և կիշ դուրս
ելան :

Այսպէս որ իշխանուհին՝ մինակ մնալով՝ սկսաւ իր մարդարիտ-
ները ժողվել արտամաղին , բնաւ չծիծաղեցաւ և աւելի քիչ խօս-
սեցաւ :

— Շատ ուրախ եմ տեսնելու — ըսաւ դուքսը — որ զիս իբ-
րև օտարական կ'նկատեն ձեր տան մէջ , տիկին :

Եւ զայրացած դուրս ելաւ :

Ճամբուն վրայ Մօնդալէի հանդիսեցաւ , որ նախասենեկին մէջ
կ'հսկէր :

— Գեղեցիկ բան է զալ այսպէս տեսնել քեզ — ըսաւ նա —
բայց դրան վրայ :

Մօնդալէ ամենախորին խոնարհութիւն մ'ըրաւ :

— Ձեմ հասկընար — ըսաւ նա — թէ ձեր արքայական Բար-
ձրութիւնն ինչ պատիւ կ'ընէ ինձ ըսելու :

— Ա՛լ ըսեմ , օրիորդ , թէ երբ ամենքնիդ միասին կ'ծիծաղէք՝
իշխանուհւոյն սենեակը , անընդունելի է այն անձին զալուսան որ
դուրսը կ'կենար :

— Ձեր արքայական Բարձրութիւնն անշուշտ ձեր վրայ չէ որ
այսպէս կ'մտածէ և կ'խօսի :

— Ընդ հակառակն , օրիորդ , ես ինձի համար կ'խօսիմ , եւ
իմ վրայ կ'մտածեմ : Արդարեւ , պէտք է պարծենալ ինձ եղած
ընդունելութեանց համար : Ինչպէս , օր մ'որ իշխանուհւոյն , իմ
տանս մէջ ժողով կայ և երաժշտութիւն , օր մ'որ՝ ըստ կարգի՝
եւ ալ զբօսնուլ կ'ուզեմ , ամենքը հեռանան . . . : Ա՛հ , միթէ

Պ'վախնայի՛ն զիս տեսնելու , որ ամենքը փախուստ տուին զիս տես-
նելով . . . ուրեմն դէ՛շ է ամենուն միտքը . . . երբ ես բացակայ
եմ . . . :

— Բայց — ըսաւ Մօնդալէ — մեր այսօրուան ըրածն ուրիշ
օրեր ալ կ'ընենք :

— Ի՛նչ , ամէն օր այսպէս կ'ծիծաղէք :

— Այո՛ , տէր իմ :

— Միթէ ամէն օր՝ տեսածիս պէս դու մարումներ կան :

— Ճիշտ ասոր նման , տէր իմ :

— Վերջապէս ամէն օր նուազարան կ'ածեն :

— Տէր իմ , այսօր միայն կիթառ ունէինք . բայց երբ կիթառ
չունենանք , ջութակներ ունինք և սրինդներ . կանայք առանց ե-
րաժշտութեան կ'ձանձրանան :

— Արո՛ղ , հապա մարդիկ :

— Ո՞ր մարդիկ , տէր իմ :

— Պ . կիշ , Պ Մանիքան և այլք :

— Ամենքը Ձեր Բարձրութեան տունէն են :

— Այո՛ , այո՛ , իրաւունք ունիս , օրիորդ :

Եւ իշխանն իր սենեակը դարձաւ . մեծ մտմտութի մէջ էր :
Քիչ ամենէն խորունկ թեւթուին վաղեց՝ առանց հայլին նայելու :

— Աստեան ո՛ր գացած կրնայ լինիլ — ըսաւ նա :

Իշխանին մօտ ծառայ մը կար :

Իր հարցումը լսեց նա :

— Չգիտենք թէ ո՛ր է , տէր իմ :

— Նորէն այդ պատասխանը . . . : Ո՛վ որ այդ պատասխանը
տայ ինձ . « Չգիտեմ » պիտի ճամբեմ :

Այս խօսքին ամենքն արքայազնին սենեկէն փախան՝ ինչպէս
որ իշխանուհւոյն սենեկէն փախեր էին :

Այն ատեն արքայազունն անբացատրելի բարկութեան բրդաւ :
Ամանի մը ոտքով զարկաւ , որ դետինը զլորեցաւ կտոր կտոր լի-
նելով :

Յետոյ՝ մեծ պաղարիւնութեամբ թանդարանը մտաւ և իրարօ-
ւեակէ արծնեայ աման մը , սյօրֆիրէ ստոման մը և պինձէ աշտա-

նակ մը տաղալեց : Այս ամէնը սոսկալի գղըղիւն մը հանեց : Ամէն մարդիկ դուռն երեցան :

— Ի՞նչ կ'ուզէք, տէր իմ — ըսաւ երկչոտութեամբ սահապետը :

— Երածշտութիւն կ'վայելեմ — սլատասխանեց արքայազունն ակուաները կըճտելով :

Պահապետը Նորին արքայական Բարձրութեան բժիշկը կանչել տալու համար մարդ զըկեց :

Բայց բժիշկէն առաջ՝ Մալեքօրն հասաւ, որ իշխանին ըսաւ .

— Տէր իմ, Լօրէն ասպետն ետեւէս կ'դայ :

Գուքը Մալեքօրնի նայեցաւ և անոր ծստայ :

Արդարեւ ասպետը ներս մտաւ :

ԺԳ

Պ. ԼՕՐԷՆԻ ՆԱԽԱՆՁԸ

Օրէանի գուքը զոհոնակութեան ճիկ մը հանեց Լօրէն ասպետը տեսնելով :

— Ա՛հ, ինչ բարեբաղդութիւն — ըսաւ նա — ինչ զիպուածով այս տեղ կ'երևիս, ինչպէս որ կ'ըսէին, միթէ աներևոյթ եղած չէիր :

— Հապա, տէր իմ :

— Խեղքիդ այդպէս փչած է :

— Խեղքիս փչած է, ես, ինչպէս Ձեր Բարձրութեան դէմ խեղքիս փչածը կ'ընամ ընել . հապա յարգանքս . . . :

— Թո՛ղ մէկդի յարգանքը, որու դէմ կ'մեղանչես ամէն օր : Քեզի կ'ներեմ : Ինչո՞ւ համար մեկնեցար :

— Վասն զի բոլորովին անօգուտ էի ձեզի :

— Բացատրէ՛ միաբո :

— Գուք աւելի զբոսասու մարդիկ ունիք ձեր մօտ քան որ ես կ'ընայի լինիլ : Բաւական ոյժ չունիմ ես մաքստելու, և քաշուեցայ :

— Բոլոր այդ շրջահայեցութիւնդ իմաստ չունի : Ո՞րք են այն մարդիկ որոց դէմ մաքսուիլ չես կամիր . կի՞ն է :

— Ես մէկուն անունը տուած չունիմ :

— Անհետեմ է : Միթէ կի՞նքդ կ'նեղէ :

— Տէր իմ, ես այդ չեմ ըսեր . բերանս բանալ մի տաք . քաջ զիտէք որ կի՞ն մեր լաւ բարեկամներէն մին է :

— Աւրմն, ո՞վ է :

— Կ'աղաչեմ, տէր իմ, խօսքը կտրենք :

Ասպետը քաջ զիտէր որ հետաքրքրութիւնը կ'զրգոի ինչպէս ձարաւը երբ ըմպելին կամ բացատրութիւնը կ'հեռացնենք :

— Ո՛չ, կ'ուզեմ հասկընալ թէ ինչ սլատասխան երևոյթ եղար :

— Լաւ ուրեմն, հիմակ պիտի ըսեմ, բայց ըսելէքս ծուռ մի մեկնէք :

— Խօսէ՛ :

— Գիտեցի որ կ'նեղէի :

— Ձո՞ղ :

— Իշխանուհին :

— Ի՞նչպէս կ'նեղէիր — ըսաւ գուքը զարմացած :

— Շատ պարզ բան է, կարելի է իշխանուհին կ'նախանձի ար այդչափ սէր կ'ցուցնէք ինձի :

— Միթէ ի՞նք կ'յայտնէ քեզ այդ բանը :

— Տէր իմ, իշխանուհին երբէք ինձի խօսք չուղղեր, մանաւանդ բաւական ժամանակէ մ'ի վեր :

— Ո՞ր ժամանակէն :

— Այն ատենէն վեր որ Պ. կի՞ն անոր իզնէ տելի հաճելի երևելով ամէն ժամու զանի կ'ընդունի :

Գուքը կարմրեցաւ :

— Ամէն ժամ . . . : Ասպետ, ինչ բառ է այդ — ըսաւ նա խստիւ :

— Տէր իմ, կ'նայիք որ ձեզի անհաճոյ երեցաւ, ես արդէն հաւաստի էի այս մասին :

— Ինձի անհաճոյ չես երևիր այլ խօսքդ փոքր ինչ աշխուժա՞ւ :

Թեամբ կ'ըսես : Իշխանուհին ինչ բանի մէջ կիշը քեզնէ նախադաս կ'համարի :

— Այլ ևս բան մը չպիտի ըսեմ — ըսաւ ասպետը մարդավարութեամբ լի ողջունով մը :

— Ընդ հակառակն՝ կ'ուզեմ որ խօսիս : Եթէ այդ բանին համար քաշուեցար, ուրեմն շատ նախանձոտ ես :

— Պէտք է որ մարդ նախանձոտ լինի երբ կ'սիրէ, տէր իմ, միթէ դուք չէք նախանձիր իշխանուհիէն . միթէ Ձեր Բարձրութիւնը, եթէ միշտ իշխանուհւոյն քովը մէկը տեսնէր, և նոյապատուութիւնով ընդունուած տեսնէր, միթէ կասկած չ'պիտի ունենար : Մարդ իր բարեկամները կ'սիրէ ինչպէս իր սիրուհիները : Ձեր Բարձրութիւնն երբեմն կ'պատուէր զիս մեծապէս իր բարեկամն անուանելով :

— Այո՛, այո՛, բայց ահա դարձեալ երկդիմի բառ մը . ասպետ, ձախող ո՞՞մ ունիս :

— Ի՞նչ բառ, տէր իմ :

— Ըսիր, նպաստաւոր կերպով . . . ինչ կ'իմանաս այդ նպաստաւոր բառովդ :

— Շատ պարզ բան մը, տէր իմ — ըսաւ ասպետը մեծ պարզ մտութեամբ մը : — Այսպէս, օրինակի համար, երբ էրիկ մը կ'տեսնէ որ իր կինն այս ինչ մարդն իր քովը կ'կանչէ նախապատուելով, երբ այս մարդը միշտ անոր անկողնին գլուխը կամ կառքին դռնակը կ'դռնուի, երբ որ միշտ այս մարդուն ոտքին համար կնկան շրջադիտաներուն շրջանակին մէջ փոքրիկ վայր մը կ'գրտնուի, երբ որ այս անձինք իրար կ'դռնեն խօսակցելու առիթներէն զատ, երբ որ ասոր փունջը միւսին ժապատէններուն դոյնն ունի, երբ որ նուազարանները սենեկին մէջն են, ընթրիքն անկողնոյ և որմին միջավայրին մէջն են, երբ որ էրիկն երեւելով, ամէն ինչ կ'լուէ կնկան սենեկին մէջ, երբ որ էրիկն յանկարծ իբրև անձանձիր ընկեր կ'ունենայ գորովալիբ մարդ մ'որ ութ օր առաջ իրեն քովը բնաւ չէր հանդիպեր . . . այն ատեն . . . :

— Այն ատեն, լմնցուր :

— Այն ատեն, կ'ըսեմ, տէր իմ, մարդ կրնայ նախանձոտ լի-

նիլ . բայց բոլոր այս մանր պարագաներն անպատեհ են, մեր խօսակցութեան մէջ խնդիրն այս չէ բնաւ :

Գուքսը կ'վրդովէր և յայտնապէս կ'երևէր որ ինքնիրեն կ'մաքաւէր :

— Բայց չես բացատրեր — ըսաւ նա վերջապէս — Թէ ինչո՞ւ համար հեռացար ասկից : Քիչ մ'առաջ կ'ըսէիր թէ ուրիշին նեղութիւն տալէ կ'երկնչէիր, մինչև անգամ յարեցիր թէ իշխանուհւոյն վրայ հակում մը տեսար կիշի մը հետ յաճախ տեսակցելու :

— Ա՛հ, տէր իմ, ես այդպիսի բան չըսի :

— Ի՞նչպէս չէ :

— Բայց, եթէ ըսի, ես ասոր մէջ ստգտանելի բան մը չէի տեսներ :

— Ա երջապէս, բան մը կ'տեսնէիր :

— Տէր իմ, զիս կ'շփոթէք :

— Փոյթ չէ, խօսէ : Եթէ ճշմարտութիւնը կ'խօսիս, ինչո՞ւ համար կ'շփոթիս :

— Ես միշտ ճշմարտութիւնը կ'խօսիմ, տէր իմ, բայց միշտ կ'վարանիմ նաև երբ որ պէտք լինի ուրիշներուն ըսածը կրկնել :

— Ա՛հ, կ'կրկնէիր . . . : Ուրեմն կ'երևի թէ կ'խօսին :

— Ա՛խտտովանիմ որ ինձ խօսեցան :

— Ո՞վ :

Ասպետը գրեթէ զայրացած կերպարան մ'առաւ :

— Տէր իմ — ըսաւ — դուք զիս հարցման մը կ'ենթարկէք, դուք զիս իբրև ամբաստանեալ կ'նկատէք . . . և ազատորոգոյ մը ականջէն անցնող ձայները բնաւ այն տեղ չեն մնար : Ձեր Բարձրութիւնը կ'ուզէ որ աղմուկը մեծցնեմ և դէպքի մը բարձրութեան հասցնեմ :

— Ա երջապէս — զոչեց դուքսը ցասմամբ — հաստատուն իրողութիւն մը կայ, այս է թէ քաշուեցար դացիր այս ձայնին պատճառաւ :

— Պարտաւոր եմ ճշմարտութիւնն ըսել, ինձի խօսեցան թէ Պ. կիշ իշխանուհւոյն մօտ անձանձիր կ'դեղերի, և այլ ոչ ինչ :

անմեղ զուարճութիւն մը, նորէն կ'ըսեմ, և ասկէ զատ ներելի քայց, տէր իմ, մի լինիք անիրաւ և դործին չափազանցութիւն մի տաք: Այդ ձեզի չպատկանիր:

— Ինչ չվերաբերիր ինչի գեղերանքն իշխանուհւոյն մօտ խօսուիլը:

— Ո՛հ, տէր իմ, ո՛չ. և ինչ որ ձեզի կ'ըսեմ, նոյն իսկ Պ. Սիշին կրնամ ըսել, այնչափ գեղեցիկ կերպով կ'մեկնեմ իշխանուհւոյն ցոյց առած մեծարանքը. նոյն իսկ իշխանուհւոյն կրնամ ըսել: Միայն վախցած բանս ինչ է կ'հասկընաք: Ա՛վախնամ որ չըսեն թէ ուրիշին ցոյց տրուած շնորհաց վրայ կ'նախանձիմ մինչդեռ լոկ բարեկամութեան նախանձախնդիր եմ: Ես ձեր տկար կողմը գիտեմ, գիտեմ որ երբ սիրէք, բացարձակապէս կ'սիրէք: Արդ՝ իշխանուհին կ'սիրէք, և սակայն ո՞վ չսիրեր այնպիսի կ'ին մը: Քաջ գիտեցէք այն շրջանն որու մէջ ձեզ կ'ստորացրնեմ. իշխանուհին ձեր բարեկամաց մէջ ամենէն գեղեցիկն ու հրատարակին ընտրեց. անոր նկատմամբ այնքան պիտի ներդործէ մեր վրայ որ միւսները պիտի երեսի վրայ ձգէք: Ձեր կողմէն արհամարհանք մը միայն ինչի համար մահ է, արդէն բաւական է որ իշխանուհւոյնը կ'կրեմ: Ուստի, տէր իմ, ես իմ որոշումս ըրի. պիտի տեղի տամ մտերմին որու երջանկութեան կ'նախանձիմ, խոստովանելով միանգամայն անկեղծ բարեկամութիւն և անկեղծ զարմացում մ'անոր համար: Նայինք այս դատողութեանս գէ՛մ ըսելիք մ'ունիք: Միթէ ազատախօս մարդու դործ չէ՞ ըրածս. միթէ ընտիր բարեկամի մ'ընթացք չէ՞ իմս: Գոնէ պատասխան տուէք, դուք որ զիս այդչափ խստիւ հարցուփորձ ըրիք:

Գուքսը նստեր էր, իր գլուխն երկու ձեռօք բռներ և մտղերը կ'աւերէր: Բաւական երկար լուռութենէ ետք՝ որով ասպետը կարող եղաւ իր հետետրական հնարից ներդործութիւնը դնհատել, Օրէ՛անի դուքսը գլուխը վերցուց:

— Նայինք — ըսաւ — և անկեղծ եղիր:

— Ինչպէս միշտ:

— Լաւ: Գիտես որ այն այլանդակ Պրքինկէ՛մի մասին բան մը գիտեր էինք:

— Ո՛հ, տէր իմ, մի ամբաստանէք իշխանուհին, ապա թէ ոչ ձեզի հրածեշտ տալով կ'հեռանամ: Ի՛նչ, պիտի այդ կարծիքները դրդուէք, ի՛նչ, կ'կասկածիք:

— Ո՛հ, ո՛չ, ասպետ, չեմ կասկածիր իշխանուհւոյն վրայ, բայց վերջապէս . . . կ'տեսնեմ. . . կ'բաղդատեմ. . . :

— Պրքինկէ՛մ խենթ մ'էր:

— Խենթ մ'որու վրայ իմ աչքս կատարելապէս բացիր:

— Ո՛հ, ո՛չ — ըսաւ ասպետն աշխուժիւ — ես չէի ձեր աչքը բացողն այլ Սիշը: Ո՛հ, չշփոթենք:

Եւ սկսաւ ծիծաղել կծու ծիծաղով մ'որ իժի մը սուլելուն կը նմանի:

— Այո՛, այո՛, ճշմարիտ է . . . դու քանի մը խօսք ըսիր, բայց Սիշ ամենէն աւելի նախանձոտ երեցաւ:

— Անտարակոյս — շարունակեց ասպետը նոյն ձայնով — խորանին և տան համար կ'մաքաւէր:

— Ի՛նչ հրամայիր — ըսաւ դուքսը մեծասասա և այս նենդամէտ կատակէն վիրաւորուելով:

— Անշնչաւ. միթէ Պ. Սիշ ձեր տան առաջին ազատորդին չէ՞:

— Ա՛ւերջապէս — պատասխանեց դուքսը փոքր ինչ աւելի հանդարտելով — Պրքինկէ՛մի այս սէրն ամենուն աչքին զարկեր էր:

— Անտարակոյս:

— Լաւ ուրեմն, կ'ըսն թէ նոյնչափ աչքի կ'զարնէ Պ. Սիշը սէրը:

— Բայց, տէր իմ, դարձեալ նոյն խօսքը կ'բանաք. չեն ըսեր թէ Պ. Սիշ սէր ունի:

— Լաւ, լաւ:

— Ա՛նայիք, տէր իմ, որ լաւ ևս կ'լինէր, հարիւր անգամ լաւ կ'լինէր, զիս իմ առանձնութեան մէջ թողուլ քան թէ իմ խղճահարութեամբս կասկածներ դարբնել, զոր իշխանուհին իբրև յանցանք պիտի նկատէ և իրաւունք պիտի ունենայ:

— Գո՛ւ, դու ի՛նչ պիտի ընէիր:

— Բանաւոր բան մը:

— Ի՛նչ:

— Այս նոր եպիկուրեանց ընկերութեան բնաւ ուշադրութիւն չպիտի ընէի և այս կերպով ձայները պիտի դադրէին :

— Պիտի տեսնեմ, պիտի խորհրդակցիմ :

— Ո՛հ, ժամանակ ունիք, վտանգը մեծ չէ, և ասկէ զատ սո՛չ վտանգ կայ և ոչ սէր. վախ ունէի միայն որ բարեկամութիւնդ ինձի համար պիտի տկարանար. քանի որ այդչափ շնորհալի վստահութեամբ կ'հատուցանէք, զլսիս մէջ ուրիշ դաղափար չունիմ :

Դուքսը զլուխը ցնցեց որպէս թէ ըսել կ'ուզէր .

— Եթէ դու դաղափար չունիս, ես ունիմ :

Բայց ճաշի ժամը հասեր էր, դուքսը մարդ զըլկեց իշխանուհւոյն ձայն տալու : Պատասխան առաւ որ իշխանուհւոյն սեղանին չէր կրնար ներկայ գտնուիլ և թէ ինք իր սենեակը պիտի ճաշէր :

— Յանցանքն իմն չէ — ըսաւ դուքսը — այս առտու անոնց երաժշտական զուարճութեանց վրայ հասնելով, նախանձոտի սէս վարուեցայ և այժմ երես կ'կախեն ինձի :

— Մինակ պիտի ճաշենք — ըսաւ ասպետը հառաչով մը — կ'ցաւիմ որ Աիշ այս տեղ չէ :

— Ո՛հ, Աիշն ընդ երկար չպիտի կախէ երեսը, լաւ բնաւորութիւն ունի :

— Տէր իմ — ըսաւ յանկարծ ասպետը — լաւ դաղափար մը կ'դայ միտքս. քիչ մ'առաջ մեր խօսակցութեան ատեն կարծեմ թէ Ձեր Բարձրութիւնը վշտացուցի և անոր վրայ կասկածներ աղդեցի : Հիմակ կ'վայլէ որ բարեխօս լինիմ . . . : Աոմնը վնասուելու պիտի երթամ և զանի պիտի բերեմ :

— Ա՛հ, ասպետ, դու լաւ սիրտ մ'ունիս :

— Այդ խօսքը կ'ըսէք որպէս թէ կ'զարմանաք :

— Իրաւի, միշտ այդպէս զորովազուծ չես :

— Է՛յ բարի, բայց զիտեմ ըրած անիրաւութիւնս ուղղել, խոստովանեցէք որ այսպէս է :

— Ա՛խոստովանիմ :

— Միթէ Ձեր Բարձրութիւնը շնորհ կ'ընէ՞ քանի մը վայրկեան այս տեղ սպասելու զիս :

— Յօժարակամ, զնա . . . ֆօնդէնպլօի հազուսաներս պիտի փորձեմ :

Ասպետը մեկնեցաւ, իր մարդիկը կանչեց մեծ հողատարութեամբ, որպէս թէ զանազան հրամաններ կ'տար անոնց :

Ամենքն այլ այլ կողմ բռնելով մեկնեցան, բայց իր սենեկապանը պահեց :

— Իմացիր — ըսաւ — և շուտով իմացիր թէ արդեօք Պ. Աիշ իշխանուհւոյն սենեակին է, նայէ, ինչպէս պիտի իմանաս այս բանը :

— Գիւրաւ, սարոն ասպետ, Պ. Մալիքօրնի պիտի հարցնեմ, այս ալ օրիորդ Փօնդալէէն պիտի իմանայ : Սակայն պարտիմ ըսել որ ընդունայն պիտի հարցնեմ, վասն զի Պ. Աիշի բոլոր սպասաւորները մեկնեցան, իրենց տէրն ալ հարկաւ միասին մեկնած է :

— Բայց դարձեալ զնա տեղեկացիր :

Տաս վայրկեան չէր անցած երբ սենեկապանը վերադարձաւ : Խորհրդաւոր կերպով իր տէրը ծառաներու յատուկ սանդղի մը վրայ քաշեց և փոքրիկ սենեակ մը մտցուց որու պատուհանը սարտիզին վրայ կ'նայէր :

— Ի՞նչ կայ — ըսաւ ասպետը — ինչո՞ւ համար այդչափ զղուշութիւններ կ'ընես :

— Նայեցէք, սարոն — ըսաւ սենեկապանը :

— Ի՞նչ :

— Նայեցէք վարը, սա շագանակենիին ներքև :

— Լաւ . . . : Ա՛հ, Տէր կենդանի, Մանիքանը կ'տեսնեմ որ կ'սպասէ. ինչի՞ կ'սպասէ :

— Հիմակ պիտի տեսնէք եթէ համբերէք . . . ահա, հիմակ տեսա՞ք :

— Ա՛տեսնեմ մէկ, երկու, չորս երաժիշտներ իրենց նուագարաններով, և անոնց ետեէն՝ Աիշն անձամբ որ զանոնք կ'հրէ :

— Բայց, ինչ կ'ընէ այն տեղ :

— Ա՛սպասէ որ պատույ աղջկանց սանդղին փոքրիկ դուռը բանան, անկից իշխանուհւոյն սենեակը պիտի ելնէ, ուր ճաշի ատեն նոր երաժշտութիւն մը պիտի նուագեն :

- Այդ ըսածդ սքանչելի է :
- Այնպէս չէ՞, պարոն :
- Եւ միթէ Մալիքօրն ըսաւ քեզի այս բանս :
- Նոյն ինք :
- Ուրեմն քեզ կ'սիրէ :
- Այո՛, կ'սիրէ, պարոն :
- Ինչո՞ւ համար :
- Վասն զի տունէն լինիլ կ'ուզէ :
- Անօրէն, պիտի լինի նա : Ի՞նչ տուաւ քեզի ասոր համար :
- Չեղի ծախած դաղարնիքս, պարոն :
- Յիտուն ոսկի կ'վճարեմ ասոր համար : Ա՛դ նայիմ :
- Շնորհակալ եմ, պարոն, բարձր մի անուանէք այդ անու-
նը . Մծողալէ ըսողը Մալիքօրն կ'ըսէ . եթէ միոյն հետ աւրուիք,
միւսին հետ ալ անհաշտ պիտի մնաք :
- Է՛յ աղէկ, սեպէ թէ բան մը չտեսայ :
- Իսկ ես, սեպէ թէ բան մը չընդունեցի — ըսաւ սպասաւոր-
ըը քսակը տանելով :
- Ասպետը հաւաստի լինելով որ Վիշ ներս մտած է, Օրլէանի
դքսին մօտ դարձաւ, զանի շքեղօրէն հաղուած և ուրախութեամբ
նոյնպէս զեղեցիկութեամբ ճաճանչափայլ դտաւ :
- Կ'ըսեն թէ — գոչեց նա — թողաւորն իբրև նշանաբան
արևն աուեր է . ճշմարիտը, տէր իմ, այս նշանաբանը ձեզի պի-
տի վայլէր :
- Հասցա Վիշ :
- Անդտանելի է : Փախեր, շողիպեր է : Չեր առաւօտեան
կշամբանքը զինքը լեղապատառ փախուց : Ջինքն իր տունը չդտան :
- Վահ, այս փախուիլը կարելի է ճամբայ ելած է իր ա-
դարակն երթալու : Իսե՛ղճ սղայ . զանի ետ կ'կանչենք, անշուշտ,
հիմակ ճաշենք :
- Տէր, զիւտերու օրն է այսօր . նոր զիւտ մ'ունիմ :
- Ի՞նչ է այդ :
- Տէր իմ, իշխանուհի ամուսինդ ձեզնէ երես դարձուցեր է,
և իբառուք ունի : Անոր հատուցում մը պարտաւոր էք : Գացէք
անոր հետ ճաշ ըրէք :

- Ո՛հ, այդպիսի բան մը տկար էրիկ մը կ'ընէ :
- Ո՛չ, բարեսիրտ էրկան դորժ է : Իշխանուհին կ'ձանձրա-
նայ . նա իր պնակին մէջ պիտի լայ, աչերը պիտի կարմրին :
Իր կնկանն աչերը կարմրցնող ամուսին մ'անդու թ կ'սեպուի : Օ՛ն,
տէր իմ, ծն :
- Ո՛չ, իմ սեղանս այս տեղ զնելու հրամայուած է :
- Նայինք, նայինք, տէր իմ, տխուր պիտի լինինք . սիրտս
անհանդիստ պիտի լինի քանի մտածեմ որ իշխանուհին միայնակ
է . դուք, որչափ որ անագորոյն երկիլ կ'ուզէք, պիտի հառաչէք :
Ջիս ալ իշխանուհւոյն սեղանակից ըրէք, և աղ որ խաղ մը պի-
տի լինի այս : Գրաւ կ'զնեմ որ պիտի զբօսնունք . այս առտու ի-
բառուք չունէիք :
- Շատ կարելի է :
- Կարելի չկայ, ճշմարտութիւնն այս է :
- Ասպետ, ասպետ, դու ինձի գէշ խորհուրդ կ'տաս :
- Ես լաւ խորհուրդ կ'տամ, մեծ առաւելութիւններ ունիք .
այդ ձեր մանիշակադոյն ոսկեհուր զգեստը սքանչելի կերպով կը
վայլէ ձեզի : Տիկինն աւելի զիւրաւ պիտի ընկճի ձեր անձը տես-
նելով քան թէ ընթացքը : Նայինք, տէր իմ :
- Միտքս կ'ընես, մեկնինք :
- Գուքսը դուրս ելաւ ասպետին հետ իր սենեկէն և իշխանու-
հւոյն սենեակը զիմեց :
- Ասպետը սա խօսքը սպրդեց իր սպասաւորին ականջը .
— Փոքրիկ զրանս առջև մարդիկ ժողովէ, նայէ որ ոչ ոք ան-
կից խոյս չտայ . վազէ :
- Եւ դքսին ետեւն իշխանուհւոյն նախասենեակները հասաւ :
Բարապանները պիտի երթային իմաց տալու :
- Ոչ ոք տեղէն չարժի — ըսաւ ասպետը ծիծաղելով — ար-
քայաղունն յանկարծական խաղ մը պիտի խաղայ :

ԺԴ

ՕՐԼԷԱՆԻ ԳՈՒՔԱՆԻ ԿԻՇԻՆ ԿՆԱԽԱՆՁԻ

Արքայազունը յանկարծակի ներս մտաւ՝ այնպիսի մարդոց պէս որ լաւ դիտաւորութիւն մ'ունին և կարծեն թէ հաճոյք պիտի պատճառեն, կամ այնպիսի մարդոց պէս որ զաղտնիք մ'երևան հանելու կ'յուսան, նախանձոտներու ախուր վաստակ :

Իշխանուհին՝ երաժշտութեան առաջին եղանակներէն արբշլու, խնդի պէս կ'սպարէր՝ իր նոր սկսած ճաշը մէկդի թողլով :

Իր սպարակիցն էր Պ. Աիշ, թեւերն օգին մէջ, աչերը կիսրաց, ծունկը գետին դրած՝ այն սպանիացի պարօրդներու պէս որ հեշտալի նայուածք և զգուելի շարժում ունին :

Իշխանուհին անոր բոլորաիքը կ'դառնար նոյն ժպիտով և նոյն զրդուիչ հրատուրանօք :

Մօնդալէ կ'զմայլէր, Լա Վալիէր՝ անկիւն մը նստած՝ մտախոհ կ'նայէր :

Անկարելի է բացատրել թէ Օրլէանի դքսին ներկայութիւնէն ներդրածութիւն ունեցաւ այս երջանիկ անձերու վրայ. նոյնչափ անկարելի պիտի լինէր բացատրել թէ այս երջանիկ անձերու առեքն ինչ ներդրածութիւն ունեցաւ Օրլէանի դքսին վրայ :

Աիշ կոմսը վերականգնելու ոյժ չունեցաւ. իշխանուհին իր քայլափոխին և զրկից մէջ մնաց անշարժ առանց բաւ մ'արտաբերել կարենալու :

Լօրէն ասպետը՝ դրան շրջանակին յենած՝ կ'ժպտէր իբրև մարդ մ'որ անմեղ զմայլումով համակուած է :

Իշխանին գունատութիւնը, իր ձեռաց և սրնքաց ջլաձիգ դողք հանդիսականներուն աչքին զարնող առաջին երևոյթն եղաւ, խորին լուռութիւն մը յաջորդեց պարին աղմկին :

Լօրէն ասպետն այս միջոցէն օդուտ քաղելով եկաւ իշխանուց :

հին և Աիշը՝ բարեկեց յարգանօք, իր ակնածական խոնարհութիւնն երկուքին միասին տալու կեղծելով՝ իբրև թէ անոնք տան երկու տէրերը լինէին :

Արքայազունն ըստ կարգի մօտենալով,
— Ա՛զմայլիմ կ'մնամ — ըսաւ նա խուպոտ ձայնով մը — այս տեղ կ'զայի ձեզ հիւանդ և տխուր գտնելու կարծելով, և կը տեսնեմ որ նոր նոր զուարճութեանց տուած էք ինքզինքնիդ. ճշմարիտը, բարեբաղդ եմ : Իմ տունս տիեզերաց մէջ ամենէն զուարթագիւնն է :

Յետոյ Աիշ կոմսին կողմը դառնալով,
— Կոմս — ըսաւ — չէի կարծեր թէ այդչափ ճարպիկ պարող մ'ես :

Ապա՝ իր կնոջ դառնալով,
— Աւելի բարեսէր եղիք ինձի համար — ըսաւ նա դառնութեամբ մ'որ իր բարկութիւնը կ'քօղարկէր. — ամէն անգամուն որ ձեր սենեակը զբօսանք լինի, զիս ալ հրաւիրեցէք . . . : Շատ ընկեցիկ իշխան մ'եմ :

Աիշ իր բոլոր ինքնիշխանութիւնը գտեր էր, և ընական հպարտութեամբ մ'որ իրեն կ'վայլէր :

— Տէր իմ — ըսաւ — քաջ դիտէք որ իմ կեանքս ձեր ծառայութեան նուիրած եմ. երբ հարկ լինի զայն ձեզի տալ, պատրաստ եմ. այսօր խնդիրն 'ի ձայն վիճերու պարել է, ես ալ կը պարեմ :

— Եւ իրաւունք ունիս — ըսաւ իշխանը պաղութեամբ : — Ասկէ զատ՝ իշխանուհիս — շարայարեց նա — չէք դիտեր որ ձեր կանայքն իմ բարեկամներս կ'յափշտակեն : Պ. Աիշ ձերը չէ, տիկին, իմն է : Եթէ առանց ինձի ճաշել կ'ուզէք, ձեր կանայքն ունիք : Երբ ես մինակ կ'ճաշեմ, իմ ազատորդիներս ունիմ, զիս բոլորովին մի կողոպտէք :

Իշխանուհին զղաց սաստն ու դատը :
Կարմրութիւնը մինչև աչերը պատեց :

— Իշխանս — պատասխանեց նա — Ֆրանսայի արքունիքն եկած ատենս՝ չդիտէի որ իմ աստիճանիս իշխանուհիները Թուրք

քիոյ կանանց պէս կ'նկատուին : Չգիտէի որ արդիւուած էր ինձ մարդ տեսնելու . բայց քանի որ այս է ձեր կամքը , պիտի համակերպիմ . եթէ պատահաններս ալ վանդակել կ'ուզէք , մի քան շուքիք , վանդակել տուէք :

Այս պատասխանն որ Մօնդալէի և Նիշի ժպիտը շարժեց , իշխանին սրտին մէջ բարկութիւն գրգռեց , որու մէկ մեծ մասն այն ինչ խօսքով շողիացեր էր :

— Շատ աղէկ — ըսաւ նա կտրուկ ձայնով մը — տհաւ այս պէս կ'յարդեն զիս իմ տանս մէջ :

— Տէր իմ , տէր իմ — մրմուռաց ասպետն իշխանագնին ականջին , այնպէս որ ամէն մարդ տեսնէ թէ անոր զայրոյթը կ'չափաւորէր :

— Եկուր — ըսաւ դուքսը պատասխան տալու տեղ՝ զանի քարշէլով և ուժգին շարժմամբ մ'ինքն իր ոտից վրայ դառնալով , իշխանուհին զարնելու վտանգն առ ոչ ինչ դրելով :

Ասպետն իր տիրոջ հետեցաւ մինչև սենեակը , ուր այն ինչ իշխանը նստաւ , որ իր կատողութեան ազատ ընթացք մը տուաւ :

Ասպետն իր աչքը դէպ երկին կ'տանէր , ձեռներն իրարու կը կցէր և բառ մ'անդամ բերնէն չէր հաներ :

— Կարծիքդ — գոչեց արքայագունը :

— Ի՞նչ բանի վրայ , իշխան :

— Այս ամէն անցած բաներուն վրայ :

— Ա՛հ , իշխանդ իմ , ծանրակշիւ բաներ են :

— Ջրուելի են , կարելի չէ այսպէս կեանք վարել :

— Տեսէք , ինչպէս ձախորդ դնաց գործը — ըսաւ ասպետը :

— Կ'յո՞ւսայինք անդորրութիւն գտնել այն յիմար Պըքինկհէմֆը չուէն ետք :

— Եւ այժմ յուազոյն է :

— Ես այդպէս չըսի , իշխանդ իմ :

— Դու չըսիր , բայց ես կ'ըսեմ , վասն զի Պըքինկհէմֆը մեր տեսածին քառորդն անգամ ընելու չպիտի յանդգնէր :

— Ի՞նչ բան :

— Պարելու համար պահուրտիլ , սուտ հիւանդ լինիլ առանձին ձաշելու համար :

— Ա՛հ , իշխան , ո՛չ , ո՛չ :

— Այո՛ , այո՛ — գոչեց իշխանն ինքնիրեն գրողելով կամապաշտ տղոց պէս — բայց այս բանիս ընդ երկար չպիտի հանդուրձեմ , պէտք է իմանամ թէ ինչէր կ'անցնին :

— Իշխանդ իմ , միթէ հուշակելու էք . . . :

— Տէր կենդանի , ես ինչո՞ւ նեղանամ և պահեմ ամէն բան երբ որ զիս բանի տեղ չեն դներ : Այս տեղ սպասէ ինձ , ասպետ , սպասէ :

Իշխանը մօտակայ սենեակն աներևոյթ եղաւ , և բարապանին հարցոց եթէ մայր թաղուհին մատուէն դարձեր էր :

Աննա թաղուհին երջանիկ էր , քանի որ իր ընտանեաց ծոցը խաղաղութիւնը վերադարձեր էր , ամբողջ ժողովուրդն ուրախ զուարթ էր նորատի և մեծ բաներու տրամադիր թաղաւորի մը ներկայութենէ , պետութեան եկամուտներն աւելցած էին , արտաքին խաղաղութիւնն ապահովուած , ամէն ինչ անդորր ապագայի մը դուշակն էին :

Երբեմն կ'լիշէր այն խեղճ երիտասարդը զոր իբրև մայր ընդուներ և իբրև մօրու վաճառէր էր :

Հառաչ մ'իր մտած մունքը կ'աւարտէր : Յանկարծ Օրլէանի դուքսն անոր սենեակը մտաւ :

— Մայր իմ — գոչեց նա դռնակներն աշխուժիւ դոցելով — գործերն այս կերպով չեն կրնար տեւել :

Աննա թաղուհին անոր վրայ դարձուց իր աչքն և անայլայլակ անուշութեամբ մը .

— Ի՞նչ գործերու վրայ խօսիլ կ'ուզես — ըսաւ նա :

— Խօսքս իշխանուհւոյն վրայ է :

— Կի՞նդ :

— Այո՛ , մայր իմ :

— Գրաւ կ'դնեմ որ այն խեղճ Պըքինկհէմֆը հրաժարական բարեւ մը գրած պիտի լինի անոր :

— Ա՛հ , իրաւ որ , մայր իմ , միթէ խնդիրը Պըքինկհէմֆը վճարայ է :

— Ուրեմն , որո՞ւ վրայ է խօսքդ : Վասն զի այն եղուկ պա-

տանին քու նախանձու կէս նպատակին էր յանիրաւի, և կարծէի թէ . . . :

— Մայր իմ, իշխանուհին արդէն Պ. ՊրքինկՏէմի տեղը լեցուցած է :

— Ֆիլիպ, ինչ կ'ըսես : Այդ խօսքերդ շատ թեթեւ խօսքեր են :

— Ո՛չ, բնաւ չի . իշխանուհին այնպէս վարուելու սկսած է որ վերստին նախանձու կ'ըլլար :

— Եւ որով վրայ է նախանձու, Տէր Աստուած :

— Ի՛նչ, միթէ չզիտեցիր :

— Ո՛չ :

— Միթէ չզիտեցիր որ Պ. Աիշ միշտ անոր սենեակին է, միշտ անոր հետ է :

Թագուհին իր երկու ձեռքն իրարու զարկաւ և սկսաւ ծիծաղել :

— Ֆիլիպ — ըսաւ նա — քուկդ պակասութիւն մը չէ, այլ հիւանդութիւն մը :

— Պակասութիւն սեպէ կամ հիւանդութիւն, տիկին, ես կը տառապիմ :

— Եւ միթէ կարծես թէ բուժելի է հիւանդութիւն մ'որ միայն երեւակայութեանդ մէջ զոյութիւն ունի : Ա՛յուզես որ հաւանութիւն տամ քեզի, նախանձու, երբ նախանձու առիթ մը չկայ բնաւ :

— Օ՛ն, ահա վերստին պիտի սկսիս բտել ասոր համար, ինչ որ կ'ըսէիր անոր համար :

— Վասն զի, որդեակ — ըսաւ մայրը չոր կերպով մը — ինչ որ կ'ըսէիր անոր համար, ասոր համար ալ վերստին կ'սկսիս :

Իշխանը փոքր ինչ վիրաւորուած խոնարհեցաւ :

— Եւ եթէ իրողութիւններ մէջ բերեմ — ըսաւ — պիտի հաւտան :

— Արդեակ իմ, նախանձէ զատ որ և է բանի մը համար՝ առանց իրողութիւններ վկայ կոչելու՝ քեզ պիտի հատայի, բայց նախանձու մասին ես բան մը չեմ խոստանար քեզ :

— Արեմն, Ձեր Վեհափառութիւնն որպէս թէ հրամայէր ինձ լռելու և զիս իբրև անիրաւ ճամբէր :

— Բնաւ չի, դու իմ որդիս ես, ես մօր մը ներողամտութիւնը պարտաւոր եմ քեզի :

— Ո՛հ, ըսէ ինձ մտածմունքդ, դու կ'պարտաւորիս ինձ այն ամէն ներողամտութիւններն որու խենդ մ'արժանի է :

— Մի չափազանցեր, Ֆիլիպ, և զգուշացիր կինդ իբրև ապականեալ մտքի տէր անձ մը ցուցնելէն ինձ . . . :

— Հասկա, իրողութիւնները :

— Մտիկ կ'ընեմ :

— Այս առտու՝ ժամը տասին՝ նուագարաններ կ'ածէին իշխանուհոյն սենեակը :

— Անմեղ բան է :

— Պ. Աիշ անոր հետ միմեկուկ կ'սուէր . . . : Ա՛հ, կ'մոռնամ ըսելու քեզ որ՝ ութ օրէ վեր՝ ստուերին պէս անոր յարած է :

— Բարեկամ, եթէ չար միտք մ'ունենային պիտի պահուէին :

— Լաւ — զոչեց դուքսը — ես ալ այդ խօսքիդ կ'սպասէի : Լաւ պահէ ինչ որ այժմ ըսիր : Այս առտու ուրեմն անոնց վըրայ հասայ և իմ դժգոհութիւնս բացէ 'ի բաց յայտնեցի :

— Հաւաստի եղիր որ այդ բաւական պիտի լինի . թերևս քիչ մը ծանր է իսկ : Այս նորատի կիները շատ կասկածոտ են : Երբ իրենց չըրած յանցանքն երեսի զարնենք, ըսած կ'լինինք թէ կարող են այն յանցանքը դործել :

— Լաւ, լաւ, սպասէ : Այդ ևս միտքդ պահէ, տիկին : «Այս առտուան դասը բաւական պիտի լինէր, և եթէ գէշութիւն ընէին պիտի թաքչէին » :

— Այն, այդպէս ըսի :

— Արդ՝ յանկարծ, առաւօտեան աշխուժութիւնս դարձելով, և գիտնալով որ Աիշ իր տան մէջ տրտում ախուր կ'մնար, իշխանուհոյն սենեակը զացի : Գուշակէ թէ ինչ գտայ : Արիշ երածիշտներ, պարեր և Աիշը, զանի կ'պահէին :

Աննա թաղուհին ունքը պաւտեց :

— Անխտեմութիւն է այս — ըսաւ նա : — Ի՛նչ ըսաւ իշխանուհին :

— Ոչ ինչ :

— Հասկա Աիշ :

— Նոյնպէս . . . ո՛չ . . . քանի մը յանդուզն խօսքեր կ'մկայ :

- Ի՞նչ կ'հետևեցնես, Ֆիլիպ :
- Թէ զիս խաբեցին, թէ Պր.քինկհէմ լոկ պատրուակ մ'էք և թէ բուն յանցաւորը ՚Նիշն է :
- Աննա ուսերը բարձրացուց :
- Ապա՞ :
- Վ'ուզեմ որ՝ Պր.քինկհէմի պէս՝ ՚Նիշ իմ տունէս ելնէ, և այս բանս թաղաւորէն պիտի խնդրեմ, միայն թէ . . . :
- Միայն թէ . . . :
- Միայն թէ դու ինքնին կատարելու հաճիս այս իմ յանձնաւորութիւնս, տիկին, դու որ այնչափ մտացի և բարի ես :
- Այդ չպիտի ընեմ :
- Ի՞նչ, մայր իմ :
- Մտիկ ըրէ, Ֆիլիպ, ես ամէն օր տրամադիր չեմ մարդոց անշահ խնդիրներ ընել. ես այն երիտասարդութեան վրայ իշխանութիւն ունիմ, բայց չեմ կարող զայն 'ի գործ զնել առանց կորուսելու, ասիէ զատ՝ ապացոյց մը չկայ որ Պ. ՚Նիշ յանցաւոր լինի :
- Ինձ անհաճոյ եղաւ :
- Այդ քու գիտնալիք բանդ է :
- Լաւ, ես ալ ընելիքս գիտեմ — ըսաւ իշխանը կրի.ք :
- Աննա անոր նայեցաւ մտատանջ :
- Եւ ի՞նչ պիտի ընես — ըսաւ նա :
- Իմ աւագանիս մէջ զանի պիտի խղզեմ առաջին անգամ որ զանի իմ տունս տեսնեմ :
- Եւ՝ այս վայրագ խօսքն ըսելէն ետեւ՝ իշխանը սպասեց թէ ահ պիտի ներդործէ : բայց թաղուհին անդրդուելի մնաց :
- Ի՞նչ որ կ'ուզես ըրէ — ըսաւ նա :
- Ֆիլիպ՝ կնկան մը պէս՝ տկար էր, սկսաւ ոռնալ :
- Զիս կ'մատնեն, ոչ ոք կ'սիրէ զիս. ահա մայրս ալ որ թշնամեաց կողմը կ'անցնի :
- Մայրդ քեզնէ հեռու կ'տեսնէ այն գործին մէջ և քեզ խրատելու անխոյթ կ'կենայ, քանի որ անոր ականջ չես կախեր :
- Թագաւորին պիտի երթամ :

- Ես ալ այդ պիտի առաջարկէի քեզ : Նորին Աւհափառութեան կ'սպասեմ այս տեղ, իր այցելութեան ժամն է. իրարու հետ խօսեցէք :
- Գեռ ևս խօսքը չէր լմնցուցած՝ երբ Ֆիլիպ նախասենեկին դրան բացուելը լսեց գորդմամբ :
- Աւախը բռնեց զինքը. թաղաւորին քայլափոխը՝ որու ներբաններն օթոցին վրայ կ'ձայնէին, ամենուն յայտնի էր :
- Գուքը փոքրիկ դռնէ մը փախաւ՝ թաղուհին իր եղբոր հետ թողլով որ խօսքը բանայ :
- Աննա թաղուհին սկսաւ ծիծաղել, և տակաւին կ'ծիծաղէր երբ թագաւորը ներս մտաւ :
- Թագաւորը՝ սիրաւէտ կերպով մը մայր թաղուհւոյն առողջութեան վրայ լուր առնլու կ'դար, վասն զի արդէն երերուն էր այն : Վ'դար նաև յայտնելու որ Ֆօնդէնայլօնի ուղևորութեան համար բոլոր պատրաստութիւններն աւարտած են :
- Թագաւորը տեսնելով որ մայրը կ'ծիծաղէր, իր անհանգստութիւնը նուազեցաւ, և ինք հարցում ըրաւ խնդալով :
- Աննա թաղուհին անոր ձեռքը բռնեց և խնդագին ձայնով մը ըսաւ .
- Գիտես որ սպանիացի լինելուս կ'պարծիմ :
- Ինչո՞ւ համար, տիկին :
- Վասն զի Սպանուհիք գէթ աւելի կ'աժեն՝ քան անկլուհիք :
- Միտքդ բացատրէ :
- Ամուսնանալէդ 'ի վեր՝ թաղուհւոյն յանդիմանութիւն մը անգամ ընելու առիթ չունիս :
- Արդարև, չունիմ :
- Ահա արդէն բաւական ատեն կայ որ կարգուեր էս : Ընդհակառակն՝ եղբայրդ տասն հինգ օրէ վեր կարգուեր է . . . :
- Լաւ, ի՞նչ կայ :
- Եւ երկրորդ անգամ է որ իր կնոջմէ կ'զանգատի :
- Ի՞նչ, միթէ նորէն Պր.քինկհէմն է :
- Ո՛չ, ուրիշ մը :
- Ո՛վ :

- Կիշ :
- Ա՛Տ, զարմանք, ուրեմն իշխանուհին պչրուհի մ'է :
- Կ'վախնամ որ է :
- Իմ խեղճ եղբայրս — ըսաւ թագաւորը խնդալով :
- Պչրասիրութեան ներողամիտ կ'երևիս ինչպէս որ կ'տեսնեմ :
- Իշխանուհւոյն, այո՛ . իշխանուհին իրօք պչրուհի չէ :
- Լաւ, բայց եղբայրդ պիտի խնդանայ :
- Ի՞նչ կ'ուզէ :
- Կ'ուզէ Կիշը խեղդել տալ :
- Այդ բունն միջոց է :
- Մի խնդար, զայրացած է շատ : Միջոց մը դտիր :
- Կիշն ազատելու համար, յօժարակամ :
- Ո՛Տ, թէ որ երջայրդ քեզ լսէր, քեզի դէմ պիտի դաւադրէր ինչպէս որ հօրեղբայրդ կ'ընէր երբեմն քու թագաւոր հօրդ դէմ :
- Ո՛չ : Ֆիլեպ շատ կ'սիրէ զիս և ես ալ իմ կողմէս զանի շատ կ'սիրեմ, իբրև լաւ բարեկամներ կ'ապրինք : Ի՞նչ է խնդրոյն ողին :
- Այս է թէ արդիլես իշխանուհին պչրասէր և Կիշն ալ սիրալիւր լինելէն :
- Այդ է միայն խնդիրը : Եղբայրս արքայական իշխանութեան վրայ շատ մեծ գաղափար մ'ունի . . . կին մ'ուղղել : Գէթ մարդ լինէր, ինչ և է :
- Ի՞նչ միջոց պիտի գործածես :
- Կիշն խօսք մը միայն ըսելով պիտի համոզեմ, մտացի տղայ մ'է :
- Հասցա իշխանուհին :
- Աւելի գծուար է, բառ մը չբաւեր . քարոզ մը պիտի շինեմ և պիտի քարոզեմ :
- Այդ ստիպողական է :
- Ո՛Տ, որչափ կարելի է շուտ պիտի գործեմ : Ճաշէն ետք՝ պարեկի կրկնութիւն ունինք :
- Պարելով ատեն պիտի քարոզես :

- Այո՛, տիկին :
- Միթէ կ'խոստանան դարձը գործելու :
- Համոզմամբ կամ կրակով պիտի ջնջեմ հերետիկոսութիւնը :
- Քաջ է : Ձիս այս բաներուն մէջ մի խառներ . իշխանուհին բնաւ չպիտի ներէ ինձ, և ըստ որում զոքանչ եմ, պէտք է որ հաշտ ապրիմ իմ հարսիս հետ :
- Տիկին, ես ինքս թագաւոր ամէն ինչ վրաս պիտի առնում : Կեցիր, կ'մտածեմ :
- Ի՞նչ բան :
- Կարելի է լաւազոյն կ'լինէր եթէ իշխանուհին իր սենեակը դնայի տեսնելու :
- Այդ փոքր ինչ հանդիսաւոր պիտի թուի :
- Այո՛, բայց հանդիսաւորութիւնը քարոզիչներուն կ'վայլէ, և այս ևս կայ որ ջութակին ձայնն իմ փաստերուս կէսը թերեւս ուտէր : Ասկէ զատ՝ հարկ է իմ եղբորս բունութեան մէկ գործն արդիլել . . . աւելի լաւ է փոքր ինչ շտապիլ . . . իշխանուհին միթէ իր սենեակն է :
- Կարծեմ :
- Ինքրեմ դանդառներն ինչ են բացատրէիր :
- Երկու խօսքով ըսեմ, աւասիկ . մշտտեւ երաժշտութիւն . . . Կիշին անձանձիր այցելութիւնը . . . պահուրստքի և դաւադրութեան կասկածներ :
- Ապացոյցները :
- Չկան :
- Լաւ, իշխանուհւոյն քովը կ'երթամ :
- Եւ թագաւորը սկսաւ հայլիներուն մէջ նայել իր զարդարանքն որ հարուստ էր և իր դէմքն որ իր անդամանդներուն պէս կ'փայլէր :
- Եղբայրս քիչ մը հեռու կենալ պէտք է — ըսաւ նա :
- Ո՛Տ, կրակն ու ջուրն այսչափ կատաղութեամբ իրարմէ չեն խոյս տար :
- Բաւական է : Մայր իմ, ձեռքդ կ'համբուրեմ . . . Քրանսայի ամենէն զեղեցիկ ձեռքը :

— Յաջողելու նայէ, Վեհափառ . . . ընտանեացս խողազարարն եղիւր :

— Գեասպան չեմ գործածեր — պատասխանեց Լուի : — Ըսել է թէ պիտի յաջողիմ :

Ինդալով դուրս ելաւ և ճամբուն վրայ շարունակ իր զգեստուց փոշին մաքրեց հոգատարութեամբ :

ԺԵ

ՄԻՋՆՈՐԳ

Երբ թաղաւորն իշխանուհւոյն սենեակն երեցաւ, բոլոր պաշտակարաններն որ ամուսնական կուռոյ մը պատճառաւ սենեակներուն բոլորտիքը ցրուեր էին, սկսան ծանր մտատանջութեան մէջ ընկղմիլ :

Այս կողմէն ալ փոթորիկ մը կ'պատրաստուէր որու տարրները խնդութեամբ կ'քննէր Լօրէն ասպետը ախումբներու մէջ կեցած, տկար իրերը խոշորցնելով և իր չարանենդ խորհրդոց համեմատ 'ի գործ ածելով զօրաւորները, որպէս զի կարելի եղածին չափ չարաղէտ հետեանքներ առաջ գան :

Ինչպէս որ Աննա թաղուհին յայտներ էր՝ թաղաւորին ներկայութիւնն այս գէպքին հանդիսաւոր բնութիւն մը տուաւ :

1662ին թեթև գործ մը չէր Օրլէանի գքսին գժգոհութիւնն իր իշխանուհի կնկան դէմ, և թաղաւորին միջամտութիւնն իր եղբորն առ տնին գործոց մէջ :

Ուստի տեսնուեցաւ որ Վիշ կոմսը շրջապատող ամենէն համարձակ բարեկամները նոյն հետայն իրմէ հեռացան տեսակ մը երկիւղով, և նոյն խի կոմսը, ընդհանուր արհաւիրքէն համակեալ միայնակ տունը քաշուեցաւ :

Թաղաւորն իշխանուհւոյն սենեակը մտաւ ողջունելով, ինչպէս որ սովոր էր միշտ ընելու : Պատուոյ կիներն արտաքին սրահին մէջ երկուստեք միաշար կեցեր էին :

Որչափ որ 'սորին Վեհափառութիւնը սաստիկ մտահոգ էր, վարպետի նայուածք մը ձգեց այն նորատի և երկշար կանանց կարգին, որոնք համեստութեամբ իրենց աչքը կ'դոցէին :

Ամենքը կարմրեցած էին թագաւորին նայուածքն իրենց վրայ զդալով : Մէկը միայն, որու երկայն մազերը՝ մտաբսի գանդուր ներու պէս՝ ամենազեղեցիկ կաշին վրայ կ'փայլէին, մէկը միայն գունատ էր և հազիւ ուրեմն ինքզինքը կ'բռնէր, իր ընկերուհւոյն արմկի հարուածներուն անմտագիր :

Այս էր Լա Վալիէր՝ որու նեցուկ կ'կենար Մօնդալէ՝ մեղմիկ յորդորելով որ քաջութիւն զղենու, քաջութիւն որ ինք լիապէս սունէր :

Թագաւորն ահամայ զլուխը դարձուց. բոլոր ճակատներն որ արդէն վեր ելեր էին, վերստին ծռեցան. բայց դեղձան զլուխը միայն անշարժ մնաց, այնպէս թէ բոլորովին սպառած լինէր իր օյժն ու միտքը :

Երբ իշխանուհւոյն սենեակը մտաւ՝ Լուի իր հարսը դահլճին բարձեբուն վրայ կէս մը պառկած գտաւ : Իշխանուհին ոտք ելաւ և խորին խոնարհութիւն մ'ըբաւ իր ընդունած պատուոյն վրայ քանի մը շնորհակալութեան խօսքեր կ'մկմալով :

Յետոյ վերստին նստաւ, տկարութեան ընկճեալ՝ անշուշտ փոքր ինչ այլայլելով, վասն զի սիրուն կարմրութիւն մ'իւր այտերը կը գունաւորէր, և իր աչքերը՝ որ նոր թափուած արտաքէ գեռ ևս կարմրեր էին, աւելի ևս հուր ունէին :

Երբ որ թաղաւորը նստաւ և դիտեց իրեն յատկանիշ եղող սուր գիտողութեամբ սենեակին անկարգութիւնն և իշխանուհւոյն դէմքին ոչ նուաղ այլայլութիւնը, զուարթագին կերպարան մ'առաւ :

— Քոյր իմ — ըսաւ — ժամը քանիին կ'հաճիս որ այսօրուան պարեկը կրկնենք :

Իշխանուհին թեթև և մեղկ կերպով իր չքնաղ զլուխը վերցնելով,

— Ա՛հ, Վեհափառ տէր, շնորհ ըրէք ինձ զանց ընել այդ կրկնութիւնը, ես ալ Ձեր Վեհափառութեան իմաց սլիտի տայի որ այսօր չեմ կարող ներկայ գտնուիլ :

— Ինչպէս — ըսաւ թաղաւորը չափաւոր զարմանքով մը — քոյր իմ, միթէ անհանգիստ ես :

— Այո՛, Վեհափառ ։
 — Ուրեմն երթամ բժիշկներդ բերել տամ ։
 — Ո՛չ, վասն զի բժիշկները չեն կարող իմ ցաւս դարմանել ։
 — Դողս կ'հանես ։
 — Վեհափառ, ձեզնէ պիտի խնդրեմ թոյլ տալ ինձ Անկլիա վերադառնալու ։
 Թագաւորը շարժում մ'ըրաւ ։
 — Անկլիա՛ : Միթէ իրօք կ'ըսես ինչ որ ըսիր, իշխանուհի ։
 — Վեհափառ, ահամայ կամօք կ'ըսեմ — պատասխանեց Հանրի Դի թող Տաստատամութեամբ ։
 Եւ նոյն միջոցին իր սև ահունքը փայլեցուց ։
 — Այո՛, կ'ցաւիմ Ձեր Վեհափառութեան այսպէս սիրաս բանալուս վրայ . բայց ձեր արքունեաց մէջ շատ դժբաղդ եմ ես, ընտանեացս մօտ դառնալ կ'ուզեմ ։
 — Իշխանուհի՛, իշխանուհի՛ ։
 Եւ թագաւորը մօտեցաւ ։
 — Մտիկ ըրէք ինձ, Վեհափառ — շարունակեց նորատի կինն իր խօսակցին վրայ առնլով այն իշխանութիւնը զոր իր գեղեցկութիւնն ու ջլուա բնութիւնն իրեն կ'տային — ես տառապելու սովորած եմ ։ Երբ դեռ պղախի էի, նուաստացած, արհամարհուած եմ ։ Ո՛հ, սուտ մի հանէք զիս — ըսաւ նա ժպտով մը ։
 Թագաւորը կարմրեցաւ ։
 — Այն ասեմ, կ'ըսեմ, կարծեցի որ Աստուած զիս ասոր համար ստեղծեր է, ես որ հզօր թագաւորի մը դուստրն էի . բայց որովհետեւ իմ հօրս կեանքը զարկեր էր, կարող էր յիս գոռոզութիւնս պատժել ։ Շատ տառապանք կրեցի, իմ մայրս շատ տառապեցուցի, բայց երբում ըրի որ՝ եթէ երբեք Աստուած ինձ անկախ դիրք մը շնորհէր, եթէ այս վիճակը նոյն իսկ ժողովրդեան գործաւորուհւոյն վիճակն իսկ լինէր, որ իր աշխատութեամբն օրապահիկը կ'շահի, ամենէն թեթև նուաստութեան չպիտի հանդուրժէի ։ Այս օրն հասաւ . իմ աստիճանին և ծննդեանս վայելքաղլը դտայ, մինչև գահուն աստիճաններն ելայ, կարծեցի թէ զաղղեացի իշխանի մը միանալով, անով ազդակիւն մը, բարեկամ

մը, հաւասարակից մը պիտի գտնեմ . բայց կ'նայիմ այժմ որ մինակ տէր մը դտայ, և կ'ընդվիզիմ, Վեհափառ տէր իմ ։ Մայրս չպիտի իմանայ այս բանս . իսկ ձեզ զոր կ'յարդեմ և կը . . . սիրեմ . . . ։
 Թագաւորը դողդողաց . երբեք ձայն մ'այսպէս չէր խողտած իր ահանջը ։
 — Դուք, կ'ըսեմ, Վեհափառ տէր, դուք որ ամէն բան զիտէք, քանի որ աստ կ'դաք, թերևս զիս հասկընաք ։ Եթէ դուք առ իս չդայիք, ես առ ձեզ պիտի դայի ։ Ազատօրէն մեկնելու հրամանը կ'խնդրեմ ։ Ձեր փափկասրտութեան, ձեզի, իբրև գերազանց մարդու կ'թողում զիս արդարացնելու և պաշտպանելու գործը ։
 — Քոյր իմ, քոյր իմ — մըմուաց թագաւորն այս ծանր յարձակմանէ ընկճեալ — միթէ լաւ խորհեցա՞ր թէ ինչ ահադին դժուարութիւններ կան այդ դիտաւորութեան կատարման մասին ։
 — Վեհափառ տէր, ես չեմ խորհիր, այլ կ'զղամ ։ Յարձաձակում կրելուս, բնազդումով յարձակումը կ'վանեմ, և ուրիշ բան մը չեմ ըներ ։
 — Բայց նայինք, ի՞նչ ըրին քեզի ։
 Ինչպէս որ կ'տեսնուի՝ իշխանուհին կանանց յատուկ այս հնարքով ամէն յանդիմանութեան առաջն առնլու և ինքն իր կողմէ ծանրագոյն յանդիմանութիւն մ'ընելու յաջողեր էր . մինչդեռ ամբաստանեալ, ամբաստան կ'դառնար ։ Յանցաւորութեան անվրիպելի նշան մ'է . բայց այս ահներև չարիքէն կանայք, նոյն իսկ ամենէն նուաղ յաջողակները, միշտ օգուտ քաղել զիտեն յաղթելու համար ։
 Թագաւորը չզիտեց որ իշխանուհւոյն քովն եկեր էր անոր ըսելու համար .
 — Ի՞նչ ըրիր իմ եղբորս ։
 Եւ կ'ստիպուէր ըսելու .
 — Քեզի ի՞նչ ըրին ։
 — Ի՞նչ ըրին ինձի, կ'հարցնէք — պատասխանեց իշխանուհին ։ — Ո՛հ, կին պէտք է լինիլ հասկընալու համար, Վեհափառ տէր . զիս լացնել տուին ։

Եւ մատով մ'որու նմանը չունէր նրբութեան և զաղտակրէ սպիտակութեան կողմէ, իշխանուհին փալփլուն և արտասուալի աչունքը կ'ցուցնէր և լալու կ'սկսէր :

— Քոյր իմ, կ'պաղատիմ — ըսաւ թաղաւորը յառաջ քալելով անոր մէկ ձեռնը բռնելու որ անփայլ էր և գողգոջուն :

— Ահա փան, ամենէն առաջ իմ եղբորս մէկ բարեկամին ներկայութենէ զրկեցին զիս : Միւրորտ Պր. քինկհէմ ինձի համար ակործելի, զուարթ հիւր մ'էր, հայրենակց մ'էր որ իմ սովորութիւններս կ'ճանչէր, կրնամ ըսել զրեթէ որ ընկեր մը, վասն զի շատ օրեր միասին անցուցինք մեր միւս բարեկամաց հետ Սէնդ-ճէմնի աղւոր ջրերուն վրայ :

— Բայց, քոյր իմ, Ա. իլիէ քեզի սիրահարած էր :

— Պատճառանք : Ի՞նչ կ'լինի — ըսաւ նա ծանրօրէն — որ Պր. քինկհէմ ինձ սիրահարած եղեր է թէ ոչ : Միթէ վասն-դառն է ինձի համար սիրահար մարդ մը . . . : Ա՛հ, Ահա-փառ, բաւական չէ որ մարդ մ'ուրիշ մը սիրէ :

Եւ այնչափ զորովազին և նրբին կերպով մը ժպտաց որ թաղաւորն զգաց իր սրտին բախումն ու նուաղումը :

— Աւերջապէս, եթէ եղբայրս նախանձոս էր — ընդհատեց թաղաւորը :

— Լա՛ւ, կ'հաւանիմ, ահա պատճառ մը, և Պր. քինկհէմ մը վա՛նտեցին :

— Ա՛նտեցին . . . ո՛չ, ո՛չ :

— Արտաքոսեցին, դուրս հանեցին, ճամբեցին, ինչպէս որ կը հաճիք, ըսէք, Ահա փառ . . . Եւ բոսպոյի առաջին ազատորդներէն մին ստիպուեցաւ Ֆրանսայի թաղաւորին, Լուի Թ. Գի արքունիքէն հեռանալ իբրև զեղջուկ մը՝ ակնարկի մը կամ փունջի մը պատճառաւ : Այդ բանն ամենէն մարդավար պալատին համար անվայել է . . . : Ներքեք, Ահա փառ, այսպէս խօսելով մոռցայ որ ձեր վեհապետական իշխանութեան դէմ կ'շարժիմ :

— Իրա ի, ո՛չ, քոյր իմ, ես չեղայ Պր. քինկհէմը ճամբողը . . . : Շատ հաճելի էր ինձ :

— Դո՛ք չ'իք — ըսաւ իշխանուհին ճարպիկութեամբ : — Ա՛հ, աւելի աղէկ :

Եւ այս առէլէ առէլն այնպէս շեշտեց որպէս թէ այս խօսքին տեղ առէլէ գէշ խօսքն արտասանած լինէր :

Եւ քանի մը վայրկեան լուռ թիւն տիրեց :

Ապա յարեց .

— Պր. քինկհէմ գնալէն ետե . . . և զիտեմ այժմ թէ ինչն է համար և որու կողմէ . . . կարծէի թէ անդորրութիւն պիտի գտնէի . . . ամենեին . . . : Ահա ձեր արքայազուն եղբայրն ուրիշ պատճառանք կ'գտնէ, ահա որ . . . :

— Ահա — ըսաւ թաղաւորը զուարթազին — յանկարծ ուրիշ մը կ'ներկայանայ : Եւ այս բնական է, տիկին, պեղանի ես, քեզի միշտ պիտի սիրեն :

— Այն ատեն — զոչեց իշխանուհին — չորս կողմն անապատ պիտի դարձնեն : Ա՛հ, ճիշտ այս կ'ուզեն, ճիշտ այս բանս կը պատրաստեն, բայց՝ ո՛չ, լաւ ևս ունիմ Լոնտոն դառնալու : Այն տեղ զիս կ'ճանչեն, զիս կ'գնահատեն : Պիտի ունենամ բարեկամներ առանց երկիւղի որ սիրահարներ կոչելու յանդգին : Ա՛՛՛՛, այս անարժան կասկած մ'է, մանաւանդ ազատորդոյ մը կողմէ : Ա՛հ, եղբայրդ ամեն համարումն կորոյս զինքը տեսնելէս վեր, քանի որ ինձ ծանօթացաւ իբրև կնկան մը բռնաւորը :

— Է՛յ, է՛յ, իմ եղբայրս քեզ սիրելուն համար միայն յանցաւոր է :

— Զիս կ'սիրէ, եղբայրդ զիս կ'սիրէ : Ա՛հ, Ահա փառ . . . :

Եւ իշխանուհին քահ քահ խնդաց :

— Եղբայրդ երբէք կին մը չպիտի սիրէ — ըսաւ նա : — Եղբայրդ ինքզինքը չափազանց կ'սիրէ, ո՛չ, իմ սե բաղդէս եղբայրդ նախանձոտներու յոռի տեսակէն է, առանց սիրոյ նախանձոտ :

— Խոստովանէ սակայն — ըսաւ թաղաւորը, որ կ'սկսէր վառել այս այլազան, հրատապ խօսակցութենէ — խոստովանէ որ ի՛շ քեզ կ'սիրէ :

— Ա՛հ, Ահա փառ տէր, այդ չգիտեմ :

— Բայց պէտք է որ տեսնես : Սիրող մարդն ինքզինքը կը մասնէ :

— Պր. ի՛շ ինքզինքը չմասնեց :

— Բոյր իմ, քոյր իմ, Պ. Կիշը կ'պաշտպանես:

— Ե՛ս, աղւոր խօսք, ե՛ս, ո՛հ, Աւեհափառ, իմ դժբաղդու թեանս ձեր կողմէն կասկած մը պակաս էր:

— Ո՛չ, իշխանուհիս, ո՛չ — վրայ բերաւ թաղաւորն աշխուժիլ — մի վշտանար: Ո՛հ, կ'լաս: Ա՛պաղատիմ քեզ, հանդարտէ:

Եւ սակայն նա կ'արտասուէր, իր ձեռաց վրայ խոշոր արասօրներ կ'հոսէին: Թաղաւորն անոր մէկ ձեռնը բռնեց և անոր արտասուքէն մին ըմպեց:

Իշխանուհին այնպէս տխուր և դորովազին նայեցաւ թաղաւորին, որ անոր սիրտը խորտակեց:

— Միթէ Կիշի համար բան մը չունին — ըսաւ նա այնպէս մտայոյղ որ իր միջնորդի պաշտօնին չէր յարմարեր:

— Բայց ո՛չ ինչ, ոչ ինչ չունիմ:

— Ուրեմն կրնամ եղբայրս ապահովել այս մասին:

— Է՛հ, Աւեհափառ, ոչ ինչ չկրնար զանի ապահովել: Մի կարծեք բնաւ որ նա նախանձու է: Եղբայրդ դէշ խորհուրդներ առաւ, և եղբայրդ անհանդարտ բնաւորութիւն մ'ունի:

— Անհանդարտ կրնայ լինիլ մարդ քեզի համար:

Իշխանուհին աչերը վար առաւ և լուեց: Թաղաւորն ալ անոր պէս ըրաւ: Գեռ ևս անոր ձեռքը բռնած էր:

Այս մէկ վայրկեանի լուութիւնը դար մը տևեց:

Իշխանուհին իր ձեռքն ուշիկ քաշեց: Այնուհետև յաղթանաւ կին վրայ վատահ էր: Պատերազմի դաշտն իրն էր:

— Եղբայրս կ'անդատի — ըսաւ թաղաւորը վեհերտութեամբ — որ իր խօսակցութեան, իր ընկերութեան նախադաս կ'համարիս մասնաւոր ընկերութիւններ:

— Աւեհափառ, եղբայրդ իր կեանքը կ'անցընէ հայլի մէջ իր դէմքը նայելով, և չարութիւններ նիւթելով կանանց դէմ Լօրէն պատերազմին հետ:

— Ո՛հ, քիչ մը հեռու կ'երթաս:

— Իրօք եղածը կ'ըսեմ: Գիտեցէք և պիտի տեսնէք, Աւեհափառ, եթէ իրաւունք ունիմ:

— Պիտի դիտեմ: Բայց առ այժմ, ինչ հատուցում տալ պէտք է եղբորս:

— Իմ չուս:

— Միթէ այդ խօսքը կ'կրկնես — դոչեց թաղաւորն անխոհեմութեամբ, որպէս թէ տաս վայրկեանէ վեր այնպիսի փոփոխութիւն մը տեղի ունեցած լինէր՝ որ իշխանուհոյն բոլոր գաղափարներն ասով յեղաշրջած լինէին:

— Աւեհափառ, այլ ևս չեմ կրնար այս տեղ երջանիկ լինիլ — ըսաւ նա — Պ. Կիշ եղբայրդ կ'ներդէ: Միթէ զանի ալ պիտի ճամբես:

— Եթէ պէտք լինի, ինչո՞ւ չճամբես — պատասխանեց Լուի ԺԳ ժպտելով:

— Լաւ ուրեմն, Պ. Կիշէն ետք . . . որու վրայ պիտի ցախիմ, Աւեհափառ, և այժմէն իմաց կ'տամ:

— Ա՛հ, անոր վրայ պիտի ցախիս:

— Անշուշտ, սիրալիւր է, ինձի համար բարեկամութիւն կ'տածէ, զիս կ'սփոփէ:

— Ա՛հ, թէ որ եղբայրս ըսածդ լսէր — ըսաւ թաղաւորը դժարելով: — Գիտես արդեօք որ չպիտի յանձն առնում ձեզ հաշտեցնելու պաշտօնը, և ոչ իսկ այս բանս պիտի փորձեմ:

— Աւեհափառ, այս սրահուս, կրնաք արդիւրեւ եղբայրդ որ որ և է մէկու մը վրայ չնախանձի: Գիտեմ որ Պ. Կիշ անձանթ մէկը չէ:

— Նորէն. քեզի իմաց կ'տամ որ իբրև լաւ եղբայր Պ. Կիշն ատելու պիտի սկսիմ:

— Ա՛հ, Աւեհափառ տեր, եղբորդ ո՛չ համակրութիւններն առեք և ոչ ատելութիւնները, կ'աղաչեմ: Միշտ թաղաւոր եղեք, այս լաւ ևս պիտի լինի ձեզի և ամենուն համար:

— Գու պաշտելի հեղնաբան մ'ես, տիկին, և կ'իմանամ որ նոյն իսկ հեղնած անձինքդ ինչո՞ւ համար քեզ կ'պաշտես:

— Եւ ահա ինչո՞ւ համար, Աւեհափառ. դուք զոր իբրև պաշտպանս պիտի բռնէի, դուք պիտի այժմ երթաք միանալու զիս հալածողներուն — ըսաւ իշխանուհին:

— Ե՛ս, քու հաղածիչդ լինիմ, Աստուած չընէ:

— Այն ատեն — շարունակեց նա թոյլօրէն — խնդիրս կատարեցէք:

- Ի՞նչ կ'ինդրես :
- Անկլիա դառնալ :
- Ո՛հ , այդ բանին երբէք , երբէք չպիտի հաւանիմ — դու՛նց
- Լուի ԺԳ :
- Ուրեմն կալանաւորուհի մ'եմ :
- Քրանսայի մէջ , այո՛ :
- Ուրեմն ի՞նչ պարտիմ ընել :
- Է՛յ լաւ , քոյր իմ , հիմակ պիտի ըսեմ քեզի :
- Չե՛ր Աւեհափառութեան կ'սպասեմ իբրև խոնարհ սպասուհի :
- Փոխանակ փոքր ինչ անվայել մտերմութիւններու ինքզինքդ տալու , փոխանակ առանձնութեամբդ մեզ վրդովելու , միշտ մեզի երեցիր , մեզնէ մի հեռանար , միասին ընտանեօք ապրինք : Արդարև Պ. Կիշ սիրուն տղայ մ'է , բայց , վերջապէս՝ եթէ անոր միտքը չունինք . . . :
- Ո՛հ , Աւեհափառ , քաջ դիտէք որ համեստութիւն կ'դասէք :
- Ո՛չ , կ'երզնում քեզի : Մարդ կրնայ թագաւոր լինիլ և զգալ որ հաճելի լինելու համար այնչափ հրապոյրներ չունի որչափ այս կամ այն ազատորդին :
- Կ'երզնում որ այդ ձեր ըսած խօսքերուն և ոչ մէկ բառին կ'հատար , Աւեհափառ :
- Թագաւորն իշխանուհւոյն նայեցաւ դորովազին :
- Ինձի բան մը խոստանալ կ'ուզես — ըսաւ անոր :
- Ի՞նչ բան :
- Այս է թէ օտարներու հետ չկորուսնես այն ժամանակդ զոր մեզի պարտաւոր ես : Կ'ուզես որ թշնամոյն դէմ յարձակողական և պաշտպանողական դաշնակցութիւն մ'ընենք :
- Չեզի՞ հետ դաշնակցութիւն ընենք , տէր իմ :
- Ինչու՞ չէ : Միթէ իշխանութիւն մը չես :
- Բայց դուք , Աւեհափառ , միթէ հաւատարիմ դաշնակից մ'էք :
- Պիտի տեսնես , աիկին :
- Եւ ո՞ր օրէն պիտի սկսի այս դաշնադրութիւնը :
- Այս օրէն :

- Գաշնազիրը խմբադրեմ :
- Շատ լաւ :
- Եւ պիտի ստորագրէք :
- Կուրօրէն :
- Ո՛հ , այն ատեն , Աւեհափառ , ձեզի սքանչելիք կ'խոստանամ . դուք արքունեաց աստղն էք , երբ որ երևիք . . . :
- Ապա՞ :
- Ամէն ինչ պիտի շողշողայ :
- Ո՛հ , աիկին , աիկին — ըսաւ Լուի ԺԳ — քաջ դիտես որ ամէն լոյս քեզնէ կ'գայ , և եթէ արևը կ'առնում իբրև նշանաբան , այս միայն նշանակ մ'է :
- Աւեհափառ , ձեր դաշնակցուհին կ'զոհէք , ուրեմն , կ'ուզէք զանի խաբել — ըսաւ իշխանուհին իր ըմբոստ մատովը թագաւորին սպառնալով :
- Ի՞նչպէս , կ'կարծես թէ քեզ կ'խաբեմ , երբ որ իմ սիրոյս վրայ կ'ապահովեմ քեզ :
- Այո՛ :
- Եւ ո՞վ կ'ստիպածել կ'տայ քեզ :
- Բան մը :
- Բան մը միայն :
- Այո՛ :
- Ի՞նչ բան : Շատ դժբաղդ պիտի լինիմ եթէ բանի մը վերայ չյաղթանակեմ :
- Այդ բանը ձեր իշխանութենէ վեր է , Աւեհափառ , և նոյն իսկ Աստուծոյն :
- Եւ ի՞նչ է այդ բանը :
- Անյեալը :
- Տիկին , չեմ իմանար միտքդ — ըսաւ թագաւորը , ճիշտ անոր համար որ շատ լաւ իմացեր էր :
- Իշխանուհին անոր ձեռքը բռնեց :
- Աւեհափառ — ըսաւ անոր — այնչափ երկար ատեն ձեզի անհաճոյ լինելու դժբաղդութիւնն ունեցայ որ իրաւունք ստացայ իւրովի հարցնել թէ ինչպէս իբրև հարս ընդունեցաք զես :

— Ինձ անհաճոյ եղա՛ր, դո՛ւ :

— Օ՛ն, մի՛ ուրանաք :

— Ներէ՛ ինձ :

— Ո՛չ, ո՛չ, կ'իշխեմ :

— Մեր դաշնադրութեան թուականն այսօրուրն է կ'սկսի — դո՛ւ չեց թաղաւորն այնպիսի ջերմութեամբ մ'որ շինծու չէր : — Ուրեմն անցեալը չես յիշեր, և ոչ իսկ ես, բայց ներկան կ'իշխեմ : Իմ աչաց առջևն ունիմ, աւասիկ, նայեցէք :

Եւ իշխանուհին հայլի մ'առջև տարաւ, ուր իր դէմքը նաշեցաւ կարմրուն և գեղանի, այնչափ որ կարող է սուրբ մ'անդամ նուաճել :

— Հոգս չէ — մըմուաց նա — այս դաշնադրութիւնն արիական գաշնադրութիւն մը չպիտի լինի :

— Պէտք է երդնուլ — հարցոյ թաղաւորը, այս խօսակցութեան առած հեշտալի դարձուածքին վրայ զմայելով :

— Ո՛չ, լաւ երդում մը չեմ մերժեր — ըսաւ իշխանուհին :

— Միշտ ապահովութեան երևոյթ մ'է :

Թագաւորը ծունըր դրաւ աթուակի մը վրայ և իշխանուհւոյն ձեռքն առաւ :

Իշխանուհին՝ ժպիտով մը զոր սրտիկերհան մը չէր կրնար նկարել և բանաստեղծ մը միայն կարող էր երևակայել, իր երկու ձեռքն անոր սուաւ որոց մէջ իր հրատապ ձակատը պահեց :

Ո՛չ մին և ոչ միւսը բառ մը չգտան ըսելու :

Թագաւորն զգաց որ իշխանուհին իր ձեռքը կ'քաշէր այտերը շոյելով :

Իսկոյն ոտք ելաւ և սենեկէն դուրս փութաց :

Պաշտականներն անոր կարմրութիւնը դիտեցին և սա հետեցուցին թէ տեսարանը փոթորկալից եղեր էր :

Բայց Լօրէն ասպետը փութաց ըսելու .

— Ո՛չ, ո՛չ, պարոններ, անհոգ եղիք : Երբ նորին վեհափառութիւնը բարկանայ, կ'զուճատի :

Եւ իշխանուհին զաւով, դիւրին է բացատրել իր հակումն առ թաղաւորն . վասն զի նորասի էր, պշտատէր և եռանդուն՝ քանչաքում ներշնչելու համար :

ԺԶ

ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐ

Թագաւորն այնպիսի յուզման մէջ թողուց իշխանուհին որ նոյն ինքն անկարող եղաւ բացատրելու :

Արդարեւ անկարելի է այս տարօրինակ համակրութեանց զաղտնի շարժառիթը բացատրել, որոնք յանկարծ և առանց պատճառի կ'վառին երկայն տարիներ մեծ հանդարտութեան և մեծազոյն անտարբերութեան մէջ իրար սիրելու սահմանաւած երկու սիրտեր անցնելէն ետեւ :

Ինչո՞ւ համար Լուի երբեմն արհամարհեր դրեթէ ատեր էր իշխանուհին : Ինչու համար այժմ այնչափ գեղանի և ցանկալի կ'դատէր այս կինը, և ինչո՞ւ համար ոչ միայն անոր հօը կ'տանէր, այլ և անով կ'զբաղէր : Ինչո՞ւ համար վերջապէս իշխանուհին, որաւ աչքն ու մտքն ուրիշ կողմէ հրապուրուեր էին, ութօրէ վեր՝ թագաւորին համար տեսակ մը երևոյթական շնորհունէր որ աւելի կատարեալ մտերմութեանց հատացնել կ'տար :

Պէտք չէ կարծել որ Լուի հրապուրելու յատուկ յատակադիծ մը շիներ էր իւրովի . իշխանուհին իր եղբորը կապող զօրն անանցանելի պատնէշ մ'էր կամ գեթ իրեն այնպէս կ'երևէր : Գարձեալ այս պատնէշէն այնքան հեռու էր որ և ոչ իսկ անոր դոյութիւնը կ'տեսնէր : Բայց այն կրից զառ ՚ի թափին վրայ որով սիրտը կ'հրձուի, որու կողմը կ'մղէ մեզ երիտասարդութիւնը, ոչ ոք կրնայ ըսել թէ ուր պիտի կայ առնու, և ոչ իսկ այն մարդը որ կանխաւ հաշուած է յաջողութեան կամ անկման բոլոր պարագաները :

Իսկ իշխանուհւոյն դաւով, դիւրին է բացատրել իր հակումն առ թաղաւորն . վասն զի նորասի էր, պշտատէր և եռանդուն՝ քանչաքում ներշնչելու համար :

Այն անդուստի խանդով լի բնութիւններէն էր որ, թատրի մը վրայ, հրաշքի հնոցներէ կրնան ոստնուլ որպէս զի հանդիսականներէ ծափահարութեան աղաղակ մը գրաւեն:

Ուրեմն զարմանք չէր որ՝ յառաջադիմութիւնը պահելով իշխանութիւն՝ Պր. քինկհէմի, Աիշլի կողմէ պատուելէ ետեւ, որ Պր. քինկհէմէ դեր ՚ի վեր էր, և ոչ ուրիշ պատճառաւ, եթէ ոչ կանանց ամենէն աւելի դնհատած բանով, այս է նորութեամբ. ուրեմն զարմանալի չէր, ըսինք, որ իշխանութիւն մինչև թագաւորին հիացումը գրաւելու փառասիրութիւնն ունեցած լինի, թագաւորն որ ոչ միայն տէրութեան առաջին մարդն էր, այլ և ամենէն զեղեցիկ և մտացի մարդոց մին:

Իսկ Լուի թագաւորին իր հարսին համար ունեցած յանկարծական սիրոյն զաւրով, բարեգիտութիւնն անոր բացատրութիւնը պիտի տար սնտախ տեղեօք, և բնութիւնն իր մէկ քանի ամենէն խորհրդաւոր յանկութեամբ: Իշխանութիւն խիստ աղւոր սեւ աչեր ունէր, Լուի խիստ զեղեցիկ կապոյտ աչեր: Իշխանութիւն ծիծաղասէր էր և զիւրահաղորդ, Լուի մեղամաղձոտ և խոհեմ: Առաջին անգամ զիւրար գտնելու կոչուած լինելով իրենց յատուկ կարևոր և հետաքրքրական խնդրոյ մ'առթիւ՝ այս երկու իրարու հակառակ բնաւորութիւններն իրենց փոխադարձ հակառակութեանց հպումէն բորբոքեր էին: Երբ Լուի իր բնակարանը դարձաւ՝ զիտեց որ իշխանութիւն իր պալատին մէջ ամենէն հրապուրելի կրնան էր: Իշխանութիւն՝ մինակ մնալով մտածեց՝ բոլորովին զուարթ, որ թագաւորին վրայ խորին սոսկաւորութիւն մը ներդրուէր էր:

Բայց այս զգացումն իր վրայ վաղամեռիկ էր, մինչդեռ ՚ի հարկէ թագաւորին վրայ երիտասարդի մը հրաբորբոք բնաւորութեան բոլոր ուժգնութեամբը պիտի ներդրուէր, և այնպիսի երիտասարդի որ բաւական էր իր կամքն յայտնել կատարուած տեսնելու համար:

Նախ թագաւորն իր եղբորը յայտնեց որ ամէն ինչ խաղաղցած է, թէ իշխանութիւն խիստ մեծ յարգ ունէր իրեն, նոյնպէս անկեղծ սէր մը: Բայց թէ վէս, և կասկածոտ իսկ բնաւորութիւն մ'ունէր, և հարկ էր անոր զիւրազրդութիւնը խնայել: Արքայազունը՝ սովորաբար իր եղբորը հետ գործածած աղու ոճով

պատասխանեց՝ թէ չէր կարող ըմբռնել կնկան մը զիւրազրածութիւնը՝ որու ընթացքը, ըստ իւր կարծեաց, կրնար մեղադրանաց առիթ լինիլ, և թէ, եթէ կար մէկն որ իրաւունք ունէր վերաւորուելու, այս իրաւունքն իրեն կ'վերաբերէր անպատճառ:

Բայց այն ատեն թագաւորը վառվռուն ձայնով մը պատասխանեց և որով կ'ցուցնէր թէ որչափ հոգ կ'տանէր իր հարսին:

— Փնտք Աստուծոյ, իշխանութիւն այդ բամբասանքէն վեր է:

— Ուրիշներուն բամբասանքէն վեր է, այո՛, կ'հաւանիմ — ըսաւ Ֆիլիպ — բայց կարծեմ թէ իմ աչքիս անպարտ չէ:

— Լաւ ուրեմն — ըսաւ թագաւորը — ահա քեզի կ'ըսեմ,

եղբայր իմ, որ իշխանութեան ընթացքը պարսաւանացող արժանի չէ: Այո՛, արդարև խիստ անմտաղիւր և շատ տարօրինակ կ'ին

մ'է, բայց խիստ ընտիր զգացումներու տէր կ'երևի: Փրանսայի

մէջ անկլիական բնաւորութիւնը շատ լաւ չէնք հասկընար մենք,

եղբայր իմ, և անկլիական բարոց աղատութիւնն երբեմն կ'զարմացնէ անոնք որ չեն զիտեր թէ այս աղատութիւնն ինչ մեծ

յարգ կ'ստանայ անմեղութեամբ:

— Ա՛հ — ըսաւ Ֆիլիպ արքայազունը՝ հետզհետէ սրդողելով

— քանի որ Ձեր Ահհափառութիւնն իմ կ'ինս կ'քաւէ, իմ կ'ինս

ցոր կ'ամբաստանեմ, յանցաւոր չէ, և այլ ևս խօսք չունիմ ըսելու:

— Եղբայր իմ — պատասխանեց թագաւորն աշխուժիւ, որ

կ'զգար թէ խղճին ձայնը կ'մրմուար մեղմիկ իր սրտին թէ իշխան

ութիւն բոլորովին անիրաւ չէր — Եղբայր իմ, ինչ որ կ'ըսեմ և

մանաւանդ ինչ որ կ'ընեմ, ձեր երջանկութեան համար է: Իմա

ցայ որ իշխանութեան կողմէ քեզի եղած վտառհալութեան կամ

յարդանաց պակասութենէ դանդատեր ես, և չուղեցի բնաւ որ

քու մտատանջութիւնդ աւելի երկար ատեն տևէ: Իմ պարտա

ւորութեանս կ'վերաբերի տանդ վրայ հսկել ինչպէս որ կ'հսկեմ

իմ ամենէն անշուք հպատակիս տան վրայ: Աւտախ մեծ խնդու

թեամբ տեսայ որ կասկածներդ բնաւ հիմ մը չունէին:

— Եւ — շարունակեց արքայազունը հարցաքննիչ ձայնով և

աչքն իր եղբոր յառելով — և ինչ որ Ձեր Ահհափառութիւնն

իշխանութեան վրայ տեսաւ , և ձեր արքայական իմաստութեան առջև կ'իսնարհիմ , միթէ ստուղեց նաև անոնց վրայ որ իմ գանգատած գայթակղութեան պատճառ եղան :

— Իրաւունք ունիս , եղբայր իմ — ըսաւ թագաւորը — այդ մասին պիտի խորհիմ :

Այս խօսքը հրաման մը ու միանդամայն միթիթարութիւն մը կը պարունակէր : Իշխանն զգաց և քաշուեցաւ :

Իսկ Լուի՛ գնաց իր մայրը տեսնելու վերստին . կ'զգար որ աւելի կատարեալ քառամի մը պէտք ունէր քան ինչ որ իր եղբորը բերնէն լսեր էր :

Աննա թագուհին Պ. Աիշին համար ներողամտութեան այն պատճառները չունէր ինչ որ ունէր Պրքինկէմի համար :

Առաջին խօսքէն տեսաւ որ Լուի արամաղիւր չէր խիստ լինելու , և ինք խիստ եղաւ :

Այս թագուհոյն սովորական հնարքներէն մին էր ճշմարտութիւնը ճանչելու համար :

Բայց Լուի իր նոր փորձը չէր ընէր , արդէն զրեթէ տարիէ մ'ի վեր՝ թագաւոր էր : Այս տարուան միջոցին՝ կեղծել սովորելու ժամանակ ունեցեր էր :

Աննա թագուհին մտիկ ընելով՝ որպէս զի իր բոլոր խորհուրդն երևան հանէ , մինակ ակնարկով և շարժումով անոր ըսածին հաւանելով՝ թագաւորը համոզուեցաւ՝ քանի մը խորունկ նայուածքով՝ քանի մը ճարտար թելադրութեամբ՝ որ թագուհին՝ թէև այնչափ խորազէտ էր կնային խնդիրներու մասին , իշխանութեան համար իրեն ունեցած տկար կողմն եթէ ոչ կատարածեր զէթ զուշակեր էր :

Իր օրնականներէն՝ Աննա թագուհին ամենէն կարեւորը պիտի լինէր . իր ամէն թշնամիներէն Աննա թագուհին ամենէն վստահաւորը կընար լինիլ :

Ուստի Լուի վարուելու կերպը փոխեց :

Իշխանութիւն ամբաստանեց , իր եղբորն իրաւունք տուաւ , Աիշին վրայ մօրն ըսածը մտիկ ըրաւ ինչպէս Պրքինկէմի մասին ըսածը լսեր էր : Յետոյ երբ տեսաւ թէ իր մօրը վրայ կատարեալ յաղթութիւն մը տարեր էր , անոր քովէն հեռացաւ :

Բոլոր պալատականները , այսինքն բոլոր մտերիմներն ու ընտանիները , և ասոնք բաղնաթիւ էին , քանի որ արդէն հինգ տէր կ'գտնուէին , իրկունը ժողովեցան պարեկին կրկնութեան համար :

Խեղճ Աիշ այս միջոցն անցուց արդէն ընդունած քանի մ'այցելութիւններով :

Այս այցելութեանց կարգին մէջ՝ այցելութիւն մը կար զոր կը յուսար և որմէ՛ զրեթէ կ'վախնար հաւատար զգացմամբ : Այս է Լօրէն ասպետին այցելութիւնը : Այս օրէն զրեթէ երեք ժամ ետք՝ Լօրէն ասպետը Աիշի սենեակը մտաւ :

Իր տեսքը խիստ հանդուցիչ էր :

— Արքայազունը — ըսաւ նա Աիշ կոմսին — ամենասիրուն զուարթութիւն մ'ունէր , և ոչ ոք կընար երեակայել թէ ամենաթեթև ամպն ամուսնական երկնից վրայէն անցած լինէր :

Ասկէ զատ՝ արքայազունը բնաւ ոխ պահել չզիտէր :

Երկար ատենէ վեր Լօրէն ասպետն արքունեաց մէջ սա կարծիքը տարածեր էր թէ՛ Լուի ԹԳին երկու որդիներէն՝ արքայազունն Ֆիլիպը՝ հայրական բնաւորութիւնն առեր էր , շարժուն և տաաամստ բնաւորութիւն մը . եռանդեամբ բարի , ի ներքուստ չար , բայց իրօք իր բարեկամաց համար աննշան :

Մանաւանդ Աիշն ողևորեր էր ապացուցանելով որ իշխանութիւն քիչ ատենէն պիտի յաջողի իր էրիկը կառավարելու , և թէ հետեւապէս , այն միայն պիտի յաջողի վարել արքայազունն որ իշխանութիւն վարելու պիտի յաջողի :

Այս բանին Աիշ՝ որ անվստահութեամբ և պատրաստամտութեամբ լի էր , պատասխաններ էր .

— Այո՛ , ասպետ , բայց կարծեմ թէ իշխանութիւն շատ վտանգաւոր կիին է :

— Եւ ի՞նչ բանի մէջ :

— Անոր համար որ զիտեց նա թէ արքայազունը կանանց համար եռանդազին բնաւորութիւն մը չունէր :

— Իրաւ է — ըսաւ Լօրէն ասպետը ծիծաղելով :

— Եւ ասպա՞ . . . :

— Ե՛յ լաւ :

— Է՛յ լաւ . իշխանուհին առջևն ելնողը կ'ընտրէ որպէս զի իր նախաստիւ ուշադրութեան առարկան ընելով նախանձով իր էրիկն որսայ :

— Խորո՛ւնկ , խորո՛ւնկ — դոչեց ասպետը :

— Ճշմարիտ է — պատասխանեց Աիշ :

Եւ ոչ մին իր մտածմունքը չէր ըսեր :

Աիշ՝ այն միջոցին որ այսպէս իշխանուհւոյն բնաւորութիւնը կը դարձուէր՝ սրտին խորէն մտովին անորմէ ներում կ'ընդգրէր :

Ասպետը , Աիշի խորհրդոց խորիմաստութեան վրայ սքանչանալով , աչերը դոյ դէսլ 'ի անդունդ կ'առաջնորդէր :

Այն ատեն Աիշ առաւօտեան դէպքին առաջ բերած արդեանց վրայ՝ նոյնպէս ճաշի ատեն յառաջ եկած աւելի ծանր ներդործութեան վրայ ասպետին հարց ու փորձ ըրաւ :

— Բայց ըսի արդէն քեզի — պատասխանեց ասպետը — որ այս դէպքին վրայ ամէն մարդ կ'ծիծաղի , և ամենէն աւելի նոյն ինք արքայազունը :

— Սակայն — համարձակեցաւ ըսելու Աիշ — լսեցի որ թագաւորն այցելութիւն մը տուեր է իշխանուհւոյն :

— Լաւ , ճիշտ է . իշխանուհին միայն չէր խնդար , և թագաւորն անոր այցի զնաց որպէս զի խնդացնէ :

— Այնպէ՛ս որ . . . :

— Այնպէս որ նոյն օրուան անցքին վրայ ոչ ինչ չէ փոխուած :

— Եւ միթէ երեկոյեան սարեկը (ballet) պիտի կրկնեն :

— Անտարակոյս :

— Միթէ ստոյգ ես :

— Շատ ստոյգ :

Երկու երիտասարդաց խօսակցութեան այս վայրկենին՝ Ռաուլ մտահոգ ճակտով ներս մտաւ :

Չանի տեսնելով՝ ասպետը՝ որ անոր համար՝ ինչպէս ամէն տղանիւ մարդու համար՝ դադտնի ատելութիւն մը կ'տածէր , ասպետն ասք ելաւ :

— Ուրեմն ի՞նչ խորհուրդ կ'տաս ինձ . . . — հարցուց Աիշ Չորէն ասպետին :

— Խորհուրդս սա է որ հանդիստ քնանաս , սիրելիդ իմ կոմս :

— Եւ ես , Աիշ — ըսաւ Ռաուլ — բոլորովին ասոր ներհակ խորհուրդ մը պիտի տամ :

— Ի՞նչ է , բարեկամ :

— Այս է , ձիւ հեծնես և անմիջապէս մէկ ազարակը երթաս . այն տեղ հասնելէն ետե՛ւ՝ եթէ կ'ուզես ասպետին խորհրդէն հետեիլ , այն տեղ պիտի քնանաս այնչափ երկար ժամանակ և այնչափ հանդստութեամբ որչափ որ քեզի հաճելի թուի :

— Ի՞նչպէս , մեկնի՛ր — զոչեց ասպետը զարմանք կեղծելով — և ինչո՞ւ համար Աիշ պիտի մեկնէր :

— Վասն զի , և դու ալ այս բանս պիտի զիտնաս , դու մահաւանդ , վասն զի ամէն մարդ արդէն կ'խօսի այս տեղ արքայազունին և Աիշի մէջ անցած դէպքին վրայ :

Աիշ զու՛նտեցաւ :

— Ամենեկն — պատասխանեց ասպետը — ամենեկն , և դու սխալ տեղեկութիւն առած պիտի լինիս , Պ . Պրաժլօն :

— Ընդ հակառակն՝ քաջ տեղեկացած եմ , պարոն — պատասխանեց Ռաուլ — և Աիշի տուած խորհուրդս բարեկամի խորհուրդ մ'է :

Այս վիճաբանութեան ժամանակ՝ Աիշ՝ փոքր ինչ վհատած , մերթ այս մերթ այն խորհրդականին երեսը կ'նայէր :

Նոյն ինք կ'զլար թէ խաղ մը , որ իր կենաց մնացած օրերուն համար կարեւոր էր , նոյն միջոցին կ'խաղային :

— Գու՛ ի՞նչ կ'ըսես , Աիշ — հարցուց ասպետը կոմսին — միթէ այն անցքն այնչափ փոթորկալի՞ եղաւ ինչպէս որ կ'երեւի մտածել Պրաժլօն կոմսը , որ՝ սակայն , ներկայ չէր :

— Պարոն , փոթորկալի կամ ոչ — պնդեց Ռաուլ — իմ խօսքս ճիշտ անցքին վրայ չէ , այլ անկից ծագելիք հետևանաց վրայ : Գիտեմ որ արքայազունը սպառնաց , զիտեմ որ իշխանուհին լացաւ :

— Իշխանուհին լացա՞ւ — զոչեց Աիշ անխօսեմութեամբ ձեռները կցելով :

— Ա՛հ , օրինակի համար — ըսաւ ասպետը ծիծաղելով — ահա սպարազայ մ'որմէ անտեղեակ էի : Արդարև իզնէ լաւ հմտութիւն ունիս այս մասին , Պ . Պրաժլօն :

— Եւ ես քեզնէ լաւ տեղեակ լինելուս համար է, ասպետ, որ կ'սնդեմ թէ Կիշ հեռանայ:

— Բայց ո՛չ, դարձեալ ո՛չ, կ'ցաւիմ որ քեզնէ կ'ընդդիմախօսեմ, դերկոմս, բայց այս չուն անօգուտ է:

— Ստիպուական է:

— Բայց ինչո՞ւ համար պիտի հեռանայ, ըսէ նայիմ:

— Բայց թագաւորը, թագաւորը:

— Թագաւորը — դոչեց Կիշ:

— Է՛հ, այո՛, ըսի քեզնէ, թագաւորը դործն եռանդով կ'ընէ:

— Բա՛ — ըսաւ ասպետը — թագաւորը կ'սիրէ Կիշն և մանաւանդ իր հայրը. մտածէ անդամ մ'որ երբ կ'ունը մեկնէր, խոստովանած պիտի լինէր որ ստղտանելի բան մ'ըրած է:

— Ինչպէ՛ս:

— Անշուշտ. երբ մարդ խոյս տայ, ըսել է թէ յանցաւոր է կամ կ'վախնայ:

— Եւ կամ կ'արտնջայ, իբրև յանիրաւի ամբաստանուած մարդ մը — ըսաւ Պրաժլօն — տհաճութեան վերապրեցի իր չուն, և այս ամենադիւրին է. ըսենք որ մեր ձեռքէն եկածն ըրինք դանի չթողլու համար, և դէթ դու սուտ խօսած չպիտի լինիս: Օ՛ն, Օ՛ն, Կիշ, անմեղ ես, այսօրուան տեսարանը քեզ վերաւորած լինի, մեկնէ, մեկնէ, Կիշ:

— Է՛հ, ո՛չ, Կիշ, կեցի՛ր — ըսաւ ասպետը — կեցի՛ր, Պ. Պրաժլօնի ըսածին պէս՝ ճիշտ անոր համար որ անմեղ ես: Գերկոմս, վերատին ներում կ'խնդրեմ, բայց ես քու կարծիքիդ բուլբուլին հակառակ եմ:

— Ազատ ես կարծեացդ մէջ, սրբոն, բայց դիտէ միանգամ որ ինքն ինքնին արքայի երթալով Կիշ, այս արքայը կարճատև պիտի լինի: Երբ որ կամի կրնայ դարբեցնել արքայը, և կամաւոր տարագրութենէ մը դառնալով, ամենուն շրթերուն վրայ ժպիտ պիտի տեսնէ. մինչդեռ՝ ասոր ներհակ՝ եթէ թագաւորը սրբողի, թերևս մեծ փոթորիկ ծագի որու վախճանն ոչ ոք կրնայ գուշակել:

Ասպետը ժպտայ:

— Թշուառական, ճիշտ այդ է ուղածս — մրմուռ նա մեղմիկ և ինքնիրեն:

Եւ նոյն պահուն ուսերը վեր կ'վերցնէր:

Այս շարժումը դիտեց կամը. վախցաւ որ արքունիքէն հեռանալով կ'կարծուի թէ երկիւղե զգացման մը տեղե տուած է:

— Ո՛չ, ո՛չ — դոչեց նա — որոշումս ըրի: Պրաժլօն, պիտի մնամ:

— Մարդարէ եմ — ըսաւ Ռաուլ տրամադին: — Վայ քեզ, Կիշ, վայ քեզ:

— Ես ալ մարդարէ եմ, բայց չէ թէ դժբաղդութեան մարդարէ. ընդ հակառակն՝ կ'ուն, և կ'ըսեմ քեզնէ, մնացի՛ր, մնացի՛ր:

— Պարեկը պիտի կրկնուի անշուշտ — հարցոց Կիշ — մի՞թէ ստոյգ ես:

— Կատարելապէս ստոյգ:

— Լաւ ուրեմն, կ'տեսնես, Ռաուլ — վրայ բերաւ Կիշ ժպտելու ջանալով — կ'տեսնես որ շատ մթին արքունիք մը, ներքին կոխներու պատրաստ արքունիք մը չէ այն պալատն ուր այսչափ անխնջ եռանդով կ'աշխատին: Խոստովանէ նայիմ, Ռաուլ, այս կէտը:

Ռաուլ գլուխն օրեց:

— Այլ ևս բան մը չունիմ ըսելու — պատասխանեց նա:

— Բայց վերջապէս — հարցոց ասպետը, հետաքրքիր լինելով իմանալու թէ Ռաուլ որ աղբիւրէն քաղած էր այն տեղեկութիւններն սրոց ճշգրտութիւնն՝ ի ներքուստ ճանչելու ստիպուած էր — կ'ըսես թէ ճշգրիտ տեղեկութիւններ ունիս, դերկոմս, բայց ինչպէս քան զիս տեղեակ կրնաս լինիլ, ես որ իշխանին մտերիմներէն մին եմ:

— Պարոն — պատասխանեց Ռաուլ — այդպիսի յայտարարութեան առջև կ'խոնարհիմ: Այո՛, կատարելապէս տեղեկացած պիտի լինիս, ասոր խօսք չունիմ, և որովհետև պատուաւոր մարդ մ'անկարող է դիտյածէն զատ բան մ'ըսել, իր խորհածէն արբեր կերպով խօսիլ, կ'ըսեմ, ինքզինքս նկուն կ'խոստովանիմ, և պատերազմի գաշտը քեզնէ կ'թողում:

Արդարեւ՝ Ռաուլ՝ անդորրութիւն սիրող մարդու մը պէս՝ լայն աթոռի մը մէջ սուզաւ, մինչդեռ կամսն իր մարդիկը կ'կոչէր որպէս զի հազուէ:

Աստուծոյ կ'զգար որ ժամերը կ'անցնէին և մեկնելու կ'փափաքէր : բայց կ'վախնար նաև որ Ռատլ՝ Նիշի հետ մինակ մնալով՝ չորսդարէ զինքն ըրած որոշումն աւերելու :

Ուստի վերջին հնար մը դործածեց :

— Իշխանուհին պիտի շողշողայ — ըսաւ նա — այսօր Պոմօնի հազուստը պիտի փորձէ :

— Ա՛հ, իրաւ է — զոչեց կոմսը :

— Այո՛, այո՛ — շարունակեց ասպետը . — ըստ այնմ իր հրամանները հիմակ տուաւ : Գիտես, Պ. Պրաժլօն, որ թաղաւորն ալ Գարնան դերը պիտի խաղայ :

— Այդ սքանչելի պիտի լինի — ըսաւ Նիշ — և աւասիկ պատճառ մը զոր այս տեղ մնալու համար տուածներէդ լաւադոյնն է . վասն զի, ըստ որում ես պիտի լինիմ Վէրտում և իշխանուհւոյն հետ պիտի պար բռնեմ, չեմ կարող մեկնիլ առանց թաղաւորին մէկ հրամանին, թէ ոչ իմ չուս պարեկը պիտի խանդարէ :

— Եւ ես — ըսաւ ասպետը — պարզ էկիբան (egypan) մը պիտի լինիմ . իրաւ է որ քաջ պարող չեմ, և սրունքս տձև է : Պարոններ, ՚ի կրկին տեսութիւն : Ա՛մն, մի մոռնար պտուղներու զամբիւղը զոր Պոմօնի պիտի ընծայես :

— Ո՛հ, բան մը չպիտի մոռնամ, անհող եղիւր — ըսաւ Նիշ յափշտակուած :

— Ես ստոյգ եմ որ այժմ չպիտի մեկնի — մրմուռաց Լօրէն ասպետը դուրս ելնելու ատեն :

Երբ ասպետը գնաց՝ Ռատլ և ոչ իսկ փորձ փորձեց բարեկամին որոշումը փոխել տալու . կ'զգար որ ընդունայն պիտի ճգնէր :

— Ա՛մն — ըսաւ անոր իր տխուր և մեղամտիկ ձայնովը — կոմս, սոսկալի սիրով մը բորբոքած ես : Քեզ կ'ճանչեմ, ամէն բանի մէջ ծայրայեղ ես, սիրած անձդ ալ նոյնն է . . . : Լաւ, կ'ենթադրեմ պահ մ'որ քեզ սիրելու հաճի . . . :

— Ո՛հ, երբէք — զոչեց Նիշ :

— Ինչո՞ւ համար երբէք կ'ըսես :

— Վասն զի մեր երկուքին համար մեծ դժբաղդութիւն մը պիտի լինէր :

— Ուրեմն, սիրելի բարեկամ, քեզ փոխանակ իբրև անխօս հեմ նկատելու, ներէ՛ ինձ որ իբրև խենթ նկատեմ :

— Ինչո՞ւ համար :

— Միթէ ասպհոյլ ես, նայինք, բացարձակ սրատասխան աուր քու սիրած անձէդ բան մը չպահանջելու :

— Ո՛հ, այո՛, շատ ասպհոյլ եմ :

— Ուրեմն, զանի հեռուէն սիրէ :

— Ինչպէ՞ս, հեռուէն :

— Անշուշտ . ինչ փոյթդ է ներկայութիւնը կամ բացակայութիւնը, քանի որ անկից բան մը չես պահանջեր :

— Ռատլ :

— Ստուեր մը, սլատրանք մը, անուրջ մը սիրէ՛, սիրէ սէրը, այդ քու տեսլական նկարիդ անուն մը տալով : Ա՛հ, զուլտդ կ'զարձնես անդին : Սպասաւորներդ կ'զան, այլ ևս բան մը չեմ ըսեր : Թէ դժբաղդութեան թէ բարեբաղդութեան մէջ ինձ վստահացիր, Նիշ :

— Տէր վկայ, ինչպէս չվստահիմ :

— Լաւ ուրեմն, ահա այս միայն ունէի ըսել քեզի : Գնա՛, աղւոր հազուէ սղուէ, Նիշ : Մնաս բարեալ :

— Գերկոմս, միթէ պարեկին կրկնութեան չ'պիտի դաս :

— Ո՛հ, քաղաքը պիտի դնամ այցելութիւն մ'ընելու : Համբուրէ զիս, Նիշ, մնաս բարեալ :

Ընկերութիւնը թաղաւորին ասպարանը պիտի հաւաքուէր :

Նախ թաղուհիներն ասպա իշխանուհին, քանի մ'ընտրեալ պատուոյ նաժիշտներ, նոյնպէս շատ մ'ընտրեալ պալատականներ, պարէն առաջ սկսեր էին այնպիսի խօսակցութիւններով, ինչպէս որ զիտէին ընել այն ատենները :

Հրաւիրեալ տիկիներէն և ոչ մին հանդիսին հազուստը չէր հաղած, թէև տարբեր գուշակեր էր Լօրէն ասպետը, այլ անընդհատ կ'խօսակցէին այլ և այլ պատկերահաններու ձեռօք կոստանդուպոյ պարէկին համար նկարուած սերձ և ընտիր զարդուց վրայ :

Արքայազուհն եկաւ ունենալով ՚ի ձեռին իր անձը ներկայա-

յնող պատկերը, տակաւին ճակատը մտահոգութիւն մ'ունէր. իր բարեն առ նորատի թաղուհին և առ մայրը խիտ մարդավարական ու սիրալիւր էր: Իշխանուհւոյն դրեթէ կոպտաբար բարե տուաւ և իր ներբաններու վրայ շրջը շեց: Այս շարժումն ու պաղու թիւնն ամէն մարդ զխտեց:

Պ. Կիշ իշխանուհին գոհացուց բոցավառ ակնարկովը, և իշխանուհին՝ պէտք է ըսել՝ արտեանունքը վեր վերցնելով, վաշխով վճարեց այս նայուածքը:

Պէտք է ըսել որ Կիշ երբէք այսչափ զեղանի չէր երեցած. իշխանուհւոյն նայուածքը կերպով մը մարէշալ Արամօնի որդւոյն դէմքը լուսափայլեր էր: Թաղաւորին հարսը՝ Հանրիէզ կ'ըզար որ իր դիւին վերել փոթորիկ մը կ'որոտար, կ'ըզար նաև որ նոյն օրը, որ ապաղայ դէպքերով այնքան լի էր, զինքն այնչափ խանդաղին սիրող մարդուն դէմ՝ եթէ ոչ ծանր մատնութեան, անխրաւութեան մեծ գործ մը կատարեր էր:

Ժամն հասած էր առաւօտեան այս անխրաւութեան մասին համար տալ խեղճ զոհերոյն: Այն ատեն իշխանուհւոյն սիրալ կը խօսէր՝ և յանուն Կիշի կ'խօսէր: Ամէն մարդ անկեղծօրէն կը ցաւէր կոմսին վրայ, ուստի կոմսն ամենուն վրայ յաղթանակը կ'տանէր:

Այն միջոցին ոչ արքայազնին, ոչ թաղաւորին և ոչ լորս Պրքինկհէմի վրայ խօսք կար: Վասն զի Կիշն էր որ նոյն պահուն անբաժին կ'տիրէր:

Սակայն արքայազունն ալ նոյնչափ զեղեցիկ էր. բայց անկարելի էր զանի կոմսին հետ բողբոսել: Ինչպէս յայտնի է, ամէն կանայք կ'ըսեն, միշտ ահագին տարբերութիւն մը կայ սիրողին և ամուսնին զեղեցիկութեան մէջ:

Արդ՝ ներկայ պարագային մէջ՝ արքայազնին ելուստն ետք, իր մարդավարական բարեներն առ նորատի թաղուհին տալէն ետև՝ առ իշխանուհին այն թեթև և վեր ՚ի վերոյ բարեք տալէն ետև՝ ինչպէս որ ամէն պալատականները զխտեր էին, բոլոր այս պատճառները, բսինք, նոյն ընկերութեան մէջ՝ զեր ՚ի վեր ցոյց կ'տային սիրողն ամուսնոյ վրայ:

Արքայազունը շատ հպարտ էր և չէր կրնար այս մանր պարահան զխտել: Չկայ աւելի ազդու բան մը քան զերազանցութեան հաստատուն զողափարը՝ այն մարդուն ստորակայութիւնն ապահովելու որ այս կարծիքն ինքն իր վրայ ունի:

Թաղաւորը հասաւ: Ամէն մարդ դէպքերն անոր նայուածքին մէջ փնտռեց որ արդէն սկսեր էր աշխարհը դղողել որոտընդոտ Արամազդայ ակնարկին պէս:

Լուի իր եղբորը արամութեան նշանը չունէր. կ'ճառագայթէր: Ամէն կողմէ իրեն ցոյց տրուած շատ մը գծադրութիւններ քրննելէ ետև՝ խորհուրդներ տուաւ, քննադատութիւններ ըրաւ անոնց վրայ, և իր մէկ բառով ոմանք երջանիկ կամ դժբաղդ եղան: Յանկարծ իր աչքը՝ որ շեղակի առ իշխանուհին կ'ժպտէր, իշխանուհւոյն և կոմսին մէջ եղած անխօսուն բանակցութիւնը զխտեց: Արքայական շուրթը պնդեցաւ, և երբ վերստին բացուեցաւ քանի մը մնասի խօսքեր արտաբերելու համար,

— Տիկնայք — ըսաւ թաղաւորը թաղուհիներու կողմը յառաջանալով — լուր առի որ ամէն ինչ պատրաստուած է ՚ի Քոնդէնպլօ իմ հրամաններուս համեմատ:

Խմբակներուն մէջէն գոհունակութեան մրմունջ մ'ելաւ: Թաղաւորն ամէն զխմաց վրայ կարգայ հանդէսներու համար հրաւէր ընդունելու բուռն փափաք մը:

— Վաղը պիտի մեկնիմ — յարեց նա:
Կատարեալ լուութիւն ընկերութեան մէջ:

— Եւ կ'պատուիրեմ — աւարտեց խօսքը թաղաւորը — բոլոր զիս շրջապատող անձանց որ ինձ ուղեկից դասուելու պատրաստուին: Ժպիսն ամենուն կերպարանը կ'լուսաւորէր: Միայն արքայազնին կերպարանն իր սրանեղութեան նշանը պահեց:

Այն ատեն թաղաւորին տիկնայց առջևէն անցան այն աղնուակներն որ հրաւէրին մեծ պատուոյն համար Նորին Աւհափառութեան շնորհակալութիւն մատուցանելու կ'փութային:

Երբ Կիշ կոմսին կարգն եկաւ,
— Ա՛հ, պարսն — ըսաւ թաղաւորը — քեզ չէի տեսած:
Կիշ իր բերանը պիտի բանար իր շնորհակալեքը ձեւելու:

— Աճման — ըստ թագաւորը — ահա երկրորդ վարուցանի ժամանակը : Ստոյգ եմ որ քու Նորմանտիոյ ազարակներդ քեզ խընդու թեամբ պիտի տեսնեն քու հողերուդ վրայ :

Եւ թագաւորն իր կռնակը դժբաղդ կոմսին դարձուց այս անաս զորոյն յարձակումն ընելէն ետքը :

Ըստ կարգի Աիշ դոյնը փոխեց , երկու քայլ ըրաւ դէպ'ի թագաւորը , մտնալով որ Նորին Աւհափառութեան ոչ ոք կրնայ խօսիլ առանց հարցուելու :

— Արեւի է աղէկ շհասկըցայ — մրմուաց նա :

Թագաւորն իր գլուխը թեթե մը դարձուց , և պաղ ու անթարթ ակնարկով մ'որ անողոքելի սուր մը կ'մղէր իր երեսէն ընկած անձերու սրտին մէջ ,

— Քու հողերդ — կրկնեց նա մեղմիկ՝ այս բառերը մի առ մի բերնէն հանելով :

Աճման ճակատը պաղ քրտինք մը պատեց , իր ձեռները բացուեցան և վար թողուցին զողզոջուն մատերովը բռնած գլխարկը :

Լուի իր մօրն ակնարկը փնտռեց , որպէս թէ ցոյց տալու համար թէ ինք ինքնիշխան է : Իր եղբորը յաղթանակող ակնարկը փնտռեց , որպէս թէ հարցնելու համար որ արդեօք այս վրէժխնդրութիւնն իր ճաշակին կ'յարմարէր :

Ի վերջէ՝ աչքն իշխանուհոյն վրայ կեցուց :

Իշխանուհին կ'ժպտէր և տիկին Նօայլի հետ կ'խօսակցէր :

Նա ոչ ինչ չէր լսած , կամ լաւ ևս այնպէս իմն կեղծեր էր թէ բան մը լսած է :

Լօրէն ասպետն ալ կ'նայէր այնտիսի թշնամանիկ սնդութեամբ որ կարծես թէ մարդու մը նայուածքին լծակի մը զօրութիւնը կ'ընծայէ երբ կ'զրդէ սա , կ'խղէ և հեռուն խոչընդոտն երևան կ'հանէ :

Աիշ մինակ թագաւորին դահլճին մէջ մնաց , ամենքն անհետ եղեր էին : Ապերջանիկ մարդուն աչաց առջև ստուերներ կ'լսաղային :

Յանկարծ իր վրայ տիրապետող բուռն յուսահատութիւնը թոթուեց , և շիտակ իր առնը գնաց փակուելու , ուր տակաւին

էրեն կ'սպասէր Ռաուլ , իր մթին նախազգածութեանց մէջ անյողզողդ :

— Լաւ ուրեմն — մրմուաց նա երբ տեսաւ իր բարեկամն որ գլուխը բաց , մուրազին աչօք , և երերուն քալուածքով ներս կ'մտնէր :

— Այո՛ , այո՛ , իրաւ է , այո՛ . . . :

Եւ Աիշ աւելի խօսք մը չկրցաւ բսել , վաստակարեկ ընկաւ շաղմոցին վրայ :

— Հասցա՛նէ՛ — հարցուց Ռաուլ :

— Նէ՛ — դոչեց դժբաղդը դէպ երկին վերցնելով բարկութեան կարկամ բուռը — նէ՛ . . . :

— Ի՞նչ կ'ընէ :

— Ա՛րտէ՛ թէ իր շրջազգեստը շատ կ'վայէ իրեն :

— Ի՞նչ կ'ընէ :

— Ա՛ծիծաղի :

Եւ այլանդակ քրքիջ մը խեղճ տարադրին բոլոր ջիղերն ոտք հանեց : Առնակի վրայ ընկաւ նա խօսոյն , դետնաբեկ , նկուն էր :

ԺԷ

ՓՕՆԴԷՆՊԼՕ

Չորս օրէ վեր Փօնդէնպլօի մէջ պատրաստուած բոլոր հմայական կարգն ու շուքն այս վայրը դրախտ մ'ըրած էին :

Պ. Գօլպէր կ'բազմանար . . . : Առտու , գիշերուան ծախուց հաշիւը , ցերեկը՝ ծրագիրներ , փորձեր , զինուորադրութիւններ , վճարք :

Պ. Գօլպէր չորս միլիօն հաւաքեր էր , և զանոնք խոհական տնտեսութեամբ կ'մատակարարէր :

Աստիկար գիյաբանութեան պատճառած ծախուց վրայ : Ամէն շահպետ , ամէն դրիագ՝ ամէն օր հարիւր ֆրանքէն վար չէր լննէր : Ծպտանքն երեք հարիւր ֆրանքով կ'ելնէր :

Ինչ որ ամէն զիշեր վառօդ և ծծումբ կ'վառէին հրախաղաւթեանց համար հարիւր հազար ֆրանք կ'արժէր : Ասկէ զատ՝ լճակին եզերքն եղած լուսաւորութեանց համար ամէն երեկոյ երսու՛ն հազար ֆրանք ծախս կ'լինէր :

Այս հանդէսները փառաւոր երեւցեր էին : Գօլպէր ուրախու թննէ կ'թուէր :

Ամէն վայրկեան կ'տեսնէր իշխանուհին և թագաւորն որ որսի կ'ելնէին կամ այլանդակ անձերու այցելութեան , ասոնք տասն հինգ օրէ վեր անսպասուածից եղած հանդէսներ էին որով իշխանուհւոյն սրամտութիւնն ու թագաւորին պերճութիւնը կ'փայլէին :

Ասան զի իշխանուհին՝ որ հանդիսին զխցաղնուհին էր , այս անձանօթ ժողովրդոց սրատգամաւորներուն կ'պատասխանէր , Գարամանթք , Սկիւթացիք , Հիպերպօրէացիք , Կովկասեանք և Պատակոնեանք , որ կարծես թէ դեռնէն կ'ելնէին շնորհաւորութեան դալու , և ամէն անդամուն որ այս ժողովրդոց ներկայացուալը կ'լինէր թագաւորն անդամանդ կամ մեծագին զարդ մը կ'ընծայէր :

Այն ատեն պատգամաւորները փոքր 'ի շատէ այլանդակ ոտաւորներով՝ թագաւորն Արեղական , և իշխանուհին՝ իր քոյր Փէօպէին հետ կ'համեմատէին , և այնուհետև ոչ թագուհիներու և ոչ արքայազնին վրայ խօսող կար , որպէս թէ թագաւորն Անկլիոյ Հանրիէդ օրիորդին հետ կարդուած լինէր և ոչ Աւստրիոյ Մարի-Թէրէզին հետ :

Երջանիկ ամուլք՝ իրարու ձեռք բռնած՝ աննշմարելի կերպով իրենց մատերը սեղմելով , շողմարարութեան այնքան անուշ ըմպելին անյադուրդ կ'ըմպէին , որ աւելի բարձր արժէք կ'ստանայ երիտասարդութեան , դեղեցկութեան , զօրութեան և սիրոյ շնորհիւ :

Ամէն ոք կամացուկ կ'ըսէր որ իշխանուհին էր Քճմարտապէս թագուհին :

Եւ՝ արդարեւ՝ թագաւորն այս տարօրինակ Քճմարտութիւնը կը հրատարակէր իր ամէն մէկ մտածմունքով , իր ամէն մէկ խօսքով և իր ամէն մէկ նայուածքով :

Իր կամքը կ'քաղէր՝ իր ներողութիւնները կ'փնտուէր իշխանու-

հւոյն աչաց մէջ , և իր ուրախութեամբն արբշիւ կ'դառնար երբ իշխանուհին ժպտելու կ'հաճէր :

Իշխանուհին ալ իր կողմէն իր իշխանութեամբն արբշիւ կը դառնար ամէն մարդիկն իր ոտից ներքև տեսնելով : Կնքն անձամբ չէր կարող ըսել , բայց սա դիտէր որ բնաւ փափաք մը չունէր , վասն զի կատարելապէս ինքզինքն երջանիկ կ'դտնէր :

Այս տեղափոխութիւններէն , որոց աղբիւրն արքայական կամքն էր , արքայազունը փոխանակ տերութեան երկրորդ անձը լինելու , իրօք երթորդ անձը դարձեր էր :

Այս աւելի դէշ էր քան այն ժամանակն երբ Նիշ իր կիթաւներն իշխանուհւոյն սենեկին մէջ կ'հնչեցնէր : Այն ատեն արքայազունը դէթ սա դօհունակութիւնն ունէր որ կրնար իրեն նեղութիւն պատճառողն երկիւղ ազդել :

Բայց՝ թագաւորին հետ դաշնակցելով՝ թշնամին մեկնելէն 'ի վեր՝ արքայազունն առաջուանէ աւելի ծանր լուծ մ'ունէր իր վիզը :

Ամէն իրկուն՝ իշխանուհին յայնձմ դադրած էր ապարանը կը դառնար :

Չիաւարութիւնը , Սէն դետի մէջ բաղնիքը , տեսարանները , հացկերոյթները հովանոցներու ներքև , մեծ ջրանցքին եզերքը տրուած պարահանդէսները , սլարերդները բաւական էին խորտակելու , չէ թէ իրեն պէս նիհար և վատոյժ կին մ'այլ գոյեկին ամենէն կորովի զօրականը :

Իբաւ է որ սլարի , սլարերդի , պտոյտներու մասին՝ կին մը շատ ուժեղ է քան թէ ամենէն զօրաւոր լեռնցին :

Բայց կնկան մ'ոյժն որչափ մեծ լինի , դարձեալ վերջ մ'ունի , և չէ կարող այսպիսի կենցաղավարութեան մ'ընդ երկար սովալ :

Իսկ արքայազնին դալով՝ և ոչ իսկ դոհունակութիւնն ունէր տեսնելու որ իշխանուհին իրկունը թագաւորութեան հրամեշտ տայ : Իրկունը՝ իշխանուհին արքայական տաղաւարը կ'բնակէր նորատի թագուհւոյն և մայր թագուհւոյն հետ :

Աւելորդ է ըսել որ Լօրէն ասպետն արքայազնէն չէր հեռանար , և կ'դար անոր ստացած ամէն մէկ վէրքին մէջ թոյն կաթել :

Ասկից սա կ'հետևէր որ արքայազունը՝ Նիշին չուին վրայ բ-

լքողին զուարթ և առոյգ դառնալէն ետև՝ վերստին մեղամաղձութեան մէջ ընկաւ արքունեաց ֆօնդէնպլօ հաստատուելէն երեք օր ետք :

Արդ՝ օրին մէկը՝ ժամն երկուքին մօտ , արքայազունը՝ որ ուշ ելեր էր անկողնէն՝ որ սովորականէն աւելի հոգ տարեր էր իր հաղուստին , արքայազունը , ըսինք , որ տակաւին նոյն օրուան դործոց վըայ բան մը չէր լսած , միտքը դրաւ ինքն իր պալատականները հաւաքել և իշխանուհին Մօրէ տանիլ ճաշի համար , ուր որ աղոթը դիւզական տուն մ'ունէր :

Աւարի թաղուհեաց տաղաւարը գիմեց և ներս մտաւ , զարմանալով յոյժ այն տեղ թաղաւորին սպասաւորներէն և ոչ մին չգտնելուն :

Առանձին իր սենեակը դարձաւ :

Չախ կողմէն դուռ մը կ'բացուէր իշխանուհոյն բնակարանին վըայ , աջ կողմէն ուրիշ դուռ մը կար որ նորատի թաղուհոյն բնակարանը կ'տանէր :

Արքայազունն իր կնոջ սենեկին մէջ աշխատող կտաւաղործուհիէ մ'իմացաւ թէ ամէն մարդ ժամը տասն մէկին մեկներ էր Աէն դեան երթալ մտնելու համար , թէ այս զուարճութեան համար մեծ հանդէս կատարեր են , թէ բոլոր կառքերը ծառաստանին դրան առջև կեցեր էին , և թէ ժամէ մ'ի վեր բոլոր պալատականք ճամբայ ելած էին :

— Լաւ — ըսաւ արքայազունն իւրովի — այս դաղափարը յաջող է . սաստիկ տաք կ'ընէ , ես ալ յօժարակամ բաղնիք առնլու պիտի երթամ :

Եւ իր սպասաւորները կանչեց . . . : Ոչ որ եկաւ :

Իշխանուհոյն սենեակը գնաց մարդ կանչելու , ամենքը դուրս ելեր էին :

Արքայազունը կառատեղին իջաւ :

Չիադարման մ'անոր իմացուց որ կտոք և դեսպակ չկային :

Այն ատեն հրամայեց որ իրեն երկու ձի թամբեն , մէկն իրեն և միւսն իր սենեկապանին համար :

Չիադարմանն անոր պատասխանեց քաղաքաւարութեամբ որ ձի ալ չկար :

Արքայազունը բարկութենէ զուստած թաղուհեաց սենեակն ելաւ :

Մինչև Աննա թաղուհոյն գահլիճը մտաւ :

Այն տեղ՝ կիսբաց օթոցէ մ'իւր նորատի հարսը տեսաւ որ մայր թաղուհոյն առջև ծունր դրած էր և արտասուաղին կ'երեւէր :

Արքայազունն ո՛չ տեսեր և ոչ լսեր էին :

Բացուածքին մտեցաւ կամացուկ մ'և ախանջ դրաւ . այս վշտակրութեան տեսարանն իր հետաքրքրութիւնը կ'շարժէր :

Ոչ միայն ներատի թաղուհին կ'լար , այլ և կ'տրտնջար :

— Այո՛ — կ'ըսէր նա — թաղաւորը զիս երեսի վըայ կ'թողու , թաղաւորը միայն զուարճութեանց ետև է որոց ես բնաւ մասնակից չեմ լինիր :

— Համբերութիւն , համբերութիւն , աղջիկս — կ'պատասխանէր Աննա թաղուհին սպանիական լեզուաւ :

Յետոյ՝ դարձեալ սպանիացի լեզուաւ՝ այլ և այլ խորհուրդներ կ'տար զորս արքայազունը չէր հասկընար :

Թաղուհին հառաչներով խառն ամբաստանութիւններ ընելով կ'պատասխանէր , և արտսուքներ կ'թափէր , որոց մէջ արքայազունը ստէպ banos բառը կ'լսէր զոր Մարի-Թէրէզ կ'արտասանէր արհամարհ բարկութեամբ մը :

— Բաղնիքը — կ'ըսէր իւրովի արքայազունը — բաղնիքը : Կ'երևի թէ բաղնիքներն են իրեն գանդատանաց առարկան :

Եւ կ'ջանար խօսքի կտորներն իրարու զօղել և այսպէս իրարու ետև կ'հասկընար :

Սակայն գիւրին էր զուշակել որ թաղուհին գառնապէս կը արտնջար , և եթէ Աննա թաղուհին զանի չէր միտիթարեր , դէթ կ'փորձէր մտիթարելու :

Արքայազունը կ'վախնար որ դրան ետին մտիկ ընելու ատեն չբռնուի , ուստի կամաւ հազաց :

Երկու թաղուհիներն այս աղմուկը լսելով դարձան :

Արքայազունը ներս մտաւ :

Իշխանը տեսնելուն՝ նորատի թաղուհին շուտ մ'օտք ելաւ և իր աչքը սրբեց :

Արքայազունն իր շրջապատ մարդիկը կ'ճանչէր և զիտէր թէ
ինչպէս հարց ու փորձ ընելու էր, և քաջ տեղեակ էր համբ
մնալու քաղաքավարութեան, ուստի բարե տուաւ :

Մայր թաղուհին անոր հաճութեամբ ժպտաց :

— Ի՞նչ կ'ուզես, սրբեակ — ըսաւ անոր :

— Ե՞ս . . . սչ ինչ . . . — թոթովեց արքայազունը — կ'փրն-
տուէի . . . :

— Չո՞վ :

— Մայր իմ, իշխանուհին կ'փնտուէի :

— Իշխանուհին բաղնիք գնաց :

— Հապա թաղաւորը — ըսաւ արքայազունը ձայնով մ'որ թա-
ղուհին դող հանեց :

— Թաղաւորն ալ, բոլոր պալատականներն ալ — պատասխա-
նեց Աննա թաղուհին :

— Քեզնէ՞ զատ, տիկին — ըսաւ արքայազունը :

— Ո՛հ, այո՛ — ըսաւ նորատի թաղուհին : — Ես բոլոր զուար-
ձացողներուն սոսկում կ'սրտաճառեմ :

— Եւ ես, ըստ երևոյթին — պատասխանեց արքայազունը :

Աննա թաղուհին անձայն նշան մ'ըբաւ իր հարսին, որ յորդ
արասուք թափելով քաշուեցաւ գնաց :

Արքայազունն ունքը պուստեց :

— Աւասիկ տխուր տուն մը — ըսաւ նա : — Չեր կարծիքն
ի՞նչ է, մայր իմ :

— Բայց . . . ո՛չ . . . ո՛չ . . . այս տեղ ամէն մարդ իր զուար-
ձութիւնը կ'փնտուէ :

— Բայց ճիշտ այդ զուարձութիւններէն նեղացողներն են որ
տրտում տխուր կ'մնան :

— Սիրելիդ իմ Ֆիլիպ, ինչպէս աղւոր աղւոր կ'խօսիս :

— Իբաւ որ, մայր իմ, ինչպէս որ կ'մտածեմ այնպէս կ'խօսիմ :

— Բացատրէ միտքդ, ինչ կայ :

— Բայց հարցուցէք իմ հարսին, որ քիչ մ'առաջ իր ցաւե-
րը ձեզի կ'պատմէր :

— Իր ցաւերը . . . ինչ ցաւ . . . :

— Այո՛, պատեհիւ, մտիկ կ'ընէի, կ'խոստովանիմ, բայց վեր-
ջապէս մտիկ կ'ընէի . . . : Լաւ, ուղածէս աւելի լսեցի քրոջս
դանդաճներն իշխանուհւոյն երեւելի բաղնիքին վրայ :

— Ա՛հ, յիմարութիւն . . . :

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ, երբ մարդ կ'լայ միշտ յիմար չէ . . . : Եւ-
ո՞՞՞ կ'ըսէր թաղուհին, միթէ այս բառը բաղնիք չ'նշանակիր :

— Ա՛կրկնեմ, որդեակ իմ — ըսաւ Աննա թաղուհին — որ հար-
սիք նախանձը սնտոի նախանձ մ'է :

— Ուրեմն, տիկին — պատասխանեց իշխանը — ես ալ ինք-
զինքս կ'ամբաստանեմ նոյն պակասութեան տէրը դանուելուս :

— Դո՛ւ ալ նոյն պակասութիւնն աւելի, որդեակ :

— Անտարակոյս :

— Դո՛ւ ալ միթէ այս բաղնիքէն կ'նախանձիս :

— Ի՞նչպէս չէ :

— Ո՛հ :

— Ինչպէ՛ս, թաղաւորն իմ կնոջս հետ բաղնիք կ'երթայ, և
թաղուհին չտանիր : Ինչպէ՛ս, իշխանուհին թաղաւորին հետ
բաղնիք կ'երթայ, և ինձ պատիւ չեն ըներ իմացնելու : Եւ ինչ-
պէս կ'ուզէք որ իմ հարսս դո՛հ լինի, և ինչպէս կ'ուզէք որ ես
դո՛հ լինիմ :

— Բայց, սիրելի Ֆիլիպ — ըսաւ Աննա թաղուհին — կ'զա-
ռանցես. Պ. Պր. քինկհէմը ճամբել տուիր, Պ. կիշն արտորել
տուիր, միթէ հիմակ ալ թաղաւորը Ֆոնդէնայլօէն պիտի ճամբես :

— Ո՛հ, այդ չէ իմ միտքս, տիկին — ըսաւ արքայազնը գծգմե-
լով : — Բայց կրնամ ես քաշուիլ, և պիտի քաշուիմ :

— Թաղաւորէն, եղբօրէդ նախանձիս :

— Այո՛, թաղաւորէն, եղբօրէս կ'նախանձիմ, տիկին, կ'նա-
խանձիմ, կ'նախանձիմ, կ'նախանձիմ :

— Ճշմարիտը, Ֆիլիպ — գոչեց Աննա թաղուհին սրտմտու-
թիւն և բարկութիւն կեղծելով — կ'սխալմ հաւտալ որ խնդ և
իմ հանգստութեանս երգմնեալ թշնամի մ'ես, և ահա քեզ աս-
պարէզս բաց կ'ընողմ, այդպիսի ցնորից դէմ գէ՛նք չունենա-
լուս համար :

Աննա թաղուհին այսպէս խօսեցաւ , աթուր վերցոյ և արքայազունն անհնարին զայլայման մէջ թողուց :

Արքայազունը պահ մը շուարած մնաց , յետոյ՝ ինքն իրեն դալով իր բոլոր ոյժը գտնելու համար , վերստին ախոռն իջաւ , ձիադարմանը դառաւ , վերստին կառք մը խնդրեց , վերստին ձի մ'ուղեց , և երբ կրկին պատասխանով ձիապանն խմացուց թէ ոչ կառք կար և ոչ ձի , արքայազունն ախոռապանի մը սպասուորին ձեռքէն մտրակ մը խլեց և խեղճ ձիապանին ետէն ընկաւ խաբազանի հարուածներ իջեցնելով և հասարակաց բակին բոլորտիքը գառնալով , առանց անոր աղաղակներն ու աղաչանքը մտիկ ընելու . յետոյ՝ արքայազունը՝ հողին բերանն եկած և շնչաստաւ , քրտնաթոր և բոլոր անգամներն ՚ի դող , իր սենեակն ելաւ , իր ամենէն չքնաղ յախճապակները կտոր կտոր ըրաւ , ապա պառկեցաւ իր անկողները կօշիկներն ու խժանները չհանած , և պոռալով :

— Օղնութեան , օղնութեան հասէք :

ԺԸ

ԲԱՂՆԻԲ

Ի վալվէն՝ ծաղկաւետ ուռիներու անթափանց կամարներու ներքեւ , ուռիներ որ՝ իրենց դալար կատարները խոնարհելով , կապուտակ գետակին մէջ իրենց տերեւներուն ծայրերը կ'ընթէին , նաւակ մը , երկար ու տափակ , կապոյտ վարագոյրներով ծածկուած ելնարաններով , լուղակ Անահիտներու իրբեւ պատսպարան կ'ծառայէր , և իրենց ելուստին ակնդէտ կ'սպասէին քսան հատ զարդ մանակով Արդեօններ , որ կ'արշաւէին՝ վառվռուն և խանդով լի , դետին լօռուտ և հոտաւետ արիերուն վրայ :

Բայց՝ Անահիտ , նոյն խակ ամօթխած Անահիտ , երկայն քլամիդ հագած՝ ընդհատ պատկառու , ընդհատ անթափանցելի էր քան իշխանուհին , որ զիցուհոյն չափ զեղանի էր և նորատի : Այն

զի , թէև որսորդուհոյն նուրբ պատմութեանը հաղեր էր , դարձեալ իր կլոր ու սպիտակ ծունկը կ'երևէր . թէև իր հնչական կապարճն ունէր , իր թուխ ուտերը կ'տեսնուէին , մինչդեռ հարիւր անգամ պատատեալ քօղով մը փաթթուած էր իշխանուհին , երբ որ իր կանանց թեք կ'մտնէր , և զանի անհպելի կ'ընէին ինչպէս ամենէն անխօսեմ՝ նոյնպէս ամենէն թափանցիկ աչաց :

Երբ որ իշխանուհին սանդղէն վեր ելաւ , ներկայ բանաստեղծները , և ամենքը բանաստեղծ էին երբ խնդիրն իշխանուհոյն վերայ կ'դառնար , քսան արշաւող բանաստեղծները կայ առին , և միաձայն պուռային թէ իշխանուհոյն մարմէն չէ թէ ջրի կայլակներ այլ մարդարխներ կ'հոսէին որոնք կ'երթային բարբառս գետին մէջ անհետ լինելու :

Թագաւորը՝ որ այս բանաստեղծութեանց և նուիրատուութեանց կեդրոնն էր , լուծիւն պատուիրեց մեկնաբաններուն որոց ախոնը չպիտի դադրեր , և սանձը դարձուց՝ վերաւորելու երկիւղէն կնկան համեստութիւնն և իշխանուհոյն արժանապատուութիւնը , թէև մետաքսէ վարագոյրներու ներքեւ կ'դառնէր :

Ուստի նոյն տեսարանը դատարկ մնաց և նաւակին մէջ խոր լուծիւն արեց : Արագոյրներուն ծփումէն , ծալքերու ելեւջէն , և այլ և այլ շարժումներէն դիւրին էր գուշակել կանանց երթ և եկն որ իրենց ծառայութեան մէջ ժրաջան էին :

Թագաւորը ժպտելով մտիկ կ'ընէր իր աղատորդիներուն խօսքը , բայց զանի տեսնելով դիւրին էր գուշակել որ ուշադրութիւնը բոլորովին անոնց տուած չէր :

Արդարև՝ այն ինչ երկաթէ զաւազաններու վրայ սահող օղակներուն ձայնը յայտնեց որ իշխանուհին հաղուած է և թէ-զիցուհին պիտի երևէր , որ թագաւորն իսկոյն դառնալով՝ և զետափին մօտ վաղելով , նշան տուաւ ամէն անոնց որ ծառայելու կամ զբօսելու համար իշխանուհոյն ուղեկցեր էին :

Տեսնուեցան պայիկներ որ կ'խուժէին՝ փոխնորդ ձիեր միասին բերելով , տեսնուեցան ճիւղերուն ներքեւ պատսպարուած կառքեր՝ որ վրանին կ'մօտենային , նոյնպէս սպասուորներու , բանբերներու , կիներու երամբ , որ իրենց տեարց բաղնիք առնելու ատեն՝ մեկուսի

իրենց գիտողութիւնները փոխադարձ ըրեր էին, նոյնպէս իրենց դատաքննութիւնները, իրենց շահուց վիճաբանութիւնը, որ այն ատենուան փախտական օրագիրն էր, զոր ոչ ոք կ'ընէ, և ոչ իսկ կոհակները, մարդոց այս հայլին, խօսից այս արձագանքը. կոհակները՝ վկաներ էին զոր Աստուած անհունութեան մէջ դահալիծեց, ինչպէս որ նոյն տեսարանին գերասանները յախտանականութեան մէջ նետեց:

Այս բոլոր քաղմութիւնն որ դետին եղբբը կ'ստնէին, առանց ՚ի համար առնլու շատ մը գեղացիներ՝ որ եկեր էին թաղաւորն ու իշխանուհին տեսնելու փափաքով, բոլոր այս քաղմութիւնը, ութ տաս վայրկեան մեծ անկարգութեան մէջ ընկաւ, խառն ՚ի խուռն այլ ՚ի տես չափէ դուրս զուարճալի հանդէս մը ներկայացուց:

Թաղաւորը դետին ոտք կոխեր էր, բոլոր պալատականներն աւնոր հետեւեցան, իշխանուհւոյն իր ձեռքն ընծայեր էր, իշխանուհւոյն ձիու պերճ հազուստն և իր վայելուչ մէջքը կ'դերազանցեր, որ այս նուրբ ասուէ և արծաթահիւս զգեստին ներքեւ աւելի աչքի կ'ընէր: Գիսակը՝ որ դեռ ևս նամէտ էր, և սև սաթթէ աւելի թուխ՝ իր սպիտակ և յստակ վեղը կ'ընէր: Խնդութիւնն ու կայտառութիւնը կ'փայլէին իր աղւոր աչաց մէջ, նա հանգիստ էր, ջլուտ, օղը կ'ծծէր սրաղին՝ պայլի մը գրած նկարէն հովանոցի մը ներքեւ:

Ձկար այնքան փափուկ, այնքան շնորհալի, այնքան բանասիրասական երևոյթ մը քան թէ այն երկու դէմքերն որ հովանոցին շքին ներքեւ սքօշեալ էին, թաղաւորը՝ որու սպիտակ ակունքն անընդհատ ժպիտով մ'երևան կ'ելնէին, տիկինը, որու սև աչերը կարկէհանի պէս կ'փայլէին այլայլուն մետաքսի անուշ նշոյլին:

Երբ որ իշխանուհին իր ձիուն մօտ հասաւ, անապուսեան փառաւոր նծոյց մը, որ անբիծ սպիտակութիւն ունէր, թերևս փոքր ինչ ծանրաշարժ էր, այլ ուշիմ և նուրբ զլիտով, որ արագահան ձիու արիւնը սպանիականին հետ իր մէջ կ'կրէր յաջողութեամբ, և իր երկար աղիով գետինը կ'աւելէր, որովհետև իշխան-

ուհին կ'դանդաղէր ասպատանին հասնելու, թաղաւորը զանի իր գրկաց մէջ առաւ, այնպէս որ իշխանուհւոյն թեև իբրև կրակէ շրջանակ թաղաւորին վեղին փակաւ:

Լուի՝ քաշուելու ատեն՝ ակամայ իր շքերով զգուեց այն թեև որ չէր հեռանար = Յետոյ՝ իշխանուհին իր արքայազն աստուապանին շնորհակալ լինելէն ետև՝ նոյն միջոցին ամենքն իրենց ձիերը հեծան:

Թաղաւորն ու իշխանուհին մէկդի քաշուեցան որպէս զի պեսպակները, հեծելագունքն ու սուրհանդակներն անցնին:

Շատ մը ձիաւորներ՝ պաշտօնական քաղաքաժարութեան լծէն ազատ՝ թողուցին արձակ իրենց ձիերն և պատուօր զորդները տանող կառաց ետեւէն վաղեցին, որոնք Անահայ Որկատներու պէտ թարմ էին, և այս մերիկները, ծիծաղելով, շողակրատելով, աղաղակելով թռան դային:

Թաղաւորն ու իշխանուհին իրենց ձիերը մեքայլ վարեցին:

Նորին Վեհափառութեան և իշխանուհւոյն ետեւէն՝ բայց ակնածելի հեռաւորութեամբ՝ ծանրաբարոյ կամ թաղաւորին նայուածքին ներքև դառուելու փափաքող պալատականները՝ կ'դաշին՝ իրենց անհամբեր ձիերը բռնելով, և անոնց ընթացքը թաղաւորին և իշխանուհւոյն նծոյլին ընթացքին համեմատ կանոնաւորելով, և մտացի մարդոց ունեցած անուշ և զուարճալի խօսակցութիւն մը սկսելով, որոնք մարդավարութեամբ հազար տեսակ յուր քսութիւններ կ'արտաբերեն իրենց ընկերին նկատմամբ:

Խեղդուած քմծիծաղներու, սարսոնեան զուարթութեան ակնարկութեանց մէջ արքայազուներ, այս խեղճ բացական, անխնայ ծաղրեցին:

Բայց կարեկից եղան ողբալով Աիշի ճակատադրին, և սէտք է խոստովանիլ, կարեկցութիւնը նոյն միջոցին անպատահ չէր:

Սակայն թաղաւորն ու իշխանուհին իրենց ձիերուն շունչ տալէն և հարիւր անգամ կրկնելէն ետև ինչ որ իրենց լեզուին նիւթ կ'մատակարարէին պալատականներն որ զերենք խօսիլ կը տային, որսի թեթև արշաւն սկսան, և այն ատեն այս ձիավարներու ծանրութեամբն անտառին խորունկ ծառուղիները թնդացին:

Մեղմաձայն խօսակցութեանց, մտերմական ճառերուն, խորհրդաւոր կերպով մ'ըսուած փոխադարձ խօսքերուն՝ աղմկալի քահանայներ յաջորդեցին. հեծելադուռ սրահապաններն սկսեալ մինչև իշխանները զուարթութիւնը տարածուեցաւ: Ամենքը սկսան ծիծաղիլ և աղաղակել: Անծեղներն ու ազուաները փախան կոկորդական ճիչեր հանելով կաղնիներուն ալէծուփ կամարներուն ներքև. կկուն իր միակերպ արտունջն ընդհատեց պուրակին խորը: Ետեկիկներն ու թխկատարներն երամովին թռան, մինչդեռ եղջերուները, այծեամբերն և եղները կ'ոստոստէին՝ զարհուրելով թաւաններուն մէջ:

Այս ամբոխը՝ իր ճամբուն վրայ խնդութիւն, աղմուկ և լոյս սփռելով՝ կ'յառաջանար և իրմէ առաջ մինչև դղեակն իր յատուկ աղաղակը կ'հասնէր:

Թագաւորն ու իշխանուհին քաղաքը մտան, բաղմութիւնն ընդհանուր ուրախութեան աղաղակներով զերենք կ'ողջունէին:

Իշխանուհին փութաց երթալ արքայազուն ամուսինը գտնել: Բնազդումով կ'իմանար որ այս ուրախութենէ դուրս ընդ երկար մնացեր էր Ֆիլիսոս:

Թագաւորը զնաց թաղուհիները գտնելու, զիտէր թէ պարտաւոր էր, մանաւանդ մէկուն՝ իր երկարատե բացակայութեան փոխարինութիւն մը:

Բայց իշխանուհին արքայազնէն չընդունուեցաւ: Իրեն պատասխան տուին որ արքայազունը կ'ընանար:

Թագաւորը՝ ինչպէս միշտ՝ Մարի-Թէրէզը գեղածիծաղ գտնելու տեղ, Աննա թաղուհին գտաւ մեծ սրահին մէջ, որ անոր զալուստը կ'լրտեսէր, գէս անոր մօտեցաւ, անոր ձեռքէն բռնեց և իր սենեակը տարաւ:

Ինչ որ իրարու ըսին, կամ լաւ ևս ինչ որ մայր թաղուհին Ղուի Թրի ըսաւ, երբէք մէկը չիմացաւ. բայց զիւրին էր զայն դուշակել թագաւորին նեղացած գէմքէն այս խօսակցութեան աւարտումէն ետքը:

Իսկ մենք որ պաշտօն ունինք մեկնելու, ինչպէս նաև մեր մեկնութիւններն ընթերցողին հաղորդել, մեր պարտաւորութիւնը կա:

տարած չափով լինէինք, այս սեսակցութեան արդիւնքն անոր չիմացնելով:

Այուսանք զոնէ, որ հետեւեալ դլխուն մէջ խնդիրն ըստ բաւականին սարգուած սլիտի դանէ:

ԺԹ

ԹԻԹԵՌՆԻԿՆԵՐՈՒ ՈՐՍԸ

Երբ թագաւորն իր սենեակը մտաւ քանի մը հրամաններ տալու և զաղափարները կանոնաւորելու համար՝ իր սեղանին վրայ փոքրիկ տոմսակ մը գտաւ որու ձեռագիրը ծպտեալ կ'երևէր:

Տոմսակը բացաւ ու կարդաց.

« Շնորհակէտ, հազար տեսակ բաներ ունիմ ձեզի ըսելու »:

Շատ ատեն չկար որ թագաւորն ու իշխանուհին իրարմէ բաժնուեր էին, ուստի կարելի չէր որ այս հազար տեսակ բաները վալվէնը Ֆոնդէնպլօէն զատուլ ճամբուն վրայ իրենց ըսած երեք հազար տեսակ բաներուն շարունակութիւնը լինին:

Հետեւապէս տոմսակին շփոթութիւնն ու անոր շտապը թագաւորը մեծ մտածմունքի տարին:

Թագաւորը փոքր ինչ իր հազուստը շտկեց և գորս ելաւ իշխանուհւոյն այցի զնալու համար:

Իշխանուհին՝ որ չէր կամեր իմացնել որ անոր կ'սպասէր, իր բոլոր նամիշտներով պարտէզն իջեր էր:

Երբ որ թագաւորն իմացաւ որ իշխանուհին պոռոյտ մ'ընելու համար սենեկէն դուրս ելեր է, իր ձեռաց տակը գտնելու կարող եղած բոլոր աղատորդիները ժողվեց և հրախրեց որ իր ետեւէն սպասէ զն իջնեն:

Իշխանուհին թիթեռնիկներ կ'որսար զալարաւէտ մարդի մը վրայ ուր արեւագէմներով և մոշնիկներով շրջապատուած էր:

Անայէր նա այս կանանց ամենէն քաջերուն և նորատիներուն:

վազելը, և կռնակը հովանոցի մը դարձուցած, անհամբեր կ'սպասեիր թագաւորին դալստեան, որու հետ ժամադիր եղեր էր:

Աւազին վրայ բազմաթիւ քայլերու ազմուկը գլուխը դարձնել առաւ. Լուի ԺԳ՝ զլիսաբաց էր, իր ցուպով թիթեռնիկ մը զարկեր էր, զոր Պ. Սէնդ-Էնյան խոտին վրայէն շնչասպառ առեր էր:

— Տիկին, կ'նայիս որ ես ալ քեզի համար որսորդութիւն կ'ընեմ — ըսաւ թագաւորը:

Եւ անոր մօտեցաւ:

— Պարոններ — ըսաւ նա իրեն հետևորդներն եղող ազատորդիներուն դառնալով — դուք ալ ինձի պէս սա կանանց թիթեռնիկներ տարէք:

Այս խօսքով ամենքը ճամբել կ'ուզէր:

Այն ատեն բաւական հետաքրքրական տեսարան մը տեսնուեցաւ. հին պալատականները՝ և յոյր պալատականները, թիթեռնիկներու ետեէն վազեցին՝ զլիսարկինն վար ձգելով՝ և ցուպը վերցուցած՝ մրտենիներն ու մոշենիները զարնելով, ինչպէս որ պիտի զարնէին ուրանիացիքը:

Թագաւորն իշխանուհոյն ընծայեց իր ձեռքը, անոր հետ՝ իր քեզի գիտելու կեդրոն, մամուալից ծածկոց ունեցող նստարան մը ընտրեց՝ որ տեսակ մը շինական տնակ, և պարտիզպանի մ'երկջոտ խելքին շնորհիւ շինուած էր վեր ՚ի վերոյ. պարտիզպանը գեղջական և քմայական տեսք մը տուեր էր անոր, այն ժամանակի պարտիզպանութեան անաչառ ոճով:

Այս տնակն որ կոտիմով և պատաստուկ վարդենիով ծածկուած էր՝ անթեկն նստարան մը կ'հովանաւորէր, այնպէս որ հանդիսատեսները՝ մարդին վրայ առանձնացած, կ'տեսնէին և ամէն կողմէ կ'տեսնուէին, բայց իրենց խօսքը չէին կրնար ուրիշները լսել, և եթէ մօտենային լսելու համար պիտի տեսնուէին:

Այն նստարանէն՝ որու վրայ երկու շահախնդիրները բազմեցան՝ թագաւորը քաջալերութեան նշան մ'ըրաւ որսորդներուն, ապա՝ որպէս թէ իշխանուհոյն հետ թիթեռնի վրայ կ'խօսակցէր որ սօսկի ասեղէ մ'անցած և զլիսարկին վրայ սեւեռած էր,

— Միթէ այս տեղ խօսակցելու համար յարմար տեղ մը չե՞նք գտնուիր — ըսաւ նա:

— Այո՛, վեհափառ արքայ, վասն զի ձեզի լսելի և ամենուստ տեսանելի լինելու պէտք ունէի:

— Ես ալ նոյնպէս — ըսաւ Լուի:

— Միթէ իմ տոմսակա ձեզ զարմացո՞ւց:

— Զարհուրեցո՞ւց: Բայց քեզի լսելիքս աւելի կարևոր է:

— Ո՛հ, բնաւին: Գիտէ՞ք արդեօք որ արքայազունը՝ զիս իր սենեակը չընդունեց:

— Քե՞զ, և ինչո՞ւ համար:

— Միթէ չէ՞ք գուշակեր:

— Ա՛հ, տիկին. ուրեմն երկուքնիս ալ իրարու նոյն բանն ունինք լսելու:

— Ուրեմն ձեզի ի՞նչ պատահեցաւ:

— Կ'ուզես որ ես սկսիմ:

— Այո՛, ես բոլոր լսելիքս ըսի:

— Ուրեմն կարգն իմն է: Գիտցիր որ այս տեղ զալուս մօրս հանդիպեցայ որ զիս առաւ իր սենեակը տարաւ:

— Ո՛հ, մայր թագուհին — ըսաւ իշխանուհին մտատանջութեամբ — այդ ծանր խնդիր է:

— Անտարակոյս: Աւասիկ ինձ ըսածը . . . բայց ամենէն առաջ ներէ՛ ինձ որ նախաբան մ'ընեմ:

— Խօսեցէք, տէր արքայ:

— Միթէ եղբայրս երբէք իմ վրայ խօսք ըրած է քեզի:

— Շատ անգամ:

— Արդեօք եղբայրս իր նախանձը քեզի յայտնած է երբէք:

— Ո՛հ, յաճախադո՞յն:

— Ի՞մ վրայ նախանձը:

— Ո՛չ, այլ ուրիշի նկատմամբ . . . :

— Այո՛, զիտեմ, Պրքինկհէմի, Աիշի վրայ:

— Ճիշտ անոնց վրայ:

— Լաւ ուրեմն, տիկին, ահա հիմակ ալ եղբայրս իզնէ նախանձելու սկսեր է:

— Կ'նայե՞ք — պատասխանեց իշխանուհին նենդամտութեամբ ժպտելով:

— Վերջապէս, կ'երևի ինձ որ բնաւ տեղի չտուինք . . . :

— Երբէք, դէ՞ծ ես . . . : Բայց ի՞նչպէս իմացաք Ֆիլիպի նախնանք :

— Մայրս ինձ յայտնեց թէ եղբայրս իր սենեակը մտեր է կատարել մարդու մը պէս, թէ հաղարաւոր տրտունջներ արձակեր էքու . . . ներէ՛ ինձ . . . :

— Ըսէ՛ք, ըսէ՛ք :

— Գու պչրասիրութեանդ վրայ : Ա՛րեւի թէ եղբայրս անիրաւ բաներ ալ ըսելու սկսեր է :

— Շատ բարեսիրտ էք, տէր արքայ :

— Մայրս ղինքն ապահովցուց. բայց նա սնդեց թէ ղինքը ստէպ չափէն աւելի ապահովցուցեր են և այսուհետև չուզեր ապահով լինիլ :

— Մի՞թէ լաւ ևս չէ՞ր լիներ եթէ բնաւ հոգ չընէր :

— Ես ալ այդ ըսի :

— Խոստովանեցէք, տէր արքայ, որ աշխարհս շատ չար է : Ի՛նչ, եղբայր մը, քոյր մը չեն կարող երարու հետ խօսիլ՝ իրարու ընկերութենէ ախորժիլ առանց բանբասանքի և կասկածներու տեղի տեղի տալու : Վասն զի վերջապէս, Վեհափառ, դէ՞ շու՞թիւն մ'ըրած չունինք, և բնաւ ընելու ալ փափաք չունինք :

Եւ իշխանուհին դուռը և զրդուիչ աչքով մը թաղաւորին կը նայէր, նայուածք որ ամենէն ցուրտ և զզոն մարդուն ցանկութեան հուրը կ'ըրբըրէ :

— Ո՛չ, իրաւ է — հառաչեց Լուի :

— Գիտէ՞ք արդեօք, Վեհափառ տէր, որ եթէ այս բանս շարունակուի պիտի բռնադատուիմ աղմուկ հանել : Նայինք, մեր վարմունքը դատեցէք, կանոնաւոր է թէ ոչ անկանոն :

— Ո՛հ, անտարակոյս, կանոնաւոր է :

— Ստէպ միայնակ մնալով, քանի որ նոյն բաներէ կ'հաճինք, կրնայինք գէշ բաներու մէջ մոլորիլ, մի՞թէ մոլորեցանք . . . : ինձի համար դուք եղբայր մ'էք միայն, և այլ ոչ ինչ :

Թաղաւորն ունքը սրստեց :

Իշխանուհին շարունակեց .

— Ձեր ձեռքն որ ստէպ իմինիս կ'հանդիպի, չարտադրեր յիս այն սարսուռները, այն այլայլութիւնը . . . զոր սիրողներն, օրինակի համար . . . :

— Ո՛հ, բաւական է, բաւական, կ'պաղատիմ քեզ — ըսաւ թաղաւորը տանջուելով : — Գու անդու՞ծ ես և զիս պիտի մեռցընես :

— Ի՞նչ կայ ուրեմն :

— Վերջապէս . . . բացորոշ կ'ըսես որ իմ քովս բան մը չես զղար :

— Ո՛հ, տէր արքայ . . . այդ չէ ըսածս . . . իմ գորովս . . . :

— Հանրիէդ . . . բաւական է . . . վերստին կ'ինդրեմ քեզնէ . . . դու զիս մարմնէ կ'կարծես, այդ սխալմունքդ ուղղէ :

— Ձեր միտքը չեմ ըմբռներ :

— Փոյ՞ծ չէ — հառաչեց թաղաւորն աչերը վար առնելով : — Այսպէս մեր հանդիպումները . . . մեր ձեռքի սեղմումները . . . մեր փոխադարձ նայուածքը . . . ներէ՛, ներէ՛ . . . : Այո՛, իրաւունք ունիս, և գիտեմ ի՛նչ ըսել կ'ուզես :

Իր զլուխը ձեռաց մէջ պահեց :

— Զոյշ եղիք, տէր արքայ — ըսաւ իշխանուհին աշխուժիլ — աւասիկ Պ. Սէնդ-Էնյան որ մեզի կ'նայի :

— Իրաւ է — զոչեց Լուի ղայրագին — չկայ բնաւ աղատութեան ստուերը. չկայ երբէք անկեղծութիւն յարաբերութեանց մէջ . . . : Արծնեք բարեկամ մը գտնել, և լսես մ'ունինք . . . բարեկամուհի մը, և միայն կ'տեսնենք . . . քոյր մը :

Իշխանուհին Հանրիէդ լռեց և աչերը վար առաւ :

— Ամուսինս, արքայազն եղբայրդ նախանձոտ է — մրմնաց նա այնպիսի ձայնով մ'որու անուշութիւնն ու հրապոյրն անբացատրելի էին :

— Ո՛հ — զոչեց յանկարծ թաղաւորը — իրաւունք ունիս :

— Կ'նայի՞ք — ըսաւ այնպէս նայելով անոր որ սիրտն այրէ — դուք աղատ էք, ձեր վրայ չեն կասկածիր. ձեր տան խնդութիւնը չեն թունաւորեր :

— Աւա՛ղ, տակաւին բան մը չզիտես, չզիտես որ թաղուհին նախանձոտ է :

— Մարի-Թէրէզը :

— Յիմարութեան չափ նախանձոտ : Եղբօրս նախանձն անորմէ ծաղած է . կ'արտասուէր , մօրս կ'զանդատէր նա , կ'մեղադրէր այն բաղնիքի զբօսանքն որ այնչափ անուշ են մեզն համար :

— Ինձի՞ համար — հարցուց իշխանուհոյն նայուածքը :

— Յանկարծ եղբայրս որ ականջ դրեր էր , banos բառը կը լսէ , զոր թաղուհին դառնութեամբ կ'արտասանէր . այս բանս իր կասկածը պարզեց : Շլմորած ներս կ'մտնէ , խօսակցութեան կ'խառնուի և մօրս հետ այնքան վշտաղին կ'վիճի որ մայրս կ'ըստիպուի անոր քովէն հեռանալ , այնպէս որ նախանձոտ ամուսնոյ մը հետ գործ պիտի ունենաս և ես ալ իմ աչաց առջև անզաղար , անխուսելի կերպով պիտի ունենամ նախանձու ճիւղղը , ուռած աչօք , լղար այտերով , չարադոյժ բերնով :

— Ինձ թաղաւոր — մըմուաց իշխանուհին թողլով որ ձեռքը Լուիի ձեռքը փայփայէ :

Լուի այս ձեռքը բռնեց , և որպէս զի սեղմէ զայն առանց կասկած տալու հանդիսականներուն որ այնչափ ուշադիր թիթեռներ չփնտուելով լուրեր կ'փնտուէին և թաղաւորին ու իշխանուհոյն խօսակցութեան մէջ խորհուրդ մը կ'զուշակէին , Լուի իր հարսին մօտեցուց հողելար թիթեռնիկը . երկուքնին ալ ծռեցան որպէս թէ անոր թևերուն բիւրաւոր ակունքն ու ոսկի փոշիներու հատիկները համբեն :

Միայն ո՛չ մին և ո՛չ միւսը բերանը բացաւ . իրենց մազերն իրարու կ'դպէին , իրենց շունչն իրարու կ'խառնուէր , իրենց ձեռքն իրարու մէջ կ'այրէր :

Այսպէս անցուցին հինգ վայրկեան :



ԹԻԹԵՒՆԵՐ ՈՐՍԱԼՈՒ ԱՏԵՆ ՄԱՐԴ ԻՆՉ ԿՓՆՏՈՒՆ

Այս երկու նորատի անձինք պահ մը գլուխնին ծռած մնացին

այս նորածին սիրոյ կրկին մտածութեան ներքև որ քսանամեայ երեակայութեանց մէջ այնքան ծաղիկներ կ'արտադրէ :

Տիկին Հանրիէդ կողմնակի կ'նայէր Լուի թաղաւորին : Բարեկալմ բնութեան տէր անձերու կ'նմանէր իշխանուհին՝ որոնք դիտեն յինքեանս նայիլ միանգամայն և այլոց : Լուի թաղաւորին սրտին խորը սէր կ'տեսնէր , իբրև ճարտար լուղորդ մ'որ ծովուն յատակը մարդարիտ մը կ'տեսնէ :

Հասկըցաւ նա որ Լուի վարանման մէջ էր եթէ ոչ կասկածի , և թէ պէտք էր ընդ առաջ մղել այս ծոյլ կամ վեհերաւ սիրար :

— Այսպէ՛ս . . . — ըսաւ նա և լուութիւնն ընդմիջելով հանդերձ հարցում մ'ըրաւ :

— Ի՞նչ ըսել կ'ուզես — հարցուց Լուի պահ մը սպասելէն ետք :

— Վուզեմ ըսել որ արդէն ըրած որոշմանս դառնալու պէտք պիտի լինի :

— Ի՞նչ որոշում :

— Այն որոշումը զոր արդէն Ձեր Աւեհափառութեան յայտներ էի :

— Ե՞րբ :

— Այն օրն որ եղբօրդ նախանձու դործերու վրայ իրարու բացատրութիւններ տուինք :

— Բայց այն օրն ի՞նչ կ'ըսէիր ինձ — հարցուց Լուի մտայոյդ :

— Աւեհափառ ատէր , միթէ բոլորովին մոռցա՞ք :

— Ափս՛ս , եթէ դարձեալ դժբաղդութիւն մ'է , անշուշտ միտքս շուտով պիտի դայ :

— Ո՛հ , Աւեհափառ , ինձի համար միայն դժբաղդութիւն մ'է

— պատասխանեց Հանրիէդ — բայց հարկաւոր դժբաղդութիւն մը :

— Աստուած իմ :

— Եւ անոր պիտի հպատակիմ :

— Աերջպպէս ըսէ , ի՞նչ է այդ դժբաղդութիւնը :

— Բացակայութիւնը :

— Ո՛հ , նորէն այդ անօրէն գիտաւորութիւնդ մէջ կ'բերես :

— Աւհափան, հաւատարմ եղիք որ ես ինքնիրենս մաքառելէ ետև՝ ուժգին այդ որոշումն ըրի . . . : Աւհափան, հաւտայէք ինձ, որ սլարտիմ դառնալ յԱնկլիա :

— Ո՛հ, երբէք, երբէք, չսլիտի թոյլ տամ որ Ֆրանսայէն հեռանաս — զոչեց թաղաւորը :

— Եւ սակայն — ըսաւ իշխանուհին անուշ և տխուր հաստատամտութիւն մը կեղծելով — սակայն, Աւհափան տէր, շատ ստիպողական է այս, և ուրիշ պատճառ ալ կայ, համոզուած եմ որ այս է նաև ձեր մօրը կամքը :

— Կամքը — զոչեց թաղաւորը : — Օ՛, օ, սիրելի քոյր, իմ առջև զարմանալի խօսք մ'է այդ որ կ'ըսես :

— Բայց — պատասխանեց Հանրիէդ ժպտելով — միթէ երջանիկ չէ՞ք բարի մօր մը կամաց ենթարկիլ :

— Բաւական է, կ'սպաղատիմ քեզ, սիրտս կ'խորտակես :

— Ե՛ս :

— Անտարակոյս, այդ չուիդ վրայ այնպէս հանդարտութեամբ կ'խօսիս . . . :

— Երջանիկ լինելու համար ծնած չեմ, Աւհափառ տէր — պատասխանեց իշխանուհին մեղամաղձոտ կերպով — և 'ի մանկութենէ սուղորած եմ իմ ամենէն սիրելի խորհուրդներս 'ի դերևելած տեսնել :

— Միթէ ստոյգ կ'ըսես : Եւ միթէ չուիդ քեզի սիրելի եղող խորհուրդ մ'ի դերև հանած պիտի լինէր :

— Եթէ այո՞ պատասխանէի ձեզ, միթէ իրաւ չէ՞, Աւհափառ, որ ձեր վիշաք համբերատար ոգւով պիտի կրէիք :

— Անգո՛ւթ :

— Զգուշացէք, Աւհափառ, մեզի կ'մօտենան : Թաղաւորն իր բոլորտիքը նայեցաւ :

— Ո՛հ — ըսաւ նա :

Ապա իշխանուհոյն դառնալով,

— Նայինք, Հանրիէդ, փոխանակ եղբորս նախանձուն դէմ զիս սպաննող չուով մը մաքառելու . . . :

Հանրիէդ իր ուսերը թեթև մը բարձրացուց իբրև մարդ որ կը տարակուսի :

— Այո՞, զիս պիտի սպաննէր այդ — պատասխանեց Ղուի : — Արի, փոխանակ այդ չուիդ վրայ պնդելու, միթէ երևակայութիւնդ . . . կամ լաւ ևս սիրտդ քեզի ոչ ինչ չ'թելադրէր :

— Եւ ի՞նչ կ'ուզէք որ սիրտս ինձ թելադրէ, Տէ՛ր Աստուած :

— Բայց վերջապէս, ըսէ՛, ի՞նչպէս կ'ապացուցանեն մարդու մ'որ նախանձոտ լինելու իրաւունք չունի :

— Նախ, Աւհափառ տէր, պէտք է անոր նախանձու առիթ մը չտալ, այսինքն միայն զինքը սիրել :

— Ո՛հ, աւելի լաւ միջոցի մը կ'յուսայի :

— Ի՞նչ բանի կ'սպասէիք :

— Կ'յուսայի թէ պիտի պատասխանես, նախանձոտները կարելի է անդորրել անոնց նախանձու առարկային տրուած սէրը կեղծելով :

— Աւհափան, կեղծել դժուարին է :

— Բայց սակայն դժուարութեանց յաղթելով մարդ երջանկութեան կ'հասնի : Իսկ ես, կ'երդնում որ իմ նախանձոտներս սլիտի սուտ հանեմ, 'ի հարկին, քեզի հետ ինչպէս ամէն կանանց հետ վարուիլ կեղծելով :

— Գէշ միջոց, տկար միջոց — ըսաւ նորատի կինն իր չքնադ գլուխը ցնցելով :

— Ամէն բան գէշ կ'գտնես, սիրելի Հանրիէդ — ըսաւ Ղուի դժգոհելով : — Բոլոր առաջարկածներս կ'ըրես : Գոնէ անոնց տեղ ուրիշ բան մը դիր : Արի, հնար մը փնտռէ : Աանանց գիւտերուն շատ կ'վստահիմ : Գու ալ ըստ կարգի հնարէ :

— Լաւ ուրեմն, սա միջոցը կ'գտնեմ, միթէ մտիկ կ'ընէք, Աւհափառ տէր :

— Միթէ կ'հարցնեն : Իմ կենաց և մահուան խնդիրը կ'յուզես, և ապա կ'հարցնես թէ մտիկ կ'ընեմ :

— Լաւ ուրեմն, ես իմ վրայ կ'դատեմ այդ բանը : Եթէ իմ ամուսնոյս ուրիշ կնիւն մը վրայ ունեցած դիտաւորութեանց վըրայ զիս պատրելու փորձէին, ամէն բանէ աւելի բան մը միայն զիս պիտի ասպահուէր :

— Ի՞նչ բան :

— Նախ սա ապահովութիւնը պիտի ունենայի որ որ նոյն կրնան հոգ չտանիր :

— Լաւ , ես ալ ճիշտ այդ կ'ըսէի քիչ մ'առաջ :

— Իրաւ է : Բայց կատարելապէս ապահով լինելու համար կ'ուզեմ որ ամուսինս ուրիշ կնիկով մը ղըսողի :

— Ա՛հ , միտքդ կ'ըմբռնեմ — պատասխանեց Լուի ժպտելով :

— Բայց ըսէ՛ ինձ , սիրելի Հանրիէդ . . . :

— Ի՞նչ բան :

— Թէև այդ ճարտար միջոց մ'է , բայց բնաւ ղթասիրական չէ :

— Ինչո՞ւ համար :

— Նախանձոտին մտքին մէջ վէրքին երկիրը բուժելով ուրիշ վէրք մը կ'բանաս սրտին մէջ : Իրաւ է որ երկիրը չունի ալ , բայց ցաւն ունի , և այս ալ յոռադոյն կ'թուի ինձ :

— Համակարծիք եմ . բայց զէթ վերահասու չլինիր , ճշմարիտ թշնամին ո՛վ է չկասկածիր , սիրոյ չմաստեր . իր բոլոր ոյժը կ'ամփոփէ այն կողմն ուր իր բոլոր ոյժն ո՛չ իրի և ոչ անձի մը պիտի կարենան ղեան տալ : Մէկ խօսքով , Աեհափառ տէր , իմ դրութիւնս , որու գէմ խօսելուդ կ'զարմանամ , արդարև , նախանձոտներուն վիշտ կ'պատճառէ , բայց սիրողներուն բարիք կը հայթայթէ : Արդ՝ կ'հարցնեմ ձեզ , Աեհափառ , թերևս ձեզնէ զատ՝ ո՛վ երբէք մտածած է նախանձոտներու ցաւակից դտնուիլ : Միթէ մեղամաղձոտ կենդանիներ չե՞ն , որ միշտ թէ՛ պատճառով և թէ՛ առանց պատճառի գժբաղդ են . վերցուր պատճառը , և անոնց վիշտը չպիտի ջնջես : Այս հիւանդութիւնն երևակայութեան մէջ կ'գտնուի , և բոլոր երևակայական հիւանդութեանց պէս , այն ևս անբուժելի է : Ահա , այս առթիւ կ'յիշեմ , սիրելի արքայ , իմ խեղճ Տավէյն բժշկիս մէկ վճիռը , զիտուն և ուշիմ տօքթօր մը զոր այժմ իմ քովս պիտի ունենայի՝ եթէ եղբայրս՝ որ իրմէ չզատուիր , թոյլ տար : « Երբ երկու ցաւով կ'տառապիս , կ'ըսէր նա , քեզ նուազ վիշտ պատճառն ընարէ՛ , այդ վիշտդ քեզի պիտի թողում , վասն զի , յանուն Աստուծոյ , կ'ըսէր նա , այդ ցաւն ինձ մեծապէս օգտակար է որպէս զի միւսը ջնջելու կարող լինիմ » :

— Հատ լաւ ըսիր , լաւ դատեցիր , սիրելի Հանրիէդ — պատասխանեց թաղաւորը :

— Ա՛հ , ճարպիկ մարդիկ ունինք 'ի Լոնտօն , Աեհափառ տէր :

— Եւ այս ճարպիկ մարդիկ պաշտելի աշակերտուհիներ առաջ կ'բերեն . այդ Տավէյն , Տարլէյն . . . ինչպէս կ'անուանես զանի :

— Տավէյն :

— Լաւ , վնդուանէ անոր թոշակ պիտի կսպեմ իր առածին համար . դու , Հանրիէդ , կ'աղաչեմ քու ամենէն թեթև ցաւը ընտրելու սկսիր : Չես պատասխաներ , կ'ժպտիս , կ'ղուշակեմ ամենէն թեթև ցաւդ , Ֆրանսայի մէջ բնակութիւնդ է , չէ՞ այդպէս : Այդ ցաւդ քեզի պիտի թողում , և միւսին բժշկութիւնը սկսելու համար , այսօրուանէ կ'ուզեմ փնտուել մեզ հալածող նախանձոտներուն դէմ զանանցման նիւթ մը :

— Սո՛ւս , այս անգամ , իրաւ մեզի կ'մօտենան — ըսաւ Հանրիէդ :

Եւ Հանրիէդ իշխանուհին ճուեցաւ որ խիտ դալարին վրայէն ծաղիկ մը քաղէ :

Արդարև՝ մարդիկ կ'մօտենային . վասն զի՝ բլրին կատարէն յանկարծ խուժեցին խուժք մը նորատի կանայք որոց ետեէն կը զային ձիաւորներ . այս ասպատակին պատճառը փառաւոր սփինքս մ'էր որու վերին թևերն արևակէզ բուի փետուրներու կ'նմանէին , և ստորին թևերը վարդի թերթիկներու նման :

Այս շքեղ աւարը Գօնէյ-Շարանդ օրիորդին ցանցին մէջ ընկած էր , և այս օրիորդը կ'ցուցնէր զայն հպարտութեամբ մ'իր ոտններուն որոնք իրեն չափ լաւ խուզարկուներ չէին :

Որսի թաղուհին Լուի թաղաւորին և Հանրիէդի նստած տեղէն գրեթէ քսան քայլ հեռու նստաւ՝ բաղեղնով պատաստեալ փառաւոր կաղնիի մը տուաւ կռնակն և իր երկար ցպին եղէգնէն անցուց թիթեռը :

Օրիորդ Գօնէյ-Շարանդ շատ զեղանի էր . ուստի մարդիկ միւս կիները թողուցին և անոր բոլորն առին՝ անոր ճարպիկութիւնը գովելու պատրուակաւ :

Թագաւորն ու իշխանուհին այս տեսարանին կ'նայէին 'ի ծա-

ծուկ՝ իբրև ուրիշ ժամանակի մարդիկ որ փոքր սղեկներու խաղին կ'նային :

— Վարը կ'զբօսնուն — ըսաւ թագաւորը :

— Շատ, Վեհափառ. ես միշտ դիտած եմ որ երիտասարդութիւնն ու գեղեցկութիւն եղած տեղը մարդ միշտ կ'զբօսնու :

— Ի՞նչ կարծիք ունիս Գօնէյ-Շարանդ օրիորդին վրայ, Հանրիէդ — հարցուց թագաւորը :

— Ա՛րքեմ թէ փոքր ինչ գեղձան է — պատասխանեց Հանրիէդ, այս առաջին դիտողութեամբ բացայայտ մեկնելով միակ թերութիւնը զոր կարելի էր գտնել ապաղայ աիկին Մօնդէսպանի գրեթէ կատարուն գեղեցկութեան մէջ :

— Փոքր ինչ գեղձան, թող այդպէս լինի. բայց ինչ կ'երեկ թէ այդ պակասութեան չնայելով՝ դարձեալ գեղանի է :

— Այս է ձեր կարծիքը, Վեհափառ :

— Հապա՛, այս է :

— Լաւ սերեմն, իմ կարծիքս ալ այդ է :

— Եւ կ'տեսնես թէ որչափ շատ կ'փնտուռի :

— Ո՛հ, այդ կողմէն, այո՛, իրաւունք ունիք. սիրողները բուրտիքը կ'թռթռին. եթէ սիրողները վանելու ելնէինք, փոխանակ թիթեռներ որսալու, տես թէ ինչ աղւոր աւար ձեռք պիտի ձգէինք զանի բռնելով :

— Նայինք, ըսէ Հանրիէդ, ի՞նչ պիտի ըսէին եթէ թագաւորը բոլոր այս սիրողներուն մէջ մտնէր և այն կողմն իր ակնարկը ձգէր : Միթէ միւս կողմը դարձեալ նախանձող պիտի ունենար արդեօք :

— Ո՛հ, Վեհափառ տէր, օրիորդ Շարանդ շատ ազդու գեղմ'է — ըսաւ Հանրիէդ հառաչով մը — նախանձտը պիտի բուժէր, իրաւ, բայց ուրիշ նախանձոտ կ'ին մը պիտի ընէր :

— Հանրիէդ, Հանրիէդ — զոչեց Լուի — սիրտս ուրախութեամբ կ'ընուս : Այո՛, այո՛, իրաւունք ունիս, օրիորդ Գօնէյ-Շարանդ չափափազանց գեղանի լինելուն չկրնար վերարկու լինիլ :

— Թագաւորի վերարկու — ըսաւ Հանրիէդ ժպտելով — թագաւորի վերարկուն պէտք է որ գեղեցիկ լինի :

— Միթէ այդ խորհուրդը կ'տաս ինձ — հարցուց Լուի :

— Ո՛հ, ես, ինչ պիտի ըսեմ ձեզ, Վեհափառ, եթէ ոչ այդպիսի խորհուրդ մը տալով ինձի գէմ՝ զէնք սուած պիտի լինիս : Յիմարութիւն կամ զուտղութիւն պիտի լինէր եթէ խորհէի ձեզ սուտ սիրոյ մը գիւցազնուհին ընել կ'ին մ'որ գեղեցկազոյն լինէր քան այն որու համար ճշմարիտ սէր զգալը կ'անդէք :

Թագաւորը Հանրիէդի ձեռքը փնտուեց իր ձեռօքը, աչօքն անոր աչքը, և ապա այնպիսի քնքուշ խօսքեր արտասանեց և միանգամայն այնքան ցած ձայնով՝ որ պատմաբանը՝ որ պարտի ամէն բան լսել, զանոնք չլսեց :

Ապա, բարձր ձայնով,

— Լաւ ուրեմն — ըսաւ — դու ինքնին ընտրէ այն անձն որ մեր նախանձոտները բուժելու յաջողի : Անոր պիտի տամ բոլոր հողս, բոլոր խնամքս, զործերէս զողջած բոլոր ժամանակս, միւսին, Հանրիէդ, քեզի համար քաղած ծաղիկս, սրտիս մէջ ծընցուցած բոլոր զօրովաղին խորհուրդներս, միւսին՝ քեզի ուղղղելու շիշխած ակնարկս, որ քու անհոգութեանդ մէջ քեզ զըրդուելու օգնէ : Բայց լաւ ընտրէ, առ ահի որ անոր վրայ մտածել ուզելով, առ ահի որ իմ մատերովս քաղած վարդս անոր ընծայելու ատենս, քու կողմէդ ընկճած չղտնուիմ, և թէ աչքս, ձեռքս, շրթունքս իսկոյն քու կողմի չդառնան, եթէ բոլոր տիեզերքն իսկ իմ գաղտնիքս զուշակելու անգամ կարող լինի :

Մինչդեռ այս խօսքերը թագաւորին բերնէն կ'թռէին սիրոյ կոհակի մը պէս, Հանրիէդ կ'կարմրէր, կ'զողզողար, երջանիկ, հպարտ, արբշիւ. պատասխանելու բան մը չգտաւ, նուէրներու համար ունեցած զուտղութիւնն ու ծարաւը շատացած էր :

— Պիտի չյաջողիմ — ըսաւ նա իր գեղեցիկ աչքը վեր վերջնելով — բայց չէ թէ ձեր խնդրած կերպովը, վասն զի ուրիշ գիցուհոյ մը սեղանին նուիրել ուղած բոլոր խունկի, ահ, տէր արքայ, իմ նախանձս կ'զրդուէ, և կ'ուզեմ որ այն խունին ինձի դայ, և չեմ ուզեր որ անոր մէկ հիւլէն անգամ ձամբուն վրայ մոլորի : Ուրեմն, տէր արքայ, ձեր արքայական հրամանով, պիտի ընտրեմ ինչ որ ձեզ զուարճացնելու ամենէն նուազ կարող

պիտի լինի, և իմ նկարս բոլորովին անարատ պիտի պահէ ձեր հոգւոյն մէջ:

— Երջանկաբար — ըսաւ թագաւորը — սիրտդ գէշ շինուած չէ, թէ ոչ ինձ ըրած սպառնալիքէդ պիտի դողայի, այս կիտիս վրայ մեր զգուշութիւններն ըրինք, և քու բոլորտիքդ, ինչպէս իմ բոլորտիքս՝ կախած գէմք մը դսնել դժուարին պիտի լինի:

Երբոր թագաւորն այսպէս կ'սօսէր, Հանրիէզ ոտք ելեր էր, աչօքը բոլոր արօտը քններ, և մանր ու լռին քննութենէ մ'եաք, թագաւորն իրեն կոչելով:

— Ահա, Ահհափառ — ըսաւ նա — կ'տեսնէք բլրին դար 'ի վարը, սա պուրակին մօտ՝ սա գեղանի յեանորդն որ միայնակ կը քալէ, գլխիկոր, թևերն առ կախ, առ ոտն կոխած ծաղիկներուն մէջ բան մը փնտռելով, իրենց միտքը կորուսած անձերու պէս:

— Օրիորդ Լա Ալալիէրը — ըսաւ թագաւորը:

— Այո՛:

— Ո՛հ:

— Միթէ չճարմարիւր ձեզի, տէր արքայ:

— Բայց նայէ մի անգամ այն խեղճ օրիորդը, նիհար, գրեթէ ծիւրացած է:

— Լաւ, միթէ ես գէր եմ, ես:

— Բայց նա մահատու արամութիւն մ'ունի:

— Անի հակապատկեր մը պիտի կազմէ իմ բնութեանս հետ, որու համար կ'ըսեն թէ շատ զուարթ է:

— Բայց կ'կաղայ նա:

— Այդպէս կարծէք:

— Անշուշտ, նայէ անգամ մը, թողուց որ ամենքն իր առջևէն երթան սրպէս զի իր մարմնական պակասութիւնը չտեսնեն:

— Լաւ, Տափնէին չափ չպիտի վազէ և չպիտի կարենայ Ապողոնէ խոյս առլ:

— Հանրիէզ, Հանրիէզ — ըսաւ թագաւորը գծովն լուր — դացիր ինձի քու նաժիշտներուդ մէջ ամենէն տձեն ընտրեցիր:

— Այո՛, բայց իմ նաժիշտներէս մին է, այս կէտը լաւ նշանակեցէք:

— Անտարակոյս: Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Ըսել կ'ուզեմ թէ, այս նոր դիցուհւոյն այցի գալու համար, պիտի ստիպուիք իմ սենեակս դալու, և թէ վայելչութիւնն 'ի մասնաւոր դիցուհւոյն հետ սիրաբանելու ձեզ արդիլելով, պիտի բռնադատուիք զանի իմ շրջանիս մէջ տեսնել և ինձ խօսիլ անոր հետ խօսելով: Ըսել կ'ուզեմ, վերջապէս, որ նախանձոտներն իրաւունք չպիտի ունենան եթէ կարծեն թէ ինձի համար սենեակս կ'զաք, քանի որ օրիորդ Լա Ալալիէրին համար պիտի զաք:

— Որ կ'կաղայ:

— Հաղիւ ուրեմն:

— Որ երբէք բերանը չբանար:

— Բայց երբ բանայ չքնաղ ակումներ կ'ցուցնէ:

— Որ կրնան իբրև օրինակ ծառայել ոսկերախօսներուն:

— Չեր շնորհը զանի պիտի գիրցնէ:

— Հանրիէզ:

— Վերջապէս, ինձ չթողուցիք որ ամէն բան ինքնօրէն որոշեմ:

— Ափսո՛ս, այո՛:

— Լաւ ուրեմն, այս է իմ ընտրութիւնս, իբրև հարկ կ'զնեմ ձեր վրայ, հանդուրժեցէք անոր:

— Եթէ հրամայես, մինչև անգամ Ընդդաներէն միոյն պիտի հանդուրժեմ:

— Լա Ալալիէր դառնուկի պէս հեղ է, մի վախնաք, երբէք չպիտի գէմ խօսի ձեզ, երբ որ ըսէք որ զինքը կ'սիրէք:

Եւ իշխանուհին սկսաւ ծիծաղիլ:

— Ո՛հ, չես վախնար որ չափէն աւելի տաքնամ անոր հետ, այնպէս չէ:

— Այդ իմ իրաւունքս էր:

— Թո՛ղ այդպէս լինի:

— Ուրեմն լմնցած դաշնադիր մ'է այս:

— Ստորագրեալ իսկ:

— Պիտի տածէք ինձի համար եղբօր մը բարեկամութիւնը, եղբօր մը հողատիրութիւնը, այնպէս չէ:

— Պիտի տածեմ՝ քեզի համար սիրտ մ'որ միայն քու հրամանսիւ վրայ բախելու սովորութիւն ստացած է :

— Լաւ ուրեմն , միթէ այս կերպով ասպզան ասպհոլանձ կը տեսնէք :

— Այո՛ւսամ :

— Չեր մայրը պիտի դադրի՞ զիս իբրև թշնամի նկատելէ :

— Այո՛ :

— Մարի-Թէրէզ պիտի դադրի՞ արքայազնին սուջև սպանիական լեզուաւ խօսելու , որ կ'ատէ օտար ոճով եղած խօսակցութիւնները , վասն զի կ'կարծէ միշտ որ զինքն այդ լեզուաւ կը բանբասն :

— Ափսո՛ս , միթէ անիրա՞ւ է — մրմուսց թաղաւորը դորովալին :

— Եւ խօսքս վերջացնելով — ըսաւ իշխանուհին — դարձեալ թաղաւորը պիտի ամբաստանէ՞ն որպէս թէ ասորէն սիրահարութիւններու կ'մտածէ , մինչդեռ այս իրաւ է որ իրարու համար բան մը չպիտի զլանք եթէ ոչ ամէն ներքին խորհուրդէ ազատ համակրութիւններ :

— Այո՛ , այո՛ — կ'մկմաց թաղաւորը : — Բայց դարձեալ ուրիշ բան պիտի ըսեն :

— Եւ ի՞նչ պիտի ըսեն , Աեհափառ տէր : Իրաւ որ , բնաւ հանդիստ չ'պիտի ունենանք :

— Պիտի ըսեն — շարունակեց թաղաւորը — որ շատ անշահ ճաշակ ունիմ . բայց ի՞նչ է իմ ինքնասիրութիւնս քու հանդարտութեանդ մօտ :

— Իմ պատուոյս մօտ , Աեհափառ տէր , նոյնպէս մեր դերդաստանին պատիւը , ըսել կ'ուզէք անշուշտ : Գարձեալ , հաւտացէք ինձ , այդչափ շուտով մի վառուիք Լա Աալիէրի դէմ . իրաւ է որ նա կ'կաղայ , բայց քիչ շատ ուղիղ դատողութեան տէր է : Ասկէ՛ զատ՝ թաղաւորն ինչ բանի որ դպի ոսկի կ'դառնայ :

— Աերջապէս , իշխանուհի , ստոյգ եղիք բանէ մը , այսինքն միշտ քեզի շնորհասպարտ եմ . կրնայիք աւելի ծանր բերել ինձ ֆրանսա բնակութիւնդ :

— Աեհափառ , մեր կողմը կ'դան :

— Լաւ ուրեմն :

— Աերջին խօսք մը :

— Ի՞նչ խօսք :

— Գուք խոհական և զո՞ն էք : Աեհափառ , բայց մանաւանդ այս պարապայիս մէջ պէտք է յօդութիւն կանչէք ձեր բոլոր խոհականութիւնը , ձեր բոլոր զգօնութիւնը :

— Ո՛հ — զոչեց Լաի ծիծաղելով — այս երեկոյէն պիտի սկսիմ իմ դերս խաղալու , և պիտի տեսնես թէ հովիւները ներկայացնելու կոչում ունիմ թէ ոչ : Ճաշէն ետք՝ անտառին մէջ մեծ շրջադայութիւն , և ընթրիքն աւարտելէն ետև՝ պարեկն ունինք ժամը տասնին :

— Քաջ դիտեմ այդ :

— Արդ , իմ կրակս այս երեկոյեան հրախաղութիւններէն աւելի շատ պիտի վառի , մեր Գօլպէր բարեկամին կանթեղներէն աւելի պայծառութեամբ պիտի փայլի . պիտի շողողայ այնպիսի կերպով մ'որ թաղուհիներուն ու արքայազուն եղծօրս աչերը պիտի այրեն :

— Ձգոյշ եղիք , Աեհափառ , զո՞յշ եղիք :

— Է՛հ , Աստուած իմ , ի՞նչ ըրի ուրեմն :

— Ահա հիմակ ետ պիտի առնում ասկից քիչ մ'առաջ ձեզի տուած գովեստներս . . . : Գուք խոհական , դուք զգօն էք , չըսի՞ր . . . բայց անտանելի յիմարութիւններով պիտի սկսիք ձեր դերը : Միթէ սէրն այդ կերպով կ'վառի ջահի մը պէս , մէկ մանրերկրորդի մէջ : Միթէ առանց որ և է պատրաստութեան ձեզի նման թաղաւոր մը Լա Աալիէրի պէս աղջկան մ'ոտքը կ'իյնայ :

— Ո՛հ , Հանրիէ՛դ , Հանրիէ՛դ , Հանրիէ՛դ , ահա քեզ կ'բլուներմ . . . տակաւին զործի չսկսանք և զիս կ'կողոպտես :

— Ո՛չ , այլ միայն ուղիղ դադափարներու կ'բերեմ ձեզ : Այդ կրակդ քիչ քիչ վառեցէք , փոխանակ այդպէս յանկարծ երևան հանելու : Արամազդ կ'որոտայ և փայլակը կ'փայլեցնէ պալատները հրդեհելէն առաջ : Ամէն բան իր սկիզբն ունի : Եթէ այսպէս տաքնաք , ոչ ոք պիտի հաւտայ թէ սիրահարած էք , և ամէն մարդ պիտի կարծէ թէ յիմար էք : Միայն թէ ընթացքիդ չզուշակեն : Մարդիկ կարծուածին չափ ստեպ ապուշ չեն :

Թագաւորը ստիպուեցաւ խոստովանելու որ իշխանուհին դիտուած թեան հրեշտակ մ'է և սատանայի չափ խելք ունի :

Խոնարհութիւն ըրաւ :

— Շատ աղէկ , թո՛ղ ըսածդ լինի — ըսաւ նա — իմ պատերազմի յատակագծիս վրայ վերստին պիտի խորհիմ . զօրապետները , օրինակի համար իմ աղղակիանս Գօնտէն՝ իրենց յատակագիծներու վրայ դոյն կ'առնուն կ'տան զօրաբանակ ըսուած քարերէն մին շարժելէն առաջ . ես յարձակման ծրագիր մը պատրաստել կ'ուզեմ : Գիտես որ Քնքուշն ամէն տեսակ ստորաբաժանումներ ունի . լաւ , Մանր-Հոգերու դիւղը պիտի կենամ , Սիրային-Տոմսակաց աւանը , Տեսանելի-Սիրոյ ճամբան առնելէն առաջ . դիտես որ ճամբան բոլորովին դժուած է , և այն խեղճ օրիորդ Սկիւտէրին ինձ չպիտի ներէր որ այսպէս գաղաթներ կ'առնում :

— Ահա լաւ ճամբան գտանք , Աւհափառ : Հիմակ կ'հաճիք որ իրարմէ չբաժնուինք :

— Ափսո՛ս , պէտք է բաժնուիլ , վասն զի ահա մեզ կ'զատեն :

— Ա՛հ — ըսաւ Հանրիէդ — արդարև , ահա մեզի օրիորդ Շարանդի սփինքը կ'բերեն , որսորդապետաց սովորական փողի ձայնին :

— Ուրեմն այսպէս որոշուած է այս իրկուն , շրջադայութեան ատեն՝ անստոր պիտի սահիմ , և Լա Ալալիէրը գտնելով . . . :

— Զանի պիտի հեռացնեմ , այդ իմ գործս է :

— Շատ լաւ : Իր ընկերուհիներուն մէջ տեղն անոր պիտի մտնեամ և առաջին սլաքը պիտի նետեմ :

— Ճարպիկ եղիք — ըսաւ իշխանուհին ծիծաղելով — սերտը չվրիպիք :

Իշխանուհին Թագաւորին հրաժարական բարև տալով՝ զուարթ խումբը դիմաւորելու դնաց , մեծ արարողութեամբ և որսորդական շեփորներով զոր ամէն բերան կ'հնչէր :

ԻՍ.

ԵՂԱՆԱԿՆԵՐՈՒ ՊԱՐԵԿԸ

Թեթև ընթրիքէն ետք՝ որ ժամը հինգին մօտ տեղի ունեցաւ , Թագաւորն իր դահլիճը մտաւ , ուր իրեն կ'սպասէին զերձակները :

Վերջապէս ժամը հասած էր Գարնան այն երեւելի զոքստը փորձելու որ պալատի նկարիչներուն և զարդարիչներուն երեւակայութիւնն ու մտածութիւնը սաստիկ յոյնեցուցեր էր :

Իսկ պարեկին գալով՝ ամէն ոք իր քայլը գիտէր և կրնար իր դերը խաղալ : Թագաւորը միտքը դրեր էր խաղի մ'առիթ ընել զայն : Ուստի այն ինչ իր բանակցութիւնն աւարտեց և իր սենեակը մտաւ , ուր իր երկու արարողապետները Վիլրուա և Սէնդ-Էնյան իրեն կ'սպասէին :

Երկուքն ալ պատասխան տուին թէ իր հրամանին կ'սպասեն , և թէ պատրաստ են ամենքը խաղն սկսելու , բայց որպէս զի այս հրամանը տայ , պէտք էր աղւոր օգ և նպաստաւոր զիշեր մը :

Թագաւորն իր պատուհանը բացաւ . երեկոյեան ոսկի փոշին անստաւին ճեղքուածներէն հորիզոնին վրայ կ'թափէր , ձիւնի պէս սպիտակ լուսինն արդէն երկնից վրայ կ'նկարուէր :

Աննաչաղեղ ջրերուն վրայ ծալք մ'անգամ չկար . նոյն խիկարապները , երկաթի վրայ նաւերու պէս՝ իրենց դոց թևերուն վրայ հանդէսէլով , կարծես թէ օդին ջերմութիւնը , ջրին զովութիւնն և սքանչելի երեկոյեան մը լուսութիւնը կ'զգային :

Թագաւորը՝ բոլոր այս բաներս տեսնելէն , այս շքեղ պատկերը նկատելէն ետե՛ւ՝ Պ. Վիլրուայի և Էնյանին խնդրած հրամանը տուաւ :

Որպէս զի այս հրամանն արքայապէս գործադրուի , վերջին հարցում մը կարևոր էր . Լուի ԺԳ այս հարցումն ըրաւ այն երկու աղատորդիներուն :

Հարցումն երկու բառ կ'սլարունակէր .

— Ստակ ունի՞ք :

— ԱԵՏԱՓԻՒՆ տէր — սլատասխանեց Սէնդ-Էնյան — Պ. ԳՕԼՄԵՐ պէրի հետ այդ մասին համաձայնած ենք :

— Ա՛Տ, շատ լաւ :

— Այո՛, ԱԵՏԱՓԻՒՆ տէր, և Պ. ԳՕԼՄԵՐ ըսաւ թէ Ձեր ԱԵՏԱՓԻՒՆՈՒԹԵԱՆ քովը պիտի դայ երբ որ ձեր տուած ծրարըին համեմատ հանդէսներն սկսել տակը դիտաւորութիւն մը յայտնէք :

— Ուրեմն թո՛ղ դայ ԳՕԼՄԵՐ :

Որպէս թէ ԳՕԼՄԵՐ դրան ետեւէն մտիկ կ'ընէր խօսակցութեան ընթացքին հետամուտ լինելու դիտմամբ, ներս մտաւ երբ թաղաւորն իր անունն արտասանեց երկու սլալատականաց առջև :

— Ա՛Տ, շատ լաւ, Պ. ԳՕԼՄԵՐ — ըսաւ Նորին ԱԵՏԱՓԻՒՆՈՒԹԻՒՆԸ : — Ուրեմն ձեր պաշտօնին ղլուխն անցէք, պարոններ : Սէնդ-Էնյան և ԱԽԼՐՈՒԱ մեկնեցան :

Թաղաւորը՝ սլատահանին մօտ՝ թեւաթուի մը վրայ նստած էր :

— Այս իրկուն իմ սլարս պիտի պարեմ, Պ. ԳՕԼՄԵՐ — ըսաւ նա :

— Ուրեմն, ԱԵՏԱՓԻՒՆ տէր, վաղը պիտի վճարեմ հաշուեղիւրներն :

— Ինչպէ՞ս :

— Մատակարարաց խօսք տուի իրենց հաշիւները մաքրելու, պարեկին տեղի ունեցած օրուան հետեւեալ օրը :

— Թո՛ղ այդպէս լինի, Պ. ԳՕԼՄԵՐ, խօսք տուիր, վճարէ :

— Շատ լաւ, ԱԵՏԱՓԻՒՆ տէր, բայց՝ ինչպէս որ Պ. ԼԷՄԻԿԻԷՐ կ'ըսէր, վճարելու համար ստակ պէտք է :

— Ի՛նչ, ուրեմն Պ. ՖՈՒՔԷԻ կողմէ խօսք արուած չորս միլիօնը դեռ քեզի չյանձնուեցա՞ն : Մոռցայ այս մասին քեզի հարցու փորձ ընելու :

— ԱԵՏԱՓԻՒՆ տէր, որոշեալ ժամուն Ձեր ԱԵՏԱՓԻՒՆՈՒԹԵԱՆ ապարանն էին :

— Լաւ ուրեմն :

— Լաւ ուրեմն, ԱԵՏԱՓԻՒՆ, գունաւոր ապակիները, հրա-

խաղութիւնները, ջուրակահարներն և խոհարարներն ութ աւուր մէջ չորս միլիօն կերան :

— Բոլորովի՞մբ :

— Մինչև յետին սուն : Ամէն անդամուն որ Ձեր ԱԵՏԱՓԻՒՆՈՒԹԻՒՆը մեծ լճակին եղբրքը լուսաւորելու հրաման կ'ընէ, այս լուսաւորութիւնը կ'սպառէ աւազաններու մէջ գտնուած ջրոց չափ իւղ :

— Լաւ, լաւ, Պ. ԳՕԼՄԵՐ : ԱԵՐՋԱՍԵՒՍ, այլ ևս ստակ չունին :

— Ո՛Տ, այլ ևս չունիմ, բայց Պ. ՖՈՒՔԷՆ ունի :

Եւ ԳՕԼՄԵՐԻ գէմքը շարադոյժ խնդութեամբ մը լուսաւորեցաւ :

— Ի՞նչ ըսել կ'ուզես — հարցուց Լուի :

— ԱԵՏԱՓԻՒՆ, արդէն վեց միլիօն վճարել աուինք Պ. ՖՈՒՔԷԻ : Ամենայն յօժարութեամբ վճարեց այս գումարը, հետեւապէս եթէ պէտք լինի, ուրիշ գումարներ ալ տալու չպիտի զլանայ : Այսօր պէտք կայ, պէտք է որ վճարէ :

Թաղաւորն իր ունքը պրատեց :

— Պարոն ԳՕԼՄԵՐ — ըսաւ նա դրամագէտին անունը շեշտելով — ես խնդիրն այդպէս չեմ ըմբռներ, չեմ ուզեր իմ ծառաներուս մէկուն գէմ բռնութեան միջոցներ զործածել որ զանի նեղին և անոր ծառայութեան արդէլք լինին : Պ. ՖՈՒՔԷՆ վեց միլիօն տուաւ ութ աւուր մէջ, և այս ալ բաւական գումար մ'է :

ԳՕԼՄԵՐԻ զոյնը նետեց :

— Սակայն — ըսաւ նա — Ձեր ԱԵՏԱՓԻՒՆՈՒԹԻՒՆը, քիչ մը առաջ այդ լեզուն կ'զործածէր, երբ որ ՊԷԼ-ԻՍԼԻ լուրերը հասան, օրինակի համար :

— Իբաւունք ունիս, Պ. ԳՕԼՄԵՐ :

— Սակայն զործերն անփոփոխ մնացած են այն ժամանակէն ՚ի վեր :

— Իմ կարծիքս այն է, սլարոն, որ ամէն բան փոխուած է :

— Ինչպէ՞ս, ԱԵՏԱՓԻՒՆ, դուք չէք հաւտար ապստամբութեան փորձերուն :

— Իմ զործերս ինձի կ'վերաբերին, սլարոն տեսուչ, և քեզի արդէն ըսի որ ես ինքս զանոնք կ'կարգադրեմ :

— Ուրեմն, կ'նայիմ որ Ձեր Վեհափառութեան անհաճոյ լինելու դժբաղդութիւնն ունեցայ — ըսաւ Գօլպէր կատողութենէ և երկիւղէ գողգողալով:

— Ամենեկն, ընդ հակառակն, ինձ շատ հաճելի ես:

— Է՛հ, Վեհափառ տէր — ըսաւ Պաշտօնեայն այն կեղծ համարձակութեամբ, որ այնքան ճարտար էր երբ Լուի թաղաւորին ինքնասիրութիւնը դղուելու նպատակ ունէր — ինչ օղուտ ունի Ձեր Վեհափառութեան հաճելի լինիլ եթէ օղտակար չեմ կարող լինիլ:

— Գու ծառայութիւններդ լաւադոյն առիթներու համար կը վերապահեմ, և հաւտան ինձ, այն ատեն աւելի մեծ արժէք պիտի ունենան:

— Այսպէս Ձեր Վեհափառութեան յատակադիծն այս դործին մէջ . . . :

— Ստակի պէտք ունիս, Պ. Գօլպէր:

— Եօթ հարիւր հազար Ֆրանքի պէտք ունիմ, տէր արքայ:

— Իմ յատուկ զանձէս զանոնք կ'առնես:

Գօլպէր խոնարհութիւն ըրաւ:

— Եւ — յարեց Լուի — որովհետեւ դժուարին կ'երևի ինձ անտեսութեանդ չնայելով, որ այդպիսի դոյզն գումարով իմ ընելիք ծախուցս հասնիլ: Երեք միլիօնի մուրհակ մը պիտի ստորագրեմ:

Թագաւորը զրիչ մ'առաւ և ստորագրեց: Ապա թուղթը Գօլպէրի յանձնելով,

— Անհոյ եղեր — ըսաւ — ընտրած յատակադիծս թագաւորի վայել յատակադիծ մ'է, Պ. Գօլպէր:

Այս խօսքին վրայ՝ այնպիսի վեհափառութեամբ արտասանուած զոր նորասի թագաւորը գիտէր դործածել այս պարագայից մէջ, Գօլպէրը ճամբեց գերձակներուն ունկնդրութիւն տալու համար:

Թագաւորին կողմէ արուած հրամանը բոլոր Գօնդէնայլօի մէջ ծանօթ էր. արդէն գիտէին որ թագաւորն իր զվեստը կ'փորձէր և թէ պարեկը նոյն իրիւն տեղի պիտի ունենար:

Այս լուրը կայծակի արագութեամբ վազեց, և իր ճամբուն վրայ

ամէն տեսակ պչրասիրութիւններ, ամէն տեսակ փափաքներ, ամէն յիմարական փառասիրութիւններ բորբոքեց:

Նոյն միջոցին իսկ՝ և իբրև հմայութեամբ, ամէն անոնք որ ասեղ մը բունել գիտէին, ամէն անոնք որ կրկնոց մը բաձկոնակէ մը կրնային զանազանել, ինչպէս կ'ըսէ Մօլիեր, հրաւիրուեցան պճնասէր մարդոց և տիկնայց օգնական լինելու համար:

Թագաւորն իր հպուստան ու կապուստը լմնցուց ժամն իննին. տերեւներով և ծաղիկներով զարդարուած կառքին մէջ երեցաւ:

Թագուհիները՝ լճակին եղերքը՝ հրաշալի վայելչութեամբ շինուած թատրոնի մը մէջ՝ փառաւոր տախտակամածի մը մէջ:

Հինգ ժամու մէջ՝ ատաղձագործները սոյն թատրոնին վերաբերեալ պատրաստ տախտակները ժողովեր էին. օթոցարարներն իրենց վիժակները սփռեր, ամթոռները կանգներ էին՝ և որպէս թէ թովիչի մը գաւազանէն մղեալ՝ հազար թևեր՝ իրարու աջակից զալով՝ փոխանակ նեղանալու, այն վայրը կառուցեր էին շէնքն երաժշտաց ձայնին, մինչդեռ հրախաղները թատրոնը կ'լուսաւորէին նոյնպէս լճակին եղերքն անթուելի ճրագներով:

Որովհետեւ երկինց աստղերը կ'երևէին և ամպ մ'անդամ չէր նշմարուեր, որովհետեւ հովի շունչ մ'անգամ չէր լսուեր մեծ անտառներուն մէջ, որպէս թէ նոյն ինք բնութիւնն իշխանին հաճոյից կ'նպաստէր, թատրոնին խորը բաց թողեր էին: Այնպէս որ, նկարներու առաջին կարգին ետեւը՝ իբրև յատակ կ'երևէր աստեղափայլ աղւոր երկինքը, այն ջրէ սաւանն որու մէջ ցոլացող կրակներէն կ'վառէր, և կ'լորած և կատարներով մեծ ծառերու կապուտակ ստուերադրերը:

Երբ թագաւորն երեցաւ, բոլոր սրահը լեցուն էր, և զոհարներու ու անդամանակներու շողջողուն խումբ մը կ'ընծայէր, որու վրայ առաջին անգամ նայողը չէր կրնար որոշակի կերպարան մը տեսնել:

Երբ փոքր առ փոքր այսչափ պայծառութեան կ'վարժէր մարդուն աչքը, ամենէն հազուադիւտ գեղանի կիներն աչքի կ'զարնէին, ինչպէս երեկոյեան երկնի վրայ՝ մի առ մի կ'երևին աստղերն, անոր առջև աչքը դոյցէն ետև տեսնելու համար կ'բանայ:

Թատրոնն անտառակ մը կ'ներկայէր . քանի մը շահապետներ իրենց ակիշաւոր ոտները վերցնելով ասդիս անդին կ'ոստոտէին . դրիագ մ'երեւան դալով, զանոնք կ'զրգուէր 'ի պայքար, ուրիշներ անոր կ'միանային որ պաշտպանեն, և պարելու ատեն կ'կըլուուէին :

Յանկարծ պիտի երևէր Գարունն իր պալատականներով՝ որպէս զի ամենքը խաղաղութեան և բարեկարգութեան հրաւիրէ :

Տարերք և զիցաբանութեան ստորին զօրութիւններն իրենց շնորհալի վեհապետին հետքին վրայ կ'խուժէին :

Եղանակները՝ Գարնան միանալով, իր բոլորը կ'առնուին քառքէլ խաղալու, որ՝ փոքր 'ի շատէ զգուելի խօսքերու վրայ՝ պարը կ'սկսէր : Երաժշտութիւնը, սրինգ, եղէգ, վին, դաշտային զուարճութիւնը կ'նուագէին :

Թաղաւորն արդէն ներս կ'մտնէր որոտընդոստ ծափահարութեանց մէջ :

Ծաղկաւէտ պարեգօտ մը հագեր էր, որ՝ փոխանակ ծանրաբեռնելու՝ իր թեթևաշարժ և վայելուչ մէջքն երևան կ'հանէր : Իր սրունքը՝ որ արքունեաց մէջ ամենէն վայելուչն էր, մտի զոյն մետաքսէ գուլպայի մը մէջ կ'երևէր, որ այնքան թափանցիկ էր որպէս թէ նոյն ինք միսը լինէր :

Բայ շեփորազոյն անդուսէ ամենաչքնաղ սոլերներ, որ ծաղկեայ և տերևէ ծոպեր ունէին, իր փոքրիկ ոտքը կ'պարփակէին :

Իրանն իր մարմնոյն ստորին մասին հետ ներդաշնակ էր . ալէ՛՛ ծուփ գեղանի մաղեր, թարմ՝ դէմք մ'որ սիրտեր այրող կասկոյտ սիրուն աչերուն փայլովն աւելի կ'աղւորնար, զմայելի շրթերով բերան մ'որ ժպտելու կ'հաճէր, ահա այսպէս էր տարուան իշխանը, որ այն իրկուն՝ թերևս իրաւամբ սիրոյ թաղաւորը կրնար կոչուիլ :

Իր քալուածքին մէջ աստուծոյ մը թեթև վեհափառութիւնն ունէր : Չէր պարեր այլ կ'սաւառնէր :

Ուստի այս մուտքն ամենաշքեղ արդիւնք մ'ունեցաւ : Ինչպէս որ ըսինք, յանկարծ Սէնդ-Էնյան կոմսը տեսնուեցաւ որ թաղաւորին կամ Հանրիէզին մօտենալ կ'ուզէր :

Իշխանուհին՝ երկար շրջազդեստ մը հագած՝ որ նուրբ և թեթև էր արհեստաղէտ Մալինացոյց հիւսած ամենէն նօսր ցանցերէն, իր պարեգօտին ծալքին ներքև ծուկը մերթ ընդ մերթ նկարեալ, իր մանր ոտքը մետաքսի մէջ ազուցած, իր քրմանոյշներուն հետ սիդապանծ կ'յաւաջանար և պարելու համար իրեն յատկացած տեղն արդէն կ'մօտենար :

Ծափահարութիւններն այնքան երկարատև եղան որ կոմսը պարայ ժամանակ գտաւ թաղաւորին միանալու :

— Ի՞նչ կայ, Սէնդ-Էնյան — հարցուց Գարունը :
— Տէ՛ր իմ Աստուած — պատասխանեց կոմսը գունատ — Չեր

Վեհափառութիւնը Պտուղները մոռցաւ :
— Չմոռցայ, միայն վերցուցինք այդ մասը :

— Ո՛չ, Վեհափառ : Չեր Վեհափառութիւնն այդ մասին հրաման մը չտուաւ և երաժիշտները զայն պիտի նուագեն :

— Այդ ձախորդ բան է — մրմուռաց թաղաւորը : — Այդ պարը կատարել կարելի չէ, քանի որ Պ. Սիշ տարակայ է : Պէտք է ջնջել այդ կտորը :

— Ո՛հ, Վեհափառ, առանց պարի քառորդի մը չափ երաժշտութիւն այնչափ պաղ բան մը պիտի լինի որ պարելը պիտի անհամնայ :

— Ուրեմն, կոմս, ի՞նչ ընելու է . . . :
— Ո՛հ, Վեհափառ, դժբաղդութիւնն այդ բանին մէջ չէ, վառն զի, ինչ որ է, նուագարաններն աղէկ գէշ կրնան զբաղեցնել պարահանդէսը, եթէ պէտք լինէր, բայց . . . :

— Բայց ի՞նչ :
— Բայց Պ. Սիշ այս տեղ է :
— Այս տեղ — պատասխանեց թաղաւորն ունքը սրտտելով — այս տեղ . . . : Միթէ ստոյգ ես :

— Պարեկին համար բոլորովին հագուած եկեր է, Վեհափառ : Թաղաւորն զկաց որ արիւնն երեսին կ'զարնէ :

— Սխալած պիտի լինիս — ըսաւ նա :
— Բնաւ չեմ սխալած, Վեհափառ, և ստուգելու համար կրնաք աջ կողմը նայիլ . կոմսը կ'սպասէ :

Թագաւորն աշխուժիւ այն կողմը դարձաւ, և արդարեւ՝ իր աջ գլին՝ Վէրտէօնի հազուստովը, զեղեցիկութեամբը փայլող Աիշը կ'սպասէր որ թաղաւորն իրեն նայի խօսքն անոր ուղղելու համար:

Նկարագրել թաղաւորին ասլուծիւնը, իր եղբորն որ իր օթեակին մէջ շարժեցաւ, պատմել փսփսուքը, սրահին մէջ գլուխներուն տատանումը, իր պարորդին ձեռքէն իշխանուհւոյն զգացած սաստիկ յուզմունքը բացատրել դործ մ'է զոր մեղնէ ճարտարագոյն մարդոց կ'ընդունք:

Թաղաւորը բերանաց մնացեր էր և կոմնին կ'նայէր:

Կոմսը մօտեցաւ՝ յարգալից և ծուած:

— Աեհափա՛ւ — ըսաւ — ձեր ամենէն հլու ծառան կ'ղայ ձեզ սպասաւորել ինչպէս ճակատամարտին օրն ըրաւ: Պտուղներու քայլն արքայդ չընելով՝ իր պարեկին լաւադոյն տեսարանը պիտի կորուսէր: Զուգեցի որ այսպիսի մեաս մը պատահի իմ կողմէ, թաղաւորիս զեղեցիկութեան, ճարպիկութեան և վեհանձնութեան համար: Իմ ազարակներս թողուցի, որպէս զի իմ թաղաւորիս օյնութեան հասնիմ:

Աիշ կոմսին մէն մի խօսքը վայելուչ, ներդաշնակ և ճարտասան՝ Լուի ԺԴի ականջը կ'ընկնէր: Անոր շողոքորթութիւնն այնչափ հաճելի թուեցաւ իրեն որչափ արիւթիւնը: Ուստի բաւական համարեց պատասխանել.

— Կոմս, ես չէի ըսած քեզի որ վերագառնաս:

— Ճշմարիտ է, Աեհափաւ տէր. բայց դուք չըսեր էիք ինձ որ մնամ:

Թաղաւորը կ'տեսներ որ ժամանակը կ'անցնի: Այս տեսարանն երկարելով կրնար ամէն բան խանդարել: Ստուեր մը միայն կարող էր այս պատկերն աւրել անվրէպ:

Սակայն թաղաւորը՝ աղւոր զգացումներով լի սիրտ մ'ունէր, իշխանուհւոյն ճարտասան աչացը մէջ նոր ներշնչութիւն մը քաղեր էր:

Հանրիէզի այս ակնարկն անոր ըսեր էր.

— Քանի որ ձեզնէ կ'նախանձին, կասկածները բաժնեցէք.

նի՛ որ երկու ոտիսէ կասկած ունի և ոչ միայն վրայ կ'կասկածի:

Իշխանուհին այս ճարտար ներշնչութեամբը՝ յաղթանակեց:

Թաղաւորը Աիշին յայտաց:

Աիշ իշխանուհւոյն անխօս լեզուէն բառ մ'անդամ չհասկցաւ: Միայն, դիտեց որ զինքը չտեսնելու կ'զարնէր: Երբ շնորհ գտաւ թաղաւորէն, Աիշ զայն իշխանուհւոյն սրտին վերադրեց: Թաղաւորն ամենքը դոհացուց:

Արքայազունը միայն բան մը չըմբռնեց:

Պարն սկսաւ. չքնաղ եղաւ:

Երբոր ջութակներն իրենց եռանդազին հնչուններով այս անուանի պարողները զրդուեցին, երբ նոյն ժամանակուան պարզ մնջկատակութիւնը, որ պարզագոյն ևս կ'դառնար օդոստափառ դուսաններու միջին խաղով՝ իր ծայրագոյն ուձցնութեան հասաւ, սրահը քիչ մնաց ծափահարութիւններէ պիտի փլէր:

Աիշ արևու պէս փայլեցաւ, բայց իբրև պալատական արև որ երկրորդ դերը խաղալու կ'զիջանի:

Այս յաջողութիւնն արհամարհելով՝ որու մասին իշխանուհին բնաւ երախտագիտութիւն մը չէր յայտներ, ջանաց իշխանուհւոյն ակներև նախապատուութիւնը շահիլ:

Բայց իշխանուհին անոր ակնարկ մ'անդամ չտուաւ:

Փոքր սու փոքր բոլոր իր խնդութիւնը, իր փայլե մարեցան վշտի և մտատանջութեան մէջ, այնպէս որ իր սրունքը թուլցան, թեկերը ծանրացան, գլուխն ասպուշ դարձաւ:

Այնուհետև թաղաւորն իրօք քաղցրի առաջին պարորդն եղաւ:

Իր նկուն ոտիսին վրայ շեղակի ակնարկ մը նետեց:

Աիշ և ոչ իսկ պալատական էր, դէշ կ'պարէր, առանց ողորքանայ կ'պարէր. քիչ մ'ետքը բնաւ չտարեց:

Թաղաւորն ու իշխանուհին յաղթանակը տարին:

ՎԵՐՁ

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ Հ Ա Տ Ո Ր Ի

Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ

	Երես
Ա. Բաղմամբի սուրի հարուածներ 'ի ջուր	3
Բ. Զրի մէջ շատ մը սրի հարուածներու շարունակութիւնը	13
Գ. Պէզմօ Մօնլըզէօն	23
Դ. Թաղաւորին խաղը	30
Ե. Պ. Պէզմօ Մօնլըզէօնի մանր հաշիւները	42
Զ. Պ. Պէզմօնի նախաճաշիկը	56
Է. Պէրդօտիէրի երկրորդ դատիկոնը	64
Ը. Երկու բարեկամուհիք	75
Թ. Տիկին Պէլիէրի արծաթիք	84
Ժ. Օժիտ	92
ԺԱ. Աստուծոյ հողը	101
ԺԲ. Եռապատիկ սէր	111
ԺԳ. Պ. Լօրէնի նախանձը	118
ԺԴ. Օրլէանի դուքսը Վիլէն կ'նախանձի	128
ԺԵ. Միջնորդ	138
ԺԶ. Խորհրդակիցներ	149
ԺԷ. Փօնդէնպլօ	163
ԺԸ. Բաղնիք	170
ԺԹ. Թիթեռնիկներու որսը	175
Ի. Թիթեռներ որսալու ատեն մարդ ինչ կ'փնտռէ	180
ԻԱ. Եղանակներու պարեկը	193

1909-1912

2013

